



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ

PEDAGOGY AND SOCIAL SCIENCES

2 (65)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2023

Բանբերը հրատարակվում է տարեկան երկու անգամ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Вестник издается два раза в год по решению ученого совета Государственного университета имени В. Брюсова.

Bulletin is published twice a year by the decision of Brusov State University Scientific Council.

Խմբագրական խորհուրդ՝

- | | |
|----------------------------|---|
| Գյուրջինյան Դավիթ | բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>գլխավոր խմբագիր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>) |
| Եղիազարյան Գայանե | բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>գլխավոր խմբագրի տեղակալ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>) |
| Խաչիկյան Անահիդ | բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>) |
| Աբրահամյան Կարինե | բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>) |
| Գասպարյան Գայանե | բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>) |
| Համբարձումյան Դիանա | բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>) |
| Աբրահամյան Սուրեն | բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>) |
| Էթարյան Ելենա | բանասիրական գիտությունների դոկտոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>) |
| Սարգսյան Իննա | մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>) |
| Թովուզյան Աիդա | մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան</i>) |

Խաչապրոյան Լալիկ	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան)
Խաչապրոյան Կարեն	պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ)
Մկրտչյան Թաթուլ	տնտեսագիտության դոկտոր (Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան)
Օրդուխանյան Էմիլ	քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ (ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ)
Սարվազյան Լիլիթ	փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ)
Պախսարյան Նարայրա	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվայի պետական համալսարան, ՌԴ)
Սերեբրյակովա Սվետլանա	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Հյուսիս-Կովկասյան ֆեդերատիվ համալսարան, ռուսաստանի թարգմանիչների միության ստավրոպոլյան մարզային բաժանմունք, ՌԴ)
Գլորովա Ժաննա	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ (Էմանուել Կանտի անվան կրթության և հումանիտար գիտությունների ինստիտուտ, Կալինինգրադ, ՌԴ)
Շահվերդյան Անուշ	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ (Համաշխարհային բանկի կրթության գծով միջազգային խորհրդարան, Վաշինգտոն, ԱՄՆ)

Խմբագրական կազմ՝

Պեղրոսյան Հայկ	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարապետյան Իգոր	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Միլիփոսյան Լուիզա	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ասատրյան Սուսաննա	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ավանեսով Էռնեստ	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Սամուելյան Սվետլանա	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հակոբջանյան Հրաչիկ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ալեքսանյան Գոռ	աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շահինյան Անի	մանկավարժական գիտությունների թեկնածու
Գալստյան Ամալյա	տնտեսագիտության թեկնածու
Ակոպյան Ցոլակ	քաղաքական գիտությունների թեկնածու
Մադոյան Հակոբ	փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Տեխնիկական խմբագիր՝

Փիլավջյան Հասմիկ

Редакционный совет:

Գյորձջինյան Դավիթ	кандидат филологических наук, доцент (гл. редактор, Государственный университет имени В. Брюсова)
Էջուզարյան Գայանե	доктор филологических наук, профессор (зам. гл. редактора, Государственный университет имени В. Брюсова)
Պապուկյան Անուշ	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Աբրահամյան Կարինե	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)

Гаспарян Гаяне	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Амбардзумян Диана	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Абраамян Сурен	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Этарян Елена	доктор филологических наук (Государственный университет имени В. Брюсова)
Саркисян Инна	доктор педагогических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Топузян Аида	доктор педагогических наук, профессор (Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна)
Хачатрян Лалик	доктор филологических наук, профессор (Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна)
Хачатрян Карен	доктор исторических наук, профессор (Ереванский государственный университет, факультет истории)
Мкртчян Татул	доктор экономических наук (Государственный экономический университет Армении)
Ордуханян Эмиль	кандидат политических наук, доцент (Институт философии, социологии и права (НАН РА))
Сарвазян Лилит	кандидат философских наук, доцент (Институт философии, социологии и права (НАН РА))
Пахсарян Наталья	доктор филологических наук, профессор (Московский государственный университет, РФ)

Серебрякова Светлана	доктор филологических наук, профессор (Северо-Кавказский федеральный университет, Ставропольское краевое отделение союза переводчиков России, РФ)
Глотова Жанна	кандидат педагогических наук, доцент (Балтийский федеральный университет имени Иммануила Канта, Калининград, РФ)
Шахвердян Ануш	кандидат педагогических наук, доцент (Международный консультант всемирного банка по образованию, Вашингтон, США)

Редакционная коллегия:

Петросян Гайк	доктор педагогических наук, профессор
Карпетян Игорь	доктор педагогических наук, профессор
Милитосян Луиза	кандидат педагогических наук, доцент
Асатрян Сусанна	кандидат педагогических наук, доцент
Аванесов Эрнест	кандидат педагогических наук, доцент
Самуелян Светлана	кандидат педагогических наук, доцент
Акобджанян Грачик	кандидат филологических наук, доцент
Алексян Гор	кандидат географических наук
Шагинян Ани	кандидат педагогических наук
Галстян Амалия	кандидат экономических наук
Акопян Цолак	кандидат политических наук
Мадоян Акоб	кандидат философских наук

Технический редактор:

Пилавджян Асмик

Editorial Council:

Gyurjinyan Davit	Candidate of Sciences (Philology), Associate Professor (<i>Brusov State University</i>)
Yeghiazaryan Gayane	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
Khachikyan Anaida	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
Abrahamyan Karine	Doctor of Sciences (Philology), Professor

Gasparyan Gayane	<i>(Brusov State University)</i> Doctor of Sciences (Philology), Professor <i>(Brusov State University)</i>
Hambardzumyan Diana	Doctor of Sciences (Philology), Professor <i>(Brusov State University)</i>
Abrahamyan Suren	Doctor of Sciences (Philology), Professor <i>(Brusov State University)</i>
Etaryan Yelena	Doctor of Sciences (Philology), <i>(Brusov State University)</i>
Sargsyan Inna	Doctor of Sciences (Pedagogy), Professor <i>(Brusov State University)</i>
Topuzyan Aida	Doctor of Sciences (Pedagogy), Professor <i>(Armenian State Pedagogical University after Kh. Abovyan)</i>
Khachatryan Lalik	Doctor of Sciences (Pedagogy), Professor <i>(Armenian State Pedagogical University after Kh. Abovyan)</i>
Khachatryan Karen	Doctor of Sciences (History), Professor <i>(Yerevan State University, Faculty of History)</i>
Mkrtchyan Tatul	Doctor of Sciences (Economics) <i>(Armenian State University of Economics)</i>
Ordukhanyan Emil	Candidate of Sciences (Political Sciences), Associate Professor <i>Institute of Philosophy, Sociology And Law (NAS RA)</i>
Sarvazyan Lilit	<i>Institute of Philosophy, Sociology And Law (NAS RA)</i>
Pakhsaryan Natalya	Doctor of Sciences (Philology), Professor <i>(Moscow State University, RF)</i>
Serebryakova Svetlana	Doctor of Sciences (Philology), Professor <i>(North-Caucasian Federal University, Stavropol Regional Department of the Russian Translator's Union, RF)</i>
Glotova Zhanna	Candidate of Sciences (Philology), Associate Professor <i>(Immanuel Kant Baltic Federal University, Kaliningrad, RF)</i>
Shahverdyan Anush	Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor <i>(World Bank International Consultant on Education, Washington, USA)</i>

Editorial Board:

<i>Petrosyan Hayk</i>	Doctor of Sciences (Pedagogy), Professor
<i>Karapetyan Igor</i>	Doctor of Sciences (Pedagogy), Professor
<i>Militosyan Luiza</i>	Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor
<i>Asatryan Susanna</i>	Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor
<i>Avanesov Ernest</i>	Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor
<i>Samuelyan Svetlana</i>	Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor
<i>Hakobjanyan Hrachik</i>	Candidate of Sciences (Philology), Associate Professor
<i>Shahinyan Ani</i>	Candidate of Sciences (Pedagogy)
<i>Galstyan Amalya</i>	Candidate of Sciences (Economics)
<i>Aleksanyan Gor</i>	Candidate of Sciences (Geography), Associate Professor
<i>Akopyan Tsolak</i>	Candidate of Sciences (Politology)
<i>Madoyan Hakob</i>	Candidate of Sciences (Philosophy)

Technical Editor:

Pilavjyan Hasmik

Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի 2(63): - Երևան, Լինգվա, 2023, 190 էջ:

Вестник Государственного университета имени В. Брюсова 2(63). - Ереван, Лингва, 2023, 190 с.

Bulletin of Brusov State University 2(63). - Yerevan, Lingva, 2023, 190 pages.

ISSN 1829-3107

© Լինգվա, 2023

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ
CONTENTS**

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ПЕДАГОГИКА PEDAGOGY		
ԷՐՆԵՍՏ ԱՎԱՆԵՍՈՎ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՆՈՐ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ	15
ЭРНЕСТ АВАНЕСОВ	ОСНОВНЫЕ ОСОБЕННОСТИ ВНЕДРЕНИЯ НОВОЙ ПРОГРАММЫ И СТАНДАРТА ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ В ШКОЛАХ	
ERNEST AVANESOV	MAIN FEATURES OF IMPLEMENTING A NEW PROGRAM AND STANDARD OF PHYSICAL EDUCATION AT SCHOOLS	
ԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ		
ԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ	ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԻՆ	23
АННА ГАБРИЕЛЯН	ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ САМООБРАЗОВАНИЯ НА ИНТЕГРИРОВАННЫХ УРОКАХ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА	
ANNA GABRIELIAN	ON PROMOTING SELF-EDUCATION IN INTEGRATED ENGLISH CLASSES	
ԱԻԴԱ ԹՈՓՈՒԶՅԱՆ ԳՐԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ		
ԱԻԴԱ ԹՈՓՈՒԶՅԱՆ ԳՐԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ	ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	36

АИДА ТОПУЗЯН ГРЕТА АКОПЯН	ПРОБЛЕМЫ ВОСПИТАНИЯ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ВЫЗОВОВ	
AIDA TOPUZYAN GRETA HAKOBYAN	THE MAIN PROBLEMS OF UPBRINGING IN THE CONTEXT OF CONTEMPORARY CHALLENGES	
ԱՐԱՔՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ	48
АРАКС АРУТЮНЯН	НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РЕФОРМИРОВАНИЯ СОДЕРЖАНИЯ ОБЩЕГО ОБРАЗОВАНИЯ	
ARAKS HARUTYUNYAN	ON SOME FUNDAMENTAL ISSUES OF REFORMING THE CONTENT OF PUBLIC EDUCATION	
ՏԱՏՅԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ	ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՉԱՓՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻ ՄՇԱԿՈՒՄ	57
ТАТЯНА ОГАНЕСЯН РУЗАННА МИНАСЯН	ОСОБЕННОСТИ ИЗМЕРИМОСТИ УРОВНЯ МЕДИАГРАМОТНОСТИ В КОНТЕКСТЕ ПЕДАГОГИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ: РАЗРАБОТКА ИНСТРУМЕНТАРИЯ ИЗМЕРЕНИЯ	
TATYANA HOVHANNISYAN RUZANNA MINASYAN	OF MEDIA LITERACY MEASUREMENT CHARACTERISTICS IN THE CONTEXT OF PEDAGOGICAL EDUCATION: DEVELOPING THE MEASUREMENT TOOL	

ԱԳՆԵՍԱ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ	ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	71
АГНЕСА ШАХНАЗАРЯН	МЕХАНИЗМЫ РАЗВИТИЯ НАВЫКОВ И УМЕНИЙ АУДИРОВАНИЯ	
AGNESA SHAHNAZARYAN	MECHANISMS OF DEVELOPING LISTENING SKILLS AND COMPETENCES	
ՆԱՐԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ	ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ . ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ	82
НАРИНЕ СИМОНЯН	ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ ПОДГОТОВКИ СПЕЦИАЛИСТОВ В СФЕРЕ ТУРИЗМА В СИСТЕМЕ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ С УЧЕТОМ МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА	
NARINE SIMONYAN	THE TRENDS IN TRAINING TOURISM SPECIALISTS IN THE UNIVERSITY SYSTEM: INTERNATIONAL EXPERIENCE	
ՄԵՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ	ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ	95
МЕРИ ВАРДАНЯН	ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ КОМПЕТЕНЦИИ СТУДЕНТОВ ТУРИЗМА	
MARY VARDANIAN	ON FORMING THE ECOLOGICAL COMPETENCE OF TOURISM STUDENTS	

ՄԱՐԻՆԵ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ	ԱՆԳԼԵՐԵՆԻ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՌԻՄԱՍՏԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ	104
МАРИНЕ ПИЛИПОСЯН	К МЕТОДИКЕ ВНЕДРЕНИЯ ПОЛИТИЧЕСКОЙ ЛЕКСИКИ И ВЫЯВЛЕНИЯ ЛЕКСИЧЕСКОГО ЗНАЧЕНИЯ ПРИ ОБУЧЕНИИ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ	
MARINE PILIPOSYAN	METHODS FOR INTRODUCING ENGLISH POLITICAL VOCABULARY AND EXPLAINING THE MEANING	
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ TEACHING METHODOLOGY		
ՋՈՐԻ ԲԱՐՍԵԴՅԱՆ	ԱՆԳԼԵՐԵՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ (ԱՆՈՏԱՑԻԱ) ԳՐԵԼՈՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	115
ЗОРИ БАРСЕГЯН	МЕТОДИЧЕСКАЯ СИСТЕМА ОБУЧЕНИЯ НАПИСАНИЮ АННОТАЦИИ НА АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ	
ZORI BARSEGHYAN	THE METHODOICAL SYSTEM OF TEACHING ABSTRACT WRITING IN ENGLISH	
ԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ		
ԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	ԽՈՍՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	132
ИГОРЬ КАРАПЕТЯН	ПРОБЛЕМА ДИСКУРСИВНОГО АНАЛИЗА В ПРОЦЕССЕ ИЗУЧЕНИЯ ИНОСТРАННОГО ЯЗЫКА	
IGOR KARAPETYAN	THE PROBLEM OF DISCOURSE ANALYSIS IN TEACHING A FOREIGN LANGUAGE	

Լիլիթ ՀԱԿՈՔՅԱՆ	ՀԱՅԱԼԵԶՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՉԻՆԱՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ	146
ЛИЛИТ АКОПЯН	О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ПРЕПОДАВАНИЯ КИТАЙСКОГО ЯЗЫКА В АРМЯНОЯЗЫЧНОЙ АУДИТОРИИ	
LILIT AKOPYAN	ON SOME PECULIARITIES OF TEACHING CHINESE TO ARMENIAN-SPEAKING STUDENTS	
155		
ՍՈՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	ԱՐԱՐԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ԵՐԿՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԸՍՏ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԱՆՄԱՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ (Ա1-Ա2 ՄԱԿԱՐԴԱԿ)	155
СОНА МИКАЕЛЯН	ПРЕПОДАВАНИЕ АРАБСКОГО КАК ВТОРОГО ИНОСТРАННОГО ЯЗЫКА В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОЙ КОНЦЕПЦИИ ОБУЧЕНИЯ ЯЗЫКУ (УРОВНИ А1-А2)	
SONA MIKAYELYAN	TEACHING ARABIC AS A SECOND FOREIGN LANGUAGE IN ACCORDANCE WITH MODERN CONCEPT OF LANGUAGE TEACHING (A1-A2 LEVELS)	
<u>ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</u> <u>ЭКОНОМИКА</u> <u>ECONOMICS</u>		
ԼիլՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ	ԹՎԱՅԻՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ	165

ЛИЛИЯ АВETИСЯН	ОСОБЕННОСТИ ЦИФРОВОГО МАРКЕТИНГА В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ	
LILYA AVETISYAN	FEATURES OF DIGITAL MARKETING IN COMMERCIAL BANKS OF THE REPUBLIC OF ARMENIA	
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ INFORMATION ABOUT THE AUTHORS		186

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՆՈՐ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՉԱՓՈՐՈՇՉԻ
ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ**

ԷՌՆԵՍ ԱՎԱՆԵՍՈՎ

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված են Երևանի, Շիրակի ու Լոռվա մարզերի հանրակրթական դպրոցներում աշխատող ատեստավորման ենթակա ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների շրջանում անցկացված անկետային հարցումների արդյունքները: Մասնավորապես պարզվել է դպրոցական ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների վերաբերմունքը ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին: Թեև հարցվածներից շատերը կասկածանքով են վերաբերվում դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգի բարեփոխումներին, այդուհանդերձ, ընդհանուր առմամբ, դրական են տրամադրված ոլորտում տեղի ունեցող ծրագրային փոփոխություններին: Ավելին, կան ուսուցիչներ, որոնք իրենց աշխատանքում արդեն իսկ իրագործում են նոր ծրագրային տարբեր դրույթներ:

Հիմնաբառեր՝ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ, անկետային հարցում, նոր չափորոշիչ և ծրագիր:

Ներածություն

Փոխակերպվող հասարակության պայմաններում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում բարեփոխումները կրում են շարունակական բնույթ: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունեն կրթության համակարգերում իրականացվող մշտական վերափոխումները: Դա վերաբերում է նաև տարբեր կրթական հաստատություններում սովորողների ֆիզիկական դաստիարակության համակարգին (Гуков, Махов, 2016, с. 41-47, Манжелей, 2015, с. 146): ՀՀ կրթության ոլորտի քաղաքականության մշակման առումով կարևոր են հանրակրթության պետական չափորոշիչի ու դրանից բխող առարկայական նոր չափորոշիչների և ծրագրերի ներդրման լայնածավալ աշխատանքները, որոնք մեկնարկել են մի քանի տարի առաջ: Դրանց ամբողջական ներդրումը ՀՀ դպրոցներում սկսվել է իրականացվել 2023 թվականի սեպտեմբերից: Այս առումով կարևոր են նաև դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացի բարեփոխումները (Аванесов, Габриелян, Назарян, Померанцев, 2021, с. 66-71):

Հեղափոխության նպատակն է բացահայտել ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների վերաբերմունքը ոլորտում իրականացվող բարեփոխումների հանդեպ:


Հեղափոխության խնդիրներն են՝ պարզել մասնագետների կարծիքը ֆիզիկական կուլտուրայի նոր չափորոշիչի և ծրագրի վերաբերյալ, ինչպես նաև վեր հանել հանրակրթական դպրոցների ֆիզիկական կուլտուրայի նոր չափորոշիչի և ծրագրի ուժեղ ու թույլ կողմերը:

Հեղափոխության կազմակերպումը: Մեր կողմից կազմակերպվել են անկետային հարցումներ հերթական ատեստավորման ենթակա ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների շրջանում ֆիզիկական կուլտուրայի առարկայական նոր չափորոշիչի ու ծրագրի վերաբերյալ նրանց կարծիքը պարզելու նպատակով:

Հարցմանը մասնակցել են Երևանի, Շիրակի և Լոռվա մարզերի հանրակրթական և ավագ դպրոցների ֆիզիկական կուլտուրայի 58 ուսուցիչներ, որոնց աշխատանքային ստաժը դպրոցում միջինում կազմում էր 17 տարի 7 ամիս:


Հեղափոխության արդյունքների քննարկում: Հարցված մասնագետների մեծ մասի կարծիքով ֆիզիկական կուլտուրայի առարկայական նոր չափորոշիչն ու ծրագիրը կիրառելի չեն: Նրանց հետ մանկավարժական զրույցից պարզվեց, որ նման պատասխանի հիմնական պատճառն այն է, որ իրենց կարծիքով հայաստանյան դպրոցներում առկա մարզական բազաներն ու մարզագույքը բավարար չեն նոր պայմաններով աշխատելու համար: Կան նաև ուսուցիչներ, որոնք հարցման պահին ծանոթ չէին նոր փաստաթղթին: Հարցմանը մասնակցած ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների միայն 34%-ն է կարծում, որ ֆիզիկական կուլտուրայի նոր չափորոշիչն ու ծրագիրը լիովին կիրառելի է, իսկ 5,1%-ի կարծիքով՝ մասամբ է կիրառելի (զծապատկեր 1):

Գծապատկեր 1. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական նոր չափորոշիչի և ծրագրի կիրառելիության աստիճանը (տոկոսներով)




Հարցվածների մեծ մասի՝ 64,6%-ի հավաստմամբ՝ նոր չափորոշում և ծրագրում դպրոցականների տարիքային խմբերին ներկայացվող պահանջները հաշվի են առնված (գծապատկեր 2), իսկ նրանց 69,7%-ը անգամ վստահ է, որ առաջարկվող վերջնարդյունքները չափելի են (գծապատկեր 3):

Գծապատկեր 2. Դպրոցականների տարիքային խմբերին ներկայացվող պահանջների հաշվառումը նոր չափորոշում և ծրագրում (տոկոսներով)




Գծապատկեր 3. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական նոր ծրագրում ներկայացված վերջնարդյունքների չափելիությունը (տոկոսներով)



Ինչպես երևում է 4-րդ գծապատկերից, դպրոցական ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների մեծամասնությունը՝ 62,9%-ը հակված է այն կարծիքին, որ նոր ծրագիրը կարող է բարելավել սովորողների բարոյահոգեբանական հատկանիշները:


Գծապատկեր 4. Ֆիզիկական կուլտուրայի նոր ծրագրի ներգործությունը դպրոցականների բարոյահոգեբանական հատկանիշների բարելավման վրա (տոկոսներով)



Սա, հավանաբար, կապված է հատկապես սպորտայնացված դասերի ներդրման հետ ու բնորոշ հուզական հագեցվածությամբ, որտեղ երեխաները բացահայտում են թե՛ սեփական, թե՛ իրենց միմյանց անձնային հատկանիշները: Այս հանգամանքն ուսուցիչ-մարզչին մեծ հնարավորություն է ընձեռնում ակտիվ վերահսկելու մարզման գործընթացը, ու դրա ներգործությունն ուղղորդել դրական բարոյահոգեբանական հատկանիշների ձևավորմանն ու զարգացմանը:


Հետաքրքրական է նաև այն, որ հարցվածների 57,8%-ի պատկերացմամբ ֆիզիկական կուլտուրայի նոր չափորոշչով ու ծրագրով աշխատելու դեպքում մեծանում է դասավանդման մեթոդների փոփոխության հնարավորությունը, ինչն իր հերթին դրական երևույթ է: Այս մոտեցմանը մասամբ է համակարծիք ուսուցիչների 30,6%-ը, դեմ է արտահայտվում՝ միայն 10,2%-ը (գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Ֆիզիկական կուլտուրայի նոր չափորոշչով ու ծրագրով դասավանդման մեթոդների հնարավոր փոփոխությունները (տոկոսներով)




Ներկայացված 6-րդ գծապատկերից պարզ է դառնում, որ ֆիզիկական կուլտուրայի հարցված ուսուցիչներից ոչ բոլորն են իրենց գործունեության ընթացքում իրականացնում նախագծային ուսուցում: Ի դեպ, նախագծային ուսուցումը, ըստ հանրակրթական պետական նոր չափորոշի, պարտադիր է բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական կուլտուրայի առարկայական չափորոշով և ծրագրով:

Գծապատկեր 6. Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների կողմից անցկացվող նախագծային ուսուցումը (տոկոսներով)




Ընդ որում, հարցվածների մեջ գերակշռում են ֆիզիկական կուլտուրայի այնպիսի ուսուցիչները, որոնք միջառարկայական կապերով դասեր են անցկացնում: Այս առումով ևս նոր ծրագրում առկա են որոշակի շեշտադրումներ (գծապատկեր 7):

Գծապատկեր 7. Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների անցկացրած միջառարկայական կապերով դասերը (տոկոսներով)



Ինչ վերաբերում է ֆիզիկական դաստիարակության ընթացքում ՏՏՏ միջոցների կիրառմանը, ապա, ըստ հարցման, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների միայն 52,7%-ն է դրանք կիրառում, 34%-ը՝ մասամբ, իսկ 11,9%-ը ընդհանրապես դասերն անցկացնում է առանց այդ միջոցների կիրառման (գծապատկեր 8):

Գծապատկեր 8. Ֆիզիկական դաստիարակության ընթացքում կիրառված ՏՏՏ միջոցները (տոկոսներով)



Հարցերից մեկը վերաբերում էր երեք կարևոր խնդիրների առանձնացմանը, որոնք, ըստ հարցվող ուսուցիչների, լուծում են ֆիզիկական կուլտուրայի նոր չափորոշիչն ու ծրագիրը: Այսպես, ուսուցիչները կարծում են, որ ֆիզիկական կուլտուրայի նոր չափորոշչով ու ծրագրով աշխատելով՝ հնարավոր է ապահովել դասերի միջառարկայական կապերը, բացի այդ՝ նշված տեսական դասերի նոր թեմաներն ավելի արդիական են, դասերի որակը կբարելավվի, ինչի արդյունքում էլ դպրոցականների մոտ կծնավորվեն դասերին մասնակցելու իրական դրդապատճառներ: Այս համատեքստում ուսուցիչները հատկապես կարևորում են ֆիզիկական կուլտուրայի սպորտայնացումը: Հարցվածների մի մասի կարծիքով՝ նախագծային աշխատանքի պարտադիր լինելը լրացուցիչ բեռնվածություն է թե՛ ուսուցչի, թե՛ դպրոցականների համար: Թեպետ հնարավոր է հետաքրքիր թեմաներով նախագծեր իրականացնել ոլորտին վերաբերող թեմաներով: Ընդ որում՝ հարցված մասնագետներից շատերը համոզված էին, որ ամիրաժեշտ է ֆիզիկական կուլտուրայի նոր չափորոշչում և ծրագրում ավելացնել ուժային պատրաստության բաժինը՝ շաբաթական ժամաքանակը հասցնելով երեքի, մինչդեռ որոշ հարցվածներ փոխելու անհրաժեշտություն չի տեսնում:

Մի մասի կարծիքով ֆիզիկական կուլտուրայից դպրոցականների գնահատումը պետք է լինի ըստ նորմատիվների, բայց 10 միավորանոց համակարգով, իսկ ոմանք նույնիսկ առաջարկում են հրաժարվել

միավորային գնահատումից կամ անցնել գնահատման այլ տարբերակների: Բացի այդ մասնագետներ կան, որոնց կարծիքով տարրական դասարաններում սովորողներին գնահատելու լավագույն տարբերակներից են որակական բնութագրերը: Հարցվածներից շատերն էլ կողմնակից են ներկայիս գնահատման համակարգին:

Եզրակացություն

Այսպիսով, կարելի է հաստատել, որ ֆիզիկական կուլտուրայի հարցված ուսուցիչները, ընդհանուր առմամբ, թերահավատորեն են վերաբերվում դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգի բարեփոխումներին: Միևնույն ժամանակ, շատ մասնագետներ դրական են վերաբերվում այն փոփոխություններին, որոնք նախատեսվում են ֆիզիկական կուլտուրայի նոր ծրագրով: Մի շարք ուսուցիչներ նշել են, որ իրենց աշխատանքային գործունեության ընթացքում արդեն իսկ իրագործում են նոր ծրագրի մի շարք հայեցակետեր, որոնք մասնավորապես վերաբերում են միջառարկայական կապերին և S<S միջոցների կիրառմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Аванесов Э. Ю., Габриелян О. Г., Назарян В. Р., Померанцев А. А., Реализация идеи спортизации в новом стандарте по предмету «Физическая культура» для школьников Армении / Гуманитарные исследования центральной России, Научный журнал, ФГБОУ ВО «Липецкий государственный педагогический университет имени П.П. Семенова-Тян-Шанского», № 1(18), 2021, с. 66-71.
Avanesov Je. Ju., Gabrieljan O. G., Nazarjan V. R., Pomerancev A. A. Realizacija idei sportizacii v novom standarte po predmetu «Fizicheskaja kul'tura» dlja shkol'nikov Armenii / Gumanitarnye issledovanija cel'ntral'noj Rossii, Nauchnyj zhurnal, FGBOU VO «Lipeckij gosudarstvennyj pedagogicheskij universitet imeni P.P. Semenova-Tjan-Shanskogo», № 1(18), 2021, s. 66-71.
2. Гуков А. С., Махов С. Ю., Инновации в мире физической культуры и спорта / Физическая культура, спорт и туризм. Интеграционные процессы науки и практики: материалы IX Международной научно-практической конференции 28-30 апреля 2016 г. Орел. / НИЦ МАБИВ, ФГБОУ ВО «Орловский государственный университет имени И.С. Тургенева», под. ред. В. С. Макеевой–Орел, 2016.– 4 (10).с. 41-47.
Gukov A. S., Mahov S. Ju., Innovacii v mire fizicheskoi kul'tury i sporta / Fizicheskaja kul'tura, sport i turizm. Integracionnye processy nauki i

praktiki: materialy IX Mezhdunarodnoj nauchno-prakticheskoj konferencii 28-30 aprelja 2016 g. Orel. / NIC MABIV, FGBOU VO «Orlovskij gosudarstvennyj universitet imeni I.S. Turgeneva», pod. red. V. S. Makeevoj–Orel, 2016.– 4 (10).s. 41-47.

3. Манжелей И. В., Инновации в физическом воспитании: учебное пособие.– Москва, Берлин: Директ-Медиа, 2015.– 146 с.
Manzhelej I.V. Innovacii v fizicheskom vospitanii: uchebnoe posobie.– Moskva, Berlin: Direkt-Media, 2015.– 146 s.

ЭРНЕСТ АВАНЕСОВ - ОСНОВНЫЕ ОСОБЕННОСТИ ВНЕДРЕНИЯ НОВОЙ ПРОГРАММЫ И СТАНДАРТА ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ В ШКОЛАХ

Ключевые слова: учителя физической культуры, анкетный опрос, новый стандарт и программа.

В статье представлены данные анкетного опроса, проведенного среди учителей физической культуры общеобразовательных и старших школ Еревана, а также Ширакской и Лорийской областей. В частности, было выявлено отношение школьных учителей физической культуры к реформам, проводимым в данной сфере. Установлено, что часть респондентов с недоверием относится к реформам системы школьного физического воспитания. Несмотря на это, опрошенные специалисты, в целом, приветствуют программные изменения, инициированные в данной сфере. Некоторые педагоги уже приступили к реализации различных положений новой программы в своей педагогической деятельности.

ERNEST AVANESOV - MAIN FEATURES OF IMPLEMENTING A NEW PROGRAM AND STANDARD OF PHYSICAL EDUCATION AT SCHOOLS

Keywords: physical culture teachers, questionnaire survey, new standard and programme.

The article presents the data of a questionnaire survey among physical education teachers of general and high schools in Yerevan, Shirak and Lori regions. In particular, the attitude of school teachers of visual culture to the reforms carried out in this area was revealed. In particular, it turned out that the majority of respondents do not trust the reforms of the school physical education system. Nevertheless, the interviewed specialists have a generally positive attitude towards the program changes taking place in the field, moreover, there are teachers who are already implementing various provisions of the new program into their work.

Ներկայացվել է՝
Գրախոսվել է՝

15.09.2023 թ.
16.10.2023 թ.

**ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԵՐԻՆ
ԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

Համառոտագիր

Հոդվածում անդրադարձ է արվում ինքնակրթության արժեհամակարգի զարգացման կարևորությանը և դրա անհրաժեշտությանը աշակերտների համար՝ որպես ուսուցման վերջնական պատակ: Ինքնակրթության զարգացման համար էական նշանակություն ունի համապատասխան դասերի ընտրությունը, քանի որ ինքնակրթության արժեհամակարգի զարգացումն ինքնին կարող է լինել դժվար չափելի: Այսպիսով, մենք կենտրոնանում ենք համապատասխան կարողությունների, հմտությունների զարգացման վրա: Հոդվածում փորձ է արվում ինքնակրթության զարգացումը դիտարկել ինտեգրված դասերի միջոցով: Ինտեգրված դասերը՝ լինելով դասերի ավելի ճկուն տիպ, հնարավորություն են տալիս և՛ աշակերտին, և՛ ուսուցչին ազատություն ցուցաբերել ուսուցման նպատակին հասնելու համար: Բնականաբար, այստեղ կարևոր է ոչ միայն դասի տիպի, այլև համապատասխան առաջադրանքների ընտրությունները: Առաջադրանքները պետք է լինեն ինտերակտիվ, մոտիվացիոն՝ աշակերտներին հնարավորինս դասապրոցեսում ընդգրկելու համար: Ամենակարևորը, դրանք պետք է խթանեն աշակերտների հետաքրքրասիրությունը, որպեսզի նրանք ինքնուրույն, հավելյալ աշխատանք կատարելու պատրաստակամություն ցուցաբերեն: Հոդվածում ներկայացվում են առաջադրանքների օրինակներ, որոնք կարող են օգտագործվել դասապրոցեսում: Առաջադրանքները խրախուսում են աշակերտների մոտ մի շարք կարողությունների զարգացումը:

Հիմնաբաներ՝ ինտեգրված դաս, ուսուցում, ուսումնառություն, կոմպետենցիա, հմտություն, արժեհամակարգ, ինքնակրթություն:

Ներածություն

Կրթությունը ներկայումս փոխում է իր բնույթը ժամանակին համընթաց: Այսօր հասարակությունը կրթությունից պահանջում է ոչ միայն աշակերտներին ապահովել գիտելիքներով, այլև անհրաժեշտ կարողություններով և հմտություններով, որպեսզի նրանք կարողանան հետագայում ինքնուրույն ինքնաիրացվել հասարակությունում: Կարծում

ենք, որ մեր օրերում գնալով ավելի է բարձրանում ինքնակրթության կարևորությունը: Ինքնակրթության արժեհամակարգի ձևավորման և զարգացման արդիականությունն ավելի է, քան երբևէ: Այն պայմանավորված է տեղեկատվության ստեղծման, փոփոխության և կիրառելիության տեմպով: Ֆորմալ ուսումնական հաստատությունները լինելով համեմատականորեն ավելի պահպանողական կառույցներ, ի վիճակի չեն համարժեքորեն արձագանքել այդ տեմպին: Այստեղից առաջանում է ոչ այնքան ուսումնական ծրագրերը, նյութերը, պլանները փոփոխելու, այլև աշակերտներին պատրաստելու անհրաժեշտությունը: Աշակերտները կարիք ունեն օժտված լինել կոմպետենցիաներով, որոնք կօգնեն նրանց արդեն իրենց անհրաժեշտ կերպով «հարմարվել» ստեղծված իրավիճակին: Այսպիսով, դրսևորվում է կարևորությունը աշակերտների մոտ ինքնակրթության արժեհամակարգի ձևավորման համար, որով էլ պայմանավորվում է մեր հոդվածի **արդիականությունը**:

Հոդվածի նպատակն է՝

Ուսումնասիրել ինքնակրթության զարգացման հնարավորություններն ինտեգրված անգլերենի դասերին:

Հոդվածի խնդիրներն են՝

- Վերլուծել ինքնակրթության արժեհամակարգի զարգացման կարևորությունը աշակերտների ուսումնառության գործընթացում:
- Վեր հանել ինտեգրված դասերի առանձնահատկությունները:
- Ներկայացնել ինքնակրթության արժեհամակարգի զարգացմանն ուղղված առաջադրանքներ, որոնք կարող են օգտագործվել անգլերենի դասերի ժամանակ:

Հոդվածի **տեսական նշանակությունը՝** համապարփակ վերլուծության են ենթարկվում ինքնակրթությունը և ինտեգրված դասերը: Վեր են հանվում դրանց հիմնական դրույթները՝ տեսական առանձնահատկությունները, կարևորությունը և գործնական կիրառելիության հնարավորությունները: Տեսական ուսումնասիրությունը թույլ է տալիս կազմել գործնական առաջադրանքներ:

Հոդվածի **գործնական նշանակությունը՝** տեսական ուսումնասիրության միջոցով հնարավոր եղավ կազմել առաջադրանքներ, որոնց համար հիմք են հանդիսանում օտար լեզուների դասավանդման նոր չափորոշիչների պահանջները և Cambridge Competences Framework-ից սովորել սովորելու (learning to learn) կոմպետենցիան: Առաջադրանքներն ունեն գործնական կիրառություն և կարող են օգտագործվել անգլերենի ուսուցման գործընթացում: Առաջադրանքների տիպերը կարող են օգտագործվել հատկապես ավագ դպրոցի անգլերենի դասերի ժամանակ:

Հետազոտական աշխատանքի իրականացման **մեթոդներն** են՝ վերլուծություն, համադրում, համեմատություն, մոդելավորում:

Ինքնակրթության դերը ուսումնառության գործընթացում

Այստեղ անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչու են ինքնակրթության կարևորությունը:

Կրթությունը ֆորմալ, ինստիտուցիոնալ միջավայր է, որը ենթարկվում է համակարգային խիստ կանոններին: Ինքնակրթությունը մեթոդ է, որն ամբողջությամբ իրացվում է ինստիտուցիոնալ համակարգից դուրս: Ինքնակրթությունը կապված է այս պարագայում աշակերտի ազատ կամքի հետ, ինչն էլ սահմանում է ինքնակրթության մտադրությունը և նպատակը: Ինքնակրթությունը ուսումնառություն է, որն ազատ է համակարգի կանոններից, այնուամենայնիվ, դեռևս արձագանքում է ֆորմալ կրթության պահանջներին՝ փորձելով փոխլրացնել այն: Հիմնական տարբերությունը, որն առկա է ֆորմալ կրթության և ինքնակրթության միջև, այն է, որ ինքնակրթության առանցքը աշակերտի ազատ կամքն է (Oprea, 2021): Այս պարագայում մեզ համար կարևոր է ոչ միայն ազատ կամքը, այլև ինքնակազմակերպվելու ընդունակությունը:

Այս պարագայում ֆորմալ կրթության միջավայրում դպրոցի պարտքն է պատրաստել և զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են ինքնակրթությունը ձևավորելու, հղկելու և զարգացնելու համար:

Աշակերտների ինքնակրթության պատրաստակամության ձևավորումը սկսվում է ինքնուսուցման գործընթացում, երբ վերարտադրվում է սոցիալ-պատմական փորձը (գիտելիքը) և ավարտվում ինքնաստեղծման գործընթացով (ինքնակրթության մեթոդներ): Ինքնակրթության պատրաստակամությունը բնութագրվում է աշակերտի ակտիվությամբ, տրված առաջադրանքից դուրս գալու ցանկությամբ, իր գիտելիքների շրջանակի ընդլայնմամբ, դրանք իր սուբյեկտիվության պրիզմայով փոխակերպմամբ և հիմնվելով իր սուբյեկտիվ փորձի վրա՝ օգտագործել ինքնակառավարման տարբեր մեթոդներ:

Ինքնակրթության հմտությունները զարգանում են հիմնականում ուսումնական ծրագրով նախատեսված աշակերտների տարբեր տեսակի ինքնուրույն աշխատանքի անցկացման գործընթացում (անհրաժեշտ գրականության ընտրություն, գրառումներ կատարել, ամփոփել կարդացածը, թեզեր գրել, պատրաստել հաշվետվություններ և այլն): Աշակերտները օգտագործում են տեղեկատու գրականություն, բառարաններ (Գույումջյան, 2022):

Հատկապես ուսումնական գործընթացում ինքնակրթությունը ձևավորվում է ինքնուրույն աշխատանքների միջոցով: Այսօր

անհրաժեշտություն կա սովորողների մոտ ձևավորելու ճանաչողական ինքնուրույնություն, տարբեր ճանաչողական և գործնական խնդիրներ առաջադրելու և լուծելու կարողություն, գործունեության մի ոլորտից մյուսը գիտելիքներ փոխանցելու և կիրառելու ունակություն: Դասից դուրս անհատական աշխատանքը կա՛մ նախորդում է լսարանային աշխատանքին՝ ապահովելով դրա արդյունավետությունը, կա՛մ լսարանային աշխատանքի բնական շարունակությունն ու տրամաբանական ավարտն է, որի արդյունավետությունը կախված է լսարանային պարապմունքների նախապատրաստման և անցկացման որակից (Բաբայան, 2021):

Ինտեգրված դասը՝ որպես ոչ կադապարային դասի տիպ

Ինտեգրված դասերի քառագույլ Ջեյմս Բինը նշում է, որ «Ուսումնական ծրագրի ինտեգրումը պարզապես տարբեր առարկաների դասերի պլանների վերադասավորում կամ մակերեսային վերափոխումներ պահանջող կազմակերպչական գործիք չէ: Այն ուսումնական ծրագիր կազմելու ձև է, որի նպատակն է՝ առանց առարկաների սահմանները հաշվի առնելու՝ մանկավարժների ու հարցերի շուրջ ուսումնական ծրագրով անհատական և հասարակական ինտեգրման հնարավորությունների ընդլայնումը» (Դավթյան, 2007, էջ 58): Միաժամանակ, ինքնակրթության արժեհամակարգի զարգացման համար էական է ռազմավարության մշակումը՝ համապատասխան դասի տիպի ընտրությունը: Այս պարագայում կարող են դիտարկվել ինտեգրված դասերը: Ինտեգրված դասերի համապատասխանելիությունը պայմանավորված է դրանց ավելի քիչ կադապարվածությամբ՝ համեմատած ավանդական դասերի հետ: Կադապարներից ազատ լինելը հնարավորություն է տալիս, հետ չընկնելով ուսումնական ծրագրերից, դասն օգտագործել ի նպաստ աշակերտների: Ինտեգրված ուսումնական ծրագրի հիմքն առարկաների միջև սահմանագծերի թուլացումն է: Առարկաների կամայական և հաճախ արհեստական սահմաններից ձերբազատվելու կարևորությունն ընդգծելով՝ ինտեգրված ուսումնական ծրագիրը սովորողին հնարավորություն է տալիս որոշակի թեմա ուսումնասիրել՝ օգտագործելով նախկինում առանձին առարկաներից ստացած գիտելիքներն ու ձեռք բերած հմտությունները: Որոշ թեմաներ ուսումնասիրելու, տարբեր հմտություններ զարգացնելու և մտավոր լուրջ աշխատանք պահանջող վարժություններ կատարելու համար աշակերտների տարբեր խմբերին սովորականից ավելի ժամանակ է տրամադրվում: Նրանք խորանում են ուսումնասիրության մեջ՝ գիտակցելով, որ լուրջ աշխատանք են կատարում: Մինչև ուսումնական գործընթացի սկսվելն ուսուցիչները պետք է որոշեն (և պետք է իմանան), թե աշակերտներին ինչ է պետք սովորեցնել: Մյուս ուսումնական

ծրագրերի համեմատությամբ՝ այստեղ աշակերտների դերն այն է, որ նրանք հնարավորություն են ստանում ընտրություն կատարելու նույն առաջադրանքի համար ուսուցչի կողմից պլանավորած բազմազան այլ վարժությունների միջև: Ուսումնական ծրագրի ինտեգրման 4 հիմնական բնորոշ գծերն են՝

- Աշակերտները և ուսուցիչները համատեղ պլանավորում են ուսումնական ծրագիրը և նրա իրագործման կարգը:

- Ուսումնառական միջոցառումների առանցքները թեմաներն են:

- Ուսումնառությունն ընթանում է դպրոցական համայնքում՝ ժողովրդավարական սկզբունքով:

- Ուսումնական ծրագիրն այլևս կազմված չէ առանձին առարկաներից (Դավթյան, 2007, էջ 53-59):

Ինտեգրված դասը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթների ընկալմանը, գիտակցմանն ու ըմբռմանը՝ հիմք ընդունելով աշակերտների անձնական և հասարակական հետաքրքրությունները:

Ինտեգրված դասերը հաճախ համագործակցային, հետազոտական, ստեղծագործական են և ուղեկցվում են բացահայտումներով: Ինտեգրված դասերն աշակերտին տալիս են լայն և վառ պատկերացումներ այն աշխարհի մասին, որտեղ նա ապրում է: Ինտեգրումը ուսուցչին ինքնահաստատման և ինքնաարտահայտման հնարավորություն է տալիս, որն էլ իր հերթին օգնում է աշակերտների ունակությունների բացահայտմանը, քննական մտածողության զարգացմանը: Ինտեգրված դասի հիմնական նյութը դառնում է դասի համակարգային նշանակության բաղադրիչը: Համակարգային կարող է լինել ինտեգրված դասի միայն այն հատվածը, որը որոշում է առաջադրանքի նպատակը: Նման բաղադրիչներ են դառնում առանձին հասկացությունները, կանոնները, օրենքները, գաղափարները, մեթոդները կամ ուսումնառության միջոցները: Ինտեգրման ձևը կախված է դասի նպատակից և համակարգային բաղադրիչի ընտրությունից (Միլիտոսյան, 2021):

Կարևոր է շեշտադրել, որ նույնիսկ նոր չափորոշիչներն են անդրադառնում ինքնակրթության կարևորությանը: Նոր չափորոշիչներում (2020) նշվում է, որ *ինքնուրույն ուսուսումնառության և ինքնազարգացման կարողությունների խթանումը օտար լեզուների դասավանդման նպատակներին հասնելու ուղիներից մեկն է*: Նույն կերպ 9-րդ դասարանի օրինակելի պլաններից մեկում շեշտվում է հետևյալ նպատակը՝ *ձևավորել ինքնուրույն սովորելը և կրթության շարունակականությունը արժևորող վերաբերմունքը*: Սա նաև ուսուցման վերջնարդյունքներից մեկն է՝ *դրսևորել ինքնուրույն սովորելու կարողություն*:

Այսպիսով, ենթադրվում է, որ աշակերտը պետք է կարողանա ինքնուրույն պարզ հետազոտական աշխատանքներ իրականացնել և հանգել եզրակացությունների: (Չափորոշիչ, 2020)

Ինքնակրթության կարևորությանն է անդրադառնում Քեմբրիջի կոմպետենցիաների շրջանակը (The Cambridge Competences Framework): Այն անդրադառնում է 21-րդ դարում անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսումնառության համար անհրաժեշտ կոմպետենցիաներին: Կոմպետենցիաները ներկայանում են որպես այն էական հմտությունները, որոնք առկա են կրթության տարբեր մակարդակներում՝ անկախ աշակերտների տարիքից: Այստեղ դիտարկվում են ոչ միայն ֆորմալ կրթության տարբեր աստիճանները (տարրական, միջնակարգ, բարձրագույն և մասնագիտական), այլև բարձրագույն կրթության ավարտից հետո կրթությանն անհրաժեշտությունը աշխատավայրում:

Սովորել սովորելու կոմպետենցիան գործնական հմտություններ է զարգացնում սեփական ուսումնառությունը կազմակերպելու, դրա դեկավարության դերը ստանձնելու և դրա վերաբերյալ եզրակացություններ կատարելու համար: Սովորել սովորելու կոմպետենցիայի միջուկը սեփական ուսումնառության նկատմամբ եզրակացություններ կատարելը և գնահատելն է: Այն ունի հետևյալ բաղադրիչները՝


- Ուսումնառության կազմակերպման հմտությունների և ռազմավարությունների զարգացում,
- Սեփական ուսումնառության կառավարում,
- Հետահայացք սեփական ուսումնառությանը և դրա գնահատումը (Cambridge Life Competences Framework: Learning to Learn, 2020):

Հաջորդիվ ներկայացվում են առաջադրանքներ, որոնց մոտիվները վերցված են Cambridge Life Competences Framework Activity Cards for Teachers: Adult learners գրքից (Blue, 2021) :

Առաջադրանք 1: Շարադրություն գրել "Global Warming" թեմայով՝ հեղինակելով ներկայացված պահանջներին և ներկայացնել դրանք դասընկերներին:

Task 1: Write an essay on "Global Warming" following the guidelines.

Աշակերտներին է ներկայացվում "Global Warming" թեման, որը ընդգրկված է անգլերենի 10-րդ դասարանի դասագրքում: Թեմայի ներմուծման համար օգտագործվում է մտազրոհի մեթոդը: Այս մեթոդի օգտագործման նպատակն է վեր հանել մարդկային կենսունակության այն բոլոր բնագավառները, որոնց վրա կարող է ազդեցություն ունենալ գլոբալ տաքացումը: Այս մեթոդի միջոցով դասարանն ուսումնասիրում է գլոբալ տաքացումը ոչ թե սոսկ որպես առանձին երևույթ, այլև որպես երևույթ, որն անմիջական կապ ունի այլ երևույթների հետ:



Գծապատկեր 1


Աշակերտները կարող են հանգել տարբեր եզրակացությունների և վեր հանել տարբեր կապեր: Այստեղ ուսուցչի պարտականությունն է հետևել և ուղղորդել աշակերտների քայլերը: Աշակերտները այս ընթացքում ծանոթանում են թեմային: Մտագրողի առաջին փուլի ավարտից հետո աշակերտները և ուսուցիչը փորձում են տարբեր գաղափարներն ընդհանրացնել առանձին խմբերում: Աշակերտներին հանձնարարվում է տանն ուսումնասիրել թեման և գրել փոքրիկ շարադրություն: Դասի ժամանակ առանձնացված թեմաները աշակերտները օգտագործում են ինքնուրույն ուսումնասիրության իրականացման համար: Դրանք ծառայում են որպես ուղենիշ: Միաժամանակ սեփական ուսումնառության վերահսկման և կազմակերպման համար աշակերտներին են տրամադրվում քարտեր, որոնց ձախ կողմում նշված են ուղենիշներ: Աշակերտները աջ հատվածում նշում են, որքանով են նրանք կատարում այդ պահանջները:

In this essay ...	Yes	No	Maybe
1. I have found at least 3 different spheres affected by global warming			
2. I have written about them in my essay showing their connection to global warming			
3. I have used at least 3 resources to find out more about global warming and its consequences.			
4. I have learned new things I didn't know.			

Գծապատկեր 2

Առաջադրանք 2: Լսել ընկերների շարադրությունները և վերլուծել դրանք՝ ըստ ներկայացված կառույցի:

Task 2: Listen to your classmate's essay presentations and analyze them accordingly.



Գծապատկեր 3

Առաջադրանք 3: Կազմել հարցեր ընկերների համար թեմայի անհասկանալի կետերի վերաբերյալ:

Task 3: Make questions for friends about points in the topic you did not understand well.




Գլոբալ տաքացում (Global warming) թեման ուսումնասիրելուց, դրա մասին կարդալուց և շարադրություն գրելուց հետո աշակերտները առանձանանցնում են այն կետերը, որոնք նրանց համար անհասկանալի կամ դժվար էին: Հարցերը ուսուցչին հղելու փոխարեն՝ աշակերտները դրանք գրի են առնում: Հարցերը գրվում են թերթիկների վրա, և աշակերտները պատահականության սկզբունքով ընտրում են: Աշակերտները կարող են հարցերի վրա աշխատել 2-3 հոգանոց խմբերով: Այսպիսով, ուսուցիչը չէ հարցերին պատասխանողը, աշակերտները ստիպված են ինքնուրույն հետազոտություններ կատարել տարբեր հարցերին պատասխանելու համար:

Առաջադրանք 4: Ներկայացնել մարդկային գործունեության այն բնագավառները, որոնք որոշակիորեն կապված են գլոբալ տաքացման հետ:

Task 4: Show all the immediate spheres that are in any way connected to global warming.



Այստեղ աշակերտները փորձում են դիտարկել նաև այն, թե ինչ անմիջական ազդեցություն կարող է ունենալ գլոբալ տաքացումը հենց իրենց վրա: Նրանք կարող են մտածել այդ հարցի շուրջ օգտագործելով այս հարցերը՝

-  How does this relate to me?
-  What experiences do I have that relate to this?
-  What beliefs do I have that relate to this?

Հաշվի առնելով կատարված աշխատանքին գնահատական տալու կարևորությունը՝ կարելի է առաջարկել աշակերտներին պատասխանել հետևյալ հարցերին՝

Ինձ դուր եկավ _____:
Ինձ դուր չեկավ _____:
Ինձ _____:

օգնեց նոր գիտելիքներ ձեռք բերել:

Ինձ խանգարեց _____:
Ես կցանկանայի փոփոխել _____:

Նման գնահատման մոտեցումը ոչ միայն նպաստավոր կլինի աշակերտների ինքնաճանաչման համար, այլև կօգնի ուսուցչին վեր հանել առկա խնդիրները, գտնել դրանց լուծման ուղիները:

Առաջադրանք 5: Կազմակերպել բանավեճ՝ տարբեր մասնագետների մասնակցությամբ:

Task 5: Organize a debate with different professionals.

Կազմակերպվում է բանավեճ տարբեր մասնագետների մասնակցությամբ: Աշակերտներն իրենք են ստանձնում աշակերտների դերն, այդ իսկ պատճառով դերերը հանձնարարվում են ուսուցչի կողմից նախօրոք, որպեսզի աշակերտները կարողանան նախապատրաստվել և որոշակի հետազոտություններ կատարել: Դերերը հետևյալն են՝ գործարար, տնտեսագետ, բժիշկ, կենսաբան, քաղաքական գործիչ, լրագրող: Աշակերտներից յուրաքանչյուրն իր ուրույն հետազոտությունն է կատարում: Այստեղ կարևոր է առանձնացնել 2 հիմնական կետ: Փորձում է օգտագործվել “devil’s advocate” մեթոդը: Մասնակիցները բաժանվում են 2 խմբի՝

Խումբ 1 (տնտեսագետ, գործարար, քաղաքական գործիչ),

Խումբ 2՝ (բժիշկ, կենսաբան, լրագրող): Նրանք պաշտպանում են հետևյալ տեսակետերը: Այստեղ կարևոր է փաստել, որ մասնակիցներն իրենց ելույթների ընթացքում պետք է ներկայացնեն փաստացի ապացույցներ: Նրանք պետք է պահպանեն հետևյալ սկզբունքը՝ ներկայացնել տեսակետ, բացատրել, բերել օրինակ:

Team 1 (economist, entrepreneur, politician)

The Global warming is exaggerated and even considering the dangers

Team 2 (doctor, journalist, biologist)

The Global warming is extremely dangerous and we cannot

Գծապատկեր 4

Եզրակացություն

- Իրականացված աշխատանքից հետո մեզ համար պարզ դարձավ, որ՝
- Ինքնակրթության զարգացման կարևորությունը գնալով ավելի է մեծանում՝ կապված տեղեկատվության աննախադեպ արագ զարգացման հետ:
- Ինտեգրված դասերը, լինելով համեմատաբար ոչ կաղապարված դասեր, նպաստում են ինքնակրթության զարգացմանը:
- Ե՛վ ինքնակրթությունը, և՛ ինտեգրված դասերը շեշտադրում են աշակերտների ազատ կամաարտահայտությունը:
- Ե՛վ ինքնակրթության, և՛ ինտեգրված դասերի հիմնական առանցքը տրված տեղեկատվության սահմաններից դուրս գալն է:
- Ինքնակրթությունը ոչ այնքան աշակերտի կողմից հանձնարարված նյութի սահմաններից դուրս գալն է, որքան տեղեկատվության որոնման ուղիներ գտնելը, այն կառավարելը, ռազմավարություններ մշակելը, որպեսզի վերջինիս հետագա իրացումը հասարակական կյանքում լինի հնարավորինս նպատակային և արդյունավետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Բաբայան Ա., Ղուկասյան Ա., Պետրոսյան Ս., Ուսանողների ինքնուրույն աշխատանքի առանձնահատկություններն օտար լեզու սովորելու գործընթացում. Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի բանբեր, էջ 83-96. 2021
Babayan A., Ghowkasyan A., Petrosyan S., Owsanoghneri inqnowrowyn ashxatanqi ar'and'nahatkowt'yownnern o'tar lezow sovorelow gorc'y'nt'acowm. V. Bryowsovi anvan petakan hamalsarani banber, e'j 83-96. 2021 (In Armenian)
2. Գույումջյան Շ., Կրթությունն ու ինքնակրթությունը որպես դասավանդման արդյունավետության բաղադրիչ. Հրազդան: Հրազդանի թիվ 12 հիմնական դպրոց. 2022
Gowyowmjyan Sh., Krt'owt'yowonn ow inqnakrt'owt'yowny' orpes dasavandman ardyownavetowt'yan baghadrich. Hrazdan: Hrazdani t'iv 12 himnakan dproc. 2022 (In Armenian)
3. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., Կրթական մշակման և ինտեգրման մոտեցումներ. Երևան: Այոեքս. 2007
Davt'yan M., Grigoryan Q., Arnaowdyan A., Zohrabyan A., Hovhannisyanyan G., O'hanova I., . Krt'akan mshakman & integrman motecowmner. Er&an: Ayr'eqs. 2007 (In Armenian)

4. ՀՀ կրթության բարելավման ծրագրի օտար լեզուներ ուսումնական բնագավառի հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքները և օրինակելի ծրագրերը (անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն) Երևան: ԿԳՄՄՆ. 2020
HH krt'owt'yan barelavman c'ragri o'tar lezowner owsowmnakan bnagavar'i hanrakt'owt'yan ar'arkayakan chap'oroshchayin verjnardyownqner'y' & o'rinakeli c'ragrery' (angleren, germaneren, r'owseren, franseren). Erevan: KGMSN. 2020 (In Armenian)
5. Միլիտոսյան Լ., Գաբրիելյան. Ա., Ինտեգրված դասերի դերն ամբողջական աշխարհայացքի զարգացման գործընթացում. Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Բանբեր, էջ. 82-93. 2021
Militosyan L., Gabrielyan. A. Integrvac' daseri dern amboghjakan ashxarhayacqi zargacman gorc'y'nt'acowm. V. Bryowsovi anvan petakan hamalsarani Banber, e'j. 82-93. 2021 (In Armenian)
6. Blue J., *Cambridge Life Competences Framework Activity Cards for Teachers: Adult learners*. Cambridge : Cambridge University Press. 2021
7. *Cambridge Life Competences Framework: Learning to Learn*. Cambridge: Cambridge University Press. 2020.
8. Oprea M. I., Self-Education and Lifelong learning. *UASOS-International E-Journal of Advances in Social Sciences, Vol. VII, Issue 19*, 142-145. 2021, April.
9. Բաբայան Ա., Ղուկասյան Ա., Պետրոսյան Ս., Ուսանողների ինքնուրույն աշխատանքի առանձնահատկություններն օտար լեզու սովորելու գործընթացում. Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի բանբեր, էջ 83-96. 2021
Babayan A., Ghowkasyan A., Petrosyan S., Owsanoghneri inqnowrowyn ashxatanqi ar'and'nahatkowt'yownnern o'tar lezow sovorelow gorc'y'nt'acowm. V. Bryowsovi anvan petakan hamalsarani banber, e'j 83-96. 2021 (In Armenian)
10. Գույումջյան Շ., Կրթությունն ու ինքնակրթությունը որպես դասավանդման արդյունավետության բաղադրիչ. Հրազդան: Հրազդանի թիվ 12 հիմնական դպրոց. 2022
Gowyowmjyan Sh., Krt'owt'yownn ow inqnakrt'owt'yowny' orpes dasavandman ardyownavetowt'yan baghadrich. Hrazdan: Hrazdani t'iv 12 himnakan dproc. 2022 (In Armenian)
11. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնատյան Ա., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., Կրթական մշակման և ինտեգրման մոտեցումներ. Երևան: Այդեքս. 2007

Dav'tyan M. , Grigoryan Q., Arnaowdyan A. , Zohrabyan A. , Hovhannisyan G. , O'hanova I. , Krt'akan mshakman & integrman motecowmner. Erevan: Ayr'eqs. 2007 (In Armenian)

12. ՀՀ կրթության բարելավման ծրագրի օտար լեզուներ ուսումնական բնագավառի հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքները և օրինակելի ծրագրերը (անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն) Երևան: ԿԳՄՄՆ. 2020
HH krt'owt'yan barelavman c'ragri o'tar lezowner owsowmnakan bnagavar'i hanrakrt'owt'yan ar'arkayakan chap'oroshchayin verjnardyownqner'y' & o'rinakeli c'ragrery' (angleren, germaneren, r'owseren, franseren). Erevan: KGMSN. 2020 (In Armenian)
13. Միլիտոսյան Լ., Գաբրիելյան Ա., Ինտեգրված դասերի դերն ամբողջական աշխարհայացքի զարգացման գործընթացում. Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Բանբեր, էջ 82-93. 2021
Militosyan L. , Gabrielyan. A. Integrvac' daseri dern amboghjakan ashxarhayacqi zargacman gorc'y'nt'acowm. V. Bryowsovi anvan petakan hamalsarani Banber, e'j 82-93. 2021 (In Armenian)
14. Blue J., *Cambridge Life Competences Framework Activity Cards for Teachers: Adult learners*. Cambridge : Cambridge University Press. 2021
15. *Cambridge Life Competences Framework: Learning to Learn*. Cambridge: Cambridge University Press. 2020.
16. Oprea M. I., Self-Education and Lifelong learning. *UASOS-International E-Journal of Advances in Social Sciences, Vol. VII, Issue 19*, 142-145. 2021, April.

АННА ГАБРИЕЛЯН - ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ САМООБРАЗОВАНИЯ НА ИНТЕГРИРОВАННЫХ УРОКАХ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Ключевые слова: интегрированный класс, преподавание, обучение, компетенция, навык, система ценностей, самообразование

В статье анализируется развитие необходимых навыков самообразования в школе и их важное значение в образовательном процессе. Развитие указанных навыков, в свою очередь, рассматривается в качестве одной из целей обучения. Выбор соответствующих занятий, необходимых для развития навыков, играет стратегически важную роль, поскольку измеримость данного процесса все еще остается дискуссионным вопросом.

В качестве базы для развития навыков самообразования мы рассматриваем интегрированные уроки. Интегрированные уроки - это уникальные виды занятий, которые проводятся вне общепринятых шаблонов и акцентируют свободное волеизъявление учащихся.

Самообразование представляет собой достаточно сложное явление, в связи с чем зачастую трудно определить, используются ли студентами навыки самообразования в реальной жизни.

Интегрированные занятия и самообразование сами по себе являются более гибкими форматами, предоставляющими возможность как студенту, так и преподавателю проявить бóльшую свободу при достижении целей обучения. Естественно, важно не только определить тип занятия, но и подобрать необходимые задания. Последние должны быть интерактивными, мотивирующими. Это будет способствовать максимальному вовлечению студентов в учебный процесс. Задания в данном контексте нацелены на стимулирование любознательности учащихся, а также самостоятельности при выполнении дополнительной работы.

В статье приведены примеры заданий, которые могут быть использованы в учебном процессе. Отдельно рассматривается ряд отечественных и зарубежных точек зрения на самообразование..

ANNA GABRIELIAN - ON PROMOTING SELF-EDUCATION IN INTEGRATED ENGLISH CLASSES

Keywords: *integrated class, teaching, learning, competence, skill, value system, self-education*

In the article, we address the importance of the development of the necessary skills to promote self-education at schools and its importance for students as one of the goals of learning. The choice of appropriate classes is essential for the development of self-education, because the development of the value system of self-education itself can be difficult to measure. To that end, we choose the integrated lessons to achieve this means. Integrated lessons are unique types of classes that are out of patterns taking into the consideration the free will of the students. Self-education is a complex phenomenon and in some ways it is hard to understand whether the students can or cannot use it in real social life. We focus on the development of relevant abilities, skills and review the competence learning to learn. Integrated lessons and self-education themselves are a more flexible, giving both the student and the teacher the opportunity to show freedom in order to achieve the set learning goals. Naturally, it is important not only to choose the type of class, but also to choose the appropriate tasks. Tasks should be interactive, motivating to involve students as much as possible. Most importantly, they should stimulate students' curiosity so that they show willingness to do extra work on their own. The article presents examples of tasks that can be used in the classroom. Tasks encourage the development of a number of abilities in students. We also study some local and international standpoints on self-education and how it is represented.

Ներկայացվել է՝
Գրախոսվել է՝

12.10.2023 թ.
14.10.2023 թ.

**ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԴԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ԱԻԴԱ ԹՈՓՈՒՉՅԱՆ
ԳՐԵՏԱ ՀԱԿՈՔՅԱՆ**

Համառոտագիր

Հոդվածում քննարկվել են արդի ժամանակաշրջանում դաստիարակության առաջնահերթությունների, զարգացման հեռանկարային ուղղությունների նախանշման հարցեր: Դիտարկվել են «կրթություն» և «դաստիարակություն» հասկացությունների մեկնաբանման վերաբերյալ մոտեցումներ: Ներկայացված բազմազան սահմանումների վերլուծությունը բացահայտում է այդ հասկացությունների իմաստաբանական նշանակությունը՝ առավել որոշակիացնելով դրանց կիրառման հարաբերակցությունն ու գործառույթային առանձնահատկությունները: Բնութագրվել են դաստիարակության ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրներ, առաջարկվել են դրանց լուծման ուղիներ: Վերլուծված են թվային տեխնոլոգիաների կիրառման արդյունքում մեդիաանվտանգության ապահովման և այդ ուղղությամբ դաստիարակչական աշխատանքների իրականացման հարցեր:

Հիմնաբաներ՝ կրթություն, դաստիարակություն, վերջնարդյունք, մշակութային միջավայր, մեդիաանվտանգություն, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն, թվային տեխնոլոգիաներ:

Ներածություն

Սոցիալ-քաղաքական և ժողովրդագրական տեղաշարժերի, տեխնոլոգիական զարգացումների, համակարգային փոփոխությունների արդի ժամանակաշրջանում դաստիարակության նպատակի և հեռանկարային զարգացումների որոշման հիմնախնդիրը դառնում է կարևոր առաջնահերթություն: Դաստիարակությունը՝ որպես հասարակական գիտակցության ձև և դրսևորում, պատմամշակութային բոլոր դարաշրջաններում արտահայտել է քաղաքական, տնտեսական, սոցիալական, էթնոմշակութային գործոններն ու հասարակության զարգացման գործընթացները: Հասարակական-պատմական իրողությունների ու դաստիարակության փոխհարաբերությունը յուրաքանչյուր դարաշրջանում նախանշել է այն արժեքային

գերակայությունները, որոնք կազմել են հանրության ազգային քաղաքականության և պետական մտածողության գաղափարական հիմքերը: Հետևաբար դաստիարակության նպատակի սահմանումից, այդ ոլորտում առկա հիմնախնդիրների գիտակցումից, զարգացման հեռանկարային ուղղությունների որոշումից են կախված հանրության քաղաքացիական դիրքորոշման, ճանաչողության և արժեհամակարգի որակական զարգացումները, նորմերն ու չափանիշները:

Անձի դաստիարակությունն արտացոլում է հասարակության աշխարհընկալումը, անհատական և հասարակական գիտակցության շերտերը: Դա գուցեև տարերայնորեն ծագած, բայց դարերի ընթացքում մշակված որոշակի համակարգ է, որն ապահովում է հանրության ինքնության, պատմական նկարագրի, հիշողության ու բարոյական կերպարի պահպանումը: Դաստիարակության նորմերի, սկզբունքների, օրինաչափությունների, մեթոդների վերաբերյալ հսկայաձավալ տեղեկույթ է ամփոփված բանահյուսության մեջ, ավանդույթներում, սովորույթներում, կենցաղային-ճիսական քնարերգության մեջ, էպիկական, գեղարվեստական և պատմական երկերում, հոգևոր գրականության մեջ, վիճակական արձանագրություններում, ազգային խորհրդանիշներում:

21-րդ դարը՝ իր տեխնոլոգիական զարգացումներով, նորովի է վերանայում հասարակական գիտակցության մեջ դաստիարակության համակարգի ու անձի դաստիարակվածության ընկալումները, նորովի են իմաստավորվում մանկավարժական մտքի այն դրույթներն ու հայեցակարգերը, որոնք ժամանակի հոլովույթում մշտապես արտահայտել են համամարդկային մարդասիրական գաղափարներն ու մեթոդաբանական դեր են ունեցել մարդու ինքնակայացման, ինքնորոշման, ինքնիրացման գործընթացներում:

Հողվածի նպատակը արդի մարտահրավերների համատեքստում դաստիարակության հիմնախնդիրների բացահայտումն ու զարգացման հեռանկարային ուղղությունների նախանշումն է:

Հեղազոտության տեսական նշանակությունն արտահայտվում է մանկավարժության տեսության մեջ «կրթություն» և «դաստիարակություն» հասկացությունների, դաստիարակության նպատակի բազմատեսանկյուն վերլուծությամբ: Հողվածում ներկայացված տեսագործական դրույթները կարող են օգտակար լինել կրթության կազմակերպիչներին, ուսուցիչներին, ծնողներին, դաստիարակության հարցերով զբաղվող շահագրգիռ անձանց:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ *մեթոդները*՝ մասնագիտական գրականության, օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերի, մասնագիտական հասկացությունների վերլուծություն, համեմատություն, համադրում:

«Կրթություն» և «դաստիարակություն» հասկացությունների վերլուծություն: «Կրթություն» և «դաստիարակություն»

հասկացությունների սահմանման վերաբերյալ տեսակետները բազմազան են: «Դաստիարակություն», «կրթություն», «education», «upbringing», «воспитание», «образование» հասկացությունների բնագրային իմաստների ստուգաբանական և մասնագիտական քննությունը բազմաշերտ է: Հ. Աճառյանի «Արմատական բառարանում» բառի իմաստային տիրույթում հանդիպում ենք «dastyār» արմատը՝ «օգնական, ձեռնտու» բացատրությամբ, և «dastūr» արմատը, որը մեկնաբանվում է որպես «հոգևոր պետ»/պահլավերեն/, «փոխարքա» /պարսկերեն/ (Աճառյան, 1971, էջ 628): Ըստ էության բառի ստուգաբանական ենթիմաստում արտահայտված է *օգնել, ձեռքը բռնել, ձեռքը փակ, աջակցել, ուղղորդել, սափարել* հասկացությային արժեքը:

«Դաստիարակություն» հասկացությունը համարժեք է ռուսերեն «воспитание» բառին, որի նախնական իմաստը երեխային կերակրելը, նրա մասին հոգ տանելն է: «Կրթություն» հասկացությունը (образование) մեկնաբանվում է որպես ձևավորում, կերպավորում, ստեղծում, կերտում, լուսավորում, կրթում:

«Օքսֆորդի բառարանում» հանդիպում ենք «Education» հասկացության հետևյալ մեկնաբանությունը. «Ուսուցման, վերապատրաստման և ուսման/սովորելու գործընթացը հատկապես դպրոցներում, քոլեջներում գիտելիքները բարելավելու և հմտությունները զարգացնելու նպատակով» (Oxford Learner's Dictionary), իսկ «Upbringing» հասկացությունը՝ այն ուղին, որով երեխայի մասին հոգ են տանում և սովորեցնում ինչպես վարվել աճի/հասունանալու ընթացքում (Oxford Learner's Dictionary): «Քեմբրիջի բառարանում» առկա է «Upbringing» հասկացության հետևյալ բացատրությունը. «Այն ուղին, որով ծնողները երեխայի հետ վարվում և նրան կրթում են, և հատկապես այն ազդեցությունը, որ մնում է նրա վարքի և բարոյական որոշումներ կայացնելու ունակության վրա (Cambridge Dictionary):

Հայ դասական մանկավարժների հայացքներում դաստիարակության առավել լայն ընկալման վերաբերյալ ուշագրավ դիտարկումներ կան: Արևմտահայ նշանավոր մանկավարժ գիտնական Մ. Մամուրյանը, դիտարկելով կրթության և դաստիարակության վերաբերյալ սեփական և այլ տեսակետներ, նշում է. «Դաստիարակությունը կարունակե բոլոր այն ազդեցությունները, որ կօգնեն բնավորությունը կազմելու: Իսկ կրթությունն այս դաստիարակության հասնելու գործիքներեն մին է:...Կրթությունը կտա գիտություն, դաստիարակությունը - ստանալու և գործածելու եղանակովը - զորություն և ճարտարություն կտա» (Մամուրյան, 1961, էջ 47): Ուշագրավ է Ղ. Աղայանի

մեկնաբանությունը. «Ուսուցանել կնշանակե սովորեցնել մի բան, իսկ կրթել կնշանակե վարժել մի բանի մեջ կամ աճեցնել, զարգացնել այն զորությունը, ընդունակությունը, որ արդեն կա անհատի մեջ: Այն արհեստը, որ կայանում է այդ երկու պաշտոնի ի միասին կատարումը, ասվում է դաստիարակություն» (Աղայան, 1963, էջ 13): Նշանավոր մանկավարժը մարդկային էությունը դիտարկում է որպես մարմնի, հոգու և մտքի մի ամբողջություն և դրանից բխեցնելով դաստիարակության նպատակը՝ ձևակերպում է որպես այդ երեք կողմերի համաչափ զարգացում՝ դա համարելով բնական պայման ուժեղ, խելոք և առաքինի մարդու ձևավորման համար (Աղայան, 1963, էջ 30):

Նշված մեկնաբանությունները հիմք են տալիս եզրահանգելու, որ կրթությունը մարդկության՝ հազարամյակների փորձով կուտակված տեղեկույթի/գիտելիքների ձեռքբերումն է, համաշխարհային մշակույթին հաղորդակցման ամբողջ գործընթացը, քաղաքակրթական արդյունքների, մտածողության և աշխարհաճանաչողության միջոցների, արժեքների յուրացումը, իսկ դաստիարակությունն այդ յուրացման արդյունքում մշակութահարմար և հասարակայնորեն նպատակահարմար վարքի ու գործունեության դրսևորումն է, արտաքին և ներքին տարբեր ներգործությունների արդյունքում մարդու մեջ որակական փոփոխությունը: Հետևաբար նպատակահարմար չէ միանշանակ կիրառել այս եզրույթներից մեկը կամ մյուսը՝ անտեսելով դրանց խորքային ընկալման տարբերությունները: Մենք ևս այդ առնչությամբ արտահայտել ենք մեր մտահոգությունը. «Ընդօրինակելով անգլերենին՝ «դաստիարակություն» հասկացությունը միաձուլվեց «կրթություն» «education» հասկացության հետ, երկրորդական նշանակություն տրվեց դաստիարակությանը՝ մոռանալով, որ անգլիական գրականության մեջ «կրթություն» հասկացությունը փոխանցվում է մի քանի հոմանիշներով՝ «instruction», «training», «teaching» (Թոփուզյան, 2009, էջ 225):

Կրթությունը համամարդկային բազմադարյան փորձի յուրացման գործընթացն է և արդյունքը, մտածողության եղանակների տիրապետումը, տեղեկույթի համակարգումը, իմաստավորումը և դրանց հիման վրա գիտական աշխարհայացքի ձևավորումը: Դաստիարակությունն անձի մեջ **վերաբերմունք, դիրքորոշում, արժեքներ և անձնային որակներ** ձևավորելն է: Դա տարբեր աղբյուրներից և գործոններից՝ տիեզերական և համամոլորակային գործընթացներ, հասարակական կենսաձև, մարդկային հարաբերություններ, բնություն, սոցիում, մեդիա, գիտություն, արվեստ և այլն, անձին ուղղված ներգործությունների արդյունքում նրա մեջ բազմաբնույթ փոփոխությունների գործընթացն է, որն իրականանում է մարդու հոգեմտավոր ոլորտում, գործունեության մեջ և հանգեցնում է

տվյալ հասարակության մեջ ընդունված վարքի, սոցիալական նորմերի յուրացմանը: Դաստիարակությունն ազդեցություն է, բայց մարդու դաստիարակության ամբողջական գործընթացը չպետք է միանշանակ վերագրել ազդեցությանը: Շրջապատն ազդում է, ինչ խոսք, սակայն երեխան ինքնաբուխ դաստիարակվում, ձևավորվում է՝ տարերայնորեն կրելով միջավայրի ազդեցությունը, ընդօրինակելով մեծահասակներին և կրելով այդ ազդեցության ինչ-որ մասը: Շրջապատը կարող է աջակցել, նպաստել այդ գործընթացին կամ հակառակը: Հետևաբար մեծահասակը երեխայի դաստիարակության համահեղինակն է և ոչ թե հեղինակը:

Դաստիարակությունը մշակութային գործընթաց է, որն իրականանում է մշակութահարմար միջավայրում, ունի նորմատիվային, կարգավորիչ, վերահսկողական, արժեուղղորդ գործառույթներ, նպատակաուղղված է մարդու մշակութային ինքնորոշմանը, հայրենասիրական, քաղաքացիական, բարոյաիրավական, հումանիստական, էկոլոգիական գիտակցության, վարքի ու գործունեության ձևավորմանը:

Դաստիարակության նպատակի հիմնախնդիրը:

Պատմամշակութային յուրաքանչյուր դարաշրջանում առաջ է քաշվել դաստիարակության նպատակի հիմնախնդիրը, և մանկավարժական համակարգերն ամրագրել, հասարակական-քաղաքական և սոցիալ-մշակութային իրողությունների տեսանկյունից լուծել են դաստիարակության խնդիրները՝ շեշտադրելով նաև ազգային բաղադրիչը: Հետևաբար կրթության բարեփոխումների գործընթացներում առաջնահերթություն է դաստիարակության նպատակի հստակեցումը՝ հաշվի առնելով հասարակության պահանջները և տվյալ ժամանակաշրջանի իրողությունները:

Դաստիարակության մոդելները, որոնք արտացոլում են տարածաշրջանային սոցիալ-մշակութային ավանդույթները, այսօր կանգնած են գլոբալ մարտահրավերների առջև՝ պայմանավորված որակապես նոր տեխնոլոգիական զարգացումներով, դրանցից բխող մետասառարկայական և առանցքային կոմպետենցիաների տիրապետման անհրաժեշտությամբ:

Այսօր՝ համաշխարհայնացման ժամանակաշրջանում, առավել արժևորվում են ազգային դաստիարակության գաղափարական հիմքերի մշակման վերաբերյալ հայեցակարգերը, որոնք հաշվի կառնեն պատմամշակութային ժառանգության ու համաշխարհային զարգացման միտումների ճիշտ փոխհարաբերությունների ու երկխոսության հրամայականը տարածաշրջանային և գլոբալ բնույթի արդի գործընթացների համատեքստում:

Ինքնակազմակերպման, անհատականացման, արհեստական բանականության ոլորտում տեխնոլոգիական զարգացումների,

բազմամշակութային աշխարհում մշակույթների երկխոսության պայմաններում կարևոր է հասկանալ, թե ինչ կարողունակություններ, վարքի նորմերի ինչ չափանիշներ են բնութագրելու կրթության գործընթացի ակնկալվող արդյունքը, որը «մարդ-հասարակություն-բնություն» հարաբերությունների համակարգում կդրսևորվի որպես դաստիարակության գործընթացի արդյունք, դաստիարակվածություն:

Դաստիարակության արդյունքը պետք է գնահատվի ոչ միայն մանկավարժական գործընթացի արդյունավետությունը կանոնակարգող բնութագրիչներով: Ի վերջո կարևոր է այդ գործընթացի ամբողջական գնահատականը՝ հաշվի առնելով մարդու և հասարակության նյութական ու հոգևոր առաջընթացի փոփոխվող չափանիշները, ինչպես նաև համամարդկային արժեքային գերակայությունները: Դաստիարակության գործընթացում առաջնային են դառնում ինքնակառավարումը, ինքնիրացումը, փոփոխություններին հարմարվելը, ճիշտ նպատակներ դնելն ու կոնկրետ խնդիրներ լուծելը, քննական մտածողությունը:

Դաստիարակության ոլորտում մեր երկարամյա ուսումնասիրությունների արդյունքում մենք արել ենք այն կարևոր հետևությունը, որ պետք է սահմանել դաստիարակության չափելի, ստուգելի նպատակ, պարզել, թե որն է լինելու հայ հասարակության դաստիարակության իդեալը, որը բոլորի կողմից ընդունելի կլինի: Կարևոր հիմնահարց է նաև այն, թե այսօրվա երեխաները տարիներ հետո ինչ արժեհամակարգ կրող հասարակության մեջ են ապրելու: Ուստի, մեր կարծիքով, դաստիարակության առաջնային նպատակն է օգնել մարդուն ընտրություն կատարել, սեփական կարծիք ունենալ, ինքնաճանաչման հիման վրա ճիշտ նպատակներ դնել, հավասարակշռված որոշում կայացնել և համապատասխան վարք դրսևորել կրթական միջավայրի ստեղծման, անձնական ու հասարակական պահանջմունքների հաշվառման, ազգային ու համամարդկային արժեքների զուգորդման, մանկավարժական գործընթացի սուբյեկտների միջև հումանիստական հարաբերությունների հաստատման ճանապարհով (Թոփուզյան, 2018, էջ 20-22):

Դաստիարակության ոլորտում առկա մարտահրավերները:

Դաստիարակության ոլորտում շարունակաբար ի հայտ են գալիս նոր մարտահրավերներ և հիմնախնդիրներ: Ներկայումս աճող սերունդն ավելի ու ավելի խոցելի է դառնում սոցիալական և ապազգային ազդեցությունների նկատմամբ՝ հայտնվելով ագրեսիվ միջավայրում, որում մեծ դեր ունեն ՁԼՄ-ները: Շատ հաճախ անտեսվում են դաստիարակության պատմական փորձը, նախկին հասարակարգերի լավագույն ավանդույթները մանկապատանեկան կազմակերպությունների գործունեության ոլորտում: Բավականաչափ արդյունավետ չի իրականանում դաստիարակչական ազդեցություն գործող բոլոր

շահագրգիռ կողմերի՝ դպրոցի, ընտանիքի, հասարակության, ՁԼՄ-ների, ՀԿ-ների, ոչ պետական ոլորտի կրթական քաղաքականությունը մշակողների և իրականացնողների համագործակցությունը (Թոփուլյան, 2009, էջ 225-227):

Այսօր մանկավարժը գործ ունի տեղեկացված, տեխնոլոգիաներից լայնորեն օգտվող սերնդի հետ, ուստի պետք է ընդունի այդ նոր իրականությունը, եթե ցանկանում է, որ իրեն լսեն, իր հետ համագործակցեն: Միաժամանակ սովորողներին պետք է հասու դարձնել, որ տեղեկատվական հասարակության մեջ ապրելու համար անհրաժեշտ են մի շարք կարողունակություններ՝ զանգվածային լրատվամիջոցների և գովազդի միջոցով տարածվող տեղեկույթի նկատմամբ քննական մոտեցում ունենալ, ստուգել փաստերի հավաստիությունը, պատասխանատվություն կրել, որոշումներ ընդունել, հանդուրժողականություն դրսևորել այլ մշակույթների, լեզվի, կրոնի ներկայացուցիչների նկատմամբ, երկխոսություն վարել, ճիշտ նպատակներ դնել, ունենալ կանխատեսելու և պլանավորելու կարողություն, լինել ճկուն, նախաձեռնող և ստեղծագործ:

Թվային տեխնոլոգիաների զանգվածային կիրառման, հեռավար կրթության և վիրտուալ շփման արդի պայմաններում ի հայտ է գալիս անձի դաստիարակության հոգեբանական, սոցիալական, մեթոդական, կազմակերպական հարցերի ուսումնասիրման անհրաժեշտություն: Առաջնային են դառնում պաշտպանական և էթիկական բնույթի խնդիրները: Այսօր դպրոցի և ընտանիքի դաստիարակչական գործառույթներում առաջնահերթ կարևորվում են մեդիաանվտանգության ապահովման հարցերը՝ կապված ՏՀՏ-ների զանգվածային կիրառման հետ: Մեդիադաշտում, համացանցում, սոցիալական կայքերում անվերահսկելիորեն դրսևորվում են անցանկալի երևույթներ՝ անձնական տվյալների և ֆինանսական միջոցների շորթում, ապատեղեկատվություն, արգելված, բռնություն պարունակող բովանդակությամբ նյութեր, երեխաների հոգեկան աշխարհն աղավաղող և անկանխատեսելի գործողությունների մղող խաղեր, մարդկանց կառավարում և տարաբնույթ այլ կիբերվտանգներ՝ իրենց հոգեկան, նյութական, սոցիալական և բարոյական հետևանքներով: Դրանք կարող են սպառնալ մարդու հաղորդակցման, ստեղծագործական ազատության և էքզիստենցիալ այլ ոլորտների բնականոն դրսևորումների վրա: Իսկ նման վտանգները կանխելու համար կարևոր են ազգային արժեքների վրա հիմնված դաստիարակությունը, սոցիալական ակտիվությունը, հուզական կայունությունը, ռեֆլեքսիան, մեդիագրագիտության մակարդակի բարձրացումը, քննական-վերլուծական մտածողությունը: Այս առումով Վ. Կանկեն նշում է. «Խնդիր է դրվում տեխնոգեն քաղաքակրթությունից

անցում կատարել դեպի անտրոպոգեն քաղաքակրթության, որտեղ հիմնական արժեքը կլինի մարդը և ոչ թե տեխնիկան» (2001, էջ 263): Այսինքն՝ տեխնոլոգիական զարգացումների հորձանուտում դաստիարակության գործընթացում կարևորվում են մարդակենտրոն առաջնահերթությունները: Այսօր արդիական է «տեխնոհումանիտար հավասարակշռություն» հասկացությունը՝ որպես քաղաքակրթության էվոլյուցիոն զարգացման վճռորոշ գործոն: Որքան հզոր են տեխնոլոգիաները, այնքան կարևորվում են դրանց վտանգավոր հետևանքները կանխելու միջոցների որոնումները, ռացիոնալ մտածողության, բարոյական միասնության և հումանիստական աշխարհայացքի հիմնադրույթների շեշտադրումը (Շաքարյան, 2005, էջ 205):

Ներկայումս աճող սերնդի մեջ ի հայտ են գալիս նոր, ավանդական մշակույթից տարբերվող վարքային նորմեր: Աշխարհաքաղաքական նոր փոփոխությունների մեջ հայտնված հասարակությունն այսօր կանգնած է սերնդեսերունդ փոխանցված արժեքների վերախմաստավորման խնդրի առջև: Ներկայումս ընտանիքում կառուցվածքային և գործառույթային փոփոխությունները, սերունդների միջև հայացքների ու չափանիշների տարբերությունները հանգեցնում են դաստիարակչական լուրջ հիմնախնդիրների: Սոցիալական վարքի նոր ձևերը, օտար արժեքները, բարքերը, ազգային մշակույթին ոչ բնորոշ իրողությունները, զանգվածային մշակույթի և տարբեր ենթամշակույթների դրսևորումները, հաղորդակցման՝ ընդունված նորմերից տարբերվող ոճերը մուտք են գործում կենսամիջավայր՝ նոր բովանդակություն հաղորդելով միջսերնդային երկխոսությանը, հասարակության կենսաձևին և բարոյական ըմբռնումներին (Акопян, 2020, с. 65-79):

Նշված խնդիրները թելադրում են դաստիարակության համակարգում այնպիսի ծրագրերի մշակման ու իրագործման հրամայականը, որոնք կուղղորդեն և կհամակարգեն հասարակական կազմակերպությունների, կրթադաստիարակչական հաստատությունների, ընտանիքի դաստիարակչական գործունեությունը՝ ավանդական արժեքները համադրելով մեր կյանքում արդեն իրողություն դարձած նորամուծություններին:

Ներկայումս արդեն մեծ տեղ է տրվում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությանը, որը անձի դաստիարակության գործընթացում նոր հնարավորություններ է նախանշում: «**Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը**» (2022) ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման, ճանաչման, վկայագրման, կրեդիտավորման, ուսուցման ազգային ռեստրում հաշվառման գործընթացների օրենսդրական

կարգավորումների և իրավական հիմքերի ստեղծման առումով պետության կողմից իրականացվող կրթական քաղաքականության կարևոր ուղղություն է: Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունավետ կազմակերպումը ևս կախված է անձի դաստիարակության մակարդակից, ինքնակազմակերպման, ինքնավերահսկողության, ռեֆլեքսիայի, նպատակադրման, պլանավորման, նախագծման, արդյունքների կանխատեսման կարողությունից:

Եզրակացություն

Ներկայումս փոխվել են մանկավարժության զարգացման գերակա ուղղությունները: Ոչ միայն կառուցված տարածքները, այլև բնական և թվային միջավայրերն ընկալվում են որպես համապարփակ ուսումնառության միջավայր՝ ներառելով տեղեկատվական տեխնոլոգիաների հասանելիության, ներառականության, հավասարության, փոխգործունեության և համագործակցության սկզբունքները: Երկխոսության, մասնակցայնության, ազատության և պատասխանատվության, ստեղծագործական ինքնարտահայտման պահանջները թելադրում են դաստիարակության նոր հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը՝ հիմնված ուսումնական առարկաների դաստիարակչական ներուժի գնահատման, դասավանդվող առարկաների ուսումնասիրման վերջնարդյունքներում սովորողների դաստիարակվածության չափանիշների սահմանման վրա:

Դաստիարակության գործընթացում կարևորվում է երեխայի՝ որպես անհատականության, բարձրարժեքության ընկալման, նրա նկատմամբ հումանիստական վերաբերմունքի քարոզչության, նրա կարիքների, պահանջմունքների, դրդապատճառների, հնարավորությունների հաշվառման առաջնայնությունը: Կարևոր են նաև երեխայի վրա շրջապատի ազդեցության ուսումնասիրումը, նրա հոգեմտավոր և ֆիզիկական զարգացման համար դաստիարակչական անվտանգ միջավայրի ձևավորումը՝ այդ կենսամիջավայրի բոլոր բաղադրիչների գնահատմամբ:

Դաստիարակության նպատակը սահմանելիս պետք է հաշվի առնել ազգային-մշակութային արժեքների, ազգային ինքնության ու պատկանելության գիտակցման, դաստիարակության ազգային և համամարդկային փորձի, հումանիստական գաղափարների հաշվառման հրամայականը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Աղայան Դ., Երկերի ժողովածու, հատոր 4, -Եր.: Հայպետհրատ, 1963. – 683 էջ:
Aghayan Gh., Erkeri jhoghovac'ow, hator 4,-Er.:Haypethrat, 1963.-683 e'j:
2. Աճառյան Հ., հայերեն արմատական բառարան, հ 1, -Եր.: Երևանի համալս. հր., -1971. -698 էջ:
Atwar'yan H., Hayeren armatakan bar'aran, h 1, -Er.: Er&ani hamals. hr., - 1971. -698 e'j:
3. Թոփուզյան Ա, Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ, -Եր.: Լինգվա հր., 2009. – 296 էջ:
T'op'owzyan A, Howmanistakan dastiarakowt'yan himnaxndiry' mankavarjhowt'yan mej, -Er.: Lingva hr., 2009. – 296 e'j:
4. Թոփուզյան Ա., Մանկության ժամանակակից հիմնախնդիրները, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 2/43/, -Եր.: Լինգվա, 2018. - էջ 15-26:
T'op'owzyan A., Mankowt'yan jhamanakacic himnaxndirneri', Banber Er&ani V. Bryowsovi anvan petakan lezvahasarakigitakan hamalsarani, 2/43/, Er.:Lingva, 2018. - e'j.15-26:
5. Կանկե Վ. Ա., Փիլիսոփայություն: - Եր.: Զանգակ-97, 2001.- 304 էջ:
Kanke V. A., P'ilisop'ayowt'yown: - Er.: Zangak-97, 2001.- 304 e'j:
6. Հայ մանկավարժներ /պրոֆ. Ա. Շավարշյանի խմբ./, գիրք Բ, - Եր.:Հայպետուսմանկհրատ, 1961, - 777 էջ:
Hay mankavarjhner /prof. A. Shavarshyani xmb./, girq B, - Er.:Haypetowsmankhrat, 1961, -777 e'j:
7. Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիր, (2022). Էլ. աղբյուր՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171800> (հղումը ստուգվել է՝ 04. 07. 2023)
Hayastani Hanrapetowt'yan krt'owt'yan minch& 2030 t'vakany' zargacman petakan c'ragir, (2022). E'l. aghbyowr՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171800> (hghowmy' stowgvel e՝ 04. 03. 2023
8. Շաքարյան Հ. Գ., Փիլիսոփայություն, - Եր.:Եր. համալս. հր., 2005. - 201 էջ:
Shaqaryan H. G., P'ilisop'ayowt'yown, - Er.:Er. hamals. hr., 2005. - 201 e'j:

9. Акопян Г., Роль этнопедагогики в решении проблем семейного воспитания. Инновации в образовании, - "Издательство АЭО" (Москва) № 02, 2020, с. 69-75 /<https://www.elibrary.ru/contents.asp?titleid=8731>
Akopjan G., Rol' jetnopedagogiki v reshenii problem semejnogo vospitanija. Innovacii v obrazovanii, - Izdatel'stvo: Chastnoe uchrezhdenie "Izdatel'stvo AJeO" (Moskva) № 02, 2020, s. 69-75 /<https://www.elibrary.ru/contents.asp?titleid=8731>
10. Cambridge Dictionary // <https://dictionary.cambridge.org/dictionary/english/upbringing> (date of checking: 08. 06.2023).
11. Oxford Learner's Dictionary // <https://www.oxfordlearnersdictionaries.com>
12. /definition/academic/education?q=education (date of checking: 10.06.2023).
13. Oxford Learner's Dictionary / https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/american_english/upbringing?q=upbringing (date of checking: 10.06.2023).

АИДА ТОПУЗЯН, ГРЕТА АКОПЯН - ПРОБЛЕМЫ ВОСПИТАНИЯ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ВЫЗОВОВ

Ключевые слова: образование, воспитание, конечный результат, культурная среда, медиабезопасность, неформальное и информальное образование, информационные технологии.

В статье рассмотрены вопросы, связанные с развитием приоритетных и перспективных направлений в процессе воспитания в современном мире. Отдельное внимание уделяется имеющимся подходам к толкованию понятий «образование» и «воспитание». Анализ разнообразных определений образования и воспитания выявляет также их семантическое наполнение, определяя функциональные характеристики и соотношение особенностей употребления данных понятий.

Проанализирован также и ряд отдельно взятых проблем в сфере воспитания, намечены пути их решения. Наряду с ними рассматриваются вопросы обеспечения медиабезопасности и надлежащей воспитательной работы в условиях применения цифровых технологий.

AIDA TOPUZYAN, GRETA HAKOBYAN - THE MAIN PROBLEMS OF UPBRINGING IN THE CONTEXT OF CONTEMPORARY CHALLENGES

Keywords: *education, upbringing, end result, cultural environment, not formal and informal education, digital technologies.*

The article considers a few issues concerning the definition of the purpose of upbringing and its end results as well as the search for its main directions in the contemporary world. The article also discusses approaches to the interpretation of the constructs of *education* and *upbringing*. The analysis of various definitions explores the semantic meaning of those constructs, determining their application ratio and functional peculiarities. In addition, the article observes a few main problems in upbringing and offers solutions to them. The article further discusses issues related to enhancing media security during the application of digital technologies and to implementing upbringing measures. Finally, the priorities of upbringing have been discussed in the context of modern challenges.

Ներկայացվել է՝
Գրախոսվել է՝

18.09.2023 թ.
29.09.2023 թ.

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ
ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ
ԱՐԱՔՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Համառոտագիր

Հանրակրթության բովանդակության բարեփոխման հիմնահարցերը բոլոր ժամանակներում եղել են ոլորտի համար կարևորագույն, սակայն ոչ ամբողջովին լուծում ստացած հարցերի շարքում: Տարբեր ժամանակներում առաջ են եկել մի շարք հիմնահարցեր, որոնց լուծման նպատակով կատարվել են տարաբնույթ բարեփոխումներ՝ ուսուցման կազմակերպման ձևերի փոփոխություն, ուսուցման նպատակի, դասագրքերի, չափորոշիչների և այլնի փոփոխություններ:

Հոդվածում ներկայացրել ենք հանրակրթության բարեփոխման պատմական էքսկուրսը, որի արդյունքում բացահայտել ենք տարբեր ժամանակներում կրթության նպատակների տարբերությունները:

Արդյունքում կատարել ենք ընդհանրացումներ և ձևակերպել հանրակրթության բարեփոխման որոշ հիմնահարցեր, որոնք տարբեր ժամանակներում շարունակում են մնալ արդիական և պահանջում են համակարգային բարեփոխումներ:

Հիմնաբառեր՝ *հանրակրթություն, հանրակրթության բովանդակություն, հանրակրթական որակ, կոմպետենցիա, կրթության նպատակներ:*

Ներածություն

Հոդվածում ուսումնասիրել ենք տարբեր ժամանակաշրջաններում հանրակրթության բովանդակության բարեփոխումները և դրանց նպատակները: Անդրադարձել ենք կրթության նպատակներին՝ ինչպես կրթության և գիտության ոլորտի ներկայացուցիչների մոտեցումներին, այնպես էլ կրթության ոլորտը կարգավորող տարբեր իրավական ակտերում առկա դրույթներին:

Հեղազոտության նպատակը

Հետազոտության նպատակն է բացահայտել հանրակրթության բովանդակության որոշ հիմնահարցեր, որոնք արդիական են, ունեն բարեփոխման կարիք և կարող են ծառայել որպես անկյունաքարային բարեփոխումներ՝ կրթության ոլորտում:

Հեղափոխության խնդիրները

1. Ուսումնասիրել և բացահայտել հանրակրթության նպատակները, դրանց իրականացման դժվարությունները:
2. Պարզել, թե որոնք են այն հիմնական բարեփոխումները որոնք անհրաժեշտ է իրականացնել կրթության որակի բարձրացման նպատակով:

Հեղափոխության նորոյթը

1. Հետազոտության արդյունքում ընդհանրացրել և ձևակերպել ենք հանրակրթության բովանդակության բաղադրիչների հստակեցման հարցը:
2. Առանձնացրել ենք հանրակրթության այն նպատակը, որի իրականացման համար ներկայիս կրթական համակարգում չկան բավարար պայմաններ:

Հեղափոխության տեսական նշանակությունը

Հետազոտության արդյունքները և ձևակերպված հիմնահարցերը հնարավորություն են տալիս նորովի անդրադառնալու հանրակրթության բովանդակության նպատակներին և դրանց իրականացմանն ուղղված բարեփոխման հարցերին: Վերջիններիս իրականացումը կարող է էական նշանակություն ունենալ կրթության որակի բարձրացման հարցում և ապահով ցանկալի արդյունքներ յուրաքանչյուր սովորողի համար:

Հեղափոխության մեթոդները

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտվել ենք հետևյալ հետազոտության մեթոդներից.

- տեսական մեթոդներ՝ մանկավարժական, մասնագիտական, մեթոդական, իրավական ակտերի ուսումնասիրություններ, վերլուծություններ և ընդհանրացումներ:
- էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցազրույց:

Հանրակրթության կայացումը մարդկության պատմական իրողությունում

Հանրակրթությունը մարդկության պատմական իրողությունում, որպես հասարակական երևույթ, ձևավորվել և կայացել է միայն վերջին դարերում: Որպես հանրակրթության ձևավորման և կայացման հիմք է հանդիսացել ուսուցումը: Եվ տրամաբանական է, որ այն իր դրսևորումներով տարբեր ժամանակաշրջաններում եղել է խիստ տարաբնույթ՝ կապված տվյալ ժամանակներում հասարակության պահանջներից և առաջ եկած խնդիրներից: Անտիկ շրջանում ուսուցումը կազմակերպվում է անհատական ձևով, ուսուցումը կամ արհեստների յուրացումը կրում էր ուսուցիչ-աշակերտ կամ վարպետ-աշակերտ բնույթը: Սակայն արդեն միջին դարերում խիստ կարևորություն էր տրվում

հանրության լայն զանգվածների կրթվածությանը: Հենց այս ժամանակաշրջանում մարդկությունն էմպիրիկ ընդհանրացումներից անցում է կատարում գիտահետազոտական փորձարարություններին, ինչի արդյունքում էլ սկսեցին առաջ գալ և զարգանալ գիտությունն ու մեզ հայտնի տարբեր գիտական առարկաները: Վերջիններս ժամանակի ընթացքում սկսում են իրենց կարևոր և վճռորոշ դերն ունենալ մարդկության կյանքի, տարբեր բնական երևույթների և հասարակության կայացման, զարգացման, համակարգման ինչպես նաև կառավարման հարցերում: Գիտության առաջացման և զարգացման արդյունքում բացահայտվեցին, առավել ճշգրիտ ձևակերպվեցին և մեկնաբանվեցին բնության տարբեր երևույթներ և օրենքներ: Այս ամենի արդյունքում փոփոխվեցին ուսուցման նպատակն ու խնդիրները: Եթե նախկինում ուսուցման նպատակն էր ապահովել որոշ անհատների կամ հասարակության լայն շերտերի կրթվածության որոշակի մակարդակ, ապա այս ժամանակաշրջանում ուսուցման նպատակը դարձավ գիտելիքների յուրացումն ու գիտական աշխարհայացքի ձևավորումը: Հետևաբար գիտելիքը հանդես եկավ որպես կրթության բովանդակության հիմնական բաղադրիչ:

Լուսավորության շրջանում գիտությունը սկսեց հանդես գալ որպես առանձին կատեգորիա՝ առանձնանալով և ետ թողնելով կրոնը: Օրինակ՝ 1880-ական թվականներին Ֆրանսիայում ընդունված օրենքի համաձայն, որը հայտնի է որպես «Ֆերրի օրենք», տարրական կրթությունը համարվում էր պարտադիր, իսկ դպրոցն անջատվում էր եկեղեցուց և գործում իբրև առանձին կառույց (Бермы, 2007):

Գիտությունը ևս ժամանակի ընթացքում փոխեց իր դրսևորումները՝ առաջնահերթություն տալով տեխնոլոգիական հեղափոխությանը: Եվ ինչպես նշում է Ա. Մ. Նովիկովը. «Գիտության դերի փոփոխումը մարդկանց կյանքում պահանջում է նաև փոփոխություն հանրակրթության բովանդակության կառուցման մոտեցումներում» (Նովիկով, 2006): Այստեղ կարևոր է նկատել, որ հեղինակը նկատի ունի այն կարևոր հանգամանքը, որ հաճախ կրթության, հանրակրթության բովանդակության փոփոխությունները կամ վերակառուցումները կատարվում են՝ հաշվի չառնելով տվյալ ժամանակում արդիական խնդիրները: Նկատենք նաև՝ հաճախ բարեփոխումներ կատարվում են որոշ խնդիրների լուծման նպատակով, սակայն հաշվի չեն առնվում այդ խնդիրների բնույթը, որոնք հաճախ ածանցված են լինում այլ խնդիրներից և հանդես են գալիս որպես փոքրիկ հետևանք: Եվ այդ պատճառով էլ դրանց լուծման ճանապարհին կամ բախվում են շատ այլ խնդիրների կամ այդ խնդրի լուծումը կրթական ոլորտում չի

կարգավորում կամ ապահովում իրականացնելու որակյալ գործունեություն:

Հանրակրթության նպատակների վերախմաստավորման և բարեփոխման անհրաժեշտությունը

Այսպիսով, ժամանակի ընթացքում, մասնավորաբար՝ վերջին դարերում կրթության նպատակները վերախմաստավորվեցին և այն դարձավ որպես հասարակության յուրաքանչյուր անդամի կրթական որակն ապահովող հիմնական համակարգ: Իսկ նման իրավիճակում գիտելիքը և գիտական աշխարհայացքը՝ որպես հանրակրթության բովանդակության հիմնական բաղադրիչ, բավարար չեն հավակնելու: Ինչպես նկատում է Ա. Մ. Նովիկովը, եթե նախկինում հանրակրթության բովանդակության հիմքում դրված էին միայն գիտական գիտելիքները, ապա այժմ դրանք մարդկային գիտակցության այլ ձևերի շարքում պետք է դառնան բաղադրիչներից միայն մեկը (Новиков, 2006):

Այսօր հասարակության պահանջն է՝ կրթել այնպիսի քաղաքացիներ, ովքեր, բացի գիտելիքներից և գիտական աշխարհայացքից, նաև արժեհամակարգի կրողն են, տիրապետում են մտածողության տարբեր ձևերին և ունեն մի շարք վերառարկայական որակներ: Եվ պատահական չէ, որ հանրակրթական պետական չափորոշիչների (ՀԴՉ) բովանդակության բաղադրիչ է հանդիսանում ոչ միայն գիտելիքների որոշակի պաշարի յուրացումը, այլ նաև մի շարք կոմպետենցիաների ձևավորումն ու զարգացումը: Վերջիններիս ձևավորումն ու զարգացումը չպետք է լինի ուսումնական գործընթացի լրացուցիչ հետևանք, այլ նպատակաուղղված գործընթացների արդյունք: Այդ նպատակով պետական հանրակրթական ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ուսումնական գործընթացի հիմքում ընկած են գիտելիքներին զուգահեռ նաև բազմաթիվ կոմպետենցիաները (Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մաթեմատիկա» առարկայի 1-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ 2023):

Այսպիսով, հանրակրթությունը հաստատվեց որպես հասարակական կեցության անբաժանելի երևույթ, պետական պատասխանատվության կարևորագույն ոլորտ և հասունության հաջորդ մակարդակներին հասարակության անցնելու որոշիչ գործոն (Մկրտչյան, 2011):

Կրթական և հատկապես հանրակրթական հիմնախնդիրները շարունակում են մնալ պետության և հասարակության համար ամենաբարդ, հաճախ նաև չլուծվող հարցերը: Այսօր, փաստորեն, դժվար է գտնել մի երկիր, որը գոհ լինի իր կրթական համակարգից և հրատապ չհամարի այդ համակարգի բարեփոխման հարցերը (Сузыкн Исао, 1991): Միշտ կարևորվում են պետական կրթական քաղաքականության, կրթության զարգացման պետական ծրագրերի, պետական կրթական

չափորոշիչների մշակման և բարեփոխման հիմնախնդիրները: Դժվար չէ նկատել, որ կրթության դերը կարևորվում է հասարակության պահանջով, օրինակ՝ հասարակության այնպիսի շրջանակների կողմից, ինչպիսիք են երկրի կառավարությունը, տարբեր քաղաքական գործիչները, գիտության, մշակույթի, տնտեսության ոլորտի ներկայացուցիչները և ուրիշները:

Եվ պատահական չէ, որ կրթություն ստանալու մարդու իրավունքն ամրագրված է 1948 թվականին ՄԱԿ-ի ընդունած «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», որի 26-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք կրթության իրավունք ունի: Կրթությունը, առնվազն տարրական և հանրակրթական փուլերում, պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պետք է լինի պարտադիր: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հանրամատչելի լինի, իսկ բարձրագույն կրթությունը, ընդունակություններին համապատասխան, հավասարապես մատչելի բոլորի համար: Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասայական և կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, է՛լ ավելի նպաստի ՄԱԿ-ի խաղաղապահական գործունեությանը (ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» 1948):

Փաստորեն՝ անհերքելի է այն փաստը, որ կրթության ոլորտն իր մակարդակով հստակ դեր և նշանակություն ունի հասարակության ինչպես յուրաքանչյուր անդամի, այնպես էլ ամբողջ հասարակության կայացման և զարգացման, համակեցությանին հարաբերությունների կարգավորման գործընթացներում: Պատմականորեն ձևավորվել է այն մոտեցումը, որ կրթության ոլորտը հասարակության կյանքը կարգավորող և զարգացնող նախապայման է: Հաշվի առնելով այս անչափ կարևոր հանգամանքը, կրթության ոլորտը, մասնավորաբար ուսուցման, դաստիարակության գործընթացները իրենց բնույթով ստանում են հանրակրթական իմաստ և նշանակություն, որից էլ բխում է հանրակրթության բովանդակության բարեփոխման կամ վերակառուցման անհրաժեշտության հարցը:

Հայաստանի Հանրապետությունում ևս կրթության ոլորտը կարևորվում է որպես հասարակական իրողությունում կարևոր գործոն և կարգավորվում է իրավական ակտերով և օրենսդրությամբ: Մասնավորաբար, ըստ ՀՀ կրթության մասին օրենքի 4-րդ հոդվածի՝ կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է,

որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը («Կրթության մասին» ՀՀ օրենք, 1999):

ՀՀ անկախության հռչակումից հետո պարբերաբար իրականացվել են կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տվել լուծելու համակարգում առկա մի շարք խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար: Եվ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում կրթական ոլորտի բարեփոխումները կրում են անըդհատ և շարունակական բնույթ: Սակայն, ինչպես նկատում է Ա. Մ. Նովիկովը, այդ բարեփոխումները տարաբնույթ են և ինչպես էլ կոչվեն, յուրաքանչյուր բարեփոխում հետապնդում է մեկ նպատակ՝ դպրոցական կրթության բովանդակության «կատարելագործում»: Ցանկացած բարեփոխում հերթական ուսումնական ծրագրի յուրացման առիթով նախ խոր դժգոհություն է առաջացնում մանկավարժների և ամբողջ հասարակության, այդ թվում՝ նաև ծնողների շրջանում, քանի որ տեսանելի չեն այդ բարեփոխումների արդյունքները: Եվ հարց է առաջանում՝ ինչու են բոլոր երկրներում բարեփոխումները կամ անարդյունավետ կամ քիչ արդյունավետ լինում (Նովիկով, 2006): Պետք է նկատել, որ շատ սուր կերպով ասել, որ բոլոր բարեփոխումները անարդյունավետ են եղել, ճիշտ դիրքորոշում չէ: Պատմական էքսկուրս կատարելով և ուսումնասիրելով հանրակրթության բովանդակության փոփոխություններն ու վերջինիս նշանակությունը հասարակության զարգացման, ինչպես նաև անչափ կարևոր ձեռքբերումների համատեքստում՝ հարկ է նշել, որ յուրաքանչյուր շրջանում կատարված հանրակրթության բովանդակության փոփոխություն էական ազդեցություն է ունեցել այդ շրջանում հասարակության առջև ծառայած խնդիրների լուծման հարցում: Միակ վիճելի հարցն այն է, որ այդ բարեփոխումները պետք է իրականացնել տվյալ ժամանակահատվածում առաջ եկած խնդիրների լուծման նպատակով: Իսկ հասարակության պահանջները և տարաբնույթ խնդիրները ժամանակի ընթացքում փոփոխվում են, հետևաբար հանրակրթության բովանդակության փոփոխությունները պետք է լինեն պարբերաբար՝ որպես տվյալ հասարակության ձևավորման, կայացման և զարգացման նպատակով կարևոր և հիմնական միջոց: Իսկ հանրակրթության բովանդակության իրականացող և պատասխանատու կառույցը բոլոր ժամանակներում հանրակրթական ուսումնական հաստատություններն են՝ դպրոցները: Դպրոցները տասնամյակներ շարունակ առաջնորդվում են միևնույն ուսումնական ծրագրերով, չափորոշիչներով և ուսուցման կազմակերպման գործընթացի եղանակով:

Հանրակրթական ուսումնական հաստատությունները տարիներ շարունակ կարծես եղել են բարձրագույն ուսումնական

հաստատություններ ընդունվելու՝ նախապատրաստող կառույցներ: Եվ դրանով պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնական մասի բովանդակության հիմքում ընկած է եղել գիտելիքը, հաճախ նաև գիտական գիտելիքը: Դժվար չէ նկատել, որ դասագրքերի բովանդակությունը հենց վերջինիս ապացույցն են: Ուսումնասիրելով ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի և այլ դասագրքեր՝ տպավորություն է ստեղծվում, որ սովորողները վերջիններս յուրացնելու արդյունքում պետք է դառնան ֆիզիկոսներ, քիմիկոսներ կամ մաթեմատիկոսներ: Այստեղ նկատվում է, որ երկրորդ պլան է մղվում կամ օժանդակ նպատակ է դառնում հանրակրթության նպատակի իրականացումը: Բանն այն է, որ, սկսած լուսավորության դարաշրջանից, ԲՈՒՀ-երն են որոշել դպրոցական կրթության բովանդակությունը, քանի որ գիտությամբ զբաղվում էին բացառապես գիտնականները: Հետագայում դպրոցական կրթության բովանդակությամբ սկսեցին զբաղվել նաև կրթության ոլորտի կազմակերպիչները, սակայն իրավիճակի դրական տեղաշարժը անհնար է, քանի որ հանրակրթության բովանդակությունը պետք է որոշվի՝ ելնելով հասարակության ընդհանուր պահանջներից և «Հանրակրթություն» եզրույթը վերաբերի կրթական այն որակներին, որոնցով պետք է օժտված լինի յուրաքանչյուր սովորող: Իսկ գործող համատարած կիրառվող կրթական համակարգում գիտելիքների յուրացումը տարբեր առարկաներից ոչ բոլոր սովորողների մոտ է ստացվում, ավելին՝ հաճախ այդ գիտելիքները մոռացվում են, կտրվում բուն բովանդակությունից, և սովորողների մոտ մնում է միայն որոշակի ինֆորմացիա տվյալ թեմայի շուրջ: Հետևաբար հարց է առաջանում իսկ ինչպե՞ս ձևավորել հանրակրթական որակներ յուրաքանչյուր սովորողի մոտ:

21-րդ դարում այլևս արդիական չէ դպրոցական կրթության բովանդակության հիմքում դնել ուսուցման գիտելիքակենտրոն սկզբունքը: Քանի որ տեխնոլոգիաների դարաշրջանում հնարավոր է ցանկացած ինֆորմացիայի որոնում և ստացում:

Եզրակացություն

Այսպիսով՝ առանձնացրել ենք հանրակրթության բովանդակության բարեփոխման որոշ առանցքային հիմնահարցեր.

- Ընդհանրացնելով հանրակրթության բարեփոխմանն ուղղված հետազոտությունների արդյունքները, պարզ է, որ հանրակրթության բովանդակության հիմնական բաղադրիչը շարունակում է մնալ գիտելիքը: Դա է պատճառը, որ ցանկացած բարեփոխում, որն ուղղված է հանրակրթության որակի բարելավմանը, չի լուծում այն հիմնական խնդիրները, որոնք առկա են ոլորտում:

- Հանրակրթության նպատակն է ապահովել յուրաքանչյուր սովորողի որակյալ կրթությունը և կրթական համապատասխան որակները, սակայն դաս-դասարանային համակարգում առաջանում են մի շարք խոչընդոտներ և դժվարություններ՝ կապված յուրաքանչյուր սովորողի հետ: Ինչպես գիտենք, դաս-դասարանային համակարգում առկա է ընդհանուր ճակատի իրավիճակ՝ սահմանված ժամանակամիջոցը, դասի թեման, որի ուսումնասիրման միջոցները նույնն են ամբողջ ուսումնական խմբի անդամների համար և այդ պայմաններում դժվար է ցուցաբերել անհատական մոտեցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Մկրտչյան Մ. Ա., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը // Երևան, 2011թ.- 148 էջ, էջ 22:
Mkrtychyan M. A., Usutsman kolektiv eghanaki irakanatsman metodabanakan, tesakan ev gortsanakan hatsery // Erevan, 2011t.-148 edz,edz 22:
2. Նովիկով Ա. Մ., Հանրակրթության բովանդակությունը.գիտելիքների դպրոցից դեպի մշակույթի դպրոց,Մանկավարժություն 2006/1-2:
Novikov A. M. - Hanrakrtutyanyan bovandakutyuny. giteligneri dprotsitsdepi mshakuyti dprots, Mankavarj'utyun 2006/1-2:
3. Новиков, А. М. Время традиций. На пути школы знаний к школе дела Текст./А. М. Новиков//Народное образование. 2006. -№ 6.- С. 201-208.
Novikov, A. M. Vremja traditsij. Na puti shkoly znaniy k shkole dela Tekst. / A. M. Novikov // Narodnoe obrazovanie. 2006. - № 6. - S. 201-208.
4. Бермуц А. Г., Введение в гуманитарную методологию.-М., 2007.-336 с.
Bermuc A.G. Vvedenie v gumanitarnuju metodologiju. -M.,2007.-336с.
5. Сузуки Исао. Реформа образования в Японии: навстречу XXI веку. // Перспективы.Вопросы образования - 1991. - № 1.
Suzuki Isao. Reforma obrazovanija v Japonii: navstrechu XXI veku. // Perspektivy.Voprosy obrazovanija - 1991. - № 1.
6. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մաթեմատիկա» առարկայի 1-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ. 2023: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=171261>
Hanrakrtakan usumnakan hastatutyunnerum «Matematika» ararkayi 1-12-rd dasaranneri ararkayakan chaporoshich. 2023
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=171261>
7. ՀՀ կրթության մասին օրենք. - 1999.
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299>
HH krtutyanyan masin orenq.-1999.
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299>

8. ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» - 1948. 217 (III) բանաձև: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1896>
МАК-ի «Mardu iravunqneri hamydhanur hrchakagir» -1948. 217 (III) banadzev.<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1896>

АРАКС АРУТЮНЯН - НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РЕФОРМИРОВАНИЯ СОДЕРЖАНИЯ ОБЩЕГО ОБРАЗОВАНИЯ

***Ключевые слова:** цели образования, компетенция, качество образования, содержания общего образования, общее образование.*

Несмотря на то, что реформы содержания высшего образования традиционно находятся в центре внимания исследователей, все еще существует ряд вопросов, ответы на которые предстоит найти. Упомянутые проблемы формировались в разное время, и с целью их решения претворялись в жизнь соответствующие реформы: менялись формы обучения, его цели, учебники, критерии и т.д.

В статье представлен исторический экскурс, посвященный образовательным реформам. Подобный подход нацелен на выявление различий между декларированными целями обучения в разные периоды.

Проведенный анализ позволил прийти к обобщающим выводам и сформулировать ряд общеобразовательных проблем, которые продолжают оставаться актуальными. Их решение требует реализации реформ системного характера

ARAKS HARUTYUNYAN - ON SOME FUNDAMENTAL ISSUES OF REFORMING THE CONTENT OF PUBLIC EDUCATION

***Keywords:** general education, content of general education, quality of general education, competence, goals of education.*

The issues of reforming the content of public education have always been one of the most important yet the resolution of questions arising from it has not been entirely straightforward. various significant changes in the transformation of education, organization of teaching, curricula, and standards have occurred.

This article presents the historical background of the public education reform, revealing the differences in the goals of education at different times. We have carried out generalizations and have presented some issues and and formulated some issues of public education reform, which remain relevant at different times and require systemic reforms.

**Ներկայացվել է՝
Գրախոսվել է՝**

**12.10.2023 թ.
18.10.2023 թ.**

**ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՉԱՓՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻ ՄՇԱԿՈՒՄ**

**ՏԱՏՅԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՌՈՒՁԱՆՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ**

Համառոտագիր

Մեդիակրթության խնդիրներին վերաբերող հետազոտություններում մեդիագրագիտության մակարդակի չափումների ուսումնասիրությունները շատ չեն: Խնդրով զբաղվող հետազոտողները դա համարում են մարտահրավեր: Սույն հոդվածը ներկայացնում է ապագա մանկավարժների մեդիագրագիտության մակարդակի չափման նոր գործիք, որը մշակվել է՝ հաշվի առնելով ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի մեդիա և տեղեկատվական գրագիտության վերջնարդյունքները կամ կարողունակությունները (կոմպետենցիաներ), այնպես էլ 2021 թվականին ուժի մեջ մտած Հանրակրթական պետական նոր չափորոշիչներում նկարագրված թվային և մեդիա կարողունակությունները:

Հիմնաբաներ՝ մեդիակրթություն, մեդիագրագիտություն, չափման գործիք, մասնագիտական կրթություն:

Ներածություն

Արդիականությունը: Ժամանակակից հասարակությունում մեդիակրթության և մեդիագրագիտություն խնդիրներն ամենա-արդիականներից են: Դրա ապացույցն են միջազգային տարբեր կառույցների (ՅՈՒՆԵՍԿՕ, Եվրոպական Միություն, Եվրախորհուրդ և այլն) ընդունած այն բանաձևերն ու հանձնարարականները, որոնցում անընդհատ նշվում է հասարակության տարբեր խմբերի մեդիակրթության անհրաժեշտության մասին՝ նախադպրոցականից մինչև ցկյանս կրթություն (UNESCO, 1982, 2012, 2013, 2018, 2019 EC, 2009, 2022 և այլն): Հատկապես կարևորվում է թվային և տեղեկատվական միջավայրում կողմնորոշվելու և ապրելու համար հանրության մոտ համապատասխան հմտություններ ձևավորելու և զարգացնելու գործում դպրոցների և ուսուցիչների դերը: Այս համատեքստում ավելի հրատապ է դառնում ապագա մանկավարժների մեդիակրթությունը: Եթե ուսուցիչները պետք է ապահովեն աշակերտների մեդիակրթությունը, նշանակում է, որ նախ իրենք պետք է լինեն մեդիագրագետ և ունենան համապատասխան

կարողունակություններ՝ աշակերտների մոտ մեդիագրագիտություն ձևավորելու համար: Չնայած, այս ուղղությամբ իրականացվող բազմաթիվ քայլերի, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում, այնուամենայնիվ, քաղաքականություն մշակողները դեռ չունեն բավարար գիտելիքներ և տվյալներ՝ ապագա մանկավարժների մեդիակրթության խորության և ծավալների վերաբերյալ: Ավելին, չկան ապագա մանկավարժների մեդիագրագիտության կարողունակությունների վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություններ: Սույն հետազոտության **նորույթն է** այդ կարողունակությունների չափման նպատակով մշակված գործիքը, որը հնարավորություն կտա պարզելու «Մանկավարժություն» որակավորում ստացող ուսանողների մեդիակարողունակությունները, մեդիակրթության մասին նրանց գիտելիքներն ու պատկերացումները: Դրա միջոցով հնարավոր կլինի ստուգել ապագա մանկավարժների մեդիագրագիտության կարողունակությունների համապատասխանությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի մեդիա և տեղեկատվական գրագիտության վերջնարդյունքներին կամ կարողունակություններին (կոմպետենցիաներ) ու Հանրակրթական պետական նոր չափորոշիչներում նկարագրված թվային և մեդիա կարողունակություններին:

Հետազոտության մեթոդները. հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են վերլուծության, համեմատության, դասակարգման, համատեքստի վերլուծության, համադրման և ընդհանրացման, հարցման մեթոդները: Մասնավորապես, վերլուծվել են մեդիագրագիտության մակարդակի չափման վերաբերյալ գիտական հոդվածներ և հրապարակված այլ աշխատություններ:

Իրականացված հետազոտության **նպատակն է** մշակել և փորձարկել ապագա մանկավարժների մեդիագրագիտության մակարդակի չափման նոր գործիք, որը հնարավորության կտա կատարել ծավալուն քանակական հետազոտություն՝ պարզելու համար ապագա մանկավարժների մեդիագրագիտության մակարդակը և բացահայտելու մասնագիտական կրթական համակարգում մեդիակրթության խնդիրները, նախանշել դրանց լուծման ուղղությունները:

Հետազոտության նպատակին հասնելու համար լուծվել են հետևյալ **խնդիրները.**

- միջազգային փորձի ուսումնասիրության և Հանրակրթության պետական նոր չափորոշիչների վերլուծության միջոցով առանձնացվել են մեդիագրագիտության մակարդակի չափման բաղադրիչները,
- նկարագրվել է չափման գործիքի մշակման մեթոդաբանությունը,
- ամփոփվել են գործիքի փորձարկման արդյունքները:

Հոդվածում ներկայացվող դրույթները կարող են օգտակար լինել մանկավարժական մասնագիտական կրթության ոլորտի

կառավարիչների, դասախոսների, ինչպես նաև մեդիագրագիտության ոչ ֆորմալ կրթության խնդիրներով զբաղվող կազմակերպությունների, թեմայով հետաքրքրված հետազոտողների համար:

Մեդիագրագիտության մակարդակի չափման շրջանակ միջազգային փորձը

Մեդիագրագիտության մակարդակի չափման շրջանակը սահմանելիս, նախևառաջ, անհրաժեշտ է ներկայացնել, թե ինչպես են տարբեր հետազոտողներ բացատրում մեդիագրագիտությունը: Հորսն ու Ֆրոսթն (2003) ամփոփել են մի շարք հետազոտողների սահմանումները՝ նշելով, որ այն տարբեր միջոցներով հաղորդագրությունները գտնելու, վերլուծելու, գնահատելու և հաղորդակցվելու ունակությունն է (Aufderheide & Firestone, 1993): Նրանք նաև ընդգծում են լեզվական, շարժվող կերպարների, երաժշտության, ձայնային մեդիա ու տեխնոլոգիական հաղորդագրությունները վերլուծելու, գնահատելու և ստեղծելու հմտությունները (Masterman, 1985, Messaris, 1994): Պտաշեկի (2019) համոզմամբ, մեդիագրագիտության մակարդակի չափման շրջանակի սահմանման համար եզրույթի ընկալումը կարևոր է, քանի որ մեդիագրագիտությունը հաճախ նույնականացվում է տարբեր տերմինների հետ, օրինակ՝ մեդիա և տեղեկատվական գրագիտություն, թվային գրագիտություն, թվային և մեդիա գրագիտություն, նորությունների գրագիտություն, թվային կարողունակություններ, մեդիակրթություն և այլն:

Շատ հետազոտողներ իրենց ուսումնասիրություններում մեդիագրագիտության մակարդակի չափումը նշում են որպես բարդ խնդիր (Ptaszek, 2019, Schilder, Lockee & Saxon, 2016, Arke & Primack, 2009): Շիլդերը և այլք իրենց աշխատությունում անդրադառնում են Շարերին (2002), որը պնդում է, որ չնայած կան ընդհանրացված ընկալումներ, թե որոնք են մեդիագրագիտության արդյունքները, սակայն դրանք հստակ սահմանված և չափված չեն: Մարտենսը (2010) նկատում է, որ մեդիակրթության ոլորտի մասնագետները հանդիպում ու քննարկում են ուսումնական ծրագրերը և ռազմավարությունները, սակայն մեդիակրթության արդյունավետության գնահատումը շարունակում է մնալ լուրջ մարտահրավեր:

Չափման գործիքները մշակելիս կարևոր է նաև սահմանել հստակ քայլեր՝ ապահովելու գործիքի վավերականությունը: Դրա համար առաջնահերթություն է հստակեցնել մեդիագրագիտության բաղադրիչները: Պտաշեկն (2019) իր աշխատությունում ամփոփել է մեդիագրագիտության տարբեր մոդելներ, որոնք, կախված սահմանումից, ներառում են տարբեր բաղադրիչներ: Այսպիսով՝ հետազոտողները առանձնացնում են մեդիագրագիտության հիմնական և առանցքային *երեք* (Buckingham,

2005, Celot, 2009, UNESCO, 2013), *չորս* (Calvani et al., 2008), *հինգ* (Arke & Primack, 2009, Hallaq, 2016, Hobbs, 2010), յոթ (Potter, 2014) կամ 11 (Jenkins, Clinton, Purushotma, Robison, & Weigel, 2006) բաղադրիչ կամ հմտություն: Հեղինակը, համեմատելով այս մոտեցումները, գտել է հետևյալ նմանությունները. մեդիագրագիտության հիմնական բաղադրիչը հաղորդագրությունը (տեղեկությունը կամ տեքստը) քննադատաբար ընկալելն ու արժևորելն է, տեխնիկական հմտությունները, որոնք նույնպես կարևոր դեր ունեն, մեդիաբովանդակության ստեղծման հմտությունները ևս կարևոր են, սոցիալական դերը, որը ներկայացնում է հաղորդակցման կարողունակությունները՝ ներառյալ նոր մեդիա և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը (Ptaszek, 2019):

Առաջին անգամ մեդիագրագիտության մակարդակի չափման գործիք մշակել ու կիրառել են Քուինն ու Մքմահոմը (1995), որոնք երկու թեստ են անցկացրել 15 տարեկան 1425 դպրոցականների շրջանում. առաջինն ուղղված էր տպագիր գովազդի վերլուծությանը, իսկ երկրորդը՝ տասներկու թուղթանոց հեռուստատեսային սիթքոմի ուսումնասիրությանը (Arke & Primack, 2009): Հաջորդն առանձնացվում է Հոբսի և Ֆրոստի (2003) որակական վերլուծությունը, որը գնահատում էր ուսանողների մեդիագրագիտության հմտությունները:

Արկեն և Պրիմակը (2009) մշակել են մեդիագրագիտության մակարդակի չափման գործիք և անցկացրել փորձնական հարցում՝ հիմնվելով հինգ գործոնների վրա. մտապահում, նպատակ, տեսակետ, տեխնիկա, գնահատում:

Հիմնվելով Ջենկինսի և այլոց (2006) մշակած տասներկու հմտությունների վրա՝ կատարվել է նոր մեդիայի գրագիտության մակարդակի չափում (Literat, 2014):

Նորությունների մեդիագրագիտության մակարդակի չափումն ամփոփվում է Մաքսլի, Էշլիի և Քրաֆթի հոդվածում: Այն հիմնված է Պետորի (2004) մեդիագրագիտության մոդելի վրա և կիրառվել է պատանիների՝ նորությունների ընկալման մեդիագրագիտության մակարդակը գնահատելու համար (Maksi, Ashley & Craft, 2004):

Պտաշեկն (2019) իր աշխատանքում առանձնացրել է նաև Թոմ Հալլաքի (2016) մշակած թվային մեդիագրագիտության գնահատման գործիքը, որը թույլ է տալիս կատարել մեդիագրագիտության ընդհանրական գնահատում՝ հիմնվելով հետևյալ հիմնական ուղղությունների վրա. մեդիա իրազեկվածություն, մեդիա հասանելիություն, էթիկայի իմացություն, մեդիայի գնահատում, մեդիայի ստեղծում:

Վերը նշված գործիքները թեև ունեն որակական վերլուծության բաղադրիչ, սակայն մեծ մասամբ քանակական հետազոտություններ են, ներառում են բազմակի ընտրության հարցեր և Լիկերտի սանդղակը (0-5,

որտեղ 5-ը՝ առավելագույնն է): Կարևոր արձանագրում է նաև այն, որ չափման գործիքների մեծամասնությունը ինքնագնահատում է, որի թերությունը կողմնակալ վերաբերմունքի արտահայտումն է (Ptaszek, 2019): Շիլդերը, Լոքեեն և Սաքունը (2016) «Մեդիագրագիտության գնահատման մարտահրավերները» հոդվածում նշում են, որ թերևս ուսումնասիրության շատ մասնակիցներ մեծ ցանկություն ունեն, որպեսզի մեդիագրագիտության ուսուցումը գնահատվի որակապես (օրինակ՝ քննադատական մտածողությունը, վերլուծությունը, արժևորումը, ինչպես նաև մեդիաբովանդակության ստեղծումը), սակայն միջազգային վերջին գնահատումները հիմնականում կրում են քանակական բնույթ (օրինակ՝ EAVI, 2010, 2012, UNESCO, 2013):

Այսպիսով՝ մեդիագրագիտության մակարդակի չափման տարբեր գործիքները և թիրախային տարբեր խմբեր լուրջ մարտահրավերներ են ստեղծում համընդհանուր կիրառելի գործիք մշակելու համար: Սակայն գրականության և տարբեր հետազոտողների աշխատանքների ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ դրա մշակման համար կարևոր է սահմանել մեդիագրագիտության մակարդակի բաղադրիչները, ապահովել հարցաշարի վավերականությունը և անցկացնել փորձնական հարցում:

Մեդիագրագիտության մակարդակի չափման գործիքներ. ազգային փորձ

Հայաստանում ևս տարբեր խմբերի շրջանում անցկացվել են մեդիագրագիտության, մեդիակրթության իրականացման և մեդիամշակույթի ձևավորվածության մակարդակի վերաբերյալ հարցումներ: 2016 թվականին «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը Երևանի Վ.Բոյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի (այժմ՝ Վ.Բոյուսովի անվան պետական համալսարան) հետ կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ բուհերի դասախոսների համար (ԵՊՀ, ՀՊՄՀ, ԵԹԿՊԻ) և անցկացրել հարցում դասախոսների շրջանում: Երկու հարցումների էլ հանդիպում ենք 2019 և 2020 թվականներին: 2019 թվականին ուսումնասիրություն են անցկացրել «Մեդիակրթությունը տարրական դպրոցում» մանկավարժների և ծնողների համար նախատեսված ուսումնամեթոդական ձեռնարկի հեղինակները: Այսպես, նրանք հարցումն իրականացրել են տարրական դպրոցի մանկավարժների, ծնողների, աշակերտների շրջանում: 2020 թվականին «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկի հեղինակները (Թոփուզյան Ա.Օ., Գյուլամիրյան Զ.Հ., Ասատրյան Ս.Մ., Պողոսյան Լ. Մ.(2020)) հարցում են անցկացրել ինչպես ուսուցիչների,

այնպես էլ ուսանողների շրջանում: Կարևոր է նշել, որ սա Հայաստանում ուսանողների մեդիագրագիտության մակարդակի չափման հանդիպող առաջին հարցումն է: Միաժամանակ պետք է նշել, որ անցկացված վերջին հարցումներում ներկայացված չեն հարցման բաղադրիչները, հասկանալի չէ հարցման շրջանակը: Առկա է նաև տերմինների խառնաշփոթ:

Մեդիագրագիտության մակարդակի չափման նոր գործիք. մշակման ռազմավարություն և փորձարկման արդյունքների ամփոփում

Ապագա մանկավարժների մեդիակրթական գործունեության համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և հմտությունների մակարդակի չափման գործիքը մշակվել է «Վ. Բոյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի հետազոտական թեմաների ֆինանսավորման ծրագրով իրականացվող «ՀՀ-ում ապագա մանկավարժների մեդիակրթության իրականացման ուղիները» հետազոտության շրջանակում:

Գործիքը ստեղծվել է «Մանկավարժություն» որակավորում ստացող ուսանողների մեդիագրագիտության մակարդակը պարզելու և «Մանկավարժություն» որակավորում շնորհող կրթական ծրագրերում մեդիակրթության ներդրման ուղղությունները որոշելու **նպատակով**: Գործիքը թույլ կտա դուրս բերել տվյալներ ապագա մանկավարժների մեդիագրագիտության կարողունակությունների վերբերյալ և հնարավորություն կստեղծի քաղաքականություն ու կրթական ծրագրեր մշակողների համար՝ գնահատելու առկա իրավիճակը, որոշելու ապագա մանկավարժների մեդիակրթության ուղղությամբ անհրաժեշտ գործողությունները:

Հարցման գործիքի մշակումն իրականացվել է **մի քանի փուլով**. մեդիագրագիտության և մեդիակրթության վերաբերյալ գրականության, մեդիագրագիտության մակարդակի չափումների միջազգային և ազգային փորձի, կրթության բովանդակության վերաբերյալ միջազգային և ազգային փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն (տե՛ս վերևում), հարցաթերթի մշակում, դրա վերաբերյալ փորձագիտական կարծիքի ստացում: Այնուհետև իրականացվել են շտկումներ և պատրաստվել է նախնական հարցաթերթիկ: Եզրափակիչ փուլում հարցաշարը ներկայացվել է 56 ուսանողի՝ պարզ պատահական ընտրանքով, և կատարվել է հարցման արդյունքների վերլուծություն:

Հաշվի առնելով միջազգային տարբեր հետազոտողների մոտեցումներ՝ մեդիագրագիտության մակարդակի չափման գործիքի ռազմավարության մշակման հիմքում դրվել է երկու սկզբունք՝ ա) հստակեցնել եզրույթի ընկալումը, բ) սահմանել չափման բաղադրիչներ:

Ընդունելով, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն միավորել է մեդիա և տեղեկատվական գրագիտությունները՝ համարելով, որ դրանք փոխկապակցված են և պիտի դասավանդվեն համատեղ (UNESCO, 2011), այս հետազոտության շրջանակում մեդիագրագիտություն տերմինը կիրառվում է այդ մոտեցմամբ և ընկալվում որպես մեդիան գրագետ և անվտանգ օգտագործելու և սպառելու, քննադատորեն վերլուծելու, դրա միջոցով ստեղծագործելու և արդյունավետորեն հաղորդակցվելու, մեդիայի դերն ու գործառնությունները հասարակության կյանքում հասկանալու հմտություններ:

Մեդիագրագիտության մակարդակի չափման բաղադրիչները (կամ չափման շրջանակը) սահմանվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի մեդիա և տեղեկատվական գրագիտության վերջնարդյունքների կամ կարողունակությունների (կոմպետենցիաներ) և ՀՀ պետական հանրակրթական չափորաշիջների մեդիա և թվային գրագիտության կարողունակությունների համադրության և վերլուծության միջոցով, կարևորվել են նաև ուսանողների գիտելիքները և պատկերացումները մեդիակրթության մասին: Ըստ այդմ՝ ապագա մանկավարժներին առաջարկվել է հարցերի 5 խումբ.

- *մեդիագրագիտությունը մանկավարժության մեջ,*
- *մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում,*
- *տեղեկատվական հոսքերում կողմնորոշվելու, տեղեկություն գտնելու և տարածելու, վերլուծելու կարողունակություն,*
- *թվային մեդիայի օգտագործման ռիսկերը, թվային անվտանգություն, պատասխանատվություն, էթիկա,*
- *մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններ:*

Եթե ընդունենք Շիլդերի և այլ հետազոտողների մոտեցումը, կարող ենք ասել, որ այս գործիքը մեդիագրագիտության ընտրված բաղադրիչների չափումների համար է:

Հարցաշարը փորձագիտական կարծիքի և գնահատման նպատակով տրամադրվել է մեդիագրագիտության, բարձրագույն կրթության ոլորտի, մանկավարժության, կրթության որակի ապահովման փորձագետների. Լ. Ալեքսանյանին (ԿՁՆԱԿ Գնահատման մշակման և զարգացման բաժնի պետ, մ.գ.թ.), Լ. Գրիգորյանին (Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, մեդիագրագիտության մասնագետ), Ն. Տատկալոյին (ԲՊՀ, Ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետի դեկան, մ.գ.դ.), Ա. Շահինյանին (ԲՊՀ, Որակի ապահովման կենտրոնի դեկավար): Ստացված արձագանքների հիման վրա հարցաշարում կատարվել են շտկումներ:

Գործիքի վավերականությունը, հուսալիությունն ու արդյունավետությունը ստուգելու համար Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսերի ուսանողների շրջանում գործիքը փորձարկվել է: Հարցման համար կիրառվել է պարզ պատահական ընտրանք: Հարցումն անցկացվել է անանուն: Արդյունքները ներկայացվել են ընդհանրական ձևով և վելուծության նպատակով: Հարցմանը մասնակցել է 56 ուսանող (n=56):

*Հարցաթերթի բաղադրիչների հիմնական նպատակները
Հարցերի կառուցվածքի և բաղադրիչների տրամաբանության
հիմնավորում*

Հարցաշարը կազմելիս հիմնականում ընտրվել է հարցման փակ ձևը (կոնկրետ հարցին հաջորդել են պատասխանների մի քանի տարբերակներ, որոնցից պետք էր ընտրել մեկը կամ մի քանիսը)՝ 33 հարց, բաց հարցերը եղել են չորսը:

Բաղադրիչների հարցերի խմբերը կառուցվել են հետևյալ տրամաբանությամբ.

- ❖ ***Մեդիագրագիտությունը մանկավարժության մեջ. նպատակ.*** բացահայտել ուսանողների գիտելիքները և պատկերացումները մեդիակրթության տեսությունների, մեդիագրագիտության կարողունակությունների և անհրաժեշտության մասին,
- ❖ ***մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում. նպատակ.*** ստուգելու մեդիայի, դրա տեսակների, աշխատանքի սկզբունքների, առանձնահատկությունների և իրավական կարգավորումների մասին գիտելիքները,
- ❖ ***տեղեկատվական հոսքերում կողմնորոշվելու, տեղեկություն գտնելու և տարածելու, վերլուծելու կարողունակություն. նպատակ.*** պարզել անհրաժեշտ տեղեկություններին և տվյալներին հասանելիություն գտնելու, մեդիայի աշխատանքի առանձնահատկությունների իմացությունը, տեղեկատվական վարքագիծը և տեղեկությունների աղբյուրների հետ աշխատելու սկզբունքների իմացության, ապատեղեկատվությանը դիմակայելու, տեղեկությունների աղբյուրների հետ աշխատելու կարողունակությունները,
- ❖ ***թվային մեդիայի օգտագործման ռիսկերը, թվային անվտանգություն, պապասխանաբանություն, էթիկա. նպատակ.*** պարզել համացանցում անվտանգ հաղորդակցվելու, ծուղակներից խոսափելու, ռիսկերը նվազեցնելու, անձնական տվյալները


պաշտպանելու, այլոց և սեփական իրավունքները պաշտպանելու, թվային հաղորդակցման էթիկային հետևելու կարողունակությունները,
❖ **Մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններ նպաստակ.** բացահայտել տարբեր մեդիա հարթակներն օգտագործելու, ինչպես նաև ուսանողների ստեղծագործական կարողունակությունների ցուցանիշները:

Հարցաշարում ներառվել են նաև ընդհանուր հարցեր՝ կրթական աստիճանը, ուսուցման ձևը, առաջադիմությունը, բնակության վայրը հարցերը և «ուսումնասիրել՝ եք մեդիագրագիտության վերաբերյալ դասընթաց» հարցը: Այս բոլոր տվյալները հնարավորություն կտան կրթության քաղաքականություն մշակողներին հասկանալ՝ որ ուղղությամբ ի՞նչ անելիքներ կան:


Հարցաշարի վերջում ընդգրկված է երկու հարց՝ պարզելու ուսանողների կարծիքը ապագա մանկավարժների մեդիակրթության անհրաժեշտության և հարցաթերթի որակի մասին: Քանի որ հարցումն անցկացվում էր հարցաշարի փորձարկման նպատակով, ուսանողները գնահատել են, թե հարցաթերթում տեղ գտած հարցերը որքանով են հասկանալի ձևակերպված: Արձագանքից պարզ է դառնում, որ հարցերը բավական հասկանալի են եղել (61%-ը գնահատել է 4(լավ)), թեև մեծամասնությունը սխալ պատասխաններ է ներկայացրել առաջադրված հարցերին:

Մեդիագրագիտության մակարդակի չափման այս հարցաշարից հետո ուսանողներին առաջարկվել է լրացնել ևս մեկ հարցաշար՝ ինքնագնահատելու համար մեդիագրագիտության սեփական կարողունակությունները: Հարցաշարում ընդգրկվել է **12 հարց**: Ինչպես արդարացիորեն նշում է Պտաշեկը (2019), ինքնագնահատման գործիքի թերությունը կողմնակալ վերաբերմունքի արտահայտումն է: Դա է վկայում նաև մեր առաջարկած մեդիագրագիտության սեփական կարողունակությունների ինքնագնահատման և մեդիագրագիտության մակարդակի չափման հարցաշարերի արդյունքների համեմատությունը:

Այսպես, չնայած ուսանողներն իրենց մեդիագրագիտության կարողունակությունները գնահատում են հիմնականում լավ (43%) և բավարար (31%), առաջին հարցաթերթում տեղ գտած բաց և փակ հարցերի պատասխանների վերլուծությունները ցույց են տալիս, որ ուսանողների մեծամասնությունը սխալ կամ թերի պատկերացում ունի մեդիակրթության մասին, ինչպես նաև ունի մեդիագրագիտության թերի կամ չձևավորված կոմպետենցիաներ (**տե՛ս Գծապատկեր 1, Գծապատկեր 2**):



Գծապատկեր 1



Գծապատկեր 2

Վերոնշյալ վերլուծությունները ցույց են տալիս, հաշվի առնելով, որ ուսանողների մեծամասնությունը չի ուսումնասիրել մեդիակրթության/մեդիագրագիտության վերաբերյալ դասընթաց, նրանց մոտ մեդիագրագիտության կարողունակություններ ձևավորված չեն: Սա է վկայում նաև նման գիտելիքներ ձեռք բերելու վերաբերյալ ուսանողների արձագանքը:

Եզրակացություն

Տեխնոլոգիական զարգացման այս փուլում ակնհայտ է, որ կրթական համակարգը պետք է փոփոխվի, բարձրագույն կրթությունն՝ այդ թվում: Տեխնոլոգիական զարգացումների դարաշրջանում ապրելու համար համապատասխան հմտությունների և կարողունակությունների ձևավորման գործում մեծ նշանակություն ունեն ուսուցիչները: Հետևաբար նրանք պետք է ունենան բավարար գրագիտություն մեդիաաշխարհում կողմնորոշվելու և ունենան ձևավորված կարողունակություններ՝ իրենց աշակերտների մեդիագրագիտության մակարդակը բարձրացնելու համար: Հենց այս համատեքստում կարևոր նշականություն են ստանում մեդիագրագիտության չափումները:

Այս հետազոտության կարևորությունն այն է, որ ոչ միայն մշակվել և փորձարկվել է ապագա մանկավարժների մեդիագրագիտության

մակարդակի չափման գործիքը, այլ նաև այն, որ սույն գործիքը հիմնված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մեդիա և տեղեկատվական գրագիտության վերջնարդյունքների կամ կարողունակությունների (կոմպետենցիաներ) և Հանրակրթական պետական նոր չափորոշիչներում նկարագրված թվային ու մեդիա կարողունակությունների վրա՝ արձագանքելով առանձնացված վերջնարդյունքների և կարողունակությունների ձևավորման խնդիրներին:

Գործիքի վավերականացումը ևս կարևոր է: Գործիքի փորձարկումը հնարավորություն է տվել ոչ միայն ստուգելու հարցվողների մեդիագրագիտության մակարդակը, այլ նաև վեր հանելու հարցաշարում բարելավումներ կատարելու խնդիրները: Արդյունքում՝ որոշ հարցերի պատասխանների տարբերակներ վերաձևակերպվել են այնպես, որ դրանց արդյունքներն ավելի ճշգրիտ ներկայացնեն իրական պատկերը: Հարցման արդյունքների վերլուծությունները ցույց են տվել, որ գործիքը բավականին հուսալի և վավեր է:

Նույնիսկ փորձնական հարցման արդյունքները վկայում են հարցվողների մեդիագրագիտության բավական ցածր մակարդակի մասին, ինչը մեկ անգամ ևս ապացուցում է, որ մեդիագրագիտության մակարդակի չափման մեծամասշտաբ հետազոտության խիստ անհրաժեշտություն կա՝ հասկանալու ապագա մանկավարժների մեդիակարողունակությունների ընդհանուր պատկերը և հիմնավորելու մեդիագրագիտության բաղադրիչի ներդրումը մանկավարժական մասնագիտական կրթական ծրագրերում: Միայն մեդիագրագետ/մեդիակարողունակ ուսուցիչը կարող է իսկապես ազդել սովորողների մեդիագրագիտության մակարդակի վրա, և միայն այդ ճանապարհով է հնարավոր հասնել մեդիագրագետ հասարակության ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Թոփուզյան Ա.Օ., Գյուլամիրյան Զ.Հ., Ասատրյան Ս.Մ., Պողոսյան Լ. Մ., Կարապետյան Ն.Զ., Ավագյան Լ.Մ., Մեդիակրթությունը տարրական դպրոցում» ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժների և ծնողների համար, Երևան: Մանկավարժ հրատարակչություն, 2019
Topowzyan A.O., Gyowlamiryan J.H., Asatryan S.M., Poghosyan L. M., Karapetyan N.Z., Avagyan L.M., Mediakrtowtyowny tarrakan dprocowm. owsowmnametodakan dzernark mankarvarjhneri & cnoghneri hamar, Yerevan: Mankavarjh hratarakchowtyown, 2019 (in Armenian)

2. Թոփուզյան Ա.Օ., Գլուսամիրյան Զ.Հ., Ասատրյան Ս.Մ., Պողոսյան Լ. Մ., Մեդիատեխնոլոգիաների տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում. ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժների և ծնողների համար Երևան: Մանկավարժ հրատարակչություն, 2020
Topowzyan A.O., Gyowlamiryan J.H., Asatryan S.M., Poghosyan L. M., Mediatechnologianery tarrakan dproci mankavarjhakan gorcyntacowm. owsowmnametodakan dzernark mankavarjhneri & cnoghneri hamar, Yerevan: Mankavarjh hratarakchownt'yown, 2020
3. Հայաստանի Հանրապետության հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման եվ հաստատման կարգ (2021, փետրվարի 4), ՀՀ կառավարություն, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>
Hayastani Hanrapetowtyan hanrakrtowtyan petakan chaporoshchi dzevavorman ev hastatman karg (2021, petrvari 4), HH karavarowtyown, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>
4. Arke, E.T., & Primack, B.A. (2009). Quantifying media literacy: Development, reliability, and validity of a new measure. *Educational Media International*, 46(1), 53–65. doi:10.1080/09523980902780958. <https://www.researchgate.net/publication/51127406> Quantifying media literacy Development reliability and validity of a new measure
5. Bulger, M., Measuring media literacy in a national context: Challenges of definition, method and implementation. *Media Studies*, 3(6), 83–104. 2012 <https://hrcak.srce.hr/file/141857?fbclid=IwAR0SV-0YxPrLcTeUmhFFAG0TtQngEwA8ATdn0MlrFxpHcrhkZF0dlxOzSE>
6. Celot, P. (Ed.), Study on assessment criteria for media literacy levels. Final report. 2009
7. http://ec.europa.eu/assets/eac/culture/library/studies/literacy-criteria-report_en.pdf
8. European Commission. *Commission Recommendation of 20 August 2009 on media literacy in the digital environment for a more competitive audiovisual and content industry and an inclusive knowledge society*. 2009. eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2009:227:0009:0012:EN:PDF
9. European Commission. A European strategy for a better internet for kids (BIK+). 2022 <https://digital-strategy.ec.europa.eu/en/policies/strategy-better-internet-kids>
10. Hobbs, R., & Frost, R. Measuring the acquisition of media literacy skills. *Reading Research Quarterly*, 38(3), 330–355. doi: 10.1598/RRQ.38.3.2. 2003
https://mediaeducationlab.com/sites/default/files/Hobbs_and_Frost_RRQ_2003_0.pdf?fbclid=IwAR1Yk1Kha2wG4brfvaFARsVpKWlk2A6K1jx-nINbArQILIARV3P_UHu_lhM

11. Literat, I., Measuring new media literacies: Towards the development of a comprehensive assessment tool. *Journal of Media Literacy Education*, 5(1), 15–27. 2014
https://pdfs.semanticscholar.org/28b1/9f61a8b6e94420340adbab33accbc771c1ff.pdf?_gl=1*wt37u6*_ga*MTUxOTA4ODIzOS4xNjc2MjEzMTIw*_ga_H7P4ZT52H5*MTY5NjQyMTg2OS42LjAuMTY5NjQyMTg3MS41OC4wLjA&fbclid=IwAR05Qhvm9q3mzno5HxugixkbbkjNsFkhkd4xCvPdoMuvsdVSF4GZxULfOYgU
12. Maksl, A., Ashley, S., & Craft, S., Measuring news media literacy. *The Journal of Media Literacy Education*, 6(3), 29–45. 2015
<https://files.eric.ed.gov/fulltext/EJ1059962.pdf?fbclid=IwAR0RIUwbD3yk3KMyNYQ1aKUxSYVBzelzXFhNuBxS3UGblAWBhTyd4KrnKtY>
13. Martens, H., Evaluating media literacy education: Concepts, theories and future directions. *Journal of Media Literacy Education*, 2(1), 1–22. 2010.
<https://core.ac.uk/download/pdf/56695006.pdf>
14. Ptaszek, G., Media literacy outcomes, measurement. In R. Hobbs & P. Mihalidis (Eds). *The International Encyclopedia of Media Literacy*, 2. 1067-1078. 2019. <https://doi.org/10.1002/9781118978238.ieml0103>
15. Schilder, E.A., Lockee, B.B., & Saxon, P.D. The challenges of assessing media literacy education. *Journal of Media Literacy Education*, 8(1), 32–48. 2016. <https://files.eric.ed.gov/fulltext/EJ1108281.pdf>
16. UNESCO. Grunwald Declaration on Media Education. 1982
https://milobs.pt/wp-content/uploads/2018/06/The-Gr%C3%BCnwald-Declaration-on-Media-Education.pdf?fbclid=IwAR1CKYlg5LDz1aaiReafzSzcYcSBIL1ES242Y_aKWUuB51kOCRyezy5PME
17. UNESCO. Global media and information literacy assessment framework: Country readiness and competencies. 2013.
<http://unesdoc.unesco.org/images/0022/002246/224655e.pdf>
18. UNESCO. A Global Framework of Reference on Digital Literacy Skills for Indicator 4.4.2. Infor paper N 51. 2018.
<https://uis.unesco.org/sites/default/files/documents/ip51-global-framework-reference-digital-literacy-skills-2018-en.pdf>
19. UNESCO. Global Standards for Media and Information Literacy Curricula Development Guidelines. 2019
https://www.unesco.org/sites/default/files/medias/files/2022/02/Global%20Standards%20for%20Media%20and%20Information%20Literacy%20Curricula%20Development%20Guidelines_EN.pdf
20. Wilson, C. & Grizzle, A. (Eds). *Media and Information Literacy. Curriculum for Teachers*. UNESCO. 2011
<https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000192971>

**ТАТЯНА ОГАНЕСЯН, РУЗАННА МИНАСЯН - ОСОБЕННОСТИ
ИЗМЕРИМОСТИ УРОВНЯ МЕДИАГРАМОТНОСТИ В КОНТЕКСТЕ
ПЕДАГОГИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ: РАЗРАБОТКА
ИНСТРУМЕНТАРИЯ ИЗМЕРЕНИЯ**

Ключевые слова: *медиаобразование, медиаграмотность, инструмент измерения, профессиональное образование.*

Несмотря на обилие исследований, связанных с проблемами медиаобразования, лишь небольшая их часть посвящена проблемам измеримости уровня медиаграмотности. При этом исследователи, занимающиеся упомянутой проблемой, считают ее достаточно сложной. В данной статье предлагается новый инструмент измерения уровня медиаграмотности будущих педагогов, разработанный с учетом общих показателей овладения навыками или компетенциями в области медийно-информационной грамотности ЮНЕСКО, а также тех цифровых компетенций и медиакомпетенций, которые предусмотрены вступившими в силу в 2021 году Государственными стандартами общего образования РА.

**TATYANA HOVHANNISYAN, RUZANNA MINASYAN - OF MEDIA LITERACY
MEASUREMENT CHARACTERISTICS IN THE CONTEXT OF PEDAGOGICAL
EDUCATION: DEVELOPING THE MEASUREMENT TOOL**

Keywords: *media education, media literacy, measurement tool, professional education*

There are limited studies that measure the level of media literacy education. And many researchers of the field consider this as the most challenging one. This article focuses on the importance of measuring media literacy education that was highlighted by different scholars and researchers. Moreover, it presents a new tool to measure the media literacy education of future educators. The tool was developed considering UNESCO media and information literacy components, as well as the digital and media competencies defined by Armenian new State Standards on General Education (came into force in 2021).

**Ներկայացվել է՝
Գրախոսվել է՝**

**05.10.2023 թ.
19.10.2023 թ.**

**ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ**

ԱԳՆԵՍԱ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Համառոտագիր

Այս հոդվածում ներկայացված են անգլերենի դասերին ունկնդրման ուսուցման առանձնահատկությունները, ունկնդրման հմտությունների ու կարողությունների զարգացման մեխանիզմները: Դիտարկվում են ունկնդրման գործընթացում հանդիպող դժվարությունները, ինչպես նաև առաջարկվում են այդ դժվարությունները հաղթահարելու միջոցները:

Հիմնաբառեր¹ ունկնդրում, ունկնդրման ուսուցում, ունկնդրման դժվարություններ, խոսքային գործունեություն, անգլերեն, հմտություններ և կարողություններ, խոսքի ընկալման մեխանիզմներ:

Ներածություն

Ժամանակակից աշխարհում օտար լեզու սովորելու մոտիվացիան մեծանում է: Հաշվի առնելով անգլերենի՝ որպես միջազգային հաղորդակցման լեզվի դերն ու կարևորությունը, ուստի և այդ լեզվին տիրապետելու հասարակական հարաճուն պահանջը՝ վերջին տարիներին անգլերենի ուսուցումը մեծ հետաքրքրություն է առաջացրել: Այսօր անգլերենի իմացությունն անհրաժեշտ է արժանապատիվ կրթություն ստանալու, բարձր վարձատրվող մասնագիտություն ձեռք բերելու, արտերկրում սովորելու, դրամաշնորհ շահելու, գործնական կապերն ընդլայնելու և միջազգային մակարդակով հաղորդակցվելու համար :

Այսօր անգլերենի դասավանդման մեթոդիկայում զգալի տեղ է զբաղեցնում ունկնդրումը: Այն բանավոր խոսքի ուսուցման կարևոր հմտություններից է և ենթադրում է խոսքային գործունեության բոլոր տեսակների տիրապետում՝ խոսել, կարդալ, լսել և գրել:

Ունկնդրողական կարողությունների բավական բարդության պատճառով առանձնահատուկ արդիական է խոսքային գործունեության այս տեսակի ուսուցման խնդիրը, որը մինչ օրս մնում է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամենավիճահարույց խնդիրներից մեկը և հատուկ ուշադրության առարկա է մեթոդաբանների և հոգեբանների կողմից, որոնք ակտիվորեն փնտրում են ուսուցման որակի և արդյունավետության բարձրացման ուղիներ և միջոցներ:

Աշխատանքի գիտական նորույթը այն է, որ իրականացվել է ունկնդրման ուսուցման տեսական և էմպիրիկ ուսումնասիրություն,

մեկնաբանվել են ունկնդրման կարողությունների աստիճանական զարգացման խնդիրները և առաջարկվել են վարժություններ լսողական հմտությունների և կարողությունների զարգացման նպատակով:

Բանավոր խոսքի տիրապետումը սկսվում է լսելուց: Տեղեկությունը լսողությամբ ընկալելով՝ սովորողը տիրապետում է լեզվի հնչյունական կողմին և նրա հնչերանգային առանձնահատկությանը: Խոսքային գործունեության այս տեսակի տիրապետումն օգնում է ունկնդրին լսել և հասկանալ խոսողին, քաղել իր համար անհրաժեշտ տեղեկատվությունը, արձագանքել զրուցակցի խոսքին, ինչպես նաև իր հերթին արտաբերել անհրաժեշտ տեղեկատվությունը: Ունկնդրման տիրապետումն ապահովում է հաղորդակցության հաջողությունը, այն անգլերեն խոսելու և անգլերեն խոսքը հասկանալու ունակության մեջ է: Լսելը, բացի իր հիմնական նպատակից, զարգացնում է հիշողությունը, մտածողությունը, երևակայությունը և ընկալումը, այսինքն՝ նպաստում է անհատի համակողմանի զարգացմանը (Королева, Кальщикова, 2015, с. 129-134):

Ունկնդրման հմտություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ է նախ տիրապետել լեզվի հնչյունական կառուցվածքին, հնչյունաբանական առանձնահատկություններին, հնչերանգին. դիթմին, առոգանությանը: Ունկնդրման միջոցով է յուրացվում նաև լեզվի բառապաշարը և նրա քերականական կառուցվածքը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում ունկնդրման ուսուցմանը, քանի որ օտար լեզվին տիրապետելը ոչ միայն սեփական մտքերը, մտադրությունները, ցանկություններն արտահայտելն է, այլ նաև անմիջական շփման ընթացքում, լինի դա օդանավակայանում, կայարանում, հեռուստատեսությամբ թե այլուր, այլև հաղորդագրություններ լսելիս կենդանի խոսքը հասկանալ կարողանալը: Ունկնդրումը հանդես է գալիս հաղորդակցման տարբեր իրավիճակներում.

- բազմապիսի հայտարարություններում,
- ռադիո և հեռուստատեսային նորություններում,
- տարբեր հրահանգներում և հանձնարարություններում,
- դասախոսություններում,
- զրուցակիցների պատմություններում,
- հեռախոսային հաղորդակցություններում:

Ունկնդրումը միաժամանակ և՛ ուսուցման նպատակ է, և՛ ուսուցման միջոց: Որպես ուսուցման միջոց՝ խոսքային գործունեության այս տեսակը առկա է յուրաքանչյուր դասի ժամանակ. դա ուսուցչի խոսքն է, սովորողների պատասխանները, ձայնագրություններ լսելը, քննարկումները, թելադրությունը, իսկ լսողական հմտությունների և կարողությունների ձևավորումն ու զարգացումը է ուսուցման նպատակն է:

Լսելը հաղորդակցության հիմքն է, բանավոր հաղորդակցության յուրացումը սկսվում է լսելուց: Տեղեկությունը լսողությամբ ընկալելով՝ սովորողը տիրապետում է լեզվի հնչյունական կազմին, նրա հնչերանգին: Ունկնդրման տիրապետումն օգնում է սովորողին լսել և հասկանալ խոսակցին, քաղել իր համար անհրաժեշտ տեղեկատվությունը, արձագանքել զրուցակցի խոսքին, ինչպես նաև իր հերթին արտահայտել անհրաժեշտ տեղեկատվություն: Ցանկացած լեզվի, և առաջին հերթին մայրենիի յուրացումը սկսվում է լսելուց, լսում ենք հնչյուններ, բառեր, լսողությամբ ընկալում տեղեկատվության ցանկացած հոսք, հետո միայն սովորում ենք վերարտադրել խոսքը, հետագայում ձեռք ենք բերում կարդալու և գրելու հմտություններ: Այսպիսով, լսելը կարևոր և առաջին օղակն է լեզվի ուսուցման գործընթացում:

Ունկնդրման ուսուցումը ենթադրում է հետևյալ նպատակները.

- հասկանալ զրուցակցի հայտարարությունը հաղորդակցության տարբեր իրավիճակներում, ներառյալ անձանոթ լեզվական միջոցները,
- ըմբռնել ուսումնական և բնագիր տեքստերի բովանդակությունը խորությամբ,
- զարգացնել ունկնդրման որոշակի հմտություններ և կարողություններ,
- զարգացնել լսողական հիշողությունը,
- սովորել կարևորել տեղեկատվության հոսքի մեջ հիմնականը,
- մտապահել խոսույթի նյութը:

Ունկնդրման ուսուցման հիմնական գործոնը մոտիվացիան է: Լսողը պետք է լսելու կարիք ունենա: Կարևոր է ընտրել այնպիսի աուդիոտեքստ, որը հետաքրքիր և բովանդակալից լինի սովորողների համար, որը համապատասխանի նրանց տարիքային առանձնահատկություններին, հետաքրքրություններին և խնդիրներին: Ներկայումս հասանելի են մեծ թվով լսողական լրատվամիջոցներ, այդ թվում՝ աուդիոձայնագրություններ, ֆիլմեր, երգեր անգլերենով, աուդիոգրքեր, ռադիոհաղորդումներ, հեռուստաալիքներ: (Goh, 2008, p.188-213):

Լսողական հմտությունը ամենադժվար հմտություններից է, քանի որ այն ստիպում է սովորողին գործել ավելի արագ, կարողանալ մտովի շեղվել կողմնակի հնչյուններից, տարանջատվել սեփական մտքերից ու ապրումներից: Իսկ ամենադժվարը ընտելանալն է ուսուցչի ձայնին, ռիթմին, արտաբերած բառերի ու հնչյունների արագությանը և առոգանությանը:

Ունկնդրման հաջողությունը կախված է.

- Ունկնդրողի հավանական կանխատեսում օգտագործելու կարողությունից

• Մայրենի լեզվում մշակված հմտություններն ու կարողությունները օտար լեզվին փոխանցելու ունակությունից

• Սովորողի անհատական առանձնահատկություններից. հնարամտություն և կշռադատվածություն, արագ արձագանքելու ունակություն, վերադասավորում մի մտային գործողությունից մյուսը, արագ ներգրավվում հաղորդագրության թեմայի մեջ:

Գոյություն ունեն լսողական հմտությունները բարելավելու այնպիսի եղանակներ, ինչպիսիք են.

- Դիտել ֆիլմեր առանց թարգմանության և առանց ենթագրերի,
- Պարբերաբար լսել աուդիոնյութեր,
- Սովորել աուդիոգրքերով,
- Ընդլայնել բառապաշարը,
- Զարգացնել քերականական հմտությունները,
- Կատարելագործել արտասանությունը,
- Ավելի շատ խոսել անգլերեն,
- Սովորել մտածել անգլերենով,
- Հնարավորինս անտեսել անձանոթ բառերը,
- Հարմարվել ժարգոնի առկայությանը,
- Զթարգմանել անգլերենից հայերեն:

Ունկնդրման կարողությունների զարգացման նպատակով առաջարկվում են հետևյալ եղանակները.

• Ընկալել և հասկանալ ունկնդրած տեքստի հիմնական բովանդակությունը:

- Վեր հանել տեքստից անհրաժեշտ տեղեկատվությունը:
- Ամբողջապես ըմբռնել ունկնդրվող բնագրի մանրամասները:
- Տեքստում առանձնացնել հիմնական միտքը:
- Վերհանել անհրաժեշտ տեղեկատվությունը գործնական բնույթի հաղորդագրություններում:

• Անտեսել անձանոթ լեզվական նյութերը, որոնք էական չեն տեքստը հասկանալու համար: (Малетина О.А., 2010, с. 114–119):

Ելնելով առաջադրանքից, առանձնացվում են.

1. Ունկնդրվող տեքստի մանրամասն ըմբռնում (**listening for detailed information**) (լսում են մանրամասն տեղեկություններ ստանալու համար)
2. Ունկնդրվող տեքստի հիմնական բովանդակության ըմբռնում (**skim listening**) (լսում են սահուն ըմբռնման համար)
3. Ունկնդրվող տեքստի տեղեկատվության մասնակի ընտրություն (**listening for partial comprehension**) (լսում են մասնակի ըմբռնման համար) (Соломатина, 2011, с. 130-134):

Լսողությամբ հաղորդագրության ըմբռնումը, միանշանակ, պասիվ գործունեություն չէ: Այն ակտիվ և բարդ գործընթաց է երկրորդ լեզու սովորողի համար: Դժվարությունը այն է, որ սովորողը առնչվում է մի լեզվի հետ, որի ոճը շատ է տարբերվում մայրենի լեզվից, լեզու, որի և՛ ձևաբանական և՛ շարահյուսական համակարգը, ինչպես նաև հնչյունական, արտասանական, բառային կառուցվածքները շատ քիչ ընդհանրություն ունեն մայրենի լեզվի հետ: Լսողը պետք է կարողանա տարբերակել հնչյունները, հասկանալ օտար լեզվի բառապաշարը, ընդօրինակել առոգանությունն ու հնչերանգը և հարմարվել մայրենիից տարբերվող լեզվի դիալեկտին: Այնուհետև պետք է պահպանի այն, ինչը հասկացել է, որպեսզի մեկնաբանի տեքստի, հայտարարության անմիջական համատեքստում: Անշուշտ պետք է արձանագրել, որ այս բոլոր գործընթացների համակարգումը լսողի կողմից պահանջվում է բարդ մտավոր գործողություն:

- Ունկնդրման բարդությունը նաև այն է, որ դրանում միաժամանակ ներգրավված են մի քանի հոգեբանական մեխանիզմներ. զգայական ընկալում ու ըմբռնում և վերաիմաստավորում: Միևնույն ժամանակ չի կարելի չխոստովանել, որ գիտականորեն լիովին չեն ուսումնասիրվել ընկալման և ըմբռնման գործընթացները: Դրա մասին է վկայում ընկալման հակասական տեսությունների, ընկալման մակարդակների և ընկալման միավորների տեղաբաշխման տարբեր մոտեցումների առկայությունը (Мосолова, 2015, с. 70-79):

Օտար լեզվով լսողությամբ լեզվական նյութը յուրացնելու գործընթացում սովորողն առնչվում է տարբեր դժվարությունների հետ, որոնք ազդում են օտարալեզու խոսքի ընկալման վրա: Ունկնդրման արդյունավետ ուսուցումն անհնար է դառնում առանց հաշվի առնելու ու գնահատելու այդ դժվարությունները, ուստի անգլերենի դասավանդման գործընթացում հարկավոր է կիրառել բազմատեսակ տեխնոլոգիաներ և վարժություններ՝ լսողական, արտասանական կարողություններ և հմտություններ ձևավորելու, ինչպես նաև համապատասխան միջոցներ ձեռնարկել դժվարությունները հաղթահարելու համար (Richards, 2008, p. 67-85):

Այդ դժվարությունները ծագում են երկու պատճառով. հաղորդագրության մեջ պարունակվող չուսումնասիրված լեզվական նյութի և հաղորդագրության մեջ ուսումնասիրված, բայց դժվար ըմբռնելի լեզվական նյութի պատճառով:

Չուսումնասիրված լեզվական նյութ պարունակող տեքստի դժվարության հաղթահարումը նպաստում է նոր բառերի իմաստը գուշակելու կարողության զարգացմանը, ինչպես նաև տեքստի իմաստն ամբողջությամբ հասկանալուն՝ չնայած անձանոթ տարրերի

առկայությանը: Անձանոթ տարրերն անուշադրության են մատնվում, քանի որ էական դեր չեն խաղում տեքստի ընդհանուր բովանդակությունն ըմբռնելու համար:

Ուսումնասիրված, բայց դժվար ըմբռնելի լեզվական նյութի դժվարությունը կապված է այն բանի հետ, որ նոր բառերի, քերականական երևույթների կամ խոսքային նմուշների հետ ծանոթանալիս, սովորողի ուշադրությունն ամբողջովին հրավիրվում է այդ նյութի վերարտադրման վրա, և սովորողը իր ուսումնասիրած լեզվական նյութը հեշտությամբ չի ճանաչում:

1. Խոսելով ունկնդրման դժվարությունների մասին նպատակահարմար է դիտարկել այս խնդրի ուսումնասիրման վերաբերյալ առկա որոշ աշխատություններ (Chinnery, 2005, p. 10-16, Goh, 2008, p. 188-213, Королева, Кальщикова, 2015, с. 129-134), որոնք հիմք են հանդիսանում այդ դժվարությունները խմբավորելու հետևյալ կերպ.

- 1) լեզվական նյութի բնույթով պայմանավորված դժվարություններ
- 2) խոսքի բովանդակությամբ պայմանավորված դժվարություններ
- 3) շարադրման հետևանքով պայմանավորված դժվարություններ
- 4) ընկալման պատճառով առաջացած դժվարություններ

Լեզվական նյութի բնույթով պայմանավորված դժվարություններն իրենց հերթին կարելի է բաժանել հնչյունական, բառապաշարային և քերականական դժվարությունների (Sadiku, 2015, p. 29-31):

Հնչյունական դժվարությունները կարող են լինել և՛ ընդհանուր բոլոր օտար լեզուների համար, և՛ հատուկ առանձին լեզուների համար: Աշխարհի յուրաքանչյուր լեզու, ներառյալ անգլերենը, ունի արտասանության հստակ առանձնահատկություններ: Բառերի ճիշտ արտասանությունը դժվարություն է առաջացնում սովորողների մոտ, քանի որ անգլերենի հնչերանգը զգալիորեն տարբերվում է մայրենի լեզվից, որի պատճառով էլ անգլերեն սովորողները հաճախ բախվում են խոսքային և լեզվական առանձնահատկությունների հետ կապված դժվարությունների:

Ընդհանուր դժվարությունը բառի, հնչյունների և նախադասության բառերի միջև հստակ սահմանի բացակայությունն է. օտար լեզուներում այն հնչյունների առկայությունը, որոնք մայրենի լեզվով չկան, օրինակ՝ [æ], [ð], [ŋ], [θ] անգլերենում: Անգլերենին հատկապես բնորոշ է բառերի ուղղագրության և արտասանության անհամապատասխանությունը:

Բառապաշարային դժվարությունները ներառում են առաջին հերթին բոլոր լեզուներում ամբողջական համանունների և հնչյունական համանունների առկայությունը: Հնչողությամբ նման բառերը նույնպես մեծ դժվարություն են առաջացնում, հատկապես հարանունները՝ economic –

economical, հակադիր հասկացություններ արտահայտող բառերը answer - ask, take - put, west - east (պատասխանել - հարցնել, վերցնել - դնել, արևմուտք - արևելք), բառեր, որոնք ունեն նույն համատեղելիությունը կամ պարզապես հայտնվում են մոտակայքում, այլ կերպ ասած. այն ամենը, ինչը կարելի է շփոթել:

Քերականության ոլորտում ամենամեծ դժվարությունը
նախադասության շարահյուսական կառուցվածքի անհամապատասխանությունն է՝ մայրենի լեզվի հետ համեմատած: Հայոց լեզվին բնորոշ ստորադասական նախադասությունների (subordinate clauses) փոխարեն անգլերենում տարածված են դերբայական դարձվածները (participial and infinitive phrases.): Դժվարություններ կան լսողությամբ ընկալելու բարդ բայերի դեպքում (compound verbs), ինչպիսիք են to put on, to put away, to put off, to put up, to put down և այլն:

Հոդվածի սահմանափակ շրջանակներում, իհարկե, հնարավոր չէ թվարկել բոլոր լեզվական երևույթները, որոնք դժվարություն են առաջացնում, այնուամենայնիվ, հարկ է նշել դրանցից ամենատիպականները, օրինակ՝ բառապաշարային, քերականական և հնչյունական համանունությունը, բազմիմաստությունը, որոնք լուրջ խոչընդոտ են հաղորդագրության իմաստը հասկանալու համար: For example, a bank-գետի ակն ափ a bank-բանկ We put a tent on the bank of the river. /Գետի ափին վրան կանգնեցրինք/: My brother occupies a key position in the bank. /Եղբայրս կարևոր պաշտոն է զբաղեցնում բանկում: /

Օտար լեզվով խոսքը լսելիս շատ այլ խանգարող հանգամանքներ էլ կան. խոսքի բովանդակությունը, խոսողի կողմից օգտագործվող լեզվական միջոցների ընտրությունը, խոսողի տեմպը, նրա խոսքի առանձնահատկությունները, առանձին հնչյունների խիստ կրճատումը կամ բացթողումը, խոսքի անբավարար հստակությունը, խոսողի ձայնի տեմբրը, բարձր կամ ցածր ձայնը և այլն:

Ունկնդրման ուսուցման ընթացքում դժվարություն են ներկայացնում նաև ուսումնասիրվող լեզվի երկրի պատմության, կենցաղի և մշակույթի հետ կապված փաստերի հղումները, այսպես կոչված իրոյթները, որոնք կարող են անհայտ լինել սովորողներին: Իրոյթները ներառում են աշխարհագրական անուններ, հատուկ անուններ, հաստատությունների և կազմակերպությունների անվանումներ, արվեստի գործեր, պատմական փաստեր, սովորույթներ և ավանդույթներ, ժողովրդական բառեր և արտահայտություններ, և այլն:

Ակնհայտ է, որ ունկնդրման հաջող դասավանդման և ունկնդրման գործընթացում առաջացած դժվարությունները հաղթահարելու համար

անհրաժեշտ է վարժությունների մեթոդական համակարգ, որը հաշվի առնի այդ դժվարությունները և ապահովի դրանց հաղթահարումը:

Լսողությամբ խոսքի իմաստն ընկալելու ուսուցումը ենթադրում է խոսքային և նախապատրաստական վարժություններ, որոնք ուղղված կլինեն ձևավորելու սովորողների ունկնդրողական հմտությունները և հետագայում լսողական տեքստի հետ աշխատելով, զարգացնելու և կատարելագործելու ունկնդրման մեխանիզմները (Елухина, 2009, с. 9-19):

Այսպիսով, նախապատրաստական, խոսքային և լսողական ըմբռնումը զարգացնելուն միտված վարժությունները ուղղված են անգլերենի իմացության խորացմանը և բանավոր խոսքի հմտությունների ու կարողությունների կատարելագործմանը:

• Խոսքային վարժություններ

ուսանողները լսում են երկխոսություններ կամ տեքստեր և կատարում են բացթողումներով առաջադրանքներ՝ ծանոթ քերականական և բառապաշարային տարրերով: Նման վարժությունները օգնում են սովորողներին ամրապնդել բառապաշարը, կատարելագործել լսողական մեխանիզմները և ստանալ պահանջվող տեղեկատվությունը:

• Լսողական վարժություններ

ընդարձակ առաջադրանքներ կատարելիս անհրաժեշտ է օգտագործել համատեքստ կամ նկարագրողումներ, որպեսզի սովորողները փորձեն պատկերացնել (հասկանալ) այն, ինչ լսում են, և լսելուց հետո միայն կատարել առաջադրանքները: Անհրաժեշտ է, որ սովորողները կենտրոնանան կոնկրետ առաջադրանքների կատարման վրա և չչեղվեն նոր կամ անծանոթ բառեր լսելիս:

• Նախապատրաստական վարժություններ

նպատակն է սովորողներին ներգրավել կիրառելու բառային, քերականական և հնչյունական լսողական հմտություններ և հոգեբանական մեխանիզմներ, որոնք հիմք են հանդիսանում հավանական կանխատեսումների, հիշողության ամրապնդման համար: Ունկնդրման ամենաարդյունավետ նախապատրաստական վարժություններ են համարվում.

• Հավանական կանխատեսման ուսուցման վարժություններ

լսել ածականների (բայերի) շարքը, անվանել նրանց հետ ավելի հաճախ օգտագործվող գոյականները. անվանել բառի իմաստները, որոնք ձևավորվել են հայտնի տարրերից, for example: thankful, thankless (thank), լսել մի շարք ֆորմուլաներ, անվանել այն իրավիճակները, որոնցում դրանք կարող են օգտագործվել մայրենի կամ օտար լեզվով:

• Կարճաժամկետ և տրամաբանական հիշողության զարգացման վարժություններ

լսել մեկուսացված բառերի շարքը, հիշել և վերարտադրել դրանցից նույն թեմային պատկանող բառերը. լսել երկու-երեք կարճ արտահայտություններ, միացնել դրանք նախադասության մեջ:

• Իրույթներն ու հապավումները ճանաչելու վարժություններ.

լսել իրույթներ պարունակող արտահայտությունները. թարգմանել դրանք, լսել հապավումներ պարունակող տեքստը, խմբավորել հասկացված անունները, տեղանունները, հաստատությունների անվանումները և այլն):

• Բառակազմական և համատեքստային գուշակությունների զարգացման վարժություններ

լսել բայերի շարքը, դրանցից կազմե՛ք գոյականները -er, for վերջածանցով for example listen - listener,

լսել բաղադրյալ և ածանցյալ բառերը, որոնք կազմված են հայտնի բառակազմական ածանցներից, թարգմանել դրանք (կամ բացատրել դրանց գործածությունը նախադասության մեջ).

որոշել միջազգային բառերի նշանակությունը ըստ համատեքստի:

Եզրակացություն

Ուկնդրման ուսուցումը անգլերենի դասավանդման բավականին արդի և կարևոր գործընթաց է: Այն խոսքային գործունեության ռեցեպտիվ տեսակ է, որի օգնությամբ տեղի է ունենում հնչյունային խոսքի իմաստային ընկալում: Ուկնդրումը ներառում է խոսքը լսելու, ընկալելու և հասկանալու գործընթացը: Լսելու հիմքը ակտիվ մտածողական գործընթացն է, որն ուղղված է խոսքի ընկալմանը, ճանաչմանը և ըմբռնմանը: Գոյություն ունեն ուկնդրման չորս հիմնական մեխանիզմներ՝ խոսքի ուկնդրում, հիշողություն, հավանականական կանխատեսում, արտաբերման մեխանիզմ, ինչպես նաև որոշակի հոգեֆիզիոլոգիական մեխանիզմներ՝ ընկալում, ճանաչում և ըմբռնում:

Ուկնդրման ուսուցման արդյունավետությունը կախված է մի շարք գործոններից՝ սովորողների մոտիվացիայի մակարդակից, ներկայացված աուդիո նյութի որակից, սովորողների առջև դրված նպատակների ու խնդիրների հստակությունից, ուկնդրման նախնական (նախատեքստային) փուլում կատարված աշխատանքից, սովորողների լեզվական ընդհանուր մակարդակից և մի շարք այլ չափանիշներից: Հետևաբար ուկնդրման դասավանդման պատշաճ որակ ապահովելու համար պահանջվում է նոր առաջատար տեխնոլոգիաների, այդ թվում՝ համակարգչային, ինչպես նաև համացանցային ռեսուրսների և հեռավար դասընթացների լիարժեք կիրառում:

Այսպիսով, ուկնդրման հմտությունների արդյունավետ զարգացումը հնարավոր է միայն համակարգված, նպատակային աշխատանքի դեպքում՝ հաշվի առնելով օտարալեզու խոսք լսելու հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները՝ հաշվի առնելով սովորողների

ակտիվությունը, նրանց լեզվական գիտելիքների ընդհանուր մակարդակը, լեզվի ուսուցման հաղորդակցական մոտեցման շրջանակներում նրանց կարիքները, հետաքրքրությունները՝ լեզվական և խոսքի բոլոր հմտությունների ու կարողությունների միաժամանակյա զարգացմանը զուգընթաց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Chinnery, G. M., Speaking and listening online // Vol. 3: English Teaching Forum. - Washington: English Teaching Forum, 2005. - p. 10-16.
2. Goh, C., Metacognitive instruction for second language listening development: Theory, practice and research implications. *RELC Journal*, 39, p. 188-213. 2008
3. Richards, J. C., Teaching Listening and Speaking. New York, Cambridge University Press, 2008. p. 67-85.
4. Sadiku, L. M., The Importance of Four Skills Reading, Speaking, Writing, Listening in a Lesson Hour. *European Journal of Language and Literature Studies*. 2015. Vol. 1. №1. p. 29-31.
5. Валиуллина Ф. М., Обучение аудированию студентов неязыковых специальностей [Электронный ресурс] / Ф. М. Валиуллина // Современные проблемы и пути их решения в науке, транспорте, производстве и образовании: Сборник научных трудов SWorld. - Одесса, 2012 - с. 65-68
Valiullina F. M., Obuchenie audirovaniyu studentov nejazykovykh special'nostej [Elektronnyj resurs] / F. M. Valiullina // Sovremennye problemy i puti ih reshenija v nauke, transporte, proizvodstve i obrazovanii: Sbornik nauchnyh trudov SWorld. - Odessa, 2012 - s. 65-68
6. Елухина Н. В., Речевые упражнения для обучения аудирования // Иностранные языки в школе. - 2009. - №4. - с. 9-19.
Eluhina N. V. Rechevye uprazhnenija dlja obuchenija audirovanija // Inostrannye jazyki v shkole. - 2009. - №4. - s. 9-19.
7. Королева Е. В., Кальщикова Ю. Р., Использование стратегий при обучении аудированию на уроках английского языка // Актуальные проблемы линг-водидактики и методики организации обучения иностранным языкам. Сборник статей. Чебоксары: Чувашский государственный педагогический университет им. И. Я. Яковлева, 2015, с. 129-134.
Koroleva E. V., Kal'shhikova Ju. R., Ispolzovanie strategij pri obuchenii audirovaniyu na urokah anglijskogo jazyka // Aktual'nye problemy ling-vodidaktiki i metodiki organizacii obuchenija inostrannym jazykam. Sbornik statej. Cheboksary: Chuvashskij gosudarstvennyj pedagogicheskij universitet im. I.Ja. Jakovleva, 2015, s. 129-134.

8. Малетина О. А., Методические рекомендации по формированию аудитивных навыков в неязыковом вузе // *Lingua mobilis*. - Челябинск: Рекпол, 2010. - Вып. №4. - с. 114-119.
Maletina O. A., Metodicheskie rekomendacii po formirovaniju auditivnyh navykov v nejazykovom vuze // *Lingua mobilis*. - Cheljabinsk: Rekpol, 2010. - Вып. №4. - с. 114-119.
9. Мосолова Е. М., Проблема аудирования на уроках иностранного языка как вида речевой деятельности // *Психология и педагогика: Современные и инновации, опыт практического применения*. - Липецк: ООО «РаДуши». - 2015. с. 70-79
Mosolova E. M., Problema audirovanija na uroках inostrannogo jazyka kak vida rechevoj dejatel'nosti // *Psihologija i pedagogika: Sovremennye i innovacii, opyt prakticheskogo primenenija*. - Lipeck: ООО «RaDushi». - 2015. с. 70-79
10. Соломатина А.Г., Развитие умений говорения и аудирования учащихся посредством учебных подкастов. - 2011. с. 130-134
Solomatina A.G., Razvitie umenij govorenija i audirovanija uchashhihsja posredstvom uchebnyh podkastov. - 2011. с. 130-134

АГНЕСА ШАХНАЗАРЯН - МЕХАНИЗМЫ РАЗВИТИЯ НАВЫКОВ И УМЕНИЙ АУДИРОВАНИЯ

Ключевые слова: аудирование, обучение аудированию, трудности аудирования, речевая деятельность, английский язык, навыки и умения, механизмы восприятия речи.

В данной статье представлены особенности обучения аудированию на занятиях по английскому языку, механизмы развития навыков и умений аудирования. Рассмотрены трудности, возникающие в процессе аудирования, предложены пути их преодоления.

AGNESA SHAHNAZARYAN - MECHANISMS OF DEVELOPING LISTENING SKILLS AND COMPETENCES

Keywords: *Key words: listening, teaching listening, listening difficulties, speech activity, the English language, skills and abilities, speech perception mechanisms.*

This article presents the peculiarities of teaching listening in the English language classes, the mechanisms developing listening skills and competences. Difficulties encountered in the listening process are considered, and ways to overcome these difficulties are suggested.

Ներկայացվել է՝
Գրախոսվել է՝

28.09.2023 թ.
12.10.2023 թ.

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ**

ՆԱՐԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

Համառոտագիր

Արդի բարձրագույն կրթությունը հասարակության զարգացման և անհատի կայացման «պատասխանատուներից» է: Ժամանակակից աշխարհում, որտեղ գիտելիքներն ու հմտություններն առավել արժեքավոր են, բարձրագույն կրթությունն էական դեր ունի մարդկային ռեսուրսների և մտավոր կապիտալի ձևավորման գործում: Այս առումով բացառություն չէ նաև զբոսաշրջության ոլորտը: Լինելով համաշխարհային տնտեսության ճյուղ՝ այն իր զարգացմանը զուգահեռ նոր պահանջներ է ներկայացնում կրթության ոլորտին: Զբոսաշրջության և հյուրընկալության կազմակերպությունները փաստում են կառավարման, մարքեթինգի, հոգեբանության, մշակույթի և մի շարք այլ գիտակարգերի վերաբերյալ համապարփակ գիտելիքներով և անձնային, մասնագիտական հմտություններով օժտված, բարձր որակավորում ունեցող մասնագետների անհրաժեշտությունը: Պահանջվող կարողություններով ու հմտություններով մասնագետներ ձևավորելու առաքելության հիմնական բեռը բարձրագույն ուսումնական հաստատություններին է: Այս հոդվածում ներկայացվում են զբոսաշրջության կրթության զարգացման փուլերը, աշխարհի տարբեր համալսարաններում «Զբոսաշրջություն» և «Հյուրընկալություն» մասնագիտությունների կրթական ծրագրերի զարգացման միտումները:

Հիմնաբառեր՝ *Բարձրագույն կրթություն, զբոսաշրջության մասնագետների որակավորում, կրթական արդի պահանջներ:*

Ներածություն

Յուրաքանչյուր ազգի տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքական առաջընթացը պայմանավորված է որակյալ բարձրագույն կրթությամբ, որն էլ ենթադրում է պատասխանատու քաղաքացիների ձևավորման և որակյալ մասնագետների պատրաստման գործընթաց (UNESCO, 1998), (World Education Forum, Dakar, 2000): Բարձրագույն ուսումնական հաստատությունները, մշտապես ուսումնասիրելով առկա միտումները, փորձում են կրթական գործունեությունը համապատասխանեցնել միջազգային կրթական չափանիշներին, իսկ

շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը՝ աշխատաշուկայի պահանջներին: Հետազոտության *հիմնախնդիրն* այն է, որ, զբոսաշրջության ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետների առկայությունն ու ոլորտի զարգացումը փոխկապակցված են, ինչն էլ ընդգծում է բուհական համակարգում զբոսաշրջության ոլորտի մասնագետներ պատրաստող կրթական ծրագրերի բարեփոխման և արդիականացման կարևորությունը: Վերոնշյալով էլ պայմանավորված է հետազոտության արդիականությունը:

Հետազոտության *նորույթն* այն է, որ քննության են առնվել զբոսաշրջության ոլորտի մասնագետների որակավորման գործընթացի զարգացման արդի միտումները՝ պայմանավորված ոլորտի զարգացմամբ:

Հոդվածի *նպատակն* է ուսումնասիրել զբոսաշրջության ոլորտի մասնագետների պատրաստման կրթական գործընթացի կազմակերպման միջազգային փորձը՝ համադրելով և վերլուծելով աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա կրթական ծրագրերը:

Ուսումնասիրությունը կարող է համալրել մասնագիտական հետազոտությունների շարքը՝ ընդլայնելով զբոսաշրջության մասնագետների պատրաստման գործընթացի տեսական ուսումնասիրությունները: Իսկ հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել բուհերի զբոսաշրջության և հյուրընկալության բաժինների ուսանողների ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների պատրաստման ընթացքում:

Հոդվածում օգտագործվել են մասնագիտական գրականության ուսումնասիրության, վերլուծության և համադրման *մեթոդները*:

Զբոսաշրջության ոլորտի մասնագետներ պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի ձևավորման համաաշխարհային փորձը

Աշխարհի տարբեր երկրներում գործող կրթական հաստատությունները նպաստել են զբոսաշրջության բարձրագույն կրթության զարգացմանը՝ դրանով իսկ դրական ազդեցություն ունենալով ոլորտի զարգացման վրա:

Վաղ շրջան. XIX դարի վերջ XX դարի սկիզբ

Այս ժամանակահատվածում զբոսաշրջությունը, որպես տնտեսության ճյուղ, համեմատաբար նոր էր, և ոլորտի մասնագիտական բարձրագույն կրթությունը գրեթե բացակայում էր: Մասնագիտական ուսուցումն իրականացվում էր կարճ դասընթացների և գործնական պարապմունքների միջոցով: Դրանք կենտրոնացած էին գործնական

հմտությունների ձևավորման վրա, ինչպիսիք են հյուրընկալության ոլորտի աշխատանքների և/կամ ճամփորդությունների կազմակերպումը:

Այնուամենայնիվ, զբոսաշրջության հանրաճանաչմանը և տնտեսության համար դրա դերի արժևորմանը զուգահեռ, որոշ երկրներ, գիտակցելով համակարգային կրթության անհրաժեշտությունը, հիմնեցին համապատասխան մասնագիտական ծրագրերով առաջնորդվող կրթական հաստատություններ: Կրթական դպրոցներ կամ դասընթացներ կազմակերպվել են Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում և այլուր:

Բուհական կրթության զարգացում (1950-1960-ական թթ.)

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո զբոսաշրջային հոսքերի աճին զուգահեռ ավելացավ նաև կրթական հաստատությունների, մասնագիտացված ծրագրերի թիվը: 1950-ականներին կազմավորվեցին զբոսաշրջության ոլորտում մասնագիտացած մի շարք համալսարաններ ու քոլեջներ, ինչպիսիք են Շվեյցարիայում Լյուցեռնի հյուրանոցային կառավարման ինստիտուտը (1954), Ֆրանսիայում Փարիզի Զբոսաշրջության և հյուրընկալության դպրոցը (1950), Իտալիայում Հոմի զբոսաշրջության ինստիտուտը (1950), Մեծ Բրիտանիայում Լոնդոնի հյուրընկալության և զբոսաշրջության քոլեջը (1951) (Pauline J. Sheldon, Cathy H. C. Hsu, 2015):

Այս ժամանակահատվածը դարձավ զբոսաշրջության ոլորտում բարձրագույն կրթության զարգացման ելակետ, և ժամանակի ընթացքում այս ոլորտում ավելացան ուսումնական հաստատություններն ու ծրագրերը: Նշված համալսարաններից շատերը գործում են մինչ օրս, սակայն, հարկ է նշել, որ որոշները փոխել են անվանումը կամ կառուցվածքը, ինչպես նաև՝ ընդլայնել ակադեմիական ծրագրերը:

Բուհերի աշխարհագրության ընդլայնում (1970-1980-ական թթ.)

1970-1980-ական թվականներին զբոսաշրջության բարձրագույն կրթությունն ընդլայնեց իր աշխարհագրությունը՝ տարածվելով այլ երկրներում և մայրցամաքներում: Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի համալսարաններն ու քոլեջները սկսեցին առաջարկել զբոսաշրջության մասնագիտացված ծրագրեր՝ հաշվի առնելով իրենց երկրների առանձնահատկությունները: Սա նպաստեց այդ շրջաններում զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև անձնակազմի պատրաստմանն ու կատարելագործմանը այնպիսի համալսարաններում, ինչպիսիք են Ավստրալիայում Գրիֆիտի համալսարանը (Griffith University, 1971), Հարավային Աֆրիկայում Քեյթիթաունի համալսարանը (University of Cape Town, 1829):

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման փուլ (1990-2000-ական թթ.)

Ինչպես ցանկացած ոլորտ, զբոսաշրջության ոլորտը նույնպես առանց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավոր չէ պատկերացնել (Airey, 2016): Տեղեկատվական տեխնոլոգիաների զբոսաշրջության ոլորտ ներթափանցմանը զուգահեռ՝ կրթական ծրագրերում ներառվեցին զբոսաշրջային և հյուրանոցային ամրագրման համակարգերի, տեղորոշման համակարգերի դասնթացներ, ինչը հնարավոր դարձրեց ապագա մասնագետների առավել դյուրին ներգրավումը զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտների գործընթացներին: Փենսիլվանիայի համալսարանը (ԱՄՆ), Բրայթոնի համալսարանը (Մեծ Բրիտանիա), Գրիֆիտի համալսարանը (Ավստրալիա) և Գրոնինգենի համալսարանը (Նիդերլանդներ) առաջիններից էին, որ կարևորեցին տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցումը զբոսաշրջության ոլորտի մասնագետների պատրաստման գործընթացում:

Գլոբալիզացիա և միջազգային համագործակցություն

Վերջին տասնամյակների ընթացքում զբոսաշրջային բարձրագույն կրթությունը դարձել է առավել գլոբալ և միջազգային: Տարբեր երկրներում գործող համալսարաններ ու քոլեջներ սկսել են մշակել համատեղ ուսումնական ծրագրեր, իրականացնել միջազգային պրակտիկա, դասավանդողների և ուսումնառողների շարժունության ծրագրեր, որոնց շնորհիվ դասախոսական կազմը փորձի փոխանակում իրականացնելու հնարավորություն է ունեցել, իսկ ուսանողները ձեռք են բերել միջմշակութային հաղորդակցության փորձ և պատկերացում են կազմել տարբեր երկրներում զբոսաշրջության ոլորտի առանձնահատկությունների վերաբերյալ: Նման համատեղ ծրագրի օրինակ է Հոնկոնգի պոլիտեխնիկական համալսարանի Հյուրանոցների և զբոսաշրջության կառավարման դպրոցի (SHTM, PolyU), Շվեյցարիայի Հյուրընկալության բիզնես դպրոցի (EHL Hospitality Business School (EHL)), Հյուսթոնի համալսարանի (UH) Conrad N. Hilton քոլեջի առաջարկած «Հյուրընկալության բիզնես» մագիստրոսական ծրագիրը:

Զբոսաշրջային բարձրագույն կրթության զարգացման պատմական ակնարկը ցույց է տալիս, որ այն երկար ճանապարհ է անցել՝ պարզ դասընթացներից և սեմինարներից մինչև բուհական կրթական ծրագրեր, որոնք ընդգրկում են զբոսաշրջության ոլորտի տարբեր ասպեկտներ:

Ոլորտի առաջատար բուհերի ծրագրերի վերլուծություն

Ուսումնասիրվել են առաջատար համալսարանների կրթական ծրագրերը: Հարկ է նշել, որ համալսարաններն ընտրվել են՝ հիմք ընդունելով դրանց առաջատարությունը բարձրագույն կրթության ոլորտի վարկանիշավորման հետևյալ համակարգերում՝ QS World University Rankings: QS World University Rankings (8), Համաշխարհային համալսարանների ակադեմիական վարկանիշ (ARWU) (10) և Times Higher Education World University Rankings (11):

Լոզանի հյուրընկալության կառավարման դպրոց (Ecole hôtelière de Lausanne, հիմա՝ EHL Hospitality Business School), (Շվեյցարիա, 1893)

Այս կրթական հաստատությունը հյուրանոցային կառավարման ամենահին դպրոցն է և այդ ժամանակից ի վեր չի կորցրել առաջատար դիրքերը ազգային և համաշխարհային վարկանիշներում: Պահպանելով ավանդույթները՝ այս հաստատությունը կրթությունը կազմակերպում է նորարարական մեթոդների կիրառմամբ՝ հաշվի առնելով արդի միտումները: Այն ունի մի շարք ասոցիացիաների հավատարմագրում (New England Association of Schools and Colleges, NEASC), ինչը հավաստում է ծրագրերի համապատասխանությունը միջազգային չափանիշներին:

Կրթական մակարդակ. բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր:

Մասնագիտացում. հյուրանոցային կառավարում, ռեստորանների կառավարում, իրադարձությունների կառավարում և այլն:

Կրթական ծրագրերը ներառում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական դասընթացներ, նաև կենտրոնանում են առաջնորդության և ձեռնարկատիրական հմտությունների զարգացման վրա: Կրթական ծրագրերում գերակշռում են գործնական դասընթացները՝ ուսանողներին հնարավորություն ընձեռելով ձեռք բերելու մասնագիտական հմտություններ, գտնել գործնական ամենատարբեր խնդիրների ոչ ստանդարտ լուծումներ աշխարհի լավագույն հյուրանոցներում և ռեստորաններում: Ուսուցման ընթացքում ուսանողները մշակում են բիզնես նախագծեր, որոնք պարբերաբար ներկայացնում են առաջատար ընկերություններին՝ հնարավորություն ստանալով աշխատել ոլորտի լավագույն մասնագետների հետ:

Նևադայի համալսարան (University of Nevada), (ԱՄՆ, 1957)

Ամերիկյան այս համալսարանի Harrah College of Hospitality քոլեջը հայտնի է աշխարհի լավագույն հյուրանոցային ցանցերի, ինչպես նաև բազմաթիվ կրթական հաստատությունների հետ համագործակցությամբ:

Կրթական մակարդակ. բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր:

Մասնագիտացում. հյուրանոցների կառավարում, միջոցառումների կազմակերպում և կառավարում, խաղերի կառավարում, մարդկային ռեսուրսների կառավարում, ռեստորանի նորարարական կառավարում, գովազդի ակումբների կառավարում և այլն:

Կրթական ծրագրերի հիմքում գործնական ուսուցումն է: Համագործակցում է William F. Harrah-ի հյուրընկալության կենտրոնի հետ, որը հյուրընկալության ոլորտի հետազոտությունների և կրթության առաջատար կենտրոններից մեկն է: Ուսանողները հնարավորություն են ունենում ձեռք բերել մասնագիտական կարողություններ և հմտություններ, ինչպես նաև մասնակցել հետազոտական նախագծերի: Լաս Վեգասում սովորելը ուսանողներին հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել և գործնական փորձ ձեռք բերել աշխարհի ամենադինամիկ և հայտնի տուրիստական քաղաքներից մեկում:

Քորնելի համալսարան (Cornell University), (ԱՄՆ, 1865)

Առաջատար գիտահետազոտական այս բուհն իրականացնում է գործնական ուղղվածություն ունեցող կրթություն: Այն իրականացնում հյուրանոցների կառավարման ամենահեղինակավոր ծրագրերից մեկը, որը հայտնի է որպես հյուրանոցի կառավարման դպրոց (Cornell School of Hotel Administration, 1922):

Կրթական մակարդակ. բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր:

Մասնագիտացում. հյուրընկալության կառավարում, ռազմավարական կառավարում, զբոսաշրջության մարքեթինգ և այլն:

Կրթական ծրագրերով գործնական դասընթացներ են իրականացվում բարձրակարգ հյուրանոցներում, ռեստորաններում և հյուրընկալության այլ ձեռնարկություններում: Համալսարանը ակտիվորեն զբաղվում է հյուրընկալության ոլորտի հետազոտություններով: Ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու հետազոտական նախագծերի և աշխատելու ոլորտի առաջատար գիտնականների հետ:

Հոնկոնգի պոլիտեխնիկական համալսարան (The Hong Kong Polytechnic University - School of Hotel and Tourism Management), (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, 1994)

Համալսարանը համարվում է Ասիայի ամենամեծ և առաջատար համալսարաններից մեկը: Որպես բարձրագույն ուսումնական հաստատություն՝ այն ձևավորվել է 1994 թվականին, սակայն որպես քոլեջ հիմնադրվել է դեռևս 1937 թվականին:

Կրթական մակարդակ. բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր:

Մասնագիտացում. նորարարություն և ձեռներեցություն հյուրընկալության ոլորտում, միջազգային զբոսաշրջության և կոնվենցիաների կառավարում,

միջազգային հյուրընկալության կառավարում, հյուրանոցների և զբոսաշրջության կառավարում, զբոսաշրջության և միջոցառումների կառավարում և այլն:

Կրթական ծրագրերը հիմնված են կիրառական կրթության վրա, որը ուսանողներին նախապատրաստում է ժամանակակից աշխատաշուկայի իրական մարտահրավերներին և պահանջներին: Համալսարանի ծրագրերը շեշտը դնում են ուսանողների գործնական հմտությունների զարգացման և մասնագիտական պատրաստվածության վրա: Համալսարանի հետազոտական խմբերում ընդգրկվում են նաև ուսանողները:

Զբոսաշրջության արդի բարձրագույն կրթության առանձնահատկությունները

Ուսումնասիրելով համալսարանների կրթական ծրագրերը՝ կարող ենք փաստել, որ զբոսաշրջության ոլորտի մասնագետներ պատրաստող ծրագրերը դարձել են ավելի մասնագիտացված, ներառելով այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են զբոսաշրջության կառավարումը, հյուրընկալության կառավարումը, զբոսաշրջության մարքեթինգը, ձեռներեցությունը և այլն (Airey, 2016): Յուրաքանչյուր համալսարան մշակում է իր կրթական ծրագրերը՝ հաշվի առնելով բուհի ակադեմիական նպատակները, ռեսուրսները և ուսանողների կարիքները: Ուսումնական ծրագրերի տարբերությունների մի քանի օրինակներ ներկայացնենք ստորև.

Մասնագիտացում. որոշ համալսարաններ կարող են առաջարկել զբոսաշրջության մասնագիտացումների ավելի լայն շրջանակ, ինչպիսիք են հյուրանոցային բիզնեսի կառավարում, զբոսաշրջության մարքեթինգ, միջոցառումների կազմակերպում և կառավարում, կայուն զբոսաշրջություն, և այլն: Մի շարք համալսարաններ կենտրոնանում են ավելի նեղ մասնագիտացումների վրա, ինչպիսիք են էնտուրիզմը կամ էկոտուրիզմը: Օրինակ՝ Արևմտյան Շվեյցարիայի կիրառական գիտությունների և արվեստների համալսարանն (University of Applied Sciences and Arts of Western Switzerland) առաջարկում է «Կայուն զբոսաշրջություն» ծրագիրը, իսկ Ավստրալիայի Գրիֆիթի համալսարանն (Griffith University) առաջարկում է «Զբոսաշրջային մարքեթինգի և հյուրանոցային բիզնեսի կառավարում» ծրագիրը:

Կրթական մակարդակ. կան համալսարաններ, որոնք շնորհում են զբոսաշրջության ոլորտի բակալավրի կամ մագիստրոսի աստիճան: Որոշ համալսարաններ էլ առաջարկում են բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր զբոսաշրջության ոլորտում, ինչը

ուսանողներին հնարավորություն է տալիս ընտրել կրթական մակարդակը՝ ելնելով իրենց ակադեմիական հետաքրքրություններից և մասնագիտական աճի շարժառիթներից: Հոնկոնգի պոլիտեխնիկական համալսարանն (The Hong Kong Polytechnic University - School of Hotel and Tourism Management) առաջարկում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտում:

Կրթական ծրագրեր. կրթական ծրագրերը կարող են տարբերվել և՛ բովանդակությամբ, և՛ կառուցվածքով: Համալսարանների մեծ մասը հիմնականում իրականացնում են գործնական դասընթացներ և նախագծեր, քչերն են կենտրոնանում տեսական առարկաների վրա: Զբոսաշրջության ոլորտում ժամանակակից ուսումնական ծրագրերը ներառում են առարկաների լայն շրջանակ: Կրթական ծրագրերի կարևոր բաղադրիչ են հանդիսանում զբոսաշրջության և հյուրընկալության կառավարման, մարքեթինգի, աշխարհագրության և մշակույթի, տնտեսագիտության և ֆինանսների, լեզուների և միջմշակութային հաղորդակցության դասընթացները: Այս առարկաներն ուսանողներին տալիս են անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ զբոսաշրջության ոլորտում հաջող կարիերայի համար: Բացի այդ, համալսարաններ կան, որոնք առաջարկում են լրացուցիչ դասընթացներ ձեռներեցության, առաջնորդության հմտությունների վերաբերյալ, որոնք կարող են օգտակար լինել զբոսաշրջության ոլորտում հետագա մասնագիտական աճի համար: Հարավային Աֆրիկայի Քեյփթաունի համալսարանն (Cape Town University) առաջարկում է ծրագրեր, որոնք ներառում են ձեռներեցության և առաջնորդության լրացուցիչ դասընթացներ: Բարսելոնայի համալսարանը (University of Barcelona) Իսպանիայում առաջարկում է ծրագրեր, որոնք ներառում են պրակտիկա տորիստական ընկերություններում: Նոր Զելանդիայի համալսարանը (University of Otago) առաջարկում է ծրագրեր, որոնց շրջանակներում ուսանողները կարող են դաշտային հետազոտություններ կատարել զբոսաշրջային ռեզիդենտներում:

Դասավանդման մեթոդներ. դասավանդման մեթոդները դառնում են ավելի բազմազան և ինտերակտիվ: Դրանք ներառում են ավանդական դասախոսություն, նախագծային աշխատանք, բիզնես խաղեր, դեպքերի ուսումնասիրություն և այլն:

Ակադեմիական և մասնագիտական պահանջներ. համալսարանները ձգտում են պատրաստել մասնագետներ, որոնք օժտված են

ակադեմիական գիտելիքներով, քննադատական մտածողությամբ, ինչպես նաև մասնագիտական կարողություններով և գործնական հմտություններով, որոնք անհրաժեշտ են զբոսաշրջության ոլորտում հաջող կարիերայի համար: Նաև կարևորվում է «փափուկ հմտությունների» (soft skills) զարգացումը, ինչպիսիք են հաղորդակցությունը, առաջնորդությունը և ստեղծագործական մտածողությունը, որպեսզի շրջանավարտները պատրաստ լինեն հաջողությամբ աշխատել այս դինամիկ և մրցակցային ոլորտում:

Մարտահրավերներ և հեռանկարներ. համալսարանները բախվում են մի շարք մարտահրավերների զբոսաշրջության մասնագետների պատրաստման գործում: Այդ մարտահրավերների շարքում են զբոսաշրջության ոլորտում տեխնոլոգիական առաջընթացը, կլիմայի փոփոխության ազդեցությունը և կայուն զարգացման հիմնախնդիրները, ինչպես նաև թվային մարքեթինգի և տվյալների կառավարման ոլորտում համապարփակ գիտելիքների և իրավասությունների անհրաժեշտությունը, որոնք պահանջում են ծրագրերի թարմացում և համապատասխանեցում նոր միտումներին: Մեկ այլ մարտահրավեր է միջազգային համագործակցությունն ու ստանդարտացումը, որը պետք է ապահովի որակավորումների ճանաչումը և մասնագետների շարժունության հնարավորությունները:

Հարկ է նշել, որ վերոնշյալ առանձնահատկությունները կարող են փոփոխվել ըստ տարածաշրջանի կամ համալսարանի կոնկրետ կրթական ծրագրի համար սահմանած վերջնարդյունքների:

Միջազգային զբոսաշրջային կազմակերպություններ և ասոցիացիաներ

Զբոսաշրջության ոլորտի, ինչպես նաև զբոսաշրջային կրթության զարգացմանը իրենց գործունեությամբ նպաստել են նաև մի շարք միջազգային ասոցիացիաներ և կազմակերպություններ, ինչպիսիք են *Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը* (World Tourism Organization, WTO), *Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիան* (International Air Transport Association, IATA), *Տուրօպերատորների միջազգային ասոցիացիան* (International Federation of Tour Operators (IFTO)), *Հյուրանոցային և ռեստորանային ասոցիացիաների միջազգային ասոցիացիան* (International Association of Hotel and Restaurant Associations, IAHRA), Եվրոպական առաջատար հյուրանոցային դպրոցների ասոցիացիան (EURHODIP), Հյուրանոցային և ռեստորանային միջազգային ասոցիացիան (IH&RA), Հյուրանոցային մենեջմենթի դպրոցների շվեյցարական ասոցիացիան (ASEN), Հյուրընկալության և զբոսաշրջության ոլորտում մասնագետների պատրաստման

համաշխարհային ասոցիացիան (AMFORTH) և այլն: Վերջիններս զբաղվում են զբոսաշրջության ոլորտում առկա հիմնախնդիրների ուսումնասիրությամբ, ոլորտի կայուն զարգացմամբ, կրթական ծրագրերի հավատարմագրմամբ և ստանդարտացմամբ:

Զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտների մասնագետներ պատրաստող ամենահեղինակավոր կրթական հաստատությունները մասնագիտական տարբեր ասոցիացիաների անդամներ են, ինչը փաստում է կրթական ծրագրերի համապատասխանությունը գործարար ոլորտի պահանջներին (Полевая, 2009):

Թե՛ զբոսաշրջության, թե՛ զբոսաշրջային բարձրագույն կրթության որակական փոփոխությանը նպաստել են նաև ոլորտի վերաբերյալ հետազոտությունները: Նախորդ դարի 70-90-ական թվականներին հիմնվել են զբոսաշրջության ոլորտում հետազոտություններ իրականացնող գիտահետազոտական կենտրոններ, սկսել են հրատարակվել մասնագիտական պարբերականներ («Journal of Travel Research», «Annals of Tourism Research», «The Journal of Tourism Studies», «Journal of Hospitality & Tourism Education» և այլն) (Сакун, 2004):

Զբոսաշրջության բարձրագույն կրթության միտումները

Զբոսաշրջության բարձրագույն կրթության վերաբերյալ աշխարհում կան մի շարք միտումներ, որոնք արտացոլում են ոլորտի փոփոխությունները և ուսանողների կարիքները:

Կայուն զբոսաշրջություն. բնապահպանական կայունության և սոցիալական պատասխանատվության նկատմամբ աճող հետաքրքրության շնորհիվ կայուն զբոսաշրջությունը դառնում է կրթության կարևոր մաս: Կրթական ծրագրերը ներառում են զբոսաշրջության կայուն զարգացման պրակտիկայի, էթիկայի և սոցիալական ազդեցության ուսումնասիրություն (Dr. Harold Goodwin, International Centre for Responsible Tourism, 2007):

Միջմշակութային հաղորդակցություն. գլոբալիզացիայի և միջազգային զբոսաշրջության աճի շնորհիվ միջմշակութային կրթությունը կարևոր դեր է խաղում: Ծրագրերը ներառում են միջմշակութային հաղորդակցության հմտությունների ձևավորում:

Նորարարական տեխնոլոգիաների օգտագործում և առցանց կրթություն. նորարարական տեխնոլոգիաների և առցանց կրթության ներդրումը ուսումնական գործընթացում թույլ է տալիս ընդլայնել կրթության հասանելիությունը, ապահովել ուսման ճկունությունը և պայմաններ ստեղծել հեռավար և ինքնուրույն ուսուցման համար:

Եզրակացություն

Ներկայումս աշխարհի առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունները նպաստում են զբոսաշրջության ոլորտի զարգացմանը և՛ բարձրակարգ մասնագետներ պատրաստելով, և՛ հետազոտությունների միջոցով զբոսաշրջության ոլորտի խնդիրները բացահայտելով ու վերջիններիս համար լուծումներ առաջարկելով: Բուհական մասնագիտական կրթական ծրագրերը պետք է շարունակ արդիականացվեն՝ արձագանքելով աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին, նպաստելով ակադեմիական կրթության և գործարար ոլորտի մարտահրավերների միջև առկա պատնեշի վերացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Airey, D., *Tourism Education. Life begins at 40*, UK-Torsos, University of Surrey. 2008
2. Airey, D., *Tourism Education: Past, present and future*. UK-Emirates, University of Surrey. 2016
3. Dr. Harold Goodwin, International Centre for Responsible Tourism. 2007
https://www.academia.edu/2985953/Advances_in_Responsible_Tourism_Harold_Goodwin
4. Jafari, J., *Research and scholarship: the basis of tourism education*. *Journal of tourism studies* 1 (1), 33-41. 1990
5. Pauline J., Sheldon, Cathy H. C. Hsu, *Tourism Education: Global Issues and Trends*. 2015
6. Полевая М. В., *Особенности зарубежной системы подготовки кадров для туристской индустрии*. 2009
Polevaya M. V., *Osobennosti zarubejnoj sistemi podgotovki kadrov dlya turistskoy industrii*. 2009
7. Сакун Л. В., *Теория и практика подготовки специалистов сферы туризма в развитых странах мира, Монография*. К.: МАУП, 399 с., 2004
Sakun L. V., *Teoriya i praktika podgotovki specialistov sferi turizma v razvitikh stranakh mira, Monografija*. K.: MAUP, 399 s., 2004
8. *World Declaration on Higher Education for the Twenty-first Century: Vision and Action*, UNESCO 1998
9. *World Education Forum, Dakar, Senegal, 26-28 April 2000*

10. QS World Ranking , 2023, // <https://www.mastersportal.com/>
11. QS World University Rankings:<https://www.topuniversities.com/>
12. ARWU, <https://www.shanghairanking.com/>
13. Times Higher Education World University Rankings:
<https://www.timeshighereducation.com/>

НАРИНЕ СИМОНЯН - ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ ПОДГОТОВКИ СПЕЦИАЛИСТОВ В СФЕРЕ ТУРИЗМА В СИСТЕМЕ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ С УЧЕТОМ МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА

Ключевые слова: *Высшее образование, квалификация специалистов, современные образовательные требования.*

Современное высшее образование, среди прочего, ответственно также и за развитие общества и личности. В современном мире, где знания и навыки приобретают непреходящую ценность, высшее образование играет важную роль в формировании человеческих ресурсов и интеллектуального капитала. В этом плане сфера туризма также не является исключением. Будучи одной из отраслей мировой экономики, она по мере своего развития предъявляет все новые требования к сфере образования. Организации, специализирующиеся в сфере индустрии туризма и гостеприимства, подтверждают потребность в высококвалифицированных специалистах, обладающих соответствующими личностными и профессиональными навыками, всесторонними знаниями в области менеджмента, маркетинга, психологии, культуры и ряда других дисциплин. При этом основная нагрузка, связанная с формированием необходимых умений и навыков упомянутых специалистов, ложится на плечи высших учебных заведений. В данной статье представлены этапы развития туристического образования, а также тенденции развития образовательных программ по специальностям «Туризм» и «Гостиничное дело» в различных университетах мира.

NARINE SIMONYAN - THE TRENDS IN TRAINING TOURISM SPECIALISTS IN THE UNIVERSITY SYSTEM: INTERNATIONAL EXPERIENCE

Keywords: *Higher education, qualification of tourism professionals, current educational requirements.*

Modern higher education is responsible for the development of society and the development of an individual. In today's world, where knowledge and skills are more valuable, higher education plays an essential role in the formation of human resources and intellectual capital. In this regard, the tourism sector is not an exception. Being one of the branches of the global economy, along with its development, it makes new demands on the field of education. Tourism and hospitality organizations document the need for highly qualified professionals with comprehensive knowledge and personal, professional skills in management, marketing, psychology, culture and a number of other disciplines. The main burden of the mission of forming specialists with required abilities and skills is on higher educational institutions. This article presents the development stages of tourism education, the trends in the development of educational programs of "Tourism" and "Hospitality" professions in different universities of the world.

**Ներկայացվել է՝
Գրախոսվել է՝**

**05.10.2023 թ.
12.10.2023 թ.**

**ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ**

ՄԵՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համառոտագիր

Սույն հոդվածն անդրադառնում է զբոսաշրջության ոլորտի ուսանողների էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորման կարևորությանն ու անհրաժեշտությանը, որի նպատակն է որոշ չափով մեղմել ներկայումս մարդկության առջև ծառայած էկոլոգիական հիմնախնդիրները:

Հոդվածում քննարկվում է «էկոլոգիական կոմպետենցիա» հասկացությունը՝ ներկայացնելով մի շարք հեղինակների կողմից տրված սահմանումները: Անդրադարձ է կատարվում այն հիմնական ուղիներին, որոնց միջոցով հնարավոր է ձևավորել զբոսաշրջության ոլորտի ուսանողների էկոլոգիական կոմպետենցիան:

Հիմնաբառեր՝ զբոսաշրջության ոլորտի ուսանողներ, էկոլոգիական կոմպետենցիա, բարձրագույն կրթություն:

Ներածություն

Մարդկության պատմությունն անքակտելիորեն կապված է բնության հետ: Մարդ-բնություն փոխհարաբերություններն այսօր հանգեցրել են տարբեր էկոլոգիական հիմնախնդիրների, որոնց հիմնական պատճառները բնության նկատմամբ հասարակության անբարեխիղճ վերաբերմունքն ու հասարակության էկոլոգիական գիտակցության ցածր մակարդակն են: 21-րդ դարում առավել քան հրատապ է դարձել գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների լուծումը, ինչի համար կարևոր պայման է էկոլոգիական գիտակցությամբ հասարակության ձևավորումը: Բնապահպանական նշանակության տերմինների և բառակապակցությունների բացատրական բառարանում էկոլոգիական գիտակցությունը սահմանվում է հետևյալ կերպ. «առանձին անհատների և ամբողջ հասարակության կողմից կենսոլորտի օրինաչափությունների և օրգանիզմների բնակության բնական միջավայրի պահպանության, մարդկանց առողջության և բարեկեցության պայմանավորվածությունը շրջակա միջավայրի կայուն վիճակով և բնական պաշարների կայուն օգտագործման ըմբռնման մակարդակը» (Բալոյան, 2008, էջ 57):

Ամբողջ մոլորակի վրա բնապահպանական վտանգի շարունակական աճը հանգեցրել է էկոլոգիական կրթության դերի մեծացմանը: Հարկ է նշել, որ էկոլոգիապես գիտակից հասարակություն ձևավորելու համար կարևոր գործոն է հանդիսանում նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհ) զբոսաշրջության բաժնում սովորող ուսանողների էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորումը: Հետազոտության *արդիականությունը* պայմանավորված է նրանով, որ ամբողջ աշխարհն այսօր կանգնած է գլոբալ էկոլոգիական խնդիրների առաջ և զբոսաշրջության ոլորտի մասնագետների էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորումը կարևոր քայլ կլինի առկա էկոլոգիական խնդիրները որոշակիորեն մեղմելու ուղղությամբ:

Հոդվածի *նորույթն* այն է, որ ներկայացվում է էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորումը բարձրագույն կրթության համատեքստում, մասնավորապես զբոսաշրջության ոլորտին առնչվող մասնագիտական կրթական ծրագրերում:

Աշխատանքի *նպատակն* է ներկայացնել զբոսաշրջության ոլորտի ուսանողների էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորման կարևորությունը և դրան ուղղված հիմնական քայլերը բարձրագույն կրթության ոլորտում: Հետազոտության *խնդիրներն են* գիտական գրականության ուսումնասիրությամբ սահմանել «էկոլոգիական կոմպետենցիա» հասկացությունը, ներկայացնել էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորման կարևորությունը զբոսաշրջության ոլորտի ապագա մասնագետների պատրաստման գործընթացում և դրա ձևավորման հիմնական ուղիները:

Գիտական հոդվածում օգտագործվել են մասնագիտական գրականության ուսումնասիրման, վերլուծության, համադրման, համեմատության և ամփոփման *մեթոդները*:

Հետազոտությունը կարող է նպաստել բարձրագույն ուսումնական հաստատություններում էկոլոգիապես կոմպետենտ զբոսաշրջության մասնագետներ պատրաստելու վերաբերյալ տեսական նյութի հարստացմանը:

«Էկոլոգիական կոմպետենցիա» հասկացությունը

«Կոմպետենցիա» (կարողունակություն) հասկացությունն ունի բազմաթիվ մեկնաբանություններ: Օրինակ՝ Օքսֆորդի բառարանը «կոմպետենցիա» հասկացությունը սահմանում է որպես «ինչ-որ բան լավ անելու կարողություն» (7):

ՀՀ Հանրակրթության պետական չափորոշում նշվում է, որ կարողունակությունները (կոմպետենցիաները) սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա

ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են (Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021):

Եվրոպական որակավորումների շրջանակը (The European Qualifications Framework) կոմպետենցիան սահմանում է որպես «գիտելիքներն ու հմտություններն օգտագործելու ապացուցված կարողություն» (Bohlinger, 2008, p. 99):

Ինչ վերաբերում է «էկոլոգիական կոմպետենցիա» եզրույթին, հարկ է նշել, որ այն գիտական գրականության մեջ հայտնվել է վերջին տարիներին: Այսպիսով, ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը՝ հանդիպում ենք «էկոլոգիական կոմպետենցիա» եզրույթի մի քանի սահմանումների:

«էկոլոգիական կոմպետենցիան» մարդու ապրելակերպի դրսևորման ձև է, որը ձևավորվում է շրջակա միջավայրի հետ հաղորդակցվելու միջոցով (Kulko, 2020, p. 14):

Ըստ մեկ այլ սահմանման՝ էկոլոգիական կոմպետենցիան սովորողի գիտելիքների ինքնուրույն կիրառումն է, որն ուղղված է մարդու առողջությանը և կյանքի անվտանգությանը սպառնացող իրավիճակներում էկոլոգիական անվտանգ գործունեություն իրականացնելուն (Захлебный, Дзятковская, 2008, с. 2):

Վ. Մարշիտսկայան նշում է, որ էկոլոգիական կոմպետենցիան մարդու՝ առօրյա կյանքում և բնական միջավայրում իրավիճակային գործողություններ կատարելու կարողությունն է, երբ նրա ձեռք բերած էկոլոգիական գիտելիքները, հմտությունները, փորձը և արժեքները թույլ են տալիս որոշումներ կայացնել և համարժեք գործողություններ կատարել՝ գիտակցելով դրանց հետևանքները շրջակա միջավայրի վրա (Kulko, 2020, p. 15):

էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորման և զարգացման կարևորությանն անդրադարձել են տարբեր հետազոտողներ, որոնք անդրադարձել են տարբեր դասընթացների միջոցով սովորողների էկոլոգիական կոմպետենցիայի զարգացմանը¹:

էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորման հիմնախնդրին առնչվող հետազոտությունների շարքում հետաքրքրական են նաև տարբեր մասնագետների պատրաստման գործընթացում էկոլոգիական

¹ Кашафутдинова И. О., Мерзлякова О. П. “Формирование экологической компетенции обучающихся в проектной деятельности по физике”, Матвеева А. В., Кротова Е. А. “Формирование экологической компетентности обучающихся средствами исследовательской проектной деятельности”

կոմպետենցիայի ձևավորման կարևորությունը նվիրված ուսումնասիրությունները²:

Էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորման կարևորությունը զբոսաշրջության ոլորտի ուսանողների պատրաստման գործընթացում

Զբոսաշրջության ոլորտն աչքի է ընկնում աշխատողների ներգրավածության բարձր մակարդակով. 2019 թ.-ին զբոսաշրջության ոլորտի աշխատողների թիվը 333 մլն էր: Այս թիվն, իհարկե, նվազել է «ՔՈՎԻԴ-19» համավարակով պայմանավորված՝ 2021թ.-ին հասնելով 289 մլն-ի: Համավարակից հետո զբոսաշրջության ոլորտում աշխատողների թիվը կրկին ավելացել է՝ 2022թ.-ին դառնալով 295 մլն (8): Ինչպես տեսնում ենք, այս թվերը վկայում են, որ այս ոլորտում ներգրավված են աշխարհի մեծ թվով մասնագետներ: Ոլորտի կայուն զարգացման համար անհրաժեշտ են պրոֆեսիոնալ և կոմպետենտ մասնագետներ, որոնք պատրաստվում են մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Հարկ է նշել, որ կրթությունը զբոսաշրջության ոլորտում կարևոր դեր ունի և համարվում է ոլորտի զարգացման հիմնական խթան: ՀՀ-ում զբոսաշրջության և հարակից ոլորտներում սովորում են մեծ թվով ուսանողներ՝ և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի կրթական ծրագրերով: Ներկայումս զբոսաշրջության ոլորտի մասնագետներ են պատրաստում ՀՀ հետևյալ բարձրագույն ուսումնական հաստատությունները՝

1. Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան - «Սերվիս» ՄԿԾ, «Զբոսաշրջություն» ՄԿԾ և «Հյուրընկալության կառավարում» ՄԿԾ
2. Գավառի պետական համալսարան - «Սերվիս» ՄԿԾ
3. Երևանի պետական համալսարան - «Սերվիս» ՄԿԾ և «Կրոնական զբոսաշրջություն» ՄԿԾ
4. Երևանի պետական համալսարան (Իջևանի մասնաճյուղ) - «Զբոսաշրջություն» ՄԿԾ
5. Հայաստանի եվրոպական համալսարան - «Սերվիս» ՄԿԾ
6. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան - «Զբոսաշրջություն» ՄԿԾ, «Սերվիս» ՄԿԾ և «Զբոսաշրջության կառավարում» ՄԿԾ

² Садыкова Э. Ф., Ниязова А. А. “Формирование экологических компетенций в процессе подготовки будущих педагогов”; Приступа Е. Н. “Экологическая компетентность специалиста по социальной работе”, Perfilova O., Alizade Y., “The role of ecological competence in manager’s professional education”

7. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ - «Սպորտային տուրիզմ» ՄԿԾ
8. Հայ-ռուսական համալսարան «Զբոսաշրջություն» ՄԿԾ և «Զբոսաշրջության կառավարում» ՄԿԾ
9. ՀՀ պետական կառավարման ակադեմիա - «Զբոսաշրջության կառավարում» ՄԿԾ
10. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան - «Զբոսաշրջություն» ՄԿԾ
11. Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան - «Սերվիս» ՄԿԾ
12. Տուրիզմի հայկական ինստիտուտ - «Զբոսաշրջության կառավարում» ՄԿԾ

«Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքում նշվում է, որ էկոլոգիական կրթությունը պարտադիր է կրթական համակարգի բոլոր մակարդակներում («Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենք, 2001): Սա ենթադրում է, որ էկոլոգիական կրթությունը բարձրագույն կրթության անբաժանելի մասն է: Այս համատեքստում հողվածն անդրադառնում է զբոսաշրջության և հարակից ոլորտներում էկոլոգիական կրթության իրականացմանն ու ուսանողների էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորման կարևորությանը:

Էկոլոգիական դաստիարակության և կրթության հիմնախնդիրը մշտապես եղել է հայ և օտարազգի հետազոտողների ուսումնասիրության առարկան: Սակայն հարկ է նշել, որ մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ զբոսաշրջության ոլորտի մասնագետների պատրաստման գործընթացում էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորման հիմնախնդրի վերաբերյալ ուսումնասիրությունները սակավաթիվ են: Մի քանի հեղինակներ իրենց աշխատություններում անդրադարձել են զբոսաշրջության ապագա մասնագետների պատրաստման գործընթացում էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորման կարևորությանը³:

Զբոսաշրջության ոլորտի ուսանողների էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորման կարևորությունը պայմանավորված է մի

³ Anatoliyivna K. V. “The essence of environmental competence of future specialists in the tourism industry”, Hranovska V., Morozova L., Katsemir Y., Nenko O. “Methodology of environmental competence formation in tourism business management”, Кокшарова Н.М. “Формирование ключевых компетенций будущего специалиста сферы туризма в вузе в ходе изучения естественнонаучных дисциплин”

քանի հանգամանքներով: Նախ, զբոսաշրջության ոլորտի մասնագետների էկոլոգիական կոմպետենցիան բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայրի վրա զբոսաշրջային գործունեության բացասական ազդեցությունների նվազեցման նախադրյալ է հանդիսանում (Kulko, 2020, p. 13): Բացի այդ, նրանց էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորումը կարևորվում է այն փաստով, որ զբոսաշրջության ոլորտի մասնագետներն իրենց գործունեության ընթացքում մասնագիտական պարտականություններից զատ, մշտապես առնչվում են տարբեր էկոլոգիական խնդիրների և էկոլոգիապես կոմպետենտ մասնագետը պետք է կարողանա առաջարկել էկոլոգիական խնդիրների հնարավոր լուծումներ, որոնք առաջանում են զբոսաշրջային գործունեության արդյունքում: Ըստ այդմ, մասնագետներից բացի, էկոլոգիական կոմպետենցիա են ձեռք բերում նաև զբոսաշրջիկները՝ ոլորտի մասնագետների շարունակական աշխատանքի արդյունքում:

Զբոսաշրջության ապագա մասնագետների էկոլոգիական կոմպետենցիան կարելի է ձևավորել՝

1. պարտադիր մասնագիտական դասընթացների միջոցով,
2. կամընտրական դասընթացների միջոցով,
3. արտալսարանային դասերի միջոցով, որոնք ենթադրում են էքսկուրսիաների կազմակերպում ոչ միայն բնակավայրերից և կառուցապատված այլ տարածքներից դուրս, այլև այնպիսի վայրերում, որոնք նպաստում են էկոլոգիական կրթությանը:

Զբոսաշրջության մասնագիտական կրթական ծրագրերում կան պարտադիր մասնագիտական դասընթացներ, որոնք կարող են խթանել ուսանողների էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորմանը: Այդպիսի դասընթացներ են «Զբոսաշրջություն և շրջակա միջավայր», «Ընդհանուր աշխարհագրություն», «Տեսական աշխարհագրություն», «ՀՀ աշխարհագրություն», «Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր», «Մարդը և նրա պահանջմունքները», «Երկրաբանություն», «Անվտանգությունը զբոսաշրջության մեջ», «Միջազգային զբոսաշրջության հիմունքներ», «Միջազգային զբոսաշրջային կենտրոնների աշխարհագրություն», «Թեմատիկ զբոսաշրջություն», «Կայուն զբոսաշրջություն», «Դեստինացիոն կառավարում» և այլն:

Ուսանողների էկոլոգիական կոմպետենցիան կարելի է ձևավորել նաև կամընտրական դասընթացների միջոցով (որոշ ուսումնական պլաններում դրանք պարտադիր մասնագիտական դասընթացներ են), ինչպիսիք են «Էկոտուրիզմի կազմակերպում», «Ազոտուրիզմ» և «Գյուղական տուրիզմ» դասընթացները:

Էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորման գործում մեծ կարևորություն ունի արտալսարանային էքսկուրսիաների

կազմակերպումը: Այդպիսի էքսկուրսիաները կարող են ներառել ճանաչողական այցեր դեպի ՀՀ պատմամշակութային հուշարձաններ և բուսաբանական այգիներ, քայլարշավներ դեպի բնության հատուկ պահպանվող տարածքներ, լեռնագնացություններ, այցելություններ դեպի քարանձավներ, ինչպիսիք են Արենի-1 և Մագելանի, Աղծքի քարանձավները, ինչպես նաև այցելություններ թանգարաններ, ինչպիսիք են Հայաստանի բնության պետական թանգարանը, Պրոֆեսոր Հ. Կարապետյանի անվան Երկրաբանական թանգարանը, Հայաստանի պատմության թանգարանը, Մատենադարանը և այլն:

Այսպիսով, վերը նշված միջոցառումների իրականացմամբ կարելի է ձևավորել զբոսաշրջության ոլորտի ուսանողների էկոլոգիական կոմպետենցիան և ունենալ էկոլոգիապես կոմպետենտ մասնագետներ, որն էլ իր հերթին հնարավորություն կտա որոշ չափով մեղմել ներկայիս էկոլոգիական խնդիրները:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը, կարող ենք նշել, որ զբոսաշրջության ոլորտի ուսանողների էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորումը կարևոր է ներկայիս էկոլոգիական խնդիրները որոշակիորեն մեղմելու գործում:

Նշենք նաև, որ «էկոլոգիական կոմպետենցիա» եզրույթը մասնագիտական գրականության մեջ հայտնվել է վերջին տարիներին և դեռևս տրված չէ այս հասկացության ընդհանրական սահմանումը: Ընդհանրացնելով «էկոլոգիական կոմպետենցիա» հասկացության մի քանի սահմանումներ՝ կարող ենք նշել, որ էկոլոգիական կոմպետենցիան էկոլոգիական գիտելիքների և հմտությունների հիման վրա մարդու՝ էկոլոգիական տարբեր իրավիճակներին հակազդելու կարողությունն է:

Զբոսաշրջության ոլորտի էկոլոգիապես կոմպետենտ մասնագետ պատրաստելու կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մասնագիտական գործունեության ընթացքում նրանք կկարողանան որոշ իրավիճակներում հանդես գալ այնպիսի առաջարկներով, որոնք հնարավորություն կտան լուծել իրենց առջև ծառայած էկոլոգիական խնդիրները:

Ինչ վերաբերում է զբոսաշրջության ոլորտի ուսանողների էկոլոգիական կոմպետենցիայի ձևավորման ուղիներին, պետք է նշենք, որ այդ կոմպետենցիան կարելի է ձևավորել պարտադիր մասնագիտական դասընթացների, կամընտրական դասընթացների և արտալսարանային էքսկուրսիաների միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Բալոյան Ս. Ա., Բնապահպանական նշանակության տերմինների և բառակապակցությունների բացատրական բառարան, Երևան, 152 էջ, 2008
Baloyan, S. A., Bnapanakan nshanakutyany terminneri ev barakapakcutyunneri bacatrakan bararan, Yerevan, 152 ej, 2008
2. Bohlinger, S., Competences as the Core Element of the European Qualifications Framework, *European Journal of Vocational Training*. 2008
3. Kulko, V. A., The Essence of Environmental Competence of Future Specialists in the Tourism Industry. Ukraine, «*Colloquium-journal*»#35(87). 2020
4. Захлебный А. Н., Дзятковская Е. Н., Экологическая компетенция как новый планируемый результат экологического образования. Москва. 2008
Zakhlebniy, A. N., Dzaytkovsykaya, Y. N., Ekologicheskaya kompetenciya kak noviy planiruemiy rezultat ekologicheskogo obrazovaniya. Moskva. 2008
5. Հայաստանի Հանրապետության օրենք «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին», 2001
<https://www.arlis.am/>
Hayastani Hanrapetutyany orenq “Azgabnakchutyany ekologikiakan krtutyany ev dastiarakutyany masin”, 2001
<https://www.arlis.am/>
6. Հանրակրթության պետական չափորոշիչ, N 136-Ն որոշմամբ, 2021
<https://www.arlis.am/>
Hanrakrtutyany petakan chaporoshich, N 136-N voroshmamb, 2021
7. Oxford Learner's Dictionaries: <https://www.oxfordlearnersdictionaries.com>
8. Number of travel and tourism jobs worldwide from 2019 to 2022, with a forecast for 2023: <https://www.statista.com/>

МЕРИ ВАРДАНЯН - ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ КОМПЕТЕНТНОСТИ СТУДЕНТОВ, ОБУЧАЮЩИХСЯ ПО СПЕЦИАЛЬНОСТИ “ТУРИЗМ”

Ключевые слова: студенты сферы туризма, экологическая компетентность, высшее образование.

В данной статье говорится о важной роли формирования экологической компетентности студентов, обучающихся по специальности “Туризм”. Основной целью формирования упомянутой компетентности является смягчение в той или иной степени экологических проблем, стоящих перед человечеством в настоящее время.

В статье рассматривается понятие «экологическая компетентность», приводятся определения, данные рядом авторов. Отдельное внимание уделено основным способам формирования экологической компетентности студентов, обучающихся по упомянутой специальности.

MARY VARDANIAN - ON FORMING THE ECOLOGICAL COMPETENCE OF TOURISM STUDENTS

Keywords: tourism students, ecological competence, higher education.

This article talks about the importance and necessity of forming the ecological competence of students in the field of tourism, the purpose of which is to somewhat mitigate the ecological problems humanity is facing nowadays.

The article discusses the concept of “ecological competence” providing definitions given by a number of authors. The main ways through which the ecological competence of tourism students can be formed are mentioned in the article.

Ներկայացվել է՝
Գրախոսվել է՝

04.10.2023 թ.
12.10.2023 թ.

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՌԻՄԱՍՏԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ**

ՄԱՐԻՆԵ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում քննության են առնվում քաղաքագիտական մասնագիտական բառապաշարի ներմուծման օրինաչափությունները և բառիմաստի բացահայտման արդյունավետ ռազմավարություններն անգլերենի ուսուցման գործընթացում: Մասնագիտական բառապաշարի ուսուցման նպատակն է խոսքային իրադրություններում կամ բազմաբնույթ տեքստերում բառային միավորների, տերմինների ու տերմինային կապակցությունների ճանաչման հմտությունների ու կարողությունների զարգացումը: Առանց մասնագիտական բառապաշարի անհնար է տվյալ ոլորտում զարգացնել և կատարելագործել սովորողների՝ ընկալողաբար ընթերցելու ու ունկնդրելու և վերարտադրողաբար խոսելու ու գրելու կարողությունները: Մասնագիտական լեզվանյութի ներմուծումը, դրա հետագա ամրապնդումն ու կատարելագործումը բարդ և համակողմանի գործընթաց է: Հստակեցվում է այն գաղափարը, որ քաղաքագիտական բառանյութի յուրացման արդյունավետությունը կախված է ուսուցման գործընթացում բառային միավորների ներմուծման մեթոդների ու ռազմավարությունների ընտրությունից և բազմաբնույթ առաջադրանքների կիրառումից:

Հիմնաբառեր՝ բառապաշարի ներմուծում, բառիմաստի բացահայտում, բառապաշարային միավորի ձև, իմաստ և գործածություն, լեզվական և ոչ լեզվական մեթոդներ, քաղաքագիտական բառապաշար, համապեքստային ներմուծում

Ներածություն

Սույն հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել և համակողմանիորեն ներկայացնել քաղաքագիտական մասնագիտական ոլորտում բառապաշարային միավորների իմաստակառուցվածքային նրբությունները և բառիմաստի բացահայտման արդյունավետ ուղիները: Հետազոտությունն **արդիական** է, քանի որ լեզվանյութի՝ տվյալ պարագայում քաղաքագիտական բառապաշարի, ներմուծումն ու ընկալումն անհրաժեշտ է իրականացնել հաղորդակցության որոշակի նպատակներից բխող բազմաբնույթ վարժությունների ու

առաջադրանքների միջոցով: Այստեղ մեծ նշանակություն ունի լեզվանյութի ընտրությունը և բնույթը, այսինքն՝ կոնկրետ գործողության ուղղվածությունը և ընկալումն ապահովող ռազմավարությունները: Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- մասնագիտական գրականության վերլուծություն
- ուսումնական գործընթացի դիտարկում:

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի կարևորագույն խնդիրներից մեկը սովորողներին նոր բառերին ծանոթացնելու արդյունավետ ուղիների, ռազմավարությունների և մեթոդիկաների ընտրությունն է: Բառապաշարի ուսուցման ռազմավարությունները ներառում են հետևյալ փուլերը՝

- բառի ներկայացում/բացատրում (լեզվական նոր նյութի ներմուծում կամ ցուցադրում, այն է՝ իմաստի, ձևի և օգտագործման կամ ճանաչման բացահայտում),
- բառի մտապահում/ամրապնդում (վերարտադրում, որի նպատակը նոր նյութի մտապահումը և վարժությունների միջոցով նախնական կարողությունների ձևավորումն է),
- բառի գործածում հաղորդակցության մեջ (տվյալ երևույթի հասկացման ստուգում) (Ասատրյան, Հարությունյան, 2014):

Բառային միավորների ներմուծման փուլերը

Լեզուների դասավանդման ժամանակակից մեթոդիկայում նոր բառի **ներմուծումը** նշանակում է ծանոթանալ այդ բառի իմաստին, ձևին և գործածությանը:

1. Բառի ձև ասելով նկատի ունենք՝

- ա) հնչյունական կողմը՝ արտասանությունը –
- բ) ուղղագրությունը- s-p-e-a-k-er
- գ) քերականական ձևը - a speaker, speakers, speaker’s, speakers’
- դ) բառի կառուցվածքը - speak + er:

2. Բառի գործածություն ասելով հասկանում ենք, թե տվյալ բառը ինչպես է կապակցվում արդեն ծանոթ բառային միավորների հետ: Բառի գործածության ոլորտը մեծ նշանակություն ունի վերարտադրողական բառապաշարի համար, որովհետև սովորողները ելնում են բառի իմաստից, նշանակությունից և գնում՝ դեպի ձևը: Օրինակ՝

- ա) Mavra Kuzminichna concluded that he was a very **important** political figure. (**important** բառը կապակցվել է **political figure** բառակապակցությանը):
- բ) Bill Clinton was the most **distinguished** politician in the US history. (**distinguished** բառը կապակցվել է **politician** գոյականին):

Ներմուծումը պետք է սերտորեն կապվի բառային նոր միավորների վերարտադրման հետ (յուրացման նպատակով): Ուսուցման սկզբնական փուլում կատարվում է ամբողջ լեզվանյութի հնչյունային վերլուծություն, ըստ որում, տեքստը վերարտադրելիս սովորողները պետք է կարողանան ճանաչել և օգտագործել յուրաքանչյուր նոր հնչյունաբանական երևույթ, ինչը նպաստում է նոր նյութի մտապահմանը: Այսպիսով, բառի ներմուծումը կամ բացատրությունը աշխատանքի **առաջին փուլն է** (Սր 2012): Վերարտադրողական բառերի բացատրությունը իրականացվում է իմաստից (նշանակությունից) դեպի լեզվական արտահայտության ձևը, իսկ ընկալողականը՝ ընդհակառակը՝ ձևից դեպի իմաստը (նշանակությունը):

Երկրորդ փուլում բառերի ճիշտ ըմբռման նպատակով անհրաժեշտ է անցկացնել հասկացածի ստուգում: Այս կապակցությամբ ուսուցման գործընթացում անհրաժեշտ է ներմուծել վարժություններ, տարբեր տիպի բառապաշարային առաջադրանքներ, նույնիսկ թեստեր:

Երրորդ փուլը վարժությունների միջոցով բառապաշարային հմտությունների հետագա կատարելագործումն է: Այստեղ դարձյալ վարժությունների միջոցով պետք է հասնել բառի ճիշտ գործածությանը կամ ճանաչմանը (Brown 2010):

Ինչպես յուրաքանչյուր մասնագիտական ոլորտի՝ այնպես էլ քաղաքագիտական ոլորտի բառապաշարային միավորների ուսուցումն ունի իր առանձնահատկություններն ու օրինաչափությունները՝ կապված ինչպես կիրառման, այնպես էլ իմաստային դաշտերի հետ:

Քաղաքագիտական բառապաշարի ուսուցման ռազմավարությունները

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում մի շարք մեթոդներ են առանձնացվում, որոնց օգնությամբ հնարավոր է կազմակերպել քաղաքագիտական բառապաշարի ուսուցումը: Քաղաքագիտական բառապաշարն ուսուցանելիս ընդունված է կիրառել բառիմաստի բացահայտման ոչ լեզվական և լեզվական եղանակները:





1. Ոչ լեզվական եղանակ. ենթադրում է անձանոթ բառերի իմաստների փոխանցում առարկայական-պատկերավոր զննականության կիրառմամբ, որը ներառում է՝

- իրակություններ, նկարներ, գրաֆիկներ, գծագրեր
- ֆիլմեր, տեսահոլովակներ
- մարմնի լեզու, ժեստեր, դիմախաղ:

Ոչ լեզվական փոխանցման ժամանակ սովորողների և անձանոթ բառերի միջև ուղիղ կապ է ստեղծվում՝ այսինքն կապ է հաստատվում օտար լեզվով բառի և այն առարկայական-պատկերավոր զննականության միջև, որով փոխանցվում է անձանոթ բառի իմաստը: Այս եղանակը հաճախ կիրառվում է այն դեպքերում, երբ ցանկանում ենք փոխանցել այնպիսի

երևույթների կամ հասկացությունների իմաստները, որոնք պարզապես կարող ենք ցուցադրել նկարների միջոցով, և սովորողները կարող են կատարել համապատասխանեցումներ՝ նկարները բառերին (Մարտիրոսյան 2013):

Աղյուսակ 1

Նկարներ- pictures	Բառեր-words	Նկարներ-pictures	Բառեր- words
	1. Election (n.)		2. Coalition (n.)
	3. Debate (n.)		4. Ballot box (n.)

Ժեստերն ու դիմախաղն ունեն մշակութային առանձնահատկություններ: Տարբեր մշակույթներում դրանց արտահայտած իմաստները կարող են լինել ինչպես նույնական, այնպես էլ ծայրահեղ տարբեր և անընդունելի այս կամ այն մշակութակրի համար: **2. Լեզվական եղանակ.** ենթադրում է բառիմաստի բացահայտումը օտար լեզվով և բառիմաստի բացահայտումը մայրենի լեզվով: Այլ կերպ ասած, առաջին դեպքում մենք գործ ունենք ոչ թարգմանական, իսկ երկրորդ դեպքում՝ թարգմանական եղանակի հետ (Голуб, Тихонова 2011):

Բառիմաստի բացահայտման լեզվական եղանակներից յուրաքանչյուրն ունի իր առնաձևահատկությունները, որոնք կապված են բառիմաստի բացահայտման տարբեր հնարների հետ: Օրինակ՝ **ոչ թարգմանական** եղանակի դեպքում օտար լեզվի միջոցով բառիմաստը բացահայտելիս կարելի է դիմել այնպիսի եղանակների, ինչպիսիք են՝

- Բառին համապատասխան սահմանման նույնականացումը:

Աղյուսակ 2

Իմաստ/նշանակություն – meaning	Թարգմանություն – translation	Բառեր - words
1. A formal accusation against somebody.	Ինչ-որ մեկի դեմ պաշտոնական մեղադրանք:	Allegation (n.)

2. Something that aids or promotes well-being.	Ինչ-որ բան, որն օգնում կամ նպաստում է բարեկեցությանը:	Benefit (n.)
3. An accusation that one is responsible for some misdeed.	Մեղադրանք, որ մեկը պատասխանատու է ինչ-որ չարագործության համար:	Blame (n.)
4. Secret or hidden .	Գաղտնի կամ թաքնված:	Covert (adj.)
5. The act of approving .	Ապացուցելու գործընթացը:	Endorsement (n.)

- Բառի նույնականացումը, որը համապատասխանում է բառային միավորի իմաստին:

Աղյուսակ 3

Բառեր – words	Թարգմանություն - translation	Իմաստ/նշանակություն – meaning
1. Anthem (n.)	Օրհներգ	An uplifting song of praise, called a national anthem when it is about a country .
2. Bias (n.)	Կողմնակալություն	Favouring one argument or person over others, usually unfairly, prejudice.
3. Citizen (n.)	Քաղաքացի	A legally recognised member of a city, state or nation who enjoys its legal, social and political rights .
4. Independence (n.)	Անկախություն	Freedom from the influence or rule of another person, group or country .
5. Majority (n.)	Մեծամասնություն	The difference between the largest number of votes for or against something and the number of remaining votes .

Առաջին մոտեցման ժամանակ տրվում են բառային միավորների իմաստները, և սովորողները, կիրառելով իրենց նախնական գիտելիքները, պետք է իրականացնեն իմաստների և բառերի համապատասխանեցում: Երկրորդի ժամանակ՝ տրվում են բառային միավորները, և սովորողները դրանք համապատասխանեցնում են իրենց իմաստներին:

- համատեքստի միջոցով իմաստի կոահում՝ ծանոթ փաստերի իմացության հիման վրա, օրինակ՝ (**To vote** - A citizen over 18 years of age has the right *to vote*, **Genocide** - The Armenian *genocide* was the systematic destruction of the Armenian people and identity in the Ottoman Empire during World War I, **Election** - A general *election* is an opportunity for people in every part of the UK to choose their MP).
- թվարկումը (*Blockade, war, ceasefire* are political terms, *the Reform, Libertarian, Socialist, Natural Law, Constitution and Green* are different political parties, The main types of political systems recognized are *democracies, totalitarian regimes* and, sitting between these two, *authoritarian regimes* with a variety of *hybrid regimes*).
- բառակազմական կաղապարների վերլուծությունը.

Agree – agreement	Elect – elector
Govern – government	Free – freedom
Citizen – citizenship	Centre – centrist
Dictator – dictatorship	Independ – independence

- հոմանիշները (Convention – agreement, inaugural – first, liberty – freedom, pledge – promise, protest – disagreement):
- հականիշները (Freedom – unfreedom, independence – dependence, majority – minority): Բառիմաստի բացահայտման ժամանակ գործածվող հոմանիշները և հականիշները պետք է սովորողներին ծանոթ լինեն:

Թարգմանական եղանակը ներառում է՝

ա) բառի ուղիղ թարգմանություն

- Candidate – թեկնածու
- Civil liberty – քաղաքացիական ազատություն
- Reformer – բարեփոխիչ
- Society – հասարակություն
- Suffrage – ընտրական իրավունք
- Terrorism – ահաբեկչություն
- Treaty – պայմանագիր
- Welfare – բարեկեցություն

բ) թարգմանություն - բացատրություն

- Seat – 1. նստարան, աթոռ (a piece of furniture or part of a train, plane, that has been designed for someone to sit on), 2. նստավայր (a place in an elected political assembly, such as a parliament or county council).
- State – 1. վիճակ (a condition or way of being that exists at a particular time), 2. պետություն (a nation or territory considered as an organized political community under one government).

Ինչպես տեսնում ենք վերոգրյալ օրինակներից *seat* և *state* բառերն իրենց առաջնային իմաստներով կիրառվում են ընդհանուր անգլերենում՝ *նստարան*, *աթոռ* և *վիճակ* իմաստներով, իսկ մասնագիտական՝ քաղաքագիտական դաշտում այդ բառերը ստանում են *նստավայր* և *պետություն* իմաստները: Դասավանդողը սովորողներին պետք է հստակ բացատրի և սահմանազատի այս գոյականների կիրառման դաշտերը: Բառերի յուրացման և արմատական համար կազմվում են նախադասություններ՝

1. *Chairs, sofas and benches are different types of seat.*
2. *The seat of government in the US is in Washington, DC.*
3. *She came tearing upstairs a few minutes ago in a state of great excitement.*
4. *The Commonwealth of Independent States (CIS) is a regional intergovernmental organization in Eurasia* (<https://www.nala.ie/wp-content/uploads/2019/08/A-plain-English-guide-to-political-terms-new.pdf>).

Քաղաքագիտական լեզվանյութի յուրացմանը և ամրապնդմանը նպաստակառողջած առաջադրանքներ

Քաղաքագիտական մասնագտական ոլորտում բառապաշարային միավորների առավել դյուրին յուրացման, և հետագա ամրապնդման համար առաջարկում ենք ուսուցման ընթացքում կիրառել հետևյալ առաջադրանքները.

1. Սովորողներին բաժանել խմբերի և հանձնարարել սահմանված ժամանակահատվածում քննարկել, պատասխանել տրված հարցերին, այնուհետև ներկայացնել կատարած աշխատանքը: Մյուս խմբերի անդամները կարող են պատասխանող խմբին հարցեր ուղղել: *Խմբերով քննարկեք և պատասխանեք տրված հարցերին (discuss and answer the questions with your group).*

- In which cities would you find the buildings in the pictures 1 – 4?
- What are the names of the buildings, and which leaders are associated with each?
- How is the leader of your country chosen?
- Do you think the system is fair? Why or why not?
- Do you ever vote?

Նկար 1



2. Համապատասխանեցնել աջ և ձախ սյունակները՝ կազմելով արդահայություններ (match items from the left and right to make phrases).

ballot	a leader
elect	ballot
elected	candidate
turn	for a candidate
political	paper/box
polling	party
presidential	representative
secret	rigging
vote	station
vote	out

Այստեղ պարզ է դառնում սովորողների՝ բառապաշարային միավորների յուրացման աստիճանը, և նրանց կարողությունը՝ կապակցելու յուրացվելիք միավորները այլ խոսքի մասերի հետ:

Լրացնել աղյուսակը՝ կիրառելով ճիշտ խոսքի մասերը (complete the table with the correct forms of the words).

Աղյուսակ 4

Noun	Verb	Adjective
	vote	-
election		-
politician	-	
		Dependent
	represent	

Նմանատիպ առաջադրանք կատարելիս սովորողները կատարում են բառակազմական վերլուծություն և որոշում տվյալ բառի խոսքիմասային պատկանելությունը:

3. **Կեպերի լրացում (gap-filling).** Առաջադրանքը կատարելիս պահանջվում է վերականգնել բաց թողնված բառերը կամ բառակապակցությունները: Նման թեստերում պատասխանները կարող են լինել մեկից ավելի: Օրինակ՝ կարող են բաց թողնված լինել նախդիրներ կամ շաղկապներ: Մյուս բաց թողնված բառերը կարող են լինել անվանական միավորներ: Երբեմն բաց թողնված բառերի շարքը կարող է դրված լինել, և սովորողները պետք է պարզապես բառեր ընտրեն տրված շարքից և լրացնեն բաց թողնված տեղերում:

Լրացնել բառերը նախադասություններում և քննարկել իրավիճակները խմբերով (Complete the words in the sentences and then discuss the statements in small groups).

- a) All secondary school students should be taught about p.....
- b) The government in my country does/doesn't rep..... the views of most people.
- c) Vot..... should be made compulsory, and anyone who doesn't vote should be punished.
- a) A proportional rep..... system is the fairest.
- d) Pol..... who do not carry out their promises should face penalties (https://www.elbase.com/mats/US_ElectionSpecial.pdf).

Վերոնշյալ առաջադրանքների կատարումը գերազանցապես նպատակաուղղված է սովորողների՝ քաղաքագիտական անգլերենի բառապաշարի յուրացմանը և կիրառմանը հաղորդակցվելիս:

Եզրակացություն

Այսպիսով, սովորողների ինչպես մասնագիտական, այնպես էլ ընդհանուր բառապաշարային գիտելիքների ձեռքբերումը, ինչպես նաև այդ գիտելիքներն ու կարողությունները համապատասխան հաղորդակցական համատեքստում կիրառելը շատ է կարևորվում այժմ, երբ առաջնային է սովորողների լեզվական հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորումն ու զարգացումը, այլ ոչ թե նրանց սահմանափակ բառապաշարային կամ քերականական գիտելիքներով զինելը:

Բոլոր բառերն առանձնանում են բառաձևի հիմնական հատկանիշներով, այն է գրություն, արտասանություն, կառուցվածք, քերականական ձևեր: Այդ բաղադրիչները միմյանց հետ կապված են, իսկ նրանց ուսուցումն ու յուրացումը ենթադրում է համակարգված մեթոդական մոտեցում՝ նպատակաուղղված ամենից առաջ սովորողների

լեզվահաղորդակցական կոմպետենցիայի ձևավորմանն ու զարգացմանը: Պարզ դարձավ նաև, որ քաղաքագիտական բառապաշարի յուրացումն ու ամրապնդումն էապես կախված են համապատասխան առաջադրանքների ընտրությունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Ասատրյան Ա., Հարությունյան Ա., Լեզվական և արտալեզվական գործոնների հաշվառումը ժամանակակից անգլերենի բանավոր հաղորդակցության ուսուցման գործընթացում, Երևան, 2014
Asatryan S., Harowt'yownyan A., Lezvakan & artalezvakan gorc'onneri hashvar'owmy' jhamanakakic anglereni banavor haghordakcowt'yan owsowcman gorc'y'nt'acowm, Erevan, 2014
2. Մարտիրոսյան Ա., Հաղորդակցման տեսություն և հոգելեզվաբանություն, Երևան, 2013
Martirosyan A., Haghordakcman tesowt'yown & hoglezvanowt'yown, Erevan, 2013
3. Голуб О. Ю., Тихонова С. В. Теория коммуникации, Москва, 2011
Golub O. Ju., Tihonova S. V. Teorija kommunikacii, Moskva, 2011
4. Brown D., Teaching by Principles: An Interactive Approach to Language Pedagogy. San Francisco State University, 2010
5. Ur P., A Course in English Language Teaching, Cambridge University Press, 2012
6. <https://www.nala.ie/wp-content/uploads/2019/08/A-plain-English-guide-to-political-terms-new.pdf>, 21.08.2023, 14:45
7. https://www.elbase.com/mats/US_ElectionSpecial.pdf, 05.09.2023, 18:10

МАРИНЕ ПИЛИПОСЯН - К МЕТОДИКЕ ВНЕДРЕНИЯ ПОЛИТИЧЕСКОЙ ЛЕКСИКИ И ВЫЯВЛЕНИЯ ЛЕКСИЧЕСКОГО ЗНАЧЕНИЯ ПРИ ОБУЧЕНИИ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ

Ключевые слова: введение лексики, семантизация, форма, смысл и использование лексических единиц, лингвистические и нелингвистические методы, политическая лексика, контекстная, раскрытие контекстного значения

В статье рассматриваются закономерности введения профессиональной политологической лексики в учебный процесс, а также эффективные стратегии раскрытия значения слова в процессе изучения английского языка. Целью профессионального развития словарного запаса является совершенствование навыков и умений распознавания лексических единиц, терминов и терминологических связей в речевых ситуациях и соответствующих текстах. Без профессиональной лексики не представляется возможным развитие и совершенствование перцептивных (чтение и аудирование) и репродуктивных (говорение и письмо) навыков учащихся. Внедрение профессионального языкового материала, его дальнейшее закрепление и совершенствование – сложный и комплексный процесс. В статье отдельно рассматривается подход, заключающийся в том, что эффективность усвоения политологической лексики зависит от выбора методов и стратегии введения данных лексических единиц в процесс обучения.

MARINE PILIPOSYAN - METHODS FOR INTRODUCING ENGLISH POLITICAL VOCABULARY AND EXPLAINING THE MEANING

Keywords: *introduction of vocabulary, conveying the meaning of unfamiliar words, the form, meaning and usage of the lexical unit, linguistic and non-linguistic methods, political vocabulary, revealing contextual meaning*

The article studies the patterns of the introduction of political professional vocabulary and the effective strategies for conveying the meaning of unfamiliar words in the process of teaching English. The purpose of professional vocabulary teaching is the development of skills and abilities to recognize word units and terms in speech situations or different types of texts. Without professional vocabulary, it is impossible to develop and improve students' receptive (reading and listening) and productive (speaking and writing) abilities in the professional sphere.

The introduction, consolidation and retention of professional vocabulary is a complex and comprehensive process. The idea that the effectiveness of assimilation of political vocabulary depends on the choice of methods and strategies for introducing vocabulary units in the learning process and the application of multi-tasks is clarified.

**Ներկայացվել է՝
Գրախոսվել է՝**

**04.10.2023 թ.
20.10.2023 թ.**

**ԱՆԳԼԵՐԵՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ (ԱՆՈՏԱՑԻԱ)
ԳՐԵԼՈՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

ԶՈՐԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Համառոտագիր

Ամփոփումն ակադեմիական գրավոր խոսքի ամենատարածված տարատեսակն է: Այն շատ հաճախ օտար լեզվով միակ տեքստն է, որն օտարազգի ընթերցողներին թույլ է տալիս հասկանալու տեքստի բովանդակությունը: Արդի փուլում ակադեմիական գրավոր խոսքի հմտությունների տիրապետումը շատ կարևոր է հետազոտողների համար, ովքեր հետազոտության արդյունքները պետք է ներկայացնեն օտար լեզվով: Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել անգլերենով ամփոփումներ գրելու ուսուցման որոշ առանձնահատկություններ: Առաջարկվել է մի շարք մեթոդներ և վարժություններ՝ ուղղված ամփոփումներ գրելու հմտությունների զարգացմանը: Առաջարկված մեթոդիկան կնպաստի կազմել և ներկայացնել ամփոփումներ գիտաժողովներում կամ տպագրել հոդվածներ միջազգային ճանաչում ունեցող գիտական ամսագրերում:

Հիմնաբառեր՝ ակադեմիական գրավոր խոսք, անգլերենով ամփոփում, ամփոփում գրել ուսուցանելու մեթոդներ, վարժություններ:

Ներածություն

Ժամանակակից աշխարհի առանձնահատկություններից է տարբեր երկրների և ժողովուրդների մերձեցումը, նրանց միջմշակութային փոխգործակցության ամրապնդումը: Արդի տեխնոլոգիաների զարգացման արդյունքում միջազգային կապերի ընդլայնումը և գիտատեխնիկական համագործակցությունը պահանջում են տիրապետել միջազգային հաղորդակցության լեզուներին, առաջին հերթին՝ անգլերենին: Այս համատեքստում օտար լեզվի իմացությունը մասնագիտական և սոցիալական զարգացման հնարավորություն ընձեռող ինքնատիպ գործոն է: Որևէ հետազոտության արդյունքներն օտար լեզվով ներկայացնելն օգնում է գիտնականներին միանալ միջազգային գիտական հանրությանը: Դեռ ավելին, բարձրագույն կրթության ոլորտում բոլոնյան համակարգի ներդրմամբ առավել է կարևորվում մագիստրոսների, ասպիրանտների և երիտասարդ հետազոտողների գրագետ և ճիշտ ակադեմիական գրավոր խոսք

կառուցելու հմտությունները: Ամբողջ աշխարհում միջազգային ճանաչում ձեռք բերելու համար շատ առաջատար բուհեր ձգտում են միանալ միջազգային վարկանիշային QS համաշխարհային համալսարանների վարկանիշային բազային (QS World University Ranking): Ցավոք, հայաստանյան բուհերն դեռևս չունեն մրցունակության բարձր մակարդակ՝ եվրոպական և ասիական շատ բուհերի հետ համեմատած: Առաջին հերթին սա պայմանավորված է ՀՀ բուհերի ակադեմիական վարկանիշների ոչ բարձր ցուցանիշներով և երկրորդ՝ հայ հետազոտողների, հեղինակների աշխատանքներից կատարված մեջբերումների տոկոսային ցածր մակարդակով: Այս հանգամանքներից ելնելով՝ հայալեզու գիտնականներն ու ասպիրանտները պետք է յուրացնեն անգլերենը ոչ միայն այլ երկրների գործընկերների հետ շփվելու, այլ նաև իրենց հետազոտության արդյունքները WoS և Scopus-ի կողմից ինդեքսավորված ամսագրերում հրատարակելու և ընթերցողների լայն շրջաններին հասանելի դարձնելու համար: Հետևաբար, ապագա մասնագետ (անկախ մասնագիտությունից) պատրաստելիս անհրաժեշտ է զարգացնել նրանց ոչ միայն օտարալեզու մասնագիտական և գիտական բառապաշար կիրառելու հմտությունները, այլ նաև ընդհանուր ակադեմիական գրագրության հիմնատարրերը: Սույն հոդվածում կանդիդատանք գիտական հոդվածի համար անգլերենով ամփոփում (անոտացիա) գրելու ոճական և քերականական առանձնահատկություններին և կառաջարկենք մեթոդական հնարներ և վարժություններ այս հմտության զարգացման և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ամփոփումը կամ անոտացիան (լատ. annotation-դիտողություն) գրքի, հոդվածի, ժողովածուի համառոտ բնութագիրն է: Ըստ Կոտզեի՝ «Ամփոփումն առավելագույնը 200-250 տպագրական նիշ պարունակող կարճ համառոտագիր է: Ընթերցողների մեծամասնությունը նախ հպանցիկորեն աչքի է անցկացնում ամփոփումը, որպեսզի որոշի, թե արդյոք արժե կարդալ հոդվածի շարունակությունը»: Այս առումով նա ամփոփումը դիտարկում է՝ որպես հետազոտական աշխատանքի «գովազդ», որը կարող է ներառել ընթերցողի վրա (Kotze, 2007): Ըստ մեկ այլ հետազոտողների՝ ամփոփումը ճանապարհային քարտեզ է, որը նկարագրում է, թե ինչպես է սկսվելու ճանապարհորդությունը և որտեղ է այն ավարտվելու (Bloomberg and Volpe, 2012): Ռոբերտ և Ֆլետչերը պնդում են, որ ամփոփումը հետազոտողներին ներկայացվող գիտական շարադրանքի նախնական տարբերակն է կամ հոդվածի միակ հատվածը, որն ընթերցվում է (Robert and Fletcher, 1998, p. 607): Այսինքն, գիտական խոսքաշարի հեղինակը պետք է գրի այնպիսի ամփոփում, որն ընթերցողի մոտ հետաքրքրություն կառաջացնի ուսումնասիրելու ամբողջական

աշխատանքը: Փիրսընն և Ֆաարքն էլ սահմանում են ամփոփումը՝ որպես գիտական աշխատանքի «խտացված» տարբերակ, որում նկարագրվում է, թե ինչ է արվել, ինչու է արվել, ինչ է հայտնաբերվել և ինչ հետևանքներ ունի (Pierson and Faarc, 2004): Ամփոփումը պատկերացում է տալիս, թե ինչի մասին է հոդվածը: Այն «առաջին ձեռքից» տեղեկատվություն է տալիս, թե ինչ սպասել հոդվածի հետագա ընթացումից: Կարող է պարունակել մոտ 200-500 տպագրական նիշ (Pentland, 1999): Ամփոփումը կարող է լինել նկարագրական, հանձնարարական, տեղեկատվական, ընդհանուր կամ մասնագիտական որոշակի ուղղվածությամբ: Նկարագրական ամփոփումներ գրվում են հումանիտար և հասարակական գիտությունների համար: Այսօրինակ ամփոփումները փոքրածավալ են՝ 50-100 բառի սահմանում: Տեղեկատվական ամփոփումները նախատեսված են բնագիտամաթեմատիկական ուղղվածություն ունեցող հոդվածների համար: Սովորաբար նման ամփոփումները ներառում են մոտ 200 տպագրական նիշ: Ընդհանրացնելով սահմանումները՝ ամփոփումը կարելի է բնութագրել հետևյալ կերպ: *Ամփոփման մեջ նշվում են աշխատանքի բնույթը, հակիրճ բովանդակությունը, նշանակությունը, երբեմն էլ տեքստի կառուցվածքը: Ամփոփումն ընդգծում է, թե աշխատանքում ինչն է արժեքավոր և կիրառելի: Այն պետք է օգնի ընթերցողին նախնական պատկերացում կազմելու աշխատանքի մասին: Գիտական հոդվածում օտար լեզվով կամ լեզուներով շարադրված ամփոփումն զեպտելվում է աշխատանքի վերջում, իսկ տեքստի լեզվով գրվածը՝ սկզբում: Ամփոփումն ավարտվում է հիմնաբառերով, որոնք բացահայտում են տեքստի էությունը: Ամփոփման միջին ծավալը պետք է կազմի տպագրական 250-500 նիշ: Սխտուն առաջարկում է անգլերենով ամփոփում գրելու հետևյալ առանձնահատկությունները՝*

- ամփոփումը պետք է ունենա բառային միավորների որոշակի քանակություն (100-300 նիշ),
- պետք է ներկայացնի հոդվածի հիմնական փաստերի, եզրակացությունների և արդյունքների համառոտ շարադրանքը,
- պետք է ունենա շարադրանքի պարզ (բայց ոչ պարզունակ), կանոնավոր, խիստ հետևողական, ճշգրիտ, տրամաբանված ոճ,
- չպարունակի սահմանումներ, մեջբերումներ, հապավումներ կամ բանաձևեր (հապավումները պետք է ներկայացվեն ամբողջական տարբերակներով) (Sysoev, 2009, p. 83):

Ամփոփումը, լինելով բուն գիտական ենթաոճի ժանր, հասցեագրված է մասնագետներին և արտացոլում է գիտական ոճի ընդհանուր առանձնահատկությունները՝ օբյեկտիվությունը, խոսքի

տրամաբանվածությունը, ճշգրտությունը, կանոնավորությունը և այլն: Այն՝ որպես ամբողջություն, պետք է ունենա շատ որոշակի կառուցվածք, արտացոլի հողվածի թեման, արդիականությունը, խնդիրները, խնդիրների լուծման ուղիները, հետազոտության արդյունքներն ու եզրակացությունը: Հայլանդն առաջարկում է գիտական հողվածների ամփոփումների հնգամաս կառուցվածք: Դրանք են՝ ներածությունը (*introduction*), նպատակը (*objective*), մեթոդը (*method*), արդյունքը (*result*), եզրակացությունը (*conclusion*) (Hyland, 2007): Օրինակ՝

[Introduction] In many forest ecosystems, green leaf deposition (greenfall) constitutes an enrichment over background levels of litterfall nutrients and may therefore influence key ecosystem processes. **[Objective]** This study examined the litter quality and decomposition rates of green leaves compared to senescent litterfall for four dominant tree species in a lower montane rain forest at El Verde Field Station, Luquillo Experimental Forest, Puerto Rico. **[Method]** Green leaves from the canopy and freshly senesced leaves from the forest floor were analysed for carbon, nitrogen, and fiber and placed in litterbags in the field for up to 16 weeks. **[Result]** Green leaves displayed significantly higher rates of decompositions than did senescent litter among all four species. **[Result]** Green leaves also had significantly higher nitrogen concentrations and lower lignin to nitrogen ratios compared to senescent leaves. **[Conclusion]** These results suggest that greenfall may have a major influence on decay processes and nutrient cycling in forests that experience large-scale green foliage removal (Hyland, 2007).

Սակայն պետք է հիշել, որ ոչ բոլոր ամփոփումները կարող են ունենալ վերոնշյալ հինգ բաղադրատարրերը, օրինակ կան ամփոփումներ, որտեղ միևնույն գործառույթը կատարող երկու կամ ավելի նախադասություններ կան, ինչպես օրինակ՝ երկու «նպատակ» կամ «արդյունք» գործառույթն իրականացնող նախադասություններ:

Մասնագիտական գրականության մեջ ամփոփումներին ներկայացվող պահանջներն են՝

- ✓ **Պարզությունը** պահանջում է տվյալ բովանդակությունն արտահայտել առավել պարզ ու հստակ լեզվական կառույցներով, քանի որ այն նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:
- ✓ **Սեղմությունը** պահանջում է տվյալ բովանդակությունն արտահայտել լեզվական համեմատաբար ավելի քիչ միավորներով: Համաձայն այս պահանջի՝ բացառվում են երկրորդական, անկարևոր մանրամասների նկարագրությունը, ձգձգվածությունը, անհարկի կրկնությունները: Այս պահանջը բխում է ելակետային տեքստի իմաստային սեղմման անհրաժեշտությունից:

- ✓ **Տրամաբանվածությունը** խոսքը կազմող միավորների իմաստային կապն է: Շարահղանքի ամբողջականությունն ապահովվում է, երբ ամփոփումը բաժանված է տրամաբանորեն միմյանց հետ կապված 2-3 հատվածների կամ պարբերությունների: Ընդ որում՝ պարբերությունն առավելապես կախված է հեղինակի հայեցողությունից, ինչի պատճառով էլ միևնույն ամփոփումը կարող է պարբերությունների բաժանվել տարբեր ձևերով:
- ✓ **Կաղապարաբանությունները** տվյալ տեքստի տեսակին ներհատուկ լեզվական, շարահյուսական, բառային առանձնահատկություններն են, որոնք անփոփոխ են, և որոնց իմացությունը պարտադիր է գիտական խոսքաշարի հեղինակի համար: Երբեմն կաղապարաբանությունների արժեքով հանդես են գալիս մասնագիտական բառապաշարը ներկայացնող բառերը, բառակապակցություններն ու արտահայտությունները: Ստորև ներկայացնում ենք ամփոփումների տարբեր մասերում կիրառվող կաղապարային արտահայտություններից որոշները:
- ✓ **Ներածություն՝** **The paper, article discusses, deals with, analyses, considers, explains, describes, establishes, introduces, presents, studies, represents, demonstrates, concentrates on** **և այլն:**
- ✓ **Նպատակ՝** **The main objective/goal/purpose of the paper/article is...**
 - Our aim with this paper was...**
 - The aim of the article is...**
 - Much attention is given to...,**
- ✓ **Արդյունք՝** **It has been found that ...**
 - The results show that ...**
 - The results thus obtained are compatible with ...**
- ✓ **Եզրակացություն՝** **In conclusion...**
 - The following conclusions are drawn...**
 - Summing up the results, it can be concluded that...**
 - In conclusion, it is evident that this study has shown...**
 - This paper has clearly shown that...**
 - It has been demonstrated/shown/found that...**
 - The findings suggest that this approach could also be useful for...**
 - The findings are of direct practical relevance.**

- ✓ **Լեզվական հատկանիշներն** ամփոփման շարադրանքում առկա քերականական առանձնահատկություններն են (անենթակա, կրավորական կառույցներ և այլն):
- ✓ **Ներտեքստային կապակցող միավորները** միջանկյալ բառերը և բառակապակցություններն են, որոնք անհրաժեշտ են նախադասությունների, պարբերությունների իմաստային անցումներն ընդգծելու, մտքի տրամաբանական կապը պահելու համար:

Ինչպես գիտենք, ակադեմիական գրավոր խոսքը բառային և քերականական-ոճական հատկանիշներով որոշակի մեկուսացվածություն ունի լեզվի այլ դրսևորումներից: Հետևաբար, ամփոփումը, լինելով գիտական տեքստի տարատեսակ, «օգտվում» է գիտական ոճին ներհատուկ լեզվամիավորների գործածության ընդունված նորմերից: Ծանոթանանք այդ առանձնահատկություններից որոշներին:

Քերականական մակարդակ:

Ե՛վ գիտական խոսքաշարում, և՛ ամփոփման մեջ լայնորեն կիրառվում են բայի եղանակային ձևերը: Հետազոտության թեման ներմուծելիս՝ անհրաժեշտ է շարադրանքը ձևակերպել ներկա անորոշ ժամանակաձևով: Անցյալ անորոշ ժամանակաձևով նկարագրվում է կատարված աշխատանքը, փորձը, հետազոտությունը: Ապառնի ժամանակաձևերը ամփոփումներում քիչ գործածական են, քանի որ այստեղ ներկայացվում են արդեն կատարված հետազոտության արդյունքները: Օրինակ՝ The case of the thin crystals **is analyzed**. The deformation of the lattice **was estimated** and formula **was used** to calculate the parameters.

Բառային մակարդակ:

Ամփոփագրի տեքստը շարադրելիս՝ հեղինակը պետք է գործադրի որոշակի միջոցներ, որոնք հնարավորություն կտան ընթերցողին հետևելու շարադրանքին: Բացի տերմիններից ու մասնագիտական բառապաշարից, ամփոփումներում գործածվում են նաև բառապաշարի չեզոք շերտի բառային միավորներ: Դիտարկենք սրանք առանձին-առանձին:

Որպես մուտք օգտագործվում են՝ study, investigate, examine, consider, analyse և այլն: Օրինակ՝ A new problem **is studied**. The case of the explosion **has been investigated**. Old manuscripts **were examined**. Several substances **were analysed**. Հաջորդ քայլով հեղինակը ներկայացնում է իր հետազոտական գործողությունները describe, discuss, outline, obtain, determine, establish, show, find բայերով: Օրինակ՝ The membranes of Golgi apparatus **are described**. The design and operating conditions of the device **are discussed**. The advantage of the method **are**

outlined. Preliminary data **have been obtained.** Diffusion coefficients **were determined.** The existence of two levels **has been established.** **It was found** that the illumination can alter the spectrum. Pellicular membranes were examined and **it was shown** that they were thicker than those in other cells.

Խոսքաշարում այս կամ այն մտքի ընդգծման և ընդհանուրից առանձնացման համար կարևորվում են հետևյալ բառերն ու արտահայտությունները՝ pay (give) attention to, emphasize, give emphasis to, place emphasis on: Այս լեզվական միավորների իմաստներն առավել են շեշտադրվում հետևյալ ածականների, մակբայների և պարագայական կապակցությունների գործածությամբ՝ particular, special, specific, great, especially, particularly, specially, specifically, with particular emphasis on (with special attention to): The buffer solutions were studied. **Special attention was paid to** the phosphorus concentration in buffer solution. Nerve cells were described **with particular attention to** the structure of their nuclei. The structure of rocks is studied. Granite rocks **are especially studied.**

Որպես ավարտ և եզրահանգում օգտագործվում են conclude, make, draw, reach a conclusion, come to a conclusion that, it is concluded that, lead to a conclusion, concerning, as to, from the results it is concluded that, it may be noted that, it may be stated that, thus, therefore, consequently, as a result և նման արտահայտություններ: **It was concluded that** the p-type conduction resulted in a decrease in concentration. **A general conclusion is made concerning (as to)** the equilibrium shape of crystals.

Հետևյալ բառերով ու արտահայտություններով էլ խոսքաշարի հեղինակը կատարում է առաջարկություններ, խորհուրդներ տալիս: Դրանք են՝ propose, suggest, recommend, make a suggestion, make a suggestion as to how (when, where, what etc.), it is suggested that (smth.) (should) be done, it is necessary to do (smth.), need և այլն: Another method of treatment **is proposed (suggested, recommended).** A new way of purification **is recommended (suggested).**

Ամփոփում գրելուն ուղղված դասագործընթացում կիրառող հնարներն ու մեթոդները: Ակադեմիական գրավոր խոսք ուսուցանելիս շատ կարևոր է գրավոր խոսքի ուսուցման փուլային պլանավորումը: Փուլային պլանավորումը ենթադրում է ուսուցումը տանել իմացության ցածր մակարդակից մինչև վարպետության բարձր մակարդակ: Այսպիսի փուլային աստիճանակարգում է Միլլերի աստիճանակարգումը: Եթե ամփոփում գրել սովորեցնելու գործընթացում դասավանդողը պահպանի աստիճանակարգման քառափուլ բնույթը, ապա կարող ենք ասել, որ սովորողը լիարժեք կյուրացնի նյութը: Ուսումնառության տարբեր փուլերում ակադեմիական գրավոր խոսքի դասավանդման

բովանդակությունը տարբեր է, սակայն կարևոր պայման է հետևել ուսուցման հաջորդականության սկզբունքին, այն է՝ պարզից անցնել բարդ: Նախնական փուլում սովորողները ծանոթանում են գրավոր խոսքի տարրերին (ինչ է պարբերությունը, տեքստը և այլն): Այս փուլում արդյունավետ է տարբեր վարժությունների կատարումը: Հաջորդ փուլում սովորողները կատարում են ինքնուրույն աշխատանքներ, գրում պարբերություններ, տրված թեմայով և բառապաշարով իրավիճակներ, ինչպես նաև տրվում է խմբակային աշխատանքի հնարավորություն:

Ամփոփում գրել ուսուցանելը կարելի է սկսել *ԳՈՒՍ* (K-W-L Chart) հնարով: Դասասկզբում դասավանդողը գծում է եռասյուն աղյուսակ, որի ծախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո դասավանդողը դիմում է սովորողներին հետևյալ հարցով՝ What do you know about this topic or concept? (ինչ գիտեք այս թեմայի կամ հասկացության մասին): Ապա լրացնում է գիտեմ սյունակը:

Հաջորդիվ սովորողներին հարցնում է՝ What do you want to know about this topic? (ինչ եք ուզում իմանալ այս թեմայի մասին): Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:

<ul style="list-style-type: none"> • Helps you present your paper in a concise manner • Helps you condense information into a short format • Informs reader of the main contents 	<p>What I want to learn</p> <ul style="list-style-type: none"> • The structure of the abstract. • The language of the abstract. • The maximum length of the abstract. 	<p>What I learned</p> <ul style="list-style-type: none"> • Generally abstracts are one to two paragraphs, between 250-500 words (often restricted for a given publication) • Adds no new information-just summarizes what is in the paper. • Uses academic style and language in your abstract. • Adds transition words to tie ideas together. • Helps reader decide whether to read the entire article or paper
---	--	---

Ամփոփում գրելու առանձնահատկությունները բացատրելիս դասավանդողը պետք է հաշվի առնի, որ սովորողը միանգամից շատ բան չի կարող սովորել: Այդ առումով շատ կարևոր է, որ այն փոքր մասերով բացատրվի: Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ: Փաստ է, որ սովորողները ավելի լավ են յուրացնում նյութը, երբ խոսքն ու պատկերը զուգակցվում են: Այս փուլում նպատակահարմար է օգտագործել *Վենի գծապատկեր* հնարը: Այս հնարը կիրառվում է երկու երևույթների, թեմաների կամ գործոնների միջև

փոխհարաբերությունները ցույց տալու համար: Օրինակ, եթե համեմատենք և հակադրենք ամփոփման և պաշտոնական նամակի բովանդակային-կառուցվածքային առանձնահատկությունները, ապա Վենի դիագրամը լավագույն գործիքն է վեր հանելու երկու տեքստերի լեզվական և կառուցվածքային նմանություններն ու տարբերությունները: Նոր նյութ բացատրելուց հետո դասավանդողը դադար է վերցնում և սովորողներին առաջարկում գրել, թե ինչ հասկացան նոր նյութից: Այնուհետև դասավանդողը կարող է շարունակել նյութը բացատրել կամ կարող է առաջարկել զույգերով աշխատել՝ կիրառելով «*Մտքերի հոսք*» հնարը:

Սովորողները միմյանց հետք քննարկում են հետևյալ հարցերը:

1. *What things have we written in common?*
2. *Is there anything important that we forgot to write down?*
3. *Why did we write these things in particular?*

Սովորածը պարզելու հնարներ:

«*Ինձնից առաջ հարցրու երեք հոգու*» հնարի իմաստն այն է, որ ուսումնառողները սովորեն նաև միմյանցից: Դասավանդողն առաջարկում է սովորողներին հարցերով դիմել միմյանց և իրեն դիմեն միայն այն բանից հետո, երբ երեք ուսումնառողներին դիմելուց հետո չեն ստացել հարցի պատասխանը: Սովորածը ստուգելու մեկ այլ հնար է «*Մեդաիմացության թերթիկ*»-ը: Այս թերթիկը լրացնելիս պետք է կատարել հետևյալ գործողությունները՝

1. Ընթերցե՛լ հարցերը: Դնե՛լ աստղանիշ բոլոր այն հարցերի դիմաց, որոնց պատասխանները գիտեք: Դնե՛լ «^» նշանը բոլոր այն հարցերի վրա, որոնց պատասխանները չգիտեք:
2. Գրե՛լ իմացած բոլոր հարցերի պատասխանները պատասխան սյունակում:

*	?	1.	QUESTION	ANSWER
	*		2. <i>What is an abstract?</i>	<i>An abstract is a concise summary of one's research project or paper in the form of paragraphs.</i>
	*		2. <i>What makes a good abstract?</i>	<i>An effective abstract is written in good English and is understandable to a wider audience as well as to your discipline-specific audience. It</i>

				<i>often uses passive structures in order to report on findings on the issues rather than people.</i>
	?	3.	4. How can we compress so much research into a small summary?	

Դասի վերջնական փուլում՝ անդրադարձի ընթացքում, նպատակահարմար է նաև կիրառել «Ելքի քարտերի լրացում» հնարը 3-2-1 հաջորդականությամբ: Սովորողը պետք է՝

- գրի երեք բան, որ սովորեց դասի ընթացքում,
- երկու բան, որ շատ կարևոր և արդյունավետ է համարում,
- մեկ բան, որ վաղն անմիջապես կկիրառի:

Evaluation Cards

Write three things you learned during the lesson.

1. Be clear, concise, and specific.
2. Include in the abstract only the most important concepts, findings or results.
3. Use transitional words and phrases that signal logical relationships.

Write two things that you think are very important and effective.

1. Do not include any referencing in the abstract
2. Define all acronyms and abbreviations.

Write one thing that you will apply immediately tomorrow.

Abstracts should contain no information not included in the paper.

Ամփոփում գրելուն ուղղված վարժությունները: Մեր կողմից առաջարկվող վարժություններն ուղղված են ամփոփում գրելու բառապաշարի, կաղապարաբանության և ամփոփման իմաստաբովանդակային կառույցների ուսուցմանը դասավանդման գործընթացում, որը թույլ է տալիս սովորողներին պահպանել ամփոփումների կազմման լեզվական և կառուցվածքային առանձնահատկությունները: Ելնելով ամփոփման բառապաշարին ներհատուկ առանձնահատկություններից՝ առաջարկում ենք վարժությունների մի շարք տեսակներ՝ ուսուցման գործընթացը արդյունավետ դարձնելու նպատակով: Մասնագիտական գրականության մեջ առանձնացնում են բառապաշարի ուսուցման վարժությունների երկու


տեսակ՝ ռեցեպտիվ և պրոդուկտիվ: Ռեցեպտիվ վարժություններն են՝ լրացում, հարց ու պատասխան, համապատասխանեցում, թարգմանություն, նախադասությունների կազմում: Պրոդուկտիվ վարժություններն են՝ կրկնություն, փոխարինում, վերադասավորում, շարունակում, վերականգնում: Թվարկված վարժության տեսակներից կիրառել ենք մի քանիսը:

Բաղիմաստի ներմուծման նպատակով առաջարկում ենք **Match the terms with the definitions** վարժությունը: Սովորողներից պահանջվում է համապատասխանեցնել եզրույթը և սահմանումը:

- | | |
|-----------------|--|
| 1. Cohesion | a. in written work the use of a non-idiomatic style |
| 2. Abbreviation | b. a few words that are commonly combined |
| 3. Introduction | c. use of exact words of another writer |
| 4. Summary | d. a list of all the sources cited in your work |
| 5. Abstract | e. the final section of an essay or report |
| 6. Contraction | f. a piece of text taken from a longer work |
| 7. Formality | g. linking ideas in a text together |
| 8. Quotation | h. the first part of an essay or report |
| 9. Phrase | i. a shorter version of something |
| 10. References | j. a shortened form of pronoun and verb |
| 11. Context | k. an in-text reference providing a link to the source |
| 12. Extract | l. a short summary of the aims and scope of an article |
| 13. Conclusion | m. the short form of a word or phrase |
| 14. Citation | n. the principle part of an essay or report |
| 15. Main body | o. the environment in which an element occurs |

(Answer Key: 1-g, 2-m, 3-h, 4-i, 5-l, 6-j, 7-a, 8-c, 9-b, 10-d, 11-o, 12-f, 13-e, 14-k, 15-n)

Շատ կարևոր են նաև տվյալ բառի կամ տերմինի կապակցման առանձնահատկությունները վեր հանող վարժությունները: Այս նպատակով նպատակահարմար է հետևյալ վարժությունը՝ Using **a mind map** can be a useful way to record vocabulary items. Make collocations with the word **problem**.



(Answer Key: solve, pose, face, resolve, overcome, raise, avoid, deal)

Ամփոփումներում չպետք է լինեն հապավումներ, դրանք պետք է ներկայացվեն ամբողջական տարբերակով: Հապավումներն և դրանց ամբողջական անվանումները միմյանց համապատասխանեցնող վարժությունների մեկ այլ տարատեսակ նպաստում է սովորողների հապավումներին ծանոթանալու գործընթացին:

Match the abbreviations with the full definitions.

- | | |
|------------------------|-----------------------------|
| 1. P.a. | a. vice versa (Lat.) |
| 2. <u>i.f.</u> | <u>b. memorandum</u> |
| 3. <u>hf</u> | c. above mentioned |
| 4. <u>mem. memo</u> | d. aforesaid |
| 5. <u>Nb. Nbr. no.</u> | e. following |
| 6. ors | f. per annum (Lat.), yearly |
| 7. R&D | g. <u>undermentioned</u> |
| 8. o/a, <u>o.a.</u> | h. <u>id est</u> (Lat.) |
| 9. rev. | <u>i. chapters</u> |
| 10. <u>u.m./umn</u> | j. high quality |
| 11. O.C | k. in order |
| 12. <u>afsd</u> | l. chapter |
| 13. ff | m. in full |
| 14. a.m. | n. approximate |
| 15. ill. | o. cited |
| 16. v.v. | p. year |
| 17. Y. | q. research and development |
| 18. <u>c.c</u> | r. number |
| 19. <u>i.o.</u> | s. illustration |
| 20. H. Q. | t. reverse |
| 21. app | u. others |
| 22. Ch. | v. half |
| 23. cit. | w. and others |
| 24. <u>ie</u> | x. as follows |
| 25. <u>a.o.</u> | y. overall |
| 26. <u>a.f.</u> | z. official classification |

(Answer Key: 1-f, 2-m, 3-v, 4-b, 5-r, 6-u, 7-q, 8-y, 9-t, 10-g, 11-z, 12-d, 13-e, 14-c, 15-s, 16-a, 17-p, 18-l, 19-k, 20-j, 21-n, 22-l, 23-o, 24-h, 25-w, 26-x)

Ամփոփումներում գործածվող իմաստարժանական կառույցների յուրացումն ամրապնդելու նպատակով՝ առաջարկում ենք հետևյալ վարժությունը, որի պահանջն է ճիշտ հերթականությամբ դասավորել բառերը՝ **Put the words in the correct order. The first letter of the sentence is capitalized.**

1. is, pressure, exists, for, that, the, to, recognize, necessary, It, change.
2. a, lot, should, crude, of, It, be, years, remembered, was, cheap, very, oil, ago, that.
3. to, the, social, concept, This, offers, study, review, explain, literature, commerce, of.
4. Finnish, between, how, pronounced, With, this, perfect, have, languages, no, exception, word, spelled, and, the, of, relationship, it, is, other, a, way, the.
5. agreed, that, generally, It, dinosaurs, out, due, sudden, changes, climatic, is, that, died, to.

Answer Key:

1. It is necessary to recognize that the pressure for change exists.
2. It should be remembered that a lot of years ago crude oil was very cheap
3. This study offers literature review to explain the concept of social commerce.
4. With the exception of Finnish, no other languages have this perfect relationship between the way a word is spelled and how it is pronounced.
5. It is generally agreed that dinosaurs died out due to sudden climatic changes.

Հաջորդ վարժությամբ ստուգվում է սովորողների տեսական գիտելիքները՝ ամփոփումներում գործածվող բառապաշարի, իմաստային ու քերականական կառույցների և ոճական առանձնահատկությունների վերաբերյալ: Վարժության պահանջն է՝ **Read the following sentences and decide which are True and which are False.**

1. Abstracts provide a summary and preview of an academic work.
2. When writing abstracts students should always use informal style of writing.
3. Abbreviations and contractions are inevitable in abstracts.
4. Be accurate, self-contained, clear, concise and specific.
5. Abstracts may include citations.

(Answer Key: 1-T, 2-F, 3-F, 4-T, 5-F)

Վարժության մյուս տեսակը՝ **Fill in the blanks with the correct form of the word**, սովորողից պահանջում է լրացնել տրված բառի ճշգրիտ ձևերը: Վարժությունը հիմնված է բառի բառակազմական առանձնահատկությունների վրա:

This paper examines the role of silent movies as a mode of shared experience in the US during the early twentieth century. At this time, high (1. immigrate) rates resulted in a significant (2. percent) of non-English-speaking citizens. These immigrants faced numerous (3. economy) and social obstacles, including exclusion from public entertainment and modes of discourse (newspapers, theater, radio).

Incorporating evidence from reviews, personal correspondence, and diaries, this study demonstrates that silent films were an (4. afford) and inclusive source of entertainment. It argues for the accessible economic and (5. representation) nature of early cinema. These concerns are (6. particular) evident in the low price of (7. admit) and in the democratic nature of the actors' exaggerated gestures, which allowed the plots and action to be easily grasped by a diverse audience despite language barriers (<https://www.scribbr.com/dissertation/abstract/>).

(Answer Key: 1-immigration, 2-percentage, 3-economic, 4-affordable, 5-representational, 6-particularly, 7-admission)

Արդյունավետ են նաև թարգմանական վարժությունները, ինչպես անգլերենից հայերեն, այնպես էլ հետադարձ թարգմանությունը: Վարժությունը կատարելիս՝ նպատակահարմար է կիրառել «փոխուսուցում» (peer teaching) հնարը: Սովորողները պետք է ամփոփումներից դուրս գրեն գիտական բառապաշարի բոլոր լեզվամիավորները, ապա սովորողներից մեկը կարդում է բնագրից դուրս գրված բառերն ու արտահայտությունները, իսկ ուսումնառողների մյուս մասը բարձրաձայնում արտահայտությունների հայերեն համարժեքները: Այնուհետև կատարվում է հետադարձ թարգմանությունը: Օրինակ՝ This brings us naturally to - սա բնականաբար հանգեցնում է, it is usually assumed that- սովորաբար ենթադրվում է, որ... , հոդվածի նպատակն ու խնդիրները - the aims and scope of the article, ընդունված է - it is customary, այլ կերպ ասած - in other words, համարվել - to be regarded as, որքան էլ հաստատապես ընդունված է- but however firmly established, ամենաընդհանուր և հաստատված փաստերից մեկը - one of the most general and most firmly established facts. Թարգմանությանը զուգահեռ կարելի է նաև հանձնարարել ամփոփումը բաժանել պարբերությունների՝ հաշվի առնելով ամփոփման կառուցվածքային առանձնահատկությունները: Վարժության պահանջն է՝ **Translate the abstract into Armenian, label each sentence's function.**

[A. -----] Social media technologies collapse multiple audiences into single contexts, making it difficult for people to use the same techniques online that they do to handle multiplicity in face-to-face conversation. ը[B. ----

-----] This article investigates how content producers navigate ‘imagined audiences’ on Twitter.

[C. -----] We talked with participants who have different types of followings to understand their techniques, including targeting different audiences, concealing subjects, and maintaining authenticity.

[D. -----] Some techniques of audience management resemble the practices of ‘micro-celebrity’ and personal branding, both strategic self-commodification. [E. -----] Our model of the networked audience assumes a many-to-many communication through which individuals conceptualize an imagined audience evoked through their tweets (Marwick and Boyd 2011).

(Answer Key: A-Introduction, B-Objective, C-Method, D-Result, E-Conclusion)

Ամփոփում գրելու ուսուցման ավարտական փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել որևէ թեմայով գրել անոտացիա՝ հետևյալ պահանջով՝ **Write an abstract. You can use the following phrases.**

1. The aim of the study is-----,
2. The present study investigates-----,
3. The method we applied involved-----,
4. The study provides strong evidence that-----,
5. We demonstrate that-----,
6. We investigated a new method of-----,
7. The data revealed-----,
8. The study showed/proved-----,
9. Results show/indicate that-----,
10. Further research is needed to better understand-----.

Եզրակացություն

Այսպիսով՝ գիտական գործունեություն իրագործող գիտնականը և այդ գործունեության գիտական ոճով ներկայացումը անքակտելի միասնություն են կազմում: Այսինքն՝ գիտական պետք է լինի ոչ միայն հաղորդվող տեղեկույթը, այլ այդ տեղեկույթի հաղորդման լեզուն: Ընդհանրացնելով ամփոփման մասին ասվածը՝ կարելի է եզրակացնել հետևյալը. ծավալի տեսակետից հումանիտար և բնագիտամաթեմատիկական ուղղվածության ամփոփումները տարբերվում են միմյանցից: Բայց գիտությունների տարբեր բնագավառների ամփոփումներում ընդհանուր և պարտադիր պայմաններ են տեղեկույթի հաղորդման տրամաբանվածությունը, ճշգրտությունը, պարզությունը, լեզվի կանոնավորությունն ու մաքրությունը: Այս հատկանիշները ընդհանուր առմամբ գիտական խոսքի բնորոշիչներ են,

որոնք բխում են գիտական ճանաչողության օբյեկտիվ հատկանիշներից: Ամփոփումների վերը նշված առանձնահատկությունների ընդհանրացմամբ կարելի է ամփոփ ներկայացնել դրա դրսևորման բովանդակային և լեզվական հետևյալ հատկանիշները.

1. շարադրանքի մասերի հաջորդականություն, մասի և ամբողջի իմաստային կապի պահպանում,
2. շարադրանքի կառուցվածքային առանձնահատկությունների պահպանում,
3. շարադրանքի սեղմություն, անհարկի կրկնությունների բացառում:

Ակնհայտ է, որ սովորողների՝ ակադեմիական գրավոր խոսքի հմտությունների բարելավելու համար, անհրաժեշտ է ոչ միայն դիտարկել ամփոփումների լեզվաոճական առանձնահատկությունները, այլև առաջարկել տարբեր մեթոդներ, հնարներ և վարժություններ՝ ուղղված օրինակելի ամփոփագրերի շարադրմանը: Անգլերեն ամփոփումների բառապաշարի ուսուցման գործընթացում հաշվի է առնվում բառերի իմաստային առանձնակատկությունները: Առաջարկվող վարժությունների տեսակները թույլ են տալիս արդյունավետ դարձնել ամփոփումներում գործածվող բառային շերտերի, տերմինների և քերականական կառույցների ուսուցումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Сысоев П. В., Правила написания аннотации, Иносранные языки в школе, 2009, 4, с. 81-83
Sysoev P. V., Pravila napisaniya annotacii, Inosrannye yazyki v shkole, 2009, №4, s. 81-83. (In Russian)
2. Bloomberg L. D., Volpe M., Completing Your Qualitative Dissertation. A Road Map from Beginning to End, 4th Edition, Los Angeles, Sage Publication, 2018, 456 p.3.
3. Kotze T., Guidelines on Writing the First Quantitative Academic Article. From http://hope.ac.uk/courses/comms/assessments/writing_an_academic_journal_article.pdf. (Retrieved June 23, 2023)
4. Marwick and Boyd, I tweet honestly, I tweet passionately, Twitter Users, Context Collapse and the Imagined Audience, New Media & Society, 13(1), 2011.
5. Pierson D. J., Faarc M.D., How to Write an Abstract that will be Accepted for Presentation at a National Meeting, Respiratory Care, 2004, 49(10), 1206-1212 pp.

6. Robert H., Fletcher M. D., Writing an Abstract, Journal of General Internal Medicine, 1998, 3(6), 607-609 pp.
7. <https://www.scribbr.com/dissertation/abstract/>

ЗОРИ БАРСЕГЯН - МЕТОДИЧЕСКАЯ СИСТЕМА ОБУЧЕНИЯ НАПИСАНИЮ АННОТАЦИИ НА АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

Ключевые слова: академическое письмо, аннотация на английском языке, методы обучения написанию аннотаций , упражнения.

Одним из наиболее распространённых жанров академического письма является аннотация. Зачастую аннотация является единственным текстом на иностранном языке, позволяющим иноязычным читателям понять содержание текста. На текущем этапе владение навыками академического письма является обязательным для исследователей ввиду необходимости представлять результаты собственных исследований на иностранном языке. Цель данной статьи заключается в экспликации некоторых особенностей развития навыков написания аннотаций на английском языке. Рассматривается ряд методов и упражнений, нацеленных на развитие навыков составления аннотации. Представленная методика, в свою очередь, помогает лучше понять специфику процесса составления качественных аннотаций на английском языке.

ZORI BARSEGHYAN - THE METHODOICAL SYSTEM OF TEACHING ABSTRACT WRITING IN ENGLISH

Keywords: academic writing, abstract in English, methods of teaching abstract writing, exercises.

The most common form of academic writing is an abstract. The abstract written in English is often the only text helping foreign readers to understand the content of a paper. Writing abstracts is in fact very important for researchers, who have to present the results of their research in a foreign language. This paper aims to present some features of teaching writing abstracts in English. A number of methods and exercises aimed at developing abstract writing have been proposed. The proposed methodology will help to prepare and present abstracts at conferences or publish articles in internationally recognized scientific journals.

Ներկայացվել է՝
Գրախոսվել է՝

26.09.2023 թ.
02.10.2023 թ.

**ԽՈՍՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ՕՏԱՐ
ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Համառոտագիր

Սույն հոդվածում քննության է առնվում հանրակրթական դպրոցում օտար լեզուների ուսուցման գործընթացում խոսության վերլուծության կիրառման հիմնախնդիրը: Հիմնավորվում է օտար լեզու դասավանդող ուսուցիչների խոսության կոմպետենցիայի ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը նրանց թե՛ բուհական, թե՛ հետբուհական ուսումնառության գործընթացում: Հանգամանորեն հիմնավորվում է օտար լեզվի ուսուցման գործընթացում խոսության վերլուծության կիրառման անհրաժեշտությունը, այն առումով, որ սովորողները կիրառելով խոսության վերլուծության ընթացակարգերը կարողանում են տարազատել լեզվի ուսուցման գործընթացն իրական խոսքային իրադրություններից, ճիշտ և տեղին արտահայտվել համապատասխան ենթատեքստում, մոդելավորել իրական հաղորդակցական իրադրություններ:

Հիմնավորվում է խոսության վերլուծության դերը սովորողների ոչ միայն լեզվական, այլև աշխարհի և հասկացության պատկերների ձևավորման տեսանկյունից: Ներկայացվում են խոսության վերլուծության հիմնական տեսակները:

Խոսության վերլուծության տեսանկյունից դասագրքերը դիտարկվում են որպես մանկավարժական խոսույթի դիդակտիկ գործիքներ: Հաղորդակցական-ճանաչողական մոտեցման տեսանկյունից ներկայացվում են մանկավարժական խոսույթում ուսուցչի խոսքային վարքագծի ռազմավարությունները՝ տեղեկատվական, կարգավորող, կազմակերպչական, նորմատիվ և ճանաչողական, տեղեկատվական-փաստարկող, մանիպուլատիվ-համախմբող, արտահայտչական-ապելյատիվ, վերահսկող-գնահատողական և այլն:

Բաղադրիչային և գործառական վերլուծության են ենթարկվում կրթական և մանկավարժական խոսույթի նորմատիվ-ներկայացուցչական և նախագծային հաղորդակցական ռազմավարությունները: Վերխոսության ռազմավարությունների մակարդակում ներկայացվում են կոնֆլիկտային և համագործակցային ռազմավարությունները:

Հիմնաբառեր՝ խոսույթ, խոսութային վերլուծություն, արտալեզվական գիտելիք, տեղեկատվական ռազմավարություն, կարգավորող ռազմավարություն, նորմատիվ ռազմավարություն, մանիպուլատիվ-համախմբող ռազմավարություն, արտահայտչական-ապելյատիվ ռազմավարություն, վերահսկող-գնահատողական ռազմավարություն:

Ներածություն

Յուրացնելով խոսութային վերլուծության ընթացակարգերը, սովորողները կարող են հասկանալ, թե ինչպես է լեզուն կիրառվում իրական հաղորդակցական իրավիճակներում՝ հաշվի առնելով դրա ձևական և գործառական կողմերը, հաղորդակցության ձախողման պատճառները, ինչպես նաև սոցիալ-մշակութային առանձնահատկությունները: Այն օգնում է սովորողներին ճիշտ և տեղին արտահայտվել համապատասխան ենթատեքստում, մոդելավորել իրական հաղորդակցական իրադրություններ, տարագատել լեզվի ուսուցման գործընթացն իրական խոսքային իրադրություններից: Լեզու դասավանդող ուսուցիչները պետք է գիտակցեն խոսութային վերլուծության կարևորությունը և պետք է կարողանան այն ներառել իրենց մանկավարժական պրակտիկայում:

Հողվածի նպատակն է հիմնավորել խոսութային վերլուծության կիրառման անհրաժեշտությունն օտար լեզու ուսուցման գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են.

1. սահմանել «խոսույթ», «խոսութային վերլուծություն», «մանկավարժական խոսութային վերլուծություն» հասկացությունները,
2. բացահայտել օտար լեզվի ուսուցման գործընթացում խոսութային վերլուծության կիրառման դժվարությունները,
3. հիմնավորել խոսութային վերլուծության անհրաժեշտությունն օտար լեզվի ուսուցման գործընթացում:

Հետազոտության հիմնախնդիրն այն է, որ մանկավարժական խոսութային վերլուծության մեթոդները, ընթացակարգերը յուրացնելու և կիրառելու համար լեզու դասավանդողները պետք է համապատասխան գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերեն թե՛ բուն բուհական, թե՛ հետբուհական ուսումնական և աշխատանքային գործունեության ընթացքում:

Հետազոտության նորույթը.

Քննության են առնվել խոսութային վերլուծության լեզվի ուսուցման գործընթացում կիրառման հիմնական մոտեցումները և հիմնավորվել է մանկավարժական խոսութային վերլուծության անհրաժեշտությունը լեզվի ուսուցման բոլոր փուլերում:

Հետազոտության տեսական նշանակությունը.

Ուսումնասիրել էլ են խոսության վերլուծության լեզվի ուսուցման գործընթացում կիրառման հիմնական մոտեցումները, բացահայտվել է մանկավարժական խոսության վերլուծության առանձնահատկությունները սովորողների լեզվական, աշխարհի և հասկացության պատկերների ձևավորման տեսանկյուններից:

Հետազոտության գործնական նշանակությունը.

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել թե՛ լեզվի ուսուցման բուհական, թե՛ հետբուհական դասընթացներում ուսուցիչների, դասախոսների, ուսանողների և այլ շահագրգիռ անձանց կողմից:

Հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից կարևորվում են մանկավարժական խոսության մարտավարությանը և ռազմավարությանը (H. A. Антонова), սովորողների լեզվական պատկերի ձևավորմանը (H. Д. Арутюнова), մանկավարժական խոսության վերլուծությանը (B. И. Карасик, R. Pettela, C. Kandra, & S.Palepu,) նվիրված աշխատանքները:

Խոսության և խոսության վերլուծությունը հիմնականում տեղ չեն գտնում լեզվի ուսուցման գործընթացում, ոչ միայն այն պատճառով, որ ուսուցիչները անհրաժեշտ գիտելիքներ չունեն դրանց մասին, այլև այն պատճառով, որ նրանք չգիտեն, թե ինչպես խոսության վերլուծությունը կիրառել դասերին (Cots, 1996, Olshtain & Celce-Murcia, 2001): Լեզու դասավանդող ուսուցիչները հիմնականում թերհավատորեն են մոտենում այն գաղափարին, որ խոսության վերլուծությունը կարող է նպաստել հաղորդակցական կոմպետենցիայի զարգացմանը (Cook, 1989, Flowerdew, 2013, Johnstone, 2008, McCarthy, 1991):

Ընդհանուր առմամբ խոսության վերլուծության տարբեր տեսություններ են հայտնի՝ խոսքային, գործաբանական, հանրալեզվաբանական, ազգագրական և այլն (Stubbs, 1983, Tannen, 1989): Հայտնի են նաև խոսության վերլուծության այլ մոտեցումներ՝ թեմատիկ վերլուծության, քննադատական խոսության վերլուծության, սոցիալական ճանաչողական, քաղաքական խոսության, խոսության հոգեբանության, խոսակցական վերլուծության, Լակլանի և Մուֆի խոսության տեսության (Barker, 2003, Jwan Ong'ondo, 2011, p. 49-52):

Համապատասխանաբար, Ջվան և Օնգոնոն նշում են, որ խոսության վերլուծությունը վերաբերում է այն իմաստներին, որոնք ստացվում են հաղորդակցությունից, որոնք բանավոր, գրավոր և ոչ բանավոր են փոխգործակցության ընթացքում (Jwan & Ong'ondo, 2011, p. 48): Քուկը սահմանում է խոսության լեզվական միավորների ներմուծման և իմաստաստեղծման գործընթաց: Ըստ նրա՝ պետք է այդ գործընթացը դիտարկել նախադասությունների ներսում գործող ֆորմալ կանոններից դուրս և հաշվի առնել այն մարդկանց, ովքեր կիրառում են լեզուն ըստ իրենց մոտ ձևավորված աշխարհի պատկերի (Cook (2001):

Հետազոտության ընթացքում կիրառվել են հասկացությունների բովանդակային, բաղադրիչային, գործառական, մանկավարժական խոսուբային վերլուծության **մեթոդները**:

Խոսույթ և խոսուբային վերլուծություն.

Կարևոր է նշել, որ խոսուբային վերլուծության միջոցով ոչ միայն ուսումնասիրում են լեզվի կառուցվածքային բնութագրերը, այլ նաև գործառական: Մի կողմից, լեզուն դիտարկվում է որպես ինքնուրույն համակարգ: Մյուս կողմից, լեզվի գործառական հայեցակերպերի ուսումնասիրությունը միտված է լեզվի կիրառման տարբեր ձևերի, լեզվի և ենթատեքստի միջև կապի բացահայտմանը, հաղորդակցական նպատակների հստակեցմանը: Այսինքն՝ խոսուբային վերլուծությամբ լուսաբանվում են լեզվի կիրառման գործառական հայեցակերպերը:

Կարելի է պնդել, որ լեզու դասավանդող ուսուցիչները շեշտը դնում են հիմնականում լեզվի կառուցվածքային առաձնահատկությունների վրա, սակայն լեզվի գործառական բնութագրերը մոլորվում են հետին պլան:

Գիտական գրականության մեջ «խոսույթ» եզրույթը տարբեր տեսանկյուններից է մեկնվում: Ըստ Ջոնսթոնի՝ «խոսույթը կարելի է հասկանալ որպես գրավոր կամ խոսակցական լեզվի ցանկացած ձև, որը կիրառվում է որպես հաղորդակցման միջոց» (Johnstone, 2008): Սա ներառում է լեզվի մասին իմացություն. ֆոնային տեղեկատվություն ենթատեքստի մասին՝ իրական աշխարհում տեղի ունեցող հաղորդակցական գործողություններ իրականացնելու համար, օրինակ՝ զվարճացնել ուրիշներին, ներողություն խնդրել, արտահայտել զգացմունքները և այլն:

Ըստ Քուլբի՝ խոսույթը ներկայացնում է լեզվի իմաստալից, ամբողջական և համատեքստային հատվածներ, որոնք օգտագործվում են հաղորդակցության համար: Խոսույթը երկիմաստ է, քանի որ այն կարող է իրականում ունենալ մի քանի ձև և կարող է զգալիորեն տարբեր լինել տևողությամբ, հատկապես բանավոր խոսքում (Celce-Murcia & Olshtain, 2014): Այնուամենայնիվ, Քուլբը փորձում է լուծել լեզվական միավորի որպես իմաստաբանական միավորի ձևավորման հիմնախնդիրը վերասուբային մակարդակում (Cook, 2001): Նա նշում է, որ պետք է նախադասության մակարդակում գործառնող կանոնները դիտարկել այլ հարթության վրա, հաշվի առնելով, թե ինչ մարդիկ են կիրառում լեզուն և որն է նրանց աշխարհի պատկերը: Քուլբն աստիճանաբար մոտենում է լեզվակիրների կոնցեպտուալ կամ հասկացությային պատկերի ձևավորման հիմնախնդրին: Խոսուբային վերլուծությունն օգնում է դասավանդողին և սովորողներին ճիշտ պատկերացում ունենալ ոչ միայն լեզվակիրների լեզվական, այլև աշխարհի և հասկացությային պատկերների մասին:

Ենթատեքստը նաև կարևոր գործոն է խոստովային վերլուծության գործընթացում: Սովորողները պետք է հստակորեն տարազատեն մշակութային, սոցիալական, պատմական, հոգեբանական և այլ ենթատեքստերը: Նրանց հենքային գիտելիքները վճռորոշ դեր են խաղում այդ գործընթացում: Մի կողմից, նրանք պետք է բացահայտեն լեզվի կիրառման կարևոր ենթատեքստերը: Մյուս կողմից, այդ գործունեությունը վերածվում է ինքնին խոսույթաստեղծ գործունեության:

Օտար լեզվի ուսուցիչը հիմնականում գործ ունի լեզվական միավորների հետ, որը կարող է լինել եզակի բառ, բառակապակցություն, լավ կառուցված նախադասություն: Նրանք ինչ-որ առումով բավականին լավ իրականացնում են նախադասությունների ձևավորման, շարահյուսական, իմաստաբանական վերլուծություն: Ավելին, սովորողների հաղորդակցական ձախողումները և սխալները նշված տրամաբանությամբ աշխատող ուսուցիչները վերլուծում են հիմնականում տվյալ լեզվի քերականության շրջանակներում: Մշակութային, հանրամշակութային, գործաբանական հայեցակարեպերը հիմնականում չեն լուսաբանվում:

Խոստովային վերլուծությունն օգնում է թե՛ ուսուցչին, թե՛ սովորողներին պարբերաբար լուսաբանել նշված հայեցակերպերը: Այդ համատեքստում ասվածը հիմնավորվում է Մըքարթի այն պնդմամբ, ըստ որի՝ խոստովային վերլուծությունը կարող է ընկալվել նաև որպես գործիքների մի շարք, որոնք նախատեսված են նկարագրելու և հասկանալու, թե ինչպես է լեզուն կիրառվում որոշակի ենթատեքստում (McCarthy, 1991): Այստեղ մենք գործ ունենք գործաբանական կոմպետենցիայի հետ, առ այն, որ լեզու ուսումնասիրող պետք է մշտապես հստակորեն որոշի, թե տվյալ լեզվական միավորը ինչ /պատմական, մշակութային, հոգեբանական և այլն/ ենթատեքստում է կիրառվում: Ըստ Ֆլաուերդեյի՝ խոստովային վերլուծությունը սահմանվում է որպես «լեզվի ուսումնասիրություն իր կիրառման ենթատեքստում և վերաստովային մակարդակում» (Flowerdew, 2013, p. 1): Վերաստովային մակարդակը ենթադրում է իրականացնել ոչ միայն շարահյուսական, իմաստաբանական վերլուծություն նախադասության մակարդակում, այլև խոստովային վերլուծություն, որը ներառում է առավելապես ոչ լեզվական խոսքային միավորները: Մի կողմից, խոստովային վերլուծությունը շեշտադրում է լեզվի կիրառման ենթատեքստը: Մյուս կողմից, խոստովային վերլուծության առարկան արտալեզվական գիտելիքն է:

Մանկավարժական խոսույթի վերլուծություն

Կարևոր է նշել, որ խոստովային վերլուծությունը դասավանդման մեթոդ չէ (McCarthy, 1991): Սակայն այն ընդհանրական եզրույթ է, որը ցույց է տալիս, թե ինչպես և ինչու խոստովային վերլուծությունը պետք է

ներառվի օտար լեզվի ուսուցման գործընթացում: ՄԻՄ-ի միջոցով հնարավոր է դառնում հիմնավորել ուսուցումն իրական խոսքային իրադրությունների հետ զուգորդելու անհրաժեշտությունը: Այս անհրաժեշտությունը մատնանշվել է այնպիսի հեղինակների կողմից, ինչպիսիք են Քոթսը, Օլթենը և Սելչե-Մուրսիան (Cots, 1996, Olsten & Celce-Murcia, 2001):

Դասագրքերը նույնպես կարելի է համարել խոսության վերլուծության արդյունավետ միջոց: ՄԻՄ կարող է կենտրոնանալ դասագրքի ներսում խոսքի տարբեր հայեցակետերի վրա, ինչպիսիք են՝ լեզվական-լեզվաբանական առանձնահատկությունները, մասնակիցների անձնային որակները, սոցիալական դերերը, հաղորդակցական իրավիճակը, սկզբնաղբյուրի ժանրը, մշակութային հայեցակետերը և այլն:

Մանկավարժական հաղորդակցության խոսության ռազմավարությունները

Մանկավարժական խոսույթն ուսումնական հաստատության ներսում կազմակերպված ինստիտուցիոնալ խոսույթի տեսակ է, այսինքն՝ ուսուցչի և ուսանողների, ուսուցչի և ուսանողների միջև ինստիտուցիոնալ հաղորդակցության ենթատեքստում. այն ամրագրված է այն սոցիալական կանոններով, ծեսերով, բանաձևերով և նորմերով, որոնք ունեն բանավոր արտահայտություն: Մանկավարժական խոսույթի ընդհանուր նպատակն է ստեղծել պայմաններ ամբողջական անձի ձևավորման համար նրա հոգեֆիզիկական, սոցիալական և անհատական բնութագրերի ողջ բազմազանության մեջ, որն իրականացվում է հաղորդակցության միջոցով: Մանկավարժական խոսույթում ուսուցչի խոսքային վարքագծի ռազմավարությունները սերտորեն կապված են հաղորդակցության հետևյալ գործառույթների հետ՝ տեղեկատվական, կարգավորող, կազմակերպչական, նորմատիվ և ճանաչողական (Pettela, Kandra and Palepu, 2017, p. 13):

Մանկավարժական հաղորդակցության գործառույթներին համապատասխան՝ նշված հիմնախնդիրն ուսումնասիրող գիտնականներն առանձնացնում են ուսուցչի խոսքային վարքագծի հինգ հիմնական հաղորդակցական ռազմավարություն՝ բացատրել, գնահատել, վերահսկել, օժանդակել կամ ֆասիլիտացիա անել, կազմակերպել:

Ըստ Ի. Ն. Բորիսովայի՝ «Հաղորդակցական ռազմավարությունը խոսքային վարքագիծը կազմակերպելու միջոց է համաձայն հաղորդակցողների մտահղացման և մտադրության: Լայն իմաստով հաղորդակցական ռազմավարությունը հասկացվում է որպես խոսքի գերխնդիր՝ թելադրված խոսողի գործնական նպատակներով: «Խոսքի հաղորդակցական ռազմավարությունը մտահղացման իրականացման

միջոց է, այն ենթադրում է փաստերի ընտրություն և դրանց ներկայացում որոշակի լույսի ներքո, որը հասցեատիրոջ մտավոր, կամային և հուզական ոլորտի վրա ազդելու նպատակ է հետապնդում» (Борисова 1999, p. 85-86): Ասվածից բխում է, որ մանկավարժական խոսույթում հաղորդակցական ռազմավարությունը կարելի է օտար լեզվի գործընթացում ճիշտ մոդելավորել, եթե համարժեքորեն է մոդելավորվում լեզվակիրների հաղորդակցական վարքագիծը:

Յու. Վ. Սորոկինան նույնպես, հաղորդակցական ռազմավարությունը սահմանելիս, շեշտադրում է հաղորդակցական նպատակին հասնելու գաղափարը (Сорокина, 2014, p. 89): Այլ հարց է, որ օտար լեզու սովորողների հաղորդակցական նպատակները ցանկացած նախագծի իրականացման ընթացքում տարբերվում են լեզվակիրների հաղորդակցական նպատակներից: Կրթական միջավայրում հաղորդակցական նպատակներն ավելի կոնկրետ են: Նրանք հիմնականում հետապնդում են ուսուցողական նպատակ: Այսինքն՝ հաղորդակցական նպատակները դիտարկվում են ուսուցողական նպատակների շրջանակներում:

Վ. Վ. Կարասիկը կարծում է, որ մանկավարժական խոսույթը բնութագրվում է բացատրական, գնահատող, օժանդակող, կազմակերպող և վերահսկող ռազմավարություններով (Карасик, 1999, p. 6-15):

Ն. Ա. Անտոնովան առաջարկում է լրիվ այլ դասակարգում: Ըստ այդմ՝ նա սահմանում է մանկավարժական խոսույթում հրամայական, տեղեկատվական և հաղորդակցական-կարգավորող մանկավարժական հաղորդակցության գործառույթների վրա հիմնված ռազմավարությունները (Антонова, 2007, p. 230-236): Ըստ այդ մոտեցման՝ տեղեկատվական ռազմավարության կիրառման արդյունքում առաջին պլան է մղվում մանկավարժության ճանաչողական գործառույթը: Կարելի է պնդել, որ ավանդական կամ դասական մանկավարժության հարացույցում շեշտադրվում է հատկապես այդ գործառույթը: Նույնը վերաբերում է մանկավարժական խոսույթի կազմակերպչական և վերահսկող ռազմավարություններին: Դրանք նույնպես բազում հետազոտությունների առարկա են դարձել մանկավարժության ավանդական համարվող հարացույցում (Антонова, 2007, p. 230-236):

Մ. Յու. Օլեշկովն առանձնացնում է մանկավարժական խոսույթի շրջանակներում ձևավորված չորս ռազմավարություն՝ տեղեկատվական-փաստարկող, մանիպուլյատիվ-համախմբող, արտահայտչական-ապելյատիվ, վերահսկող-գնահատողական: Բովանդակային առումով նշված ռազմավարություններն ինչ-որ առումով կրկնում են Անտոնովայի դասակարգման սկզբունքները: Սակայն բաղադրիչային վերլուծությունը

ցույց է տալիս, որ տեղեկատվական-փաստարկող ռազմավարությունը Մ. Յու. Օլեշկովի մեկնությամբ հիմնականում դիդակտիկ նպատակներ է հետապնդում : Ակնհայտ է, որ կիրառելով նշված ռազմավարությունն ավելի արդյունավետ է դառնում փոխներգործուն մեթոդների կիրառումը (Олешков, 2006):

Նույնը վերաբերում է մանիպուլյատիվ-համախմբող ռազմավարությանը, որի նպատակն է համախմբել և համակարգել սովորողների գործողությունները: Ակնհայտ է, որ այդ ռազմավարության կիրառմամբ մեծ հնարավորություններ են ստեղծվում ոչ միայն ուսուցիչ-աշակերտ, այլև աշակերտ-աշակերտ համագործակցության համար: Նշված համատեքստում մարդակենտրոն, աշակերտակենտրոն ուսուցման և դաստիարակության ժամանակակից հարացույցի տրամաբանությունից է բխում արտահայտիչ-ապելյատիվ ռազմավարությունը, քանի որ ըստ Մ. Յու. Օլեշկովի՝ դասավանդողի գերնպատակն է դառնում օպտիմալ «աշխատանքային» մթնոլորտի ստեղծումն ու պահպանումը: Այսինքն՝ խնդիր է դրվում ստեղծել ուսուցման և դաստիարակության դրական հուզական դաշտ, որի ստեղծման պայմաններից մեկն ուսուցման ռեֆլեքսիվ միջավայրի առկայությունն է Այդպիսի միջավայրը հնարավորություն է ընձեռում թե՛ դասավանդողներին, թե՛ սովորողներին ազատ և անկաշկանդ արտահայտել իրենց «զգացմունքները, հույզերը, գնահատականները, նախասիրությունները, տրամադրությունները հասցեատիրոջ խոսքի դրսևորումների և ընդհանուր առմամբ հաղորդակցական իրավիճակի հետ կապված ցանկացած միտք» (Олешков, 2006):

Ուսուցման անձնակենտրոն տեխնոլոգիաների կիրառման տեսանկյունից կարևոր է այն, որ նշված ռազմավարությունը կիրառելիս, առաջին պլան է մղվում ոչ թե ինքնին տեղեկատվությունը, այլ կարծիքները, անձնական նախասիրությունները, վերջարդյունքում ուսումնասիրվող առարկային նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը: Այս ամենը թույլ է տալիս ստեղծել դրական հուզական ֆոն, հարմարավետ կրթական միջավայր: Նշված համատեքստում այլ բովանդակային բնութագրեր են ձեռք բերում վերահսկման և գնահատման ռազմավարությունները: Աստիճանաբար վերահսկման գործընթացը վերածվում է ինքնավերահսկման գործընթացի, գնահատման գործընթացը՝ ինքնագնահատման գործընթացի:

Ա. Ռ. Գաբիդուլլինան առանձնացնում է հիմնականում իմացական (ճանաչողական) մակրոռազմավարությունները և օժանդակ մետադիսկուրսիվ /վերխոսության/ և հաղորդակցական-գործաբանական միկրոռազմավարությունները մանկավարժական հաղորդակցության իրավիճակում (Габидуллина, 2011): Իմացաբանական

ռազմավարություններն իրենց հերթին բաժանվում են կրթական և մանկավարժական խոսույթի նորմատիվ-ներկայացուցչական և նախագծային հաղորդակցական ռազմավարությունների: Դրանցից առաջինն ուղղված է ուսուցիչից ուսանողներին գիտելիքների փոխանցմանը: Միննույն ժամանակ հեղինակն ընդգծում է, որ «ուսումնական գործընթացը ձեռք է բերում ավտորիտար վերարտադրության, պատճենահանման բնույթ» (Габидуллина, 2011): Ընտրելու իրավունք ունի միայն «բանիմաց» ուսուցիչը: Ուսանողների դիրքորոշումը բացառապես պասիվ ընկալումն է: Վերխոսույթային ռազմավարության կարևոր պայման է ուսուցման ռեֆլեքսիվ միջավայրի շարունակական զարգացումը: Այսինքն՝ այն կարելի է կիրառելի բավականին բարձր զարգացում ապահովող ռեֆլեքսիվ միջավայրում: Դրա ցուցիչներից մեկն այն է, երբ ռեֆլեքսիան վերածվում է ինքնառեֆլեքսիայի, գնահատումը՝ ինքնագնահատման:

Մանկավարժական խոսույթում առաջին պլան է մղվում բացատրական հաղորդակցական ռազմավարությունը, որը մտադրությունների հաջորդականություն է և կենտրոնացած է մարդուն իրազեկելու, նրան աշխարհի մասին գիտելիքներ և կարծիքներ տալու վրա:

Մանկավարժական խոսույթի վերահսկման ռազմավարությունը համալիր մտադրություն է, որն ուղղված է գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների ձևավորման, արժեքային համակարգի իրազեկման և ընդունման մասին օբյեկտիվ տեղեկատվության ձեռքբերմանը:

Մանկավարժական խոսույթի ֆասիլիտացիոն ռազմավարությունը սովորողին աջակցելն ու ուղղելն է:

Օժանդակող կամ ֆասիլիտացիայի ռազմավարությունն արտահայտվում է հասցեատիրոջ նկատմամբ դրական վերաբերմունքի տեսքով՝ որպես հաղորդակցության սկզբնական պոստուլատ: Այս ռազմավարության արտահայտման տիպական օրինակների ուսումնասիրությունը պետք է հետևողական բնույթ կրի, քանի որ դրանք տարբեր լեզուներում տարբերվում են:

Մանկավարժական խոսույթի գնահատման ռազմավարությունն արտահայտում է ուսուցչի սոցիալական նշանակությունը՝ որպես հասարակության նորմերի ներկայացուցիչ և իրականացվում է ուսուցչի իրավունքով՝ գնահատելու ինչպես ուսուցման ընթացքում քննարկվող իրադարձությունները, հանգամանքներն ու կերպարները, այնպես էլ նրա ձեռքբերումները:

Մանկավարժական խոսույթի կարևոր տեսակն են դասախոսությունները, որոնք պատկանում են ակադեմիական ոճին:

Դրանք կարող են դիտվել որպես տեղեկատվական տիպի դասախոսություններ: Է.Վ. Չերնյավսկայան կարծում է, որ նման դասախոսություններն ունեն որոշակի հստակ կառուցվածք՝ պայմանավորված իրենց հաղորդակցական նպատակներով: Դասախոսությունը կարող է ներկայացվել հետևյալ կերպ՝ «խնդրահարույց իրավիճակ/խնդիր → վարկած → վարկածի ապացույց → եզրակացություն» (Chernyavskaya, 2006 p. 40): Բայց քանի որ ժամանակակից ուսուցումը ենթարկվել է մի շարք փոփոխությունների, դասախոսությունների նոր ձևեր են ի հայտ գալիս, օրինակ՝ «ստենդ-ափ դասախոսություն», որին բնորոշ է մատուցվող նյութի ինտենսիվ գրույցի տեսքով ներկայացնելը :

Խոսութային վերլուծությունը մի քանի մանկավարժական նշանակություն ունի օտար լեզվի ուսուցչի համար, հատկապես երբ խոսք է գնում օտար լեզվի ուսուցման վերևից ներքև (top-down), ներքևից վերև (bottom up) ռազմավարությունների կիրառման մասին: Նույնը վերաբերում է խոսքի սահունությանը և ճշգրտությանը: Ինչպես հայտնի է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի պատմությունից դասական համարվող մեթոդներում /ուղիղ, թարգմանական -քերականական և այլն/ նախապատվությունը տրվում է ճշգրիտ խոսքի ուսուցմանը: Հետագայում, հատկապես հաղորդակցական մոտեցման շրջանակներում նախապատվությունը տրվում է սահուն խոսքի ուսուցմանը: Խնդիր է դրվում, ինչպես նշում է Բրումֆիթը, հստակորեն որոշել այդ հարաբերակցությունը (Brumfit, 1985): Հատկանշական է այն, որ հաղորդակցական մոտեցման շրջանակներում հաղորդակցական մոտեցման սկզբունքներով աշխատող շատ ուսուցիչներ դժվարությամբ են յուրացնում խոսութային վերլուծության ընթացակարգերը, որը կարևոր պայման է նշված սկզբունքները կիրառելու համար: Ավելին, հայտարարելով, որ աշխատում են հաղորդակցական մոտեցման սկզբունքներով, նրանք շարունակում են շեշտը դնել օտար լեզվի «քերականացված» ուսուցման վրա, ավելի նորարարական մոտեցումներ որդեգրելու փոխարեն:

Խոսութային վերլուծության կարևոր առարկա են դասարանային խոսակցությունները, որոնք ըստ Լեֆշտեյն և Սնելի՝ հնարավոր է դիտարկել տարբեր մշակույթների ենթատեքստում (Lefstein & Snell, 2011, 505-514): Դպրոցների ուսուցիչները և աշակերտները տարբեր սոցիալական, մշակութային, պատմական ենթատեքստերում ներգրավվում են տարբեր խոսույթների ստեղծման գործընթացում: Դրանից հետևում է, որ տարբեր կարող են լինել խոսակցության թեմաները, ձևերը, նորմերը և այլն: Առանց ճիշտ կազմակերպած խոսութային վերլուծության հնարվոր չէ ճիշտ պակերացում կազմել,

գնահատել դասարանային, ակադեմիական խոսակցությունների տարաբնույթ դրսևորումները:

Լեզվակիրներին բնորոշ ակադեմիական խոսույթի ուսումնասիրությունը նույնպես կարևոր պայման է օտար լեզվի ուսուցման գործընթացում լեզվակիրների աշխարհի և հասկացության պատկերների մասին ճիշտ պատկերացում կազմելու համար: Ակնհայտ է, որ մենք կարող ենք լուրջ խնդիրներ ունենալ ոչ միայն լեզվակիրների և սովորողների լեզվական, աշխարհի և կոնցեպտուալ աշխարհների փոխներթանցման, այլև բուն լեզվակիրներին բնորոշ ակադեմիական խոսույթի և սովորողներին բնորոշ ակադեմիական խոսույթների փոխներթափանցման հաղթահարման հետ:

Եզրակացություն

Խոսութային վերլուծությունն օգնում է դասավանդողին և սովորողներին ճիշտ պատկերացում ունենալ ոչ միայն լեզվակիրների լեզվական, այլև աշխարհի և հասկացութային պատկերների մասին: Ուսուցման և ուսումնառության գործընթացը յուրահատուկ խոսութաստեղծ գործունեություն է: Դա ենթադրում է օտար լեզվի գործընթացում յուրացնել ոչ միայն թիրախային լեզվի քերականական, բառային, ոճական, այլև մշակութային, միջմշակութային, հանրամշակութային, գործաբանական բնույթի դժվարությունները: Շատ դեպքերում առանց խոսութային վերլուծության հնարավոր չէ հաղթահարել սովորողների հաղորդակցական ձախողումները և սխալները:

Մանկավարժական խոսույթում ուսուցչի խոսքային վարքագծի ռազմավարությունները սերտորեն կապված են հաղորդակցության հետևյալ գործառույթների հետ՝ տեղեկատվական, կարգավորող, կազմակերպչական, նորմատիվ և ճանաչողական :

Առանձնացնելով մանկավարժական խոսույթի շրջանակներում ձևավորված չորս ռազմավարություն՝ տեղեկատվական-փաստարկող, մանիպուլյատիվ-համախմբող, արտահայտչական-ապելյատիվ, վերահսկող-գնահատողական, հնարավոր է դառնում ավելի բարձր ռեֆլեքսիվ մակարդակում իրականացնել լեզվի ուսուցման փոխներգործուն ուսուցումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Антонова Н. А. Стратегии и тактики педагогического дискурса / Н. А. Антонова // Проблемы речевой коммуникации : межвуз. сб. науч. тр. - Саратов : Изд-во Саратов. ун-та, 2007. - Вып.7. - С. 230-236
2. Antonova N. A. Strategii I taktiki pedagogicheskogo diskursa/Problemi rechevoj kommunikatsii: medzvuz. Zb. Nauch, tr. - Saratov: Izd-vo Sarat. Un-ta, 2007. - Vip. 7. - S. 230-236
3. Арутюнова Н. Д. Язык и мир человека.- М.: Языки русской культуры, 1998. - С. 896
Arutjunova N. D. Jazik I mir cheloveka. - M.: Jazik russoj kulturi, 1998. - S. 896
4. Борисова И. Н. Категория цели и аспекты текстового анализа / И. Н. Борисова // Жанры речи. Вып.2. - Саратов: Колледж, 1999. - С.81-96
Borisova I. N. Kategoria tseli I aspekti tekstovogo analiza/Dzanri rechi. Vip.2. - Saratov: Kolledz, 1999. - S.81-96
5. Габидуллина А. Р. Педагогическая лингвистика: учебное пособие для студентов высших учебных заведений / А. Р. Габидуллина [Электронный ресурс]. - Горловка: ГГПИИЯ, 2011. - Режим доступа: <http://textarchive.ru/c-2245472-pall.html>.
Gabidulina A. R. Pedagogicheskaja lingvistika: . - Gorlovka: GGPIIJA, 2011. - Redzim dostupa: <http://textarchive.ru/c-2245472-pall.html>.
6. Карасик В. И., Характеристики педагогического дискурса / В. И. Карасик // Языковая личность: аспекты лингвистики и лингводидактики: Сб. науч. тр. / ВГПУ. -Волгоград: Перемена, 1999. - С. 3-18
Karasik V. I., Kharateristiki pedagogicheskogo diskursa//Jazikovaja lichnost: aspekti lingvistiki i lingvodidaktiki. Zb. nauch. tr. /VGPI. - Volgograd: Peremna, 1999. - S. 3-18
7. Олешков М. Ю., Моделирование коммуникативного процесса: монография / М. Ю. Олешков. - Нижний Тагил, 2006. - 336 с.
Oleshkov M. Ju., Modelirovanie kommunikativnogo protsessa: monografija/ - Nidznij Tagil, 2006. - 336 s.
8. Brumfit, C., Language, Discourse and Literature: An Introduction.Oxford: OxfordUniversityPress.). 1985
9. Chernyavskaya V. E., Discourse of Power and Power of Discourse. Moscow/Russia: Flinta, 2006

10. Cook, G. (2001). Discourse Oxford: Oxford University Press.
11. Jwan, O. & Ong'ondo, C.O., Qualitative Research: An Introduction to Principles and Techniques. Eldoret: Moi University Press. 2011
12. Lefstein, A., & Snell, J. (2011). Professional vision and the politics of teacher learning. TEACHING AND TEACHER EDUCATION, 27(3), 505-514. <https://doi.org/10.1016/j.tate.2010.10.004>.
13. Pettela, R., Kandra, C., & Palepu, S. (2017). Discourse analysis and language teaching. Research journal of english language and literature, 5, 658-652. Retrieved from <http://www.rjelal.com/5.2.17c/648-652%20CHANDRIKA%20KANDRA.pdf>

ИГОРЬ КАРАПЕТАН - ПРОБЛЕМА ДИСКУРСИВНОГО АНАЛИЗА В ПРОЦЕССЕ ИЗУЧЕНИЯ ИНОСТРАННОГО ЯЗЫКА

Ключевые слова: *дискурс, дискурсивный анализ, экстралингвистическое знание, информационная стратегия, регулятивная стратегия, организационная стратегия, нормативная стратегия, манипулятивно-объединительная стратегия, экспрессивно-апеллятивная стратегия, контрольно-оценочная стратегия.*

В данной статье рассматривается проблема применения дискурсивного анализа в процессе обучения иностранным языкам в средней школе. Применяя процедуры дискурсивного анализа, учащиеся формируют навыки дифференциации процесса изучения языка и реальных речевых ситуаций, учатся выстраивать речь, соответствующую контексту и реальным ситуациям общения.

В статье, в частности, отмечается, что с точки зрения дискурс-анализа учебники рассматриваются в качестве дидактических инструментов педагогического дискурса. С позиций коммуникативно-познавательного подхода рассматриваются стратегии речевого поведения педагога в педагогическом дискурсе. Выделяются информативная, регулятивная, организационная, нормативно-познавательная, информативно-рассуждающая, манипулятивно-объединяющая, экспрессивно-апеллятивная, контрольно-оценочная и ряд других стратегий. С точки зрения применения личностно-ориентированных технологий обучения анализируются стратегии речевого поведения учителя. Нормативно-репрезентативные и проектные коммуникативные стратегии учебно-педагогического дискурса подвергаются компонентному

и функциональному анализу. Последний представлен на уровне стратегии переговоров и конфликтов, а также стратегии сотрудничества.

IGOR KARAPETYAN - THE PROBLEM OF DISCOURSE ANALYSIS IN TEACHING A FOREIGN LANGUAGE

Keywords: *discourse, discourse analysis, extra-linguistic knowledge, information strategy, regulatory strategy, organizational strategy, normative strategy, manipulative-unifying strategy, expressive-appeal strategy, controlling-evaluative strategy.*

This article examines the problem of using discourse analysis in the process of teaching foreign languages in secondary school. The article justifies the necessity of using discourse analysis in the process of teaching a foreign language, in the sense that by applying the procedures of discourse analysis, students can separate the language learning process from real speech situations, express themselves correctly and appropriately in the appropriate context, and real-life communication situations.

From the point of view of discourse analysis, textbooks are considered as didactic tools of pedagogical discourse. It presents from the perspective of the communicative-cognitive approach, the strategies of the teacher's verbal behavior in pedagogical discourse: informative, regulatory, organizational, normative and cognitive, informative-arguing, manipulative-unifying, expressive-appellative, controlling-evaluative, etc. It analyzes from the point of view of the application of person-centered learning technologies, the strategies of the teacher's verbal behavior in the pedagogical speech. The normative-representational and project communicative strategies of educational and pedagogical discourse are subjected to component and functional analysis. It presents at the level of negotiation strategies conflict and cooperative strategies.

**Ներկայացվել է՝
Գրախոսվել է՝**

**23.09.2023 թ.
04.10.2023 թ.**

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ПРЕПОДАВАНИЯ КИТАЙСКОГО ЯЗЫКА В АРМЯНОЯЗЫЧНОЙ АУДИТОРИИ

ЛИЛИТ АКОПЯН

Аннотация

В статье рассматриваются некоторые особенности преподавания китайского языка в вузах Армении. Отдельное внимание уделяется существующим проблемам и их влиянию на учебный процесс. Одной из наиболее ярко выраженных проблем является нехватка учебно-методической литературы на армянском языке. В статье эксплицируются также и те особенности учебного процесса, на которые специалистам, занимающимся преподаванием китайского языка в армяноязычной аудитории, рекомендуется обратить первоочередное внимание.

Ключевые слова: *китайский язык, сравнение языков, методы преподавания, нехватка пособий, составление учебников*

Введение

Стремительное экономическое развитие Китая и повышение его международного статуса способствовали «буму изучения китайского языка» во многих странах мира, и в этом отношении Армения не является исключением. На протяжении последних десятилетий вследствие активного развития двусторонних контактов и деловых отношений с Китаем интерес к изучению китайского языка в Армении продолжал неуклонно расти. Так, в Государственном университете им. В. Брюсова (Армения) китайский язык изучается как специальность и как второй иностранный язык. В магистратуре осуществляется подготовка специалистов в области перевода и педагогики. Желающих владеть языком Поднебесной становится из года в год больше.

Актуальность темы обоснована стремительным ростом числа студентов, изучающих китайский язык в вузах Армении. **Цель** исследования - выявить некоторые особенности преподавания китайского языка армяноязычным студентам Армении и выявить возможные трудности с целью их дальнейшего предотвращения. Применен **метод** сравнения, в результате которого проведен анализ некоторых типологических характеристик армянского и китайского языков, влияющих на изучение китайского языка армяноязычными студентами.

Сравнение некоторые типологических характеристик армянского и китайского языков

Нет сомнений в том, что процесс изучения любого иностранного языка требует усилий, времени и концентрации, особенно когда существует большая разница между родным языком и изучаемым иностранным языком. Если мы сравним армянский и китайский языки, то увидим, что армянский алфавит состоит из 39 букв и имеет множество звуков, которых нет в других языках, например, ը, դ, ծ и т. д. Тем самым, богатая армянская звуковая система позволяет армяноязычным студентам легче и четче произносить китайские звуки, которые и образуют слог или слово в китайском языке. Например, такие китайские инициалы, как j, zh, г, намного легче усвоить и произнести посредством сравнения с похожими звуками в армянском языке. Похожими армянскими звуками являются ծ, Բ, ր соответственно. Звуковая система китайского языка отличается использованием тонов для обозначения различий в значении между словами или слогами, которые в остальном идентичны по звучанию (т. е. имеют одинаковые согласные и гласные звуки), которая не характерна для звуковой системы армянского языка, но и не составляет больших трудностей для изучения. Китайский язык является логографическим языком, орфография которого основана на иероглифах. Армянский язык же относится к индоевропейской семье языков и выделяется в ней в особую ветвь. Для изучающих китайский язык, чей родной язык основан на алфавите, большие различия между различными системами письма естественным образом затрудняют обучение чтению и письму. Очевидно, что изучение китайского языка является совершенно уникальным процессом для студентов Армении, требующим соответствующих подходов и методов, используемых квалифицированными преподавателями. С другой стороны, не стоит забывать, что знание техник облегчает усвоение информации. Преподаватель является проводником в мир нового языка: от его подходов и методов преподавания зависит многое, в том числе мотивация студентов в качественном изучении иностранному языку.

Грамматические особенности современного китайского языка заметно отличаются от армянского языка. Например, у большинства слов нет видимых признаков части речи. Эту принадлежность можно определить только по контексту использования слова в предложении. У китайских существительных нет морфологических показателей рода, числа и падежа. Число имени существительного всегда уточняют в контексте через числительные или другие слова. Род китайцы выражают лексически: через добавление слова «мужчина» или «женщина».

Китайские глаголы не изменяют по родам и числам и не спрягают по лицам. Вид и время глагола выражают специальными суффиксами. Глаголы настоящего и будущего времени можно отличить и по отсутствию суффикса. Например, в предложении «我去商店。» использовано три иероглифа: 我 (wǒ) - я, 去 (qù) - идти, 商店 (shāngdiàn) - магазин. Китайские прилагательные также не изменяются. У них нет сравнительных форм: сравнение выражают через привлечение дополнительных слов. Современный синтаксис китайского языка характеризуется строгим порядком слов в предложении, который не допускает никаких вариаций. Соблюдать правильный порядок слов очень важно, так как от него зависит и грамматическое значение слова. Если порядок слов нарушен, смысл предложения может исказиться. Например, в предложениях «我给水。» и «给我水。» использованы три идентичных иероглифа, но ввиду разных порядков слов смысл предложения меняется. Первое предложение переводится как «Я даю воду.», а второе - «Дай/дайте мне воды».

Армянский язык же, как мы уже отметили, относится к группе индоевропейских языков. По своему происхождению он уникальный: его никак не удалось отнести к какой-либо языковой группе, так как по общепринятой классификации у него не нашлось языковых «родственников» в индоевропейской семье, в которую он входит. Грамматическая система армянского языка характеризуется несколькими типами именного словоизменения, имеет 7 падежей, 2 числа, 9 времен и 4 типа спряжения. Употребляются 8 типов склонения. Грамматический род отсутствует, то есть существительные не имеют характеристики пола. В предложениях довольно вариативная последовательность слов. Определение смысловой нагрузки влияет на месторасположение вспомогательного глагола. Он ставится следом за логически выделяемым словом. Тем самым, проведя сравнение некоторых аспектов двух языков, мы можем смело утверждать, что все перечисленные особенности также могут усложнять процесс изучения китайского языка для армяноязычных студентов.

Важность учебно-методических пособий при преподавании иностранного языка

Дж. Ричардс (2001) отмечает, что учебники являются ключевым компонентом большинства языковых программ. В некоторых ситуациях они служат основой для большей части языковой информации, которую получают учащиеся, и языковой практики, которая происходит в классе. Они могут служить основой содержания уроков, баланса преподаваемых

навыков и видов языковой практики, в которых принимают участие учащиеся. В других ситуациях учебник может служить прежде всего дополнением к инструкциям преподавателя. Для учащихся учебник может стать основным источником контакта с языком, помимо информации, предоставляемой преподавателем. В случае неопытных преподавателей учебники также могут давать идеи о том, как планировать и проводить уроки, а также о форматах, в рамках которых преподаватели могут обучать. Большая часть процесса преподавания языка, который происходит сегодня во всем мире, не могла бы осуществляться без широкого использования коммерческих учебников. Таким образом, умение использовать и адаптировать учебники является важной частью профессиональных знаний преподавателя.

Составление учебников на родном языке также является ярким доказательством того, что преподаваемый язык играет важную роль в развитии отношений между двумя странами. Чем больше мы уделяем внимание уровню и условиям образования, тем больше мы развиваем и облегчаем процесс изучения иностранного языка, тем больше мы вовлекаем людей в углубление понимания культуры и менталитета других стран. Учебник считается не только инструментом, дающим материал для обучения языку, но и инструментом предоставления информации о культуре и жизни других людей, которые могут совершенно отличаться от той, в которой живем мы.

Проблема разработки учебно-методических пособий на армянском языке

Наряду с постоянным ростом числа изучающих китайский язык в Армении, существует серьезная нехватка учебных материалов на родном языке и квалифицированных педагогических кадров, обеспечивающих качественное образование. Развитие преподавания китайского языка в Армении является сравнительно молодым процессом, следовательно, существует много пробелов в данной сфере. Крайне важно согласиться с Цз. Чжаном (2022), который утверждает, что два студента могут столкнуться с одними и теми же проблемами на протяжении всего процесса обучения. Однако причины проблем могут быть разными, поэтому преподавателям необходимо понимать различия между студентами, стараться удовлетворить их уникальные требования к обучению, а также помогать студентам улучшать навыки изучения. Тем самым, от преподавателей требуется тщательный отбор методов преподавания, которые будут соответствовать характеристикам каждого учащегося, исходя из его когнитивного уровня и способности учиться в будущей педагогической практике. Как мы уже отметили, в сфере

преподавания китайского языка насчитывается много проблем, наиболее острой из которых является проблема локализации местных преподавателей (неносителей языка) и учебных пособий.

Как известно, использование локализованных учебных материалов приводит к высокой успеваемости студентов, так как содержание уроков и проводимые мероприятия соответствуют лингво-когнитивному восприятию информации: улучшаются навыки и творческие способности, а также в качестве инновации, это позволяет удовлетворить потребности в обучении, а также может привести к глубокому пониманию Китая, карьерному росту и развитию.

Стоит отметить, что имеющиеся локализованные учебные материалы (Цао Чжимао «Китайский язык», 2009, Григорян Н., Ивченко Т. «Изучаю китайский язык», 2019 г., Арутюнян А. «Веселый китайский язык», 2022) в основном переведены и адаптированы на основе существующих иноязычных учебных материалов, которые не всегда соответствуют требованиям и особенностям армяноязычных студентов. В связи с этим Акопян Лилит и Самвелян Ася, преподаватели китайского языка Государственного университета им. В. Брюсова (Армения), которые имеют немалый опыт преподавания китайского языка в вузах Армении, составили первый «Справочник по базовой грамматике китайского языка» на армянском языке для изучающих китайский язык, который как методическое пособие вобрал в себя весь накопленный опыт и знания авторов, может применяться как на уроках грамматики, так и на уроках по базовому китайскому языку, как для студентов, так и для учеников и слушателей курсов китайского языка. Справочник состоит из 6 разделов, которые доступно и легко описывают основные грамматические единицы и конструкции с приведением соответствующих примеров.

В вузах Армении, ввиду отсутствия учебно-методических пособий на родном языке, преподаватели китайского языка вынуждены ориентироваться и проводить уроки по учебным материалам, предоставляемым на английском или русском языках. К сожалению, отсутствие учебника, составленного на родном языке, который облегчил бы учащимся понимание того, что происходит на уроке, намного усложняет работу преподавателя. Я, как преподаватель, предпочитаю составлять дополнительные упражнения и материалы для перевода, чтобы развивать соответствующие навыки студентов для успешного и продуктивного изучения китайского языка как второго иностранного. Зачастую слабое владение русским и английским языками означает непонимание перевода лексики и объяснение грамматических единиц в

учебниках, что, в свою очередь, приводит к понижению мотивации и дальнейшим сложностям.

Обучение иностранному языку неотделимо от сравнения языков, поскольку само обучение представляет собой процесс установления связи между родным языком учащегося и изучаемым языком. Первый армяноязычный справочник по базовой грамматике китайского языка не только описывает и преподносит особенности китайской грамматики, но и интерпретирует особенности китайской грамматики через армянские грамматические единицы и знакомит с общими чертами и различиями схожих грамматических структур в двух языках. С точки зрения изучающих, эффективность изучения грамматики на базовом уровне в основном зависит от преподаваемого языка. Студенты в основном полагаются на свой родной язык, чтобы эффективнее освоить правила китайской грамматики. Тем самым, мы полностью согласны с Дж. Ричардсом (2001), который отмечает, что коммерческие учебники редко можно использовать без некоторой формы адаптации, чтобы сделать их более подходящими для контекста, в котором они будут использоваться. Эта адаптация может принимать различные формы. 1. Изменение содержания. Содержание может быть изменено, поскольку оно может не подходить целевым учащимся, возможно, из-за факторов, связанных с возрастом, полом, социальным классом, профессией, религией или культурным происхождением учащихся. 2. Добавление или сокращение содержания. При добавлении или сокращении содержания учебник может содержать слишком много или слишком мало материала согласно программе обучения. Возможно, придется опустить подразделы или опустить отдельные разделы в учебнике. Курс может быть сосредоточен, в первую очередь, на навыках аудирования и разговорной речи, и, следовательно, раздел по развитию письменных навыков будет опущен. 3. Реорганизация содержания. Преподаватель может решить реорганизовать учебную программу и расположить разделы учебника в том порядке, который он считает более подходящим. Или внутри раздела преподаватель может решить не следовать последовательности содержания, а изменить их порядок по определенной причине. 4. Устранение пропусков. В тексте может не хватать элементов, которые преподаватель считает важными. Например, преподаватель может добавить к уроку словарные или грамматические упражнения. 5. Изменение задач. Возможно, потребуется изменить упражнения, чтобы придать им дополнительную направленность. Например, аудирование, направленное только на прослушивание информации, адаптировано таким образом, чтобы учащиеся слушали его во второй или третий раз с

другой целью. Или деятельность может быть расширена, чтобы предоставить возможности для более персонализированной практики. 6. Расширение заданий. Упражнения могут содержать недостаточно практики, и может потребоваться добавление дополнительных практических заданий. Данные рекомендации являются продуктивным способом и методом проведения более качественного и продуманного урока.

Для более эффективного преподавания иностранного языка необходимо составление учебно-методических пособий на родном языке. В языках постоянно происходят изменения. Преподавателям необходимо быть в курсе текущих результатов исследований, чтобы преподавать эффективно. Качество обучения в классе определяется научно обоснованными знаниями учащихся и процессов обучения. Хорошо информированные преподаватели могут оптимизировать соответствующие педагогические подходы и условия обучения для своих студентов (Wen, 2020, p.1). Уровень профессионализма преподавателя напрямую влияет на качество образования студентов. Участие в курсах повышения квалификации и профессиональных переподготовках, тематических конференциях, общение с местными и иностранными коллегами могут напрямую повлиять на качество составления необходимых материалов.

Заключение.

В результате исследования мы обнаружили, что богатая звуковая система армянского языка играет положительную роль в преподавании китайского языка армяноязычным студентам. При преподавании фонетики китайского языка армяноязычный преподаватель имеет возможность провести параллели между произнесением армянских и китайских звуков и облегчить процесс принятия и усваивания фонетического материала. Изучение китайского языка является совершенно уникальным процессом для аудитории Армении, требующим соответствующих подходов и методов, используемых квалифицированными преподавателями.

Использование локализованных учебных материалов приводит к высокой успеваемости студентов, так как содержание уроков и проводимые мероприятия соответствуют лингво-когнитивному восприятию информации: улучшаются навыки и творческие способности, а также в качестве инновации, это позволяет удовлетворить потребности в обучении, а также может привести к глубокому пониманию Китая, карьерному росту и развитию.

В наши дни изучение китайского языка является осознанной необходимостью, которая влечет за собой потребность более качественного образования, соответствующего вызовам и требованиям современного общества.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ REFERENCES

1. Հակոբյան Լ., Սամվելյան Ա. Չինարենի քերականության ձեռնարկ. – Եր.: Հեղ.հրատ., 2022. – 112 էջ.
Hakobyan L., Samvelyan A. Chinareni qerakanowt'yan d'er'nark. – Er.: Hegh.hrat., 2022. – 112 e'j, (In Armenian).
2. Richards, J. C. The Role of Textbooks in a Language Program. Cambridge, UK: Cambridge University Press. 2001 // http://www.cup.org.br/articles/articles_21.html, 20.09.2023.
3. Zhang Jiaji. Current Issues in Chinese Language Teaching. Advances in Social Science, Education and Humanities Research, vol. 637, International Conference on Education, Language and Art (ICELA 2021), Atlantis Press SARL, 2022, p. 135-138 // <https://www.atlantispress.com/proceedings/icela-21/125969794>, 20.09.2023.
4. Wen Xiaohong. The Acquisition of Chinese as a First and Second Language. Switzerland, 2020, p. 1-13 // <https://wpb.cycu.edu.tw/tcsl/wp-content/uploads/The Acquisition of Chinese as a First and Second Language.pdf> 19.09.2023.

ԼԻԼԻԹ ՀԱԿՈՔՅԱՆ - ՀԱՅԱԼԵԶՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՉԻՆԱՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆՂՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմնաբառեր՝ չինարեն, լեզուների համեմատություն, դասավանդման մեթոդներ, ձեռնարկների բացակայություն, դասագրքերի կազմում

Հոդվածում քննարկվում են Հայաստանում համալսարանականներին չինարեն սովորեցնելու որոշ առանձնահատկություններ: Վեր են հանվում այն խնդիրները, որոնք առկա են հայալեզու ուսանողներին չինարենը դասավանդելիս, դրանց դերն ու ազդեցությունը: Խնդիրների թվին է դասվում մայրենի լեզվով ուսումնամեթոդական ձեռնարկների պակասը: Հոդվածում նաև քննարկվում են այն առանձնահատկությունները, որոնց դասախոսը

պետք է ուշադրություն դարձնի չինարենը հայախոս ուսանողներին դասավանդելիս՝ հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները:

LILIT AKOPYAN - ON SOME PECULIARITIES OF TEACHING CHINESE TO ARMENIAN-SPEAKING STUDENTS

Keywords: *Chinese language, comparison of languages, teaching methods, lack of teaching materials, textbook compilation*

The article discusses some features of teaching Chinese to university students in Armenia. Main stresses are made on the problems which exist in teaching Chinese to Armenian-speaking students, their role and impact. Among problems we mention the lack of localized methodological textbooks. The article also discusses peculiarities to which a teacher should pay attention while teaching Chinese to Armenian-speaking students to meet modern challenges.

Ներկայացվել է՝ 25.09.2023 թ.
Գրախոսվել է՝ 02.10.2023 թ.

**ԱՐԱՔԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ԵՐԿՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵՉՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ
ԸՍՏ ԼԵՉՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԱՆՄԱՆ
ԱՐԴԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ (Ա1-Ա2 ՄԱԿԱՐԴԱԿ)
ՍՈՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվում են օտար լեզուների ուսուցանման արդի հայեցակարգի համատեքստում արաբերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդման սկզբունքները, ակնկալվող վերջնարդյունքները: Արաբերենը, պատկանելով սեմական լեզվաընտանիքին, ունի լեզվամտածողության և լեզվակառուցվածքի էական յուրահատկություններ: Դրանք դրսևորվում են գրի համակարգում, լեզվի բոլոր մակարդակներում, ուստի պահանջում են ուսուցանման արդյունավետ մեթոդների համալիր կիրառում:

Հոդվածում կարևորվում են նաև արաբերենի դասավանդման ընթացքում հաղորդակցական և լսողական ընկալման հմտությունների ձևավորումը և զարգացումը՝ որպես օտար լեզվի արդի ուսուցանման հայեցակարգի կարևորագույն բաղադրիչներ: Արաբերենի դասավանդումը, որպես ուսումնառության վերջնարդյունք, ներառում է Ա2+ լեզվամակարդակի համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողունակությունների համալիրը:

Հիմնաբառեր՝ լեզուների ուսուցանման արդի հայեցակարգ, «մակարդակային» մոդել, ուսուցանման «ուղիղ» կամ «բնական» մեթոդ, արաբերեն, երկրորդ օտար լեզու, ուսուցանման վերջնարդյունքներ:

Ներածություն

Նախորդ դարավերջին՝ համաշխարհայնացման հայեցակարգի ձևավորմանը զուգընթաց, աշխարհի շատ երկրներում սկսված կրթական համակարգի բարեփոխումների արդյունքում օտար լեզուների ուսուցանման համատեքստ ներմուծվեց «չափորոշիչ» («ստանդարտ») հասկացությունը: ԱՄՆ-ում դեռևս XX-րդ դ. վերջին քառորդում հրապարակվել էին «XXI դ. օտար լեզվի ուսուցանման ազգային չափորոշիչները»: Եվրոպայում մի փոքր ավելի ուշ՝ 90-ականներին, անգլերենի հիման վրա մշակվեց «Լեզուների իմացության համաեվրոպական համակարգը»՝ լեզվի իմացության, գնահատման և դասավանդման հայեցակարգ՝ Եվրամիության տարածքում գործածության

համար: 2001թ. Եվրախորհրդի կողմից եվրոպական երկրներին առաջարկվեց հիմք ընդունել այն՝ ստեղծելու եվրոպական լեզուների ուսուցանման և գնահատման ազգային համակարգեր: XXI դ. առաջին տասնամյակում, այս երկրների փորձի հիման վրա, ոչ եվրոպական երկրներում ևս (Եգիպտոս, Ճապոնիա, Ղազախստան և այլն) մշակվեցին ազգային լեզվի իմացության, գնահատման և ուսուցանման համակարգեր՝ ըստ միջազգային չափանիշների:

Օտար լեզվի իմացության միջազգային չափանիշները, ուսուցանման արդի հայեցակարգը: Օտար լեզվի իմացության միջազգային չափանիշների հիմքում «մակարդակային» մոդելն է: Այն բնութագրվում է միասնականությամբ և շարունակականությամբ՝ այդպիսով ձևավորելով ուսուցանման ողջ համակարգը: Յուրաքանչյուր լեզվամակարդակի համար սահմանվում է գիտելիքների և կարողունակությունների շրջանակ (տե՛ս <https://book.coe.int/en/blog>): Օրինակ՝ Ա1 լեզվամակարդակի բանավոր խոսքի իմացությունը պետք է ներառի հետևյալ վերջնարդյունքը. «հասկանալ և խոսքի ընթացքում գործածել ծանոթ բառեր և արտահայտություններ, ներկայանալ և ներկայացնել այլոց, հարցեր ուղղել բնակավայրի, ծանոթ մարդկանց վերաբերյալ, ինչպես նաև պատասխանել դրանց: Մասնակցել ոչ բարդ զրույցին, եթե զրուցակիցը խոսում է դանդաղ ու հստակ»:

Ինչ վերաբերում է օտար լեզուների ուսուցանման մեթոդներին, ապա դրանք բազմազան են՝ ավանդական և արդի: Ավանդական է *քերականական թարգմանության* մեթոդը, որը ձևավորվել է XIX-րդ դ. Եվրոպայում: Այս մեթոդի կիրառմամբ օտար լեզուների ուսուցանումն արդի փուլում, սակայն, այնքան էլ նպատակահարմար չէ, քանի որ այն չի ներառում բանավոր խոսքի ձևավորման և զարգացման հմտություններ: Նախորդ դարի երկրորդ կեսին ձևավորված *հաղորդակցական մեթոդի* հիմքում բանավոր հաղորդակցման հմտությունների ուսուցանումն է կայուն արտահայտությունների, կաղապարների միջոցով: Հիմնական նպատակը մտքերի արտահայտումն է՝ ասելիքի փոխանցումը, թեև հնարավոր քերականական կամ այլ սխալների առկայության պարագայում: Այս մեթոդն այժմ առավելապես կիրառվում է օտար լեզվի ուսուցանման արագացված դասընթացներում: Այն, սակայն, հիմնավոր, լիարժեք գիտելիքներ չի փոխանցում:

Նախորդ դարավերջից Արևմտյան Եվրոպայում, այնուհետև նաև ողջ աշխարհում տեղի ունեցող ինդուստրացման գործընթացներին զուգընթաց՝ յուրաքանչյուր բնագավառում կարևորվում է *կիրառական արժեք* ունեցող գիտելիքի ձեռքբերումը: Այս համատեքստում է ձևավորվում նաև օտար լեզվի ուսուցանման արդի հայեցակարգը, որի հիմքում «*ուղիղ*» կամ «*բնական*» մեթոդն է: Այն շեշտադրում է լեզվական

չորս՝ գրելու, կարդալու, ունկնդրելու և խոսելու ունակությունների ձևավորումը և համաժամանակյա, համաչափ զարգացումը: Եթե առաջին երեք լեզվական հմտությունները բովանդակային առումով հիմնականում վերաբերում են ուսուցանման ավանդական մեթոդներին՝ մատուցման եղանակների որոշակի փոփոխությամբ և արդիականացմամբ, վերջին՝ «ունկնդրում, բանավոր խոսքի ընկալում» բաժինը լեզվի ուսուցանման համակարգ է ներառվել վերջին երկու-երեք տասնամյակում՝ համաշխարհայնացման հայեցակարգի ձևավորմանը և թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ: Այժմ միջազգային չափանիշներին համապատասխան լեզվի ուսուցանման ձեռնարկներ կազմելու անհրաժեշտ պայման է բանավոր խոսքի ընկալման և զարգացման վերաբերյալ բազմազան վարժությունների ներառումը¹: Այս մեթոդաբանությունը կարևորվում է նրանով, որ լեզուն սովորելու բնական եղանակը, որը մարդն ունի, նախևառաջ այն յուրացնելն է բանավոր խոսքը լսելու, ըմբռնելու միջոցով, որը պահանջում է որոշակի կենտրոնացում և լսողական հմտությունների աստիճանական զարգացում (Բաբայան, Իսրայելյան, 2014, էջ 8): Հարկ է նշել, որ ուսուցանման սկզբնական փուլում, երբ դեռևս ձևավորված չեն համապատասխան հմտություններ, լսողական վարժությունները, պետք է ունկնդրել այնքան անգամ, որքան անհրաժեշտ է՝ այն հնարավորինս լիարժեք ընկալելու համար: Սկզբնական փուլում դա կարող է լինել չորս-հինգ անգամ, այնուհետև, աստիճանաբար նվազեցնելով, մեկ-երկու անգամի հասցնել: Հարկ է ի նկատի ունենալ, որ օտար լեզվի՝ միջազգային համարում ունեցող քննություններում բանավոր խոսքի ունկնդրումը թույլատրվում է միայն մեկ անգամ, որից հետո պետք է կատարել համապատասխան առաջադրանքները:

Վերոնշյալ մեթոդաբանությունը պետք է կիրառվի յուրաքանչյուր դասի և թեմայի համար, օտար լեզվի ուսուցանման յուրաքանչյուր մակարդակում: Բազմաթիվ առավելություններով հանդերձ, դասավանդման մեր փորձը ցույց է տվել, որ այս մեթոդի հիմնական բացթողումն այն է, որ թարգմանության վերաբերյալ վարժություններ չկան և տվյալ պարագայում չեն կարող լինել, թեև դրանք օտար լեզվի ուսուցանման կարևոր բաղադրիչներից են: Ուստի այս բացթողումը մեր կողմից լրացվում է յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ համապատասխան վարժություններ կազմելու միջոցով:

¹ Դիտարկվում են American Eanglish File, Starter, Oxford University Press, 2021 և American Eanglish File, Oxford University Press, 1, 2021 ձեռնարկները:

Արաբերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդումը՝ լեզուների ուսուցանման արդի հայեցակարգի համաձայն: Արդի մեթոդաբանությամբ կազմված՝ տարբեր լեզուների դասավանդման բազմաթիվ ձեռնարկներ կան: Հարկ է, սակայն, հաշվի առնել, որ մինևույն լեզվամակարդակի համար առաջադրվող պահանջները, լեզվական նյութի մատուցման ծավալը կարող է տարբեր լինել: Դա պայմանավորված է ուսուցանման առաջին, երկրորդ կամ երրորդ լեզու լինելու հանգամանքով, դասավանդման ժամանակացույցով, լեզվի բարդության աստիճանով², ուսանողների ընդհանուր տրամադրվածությամբ և մի շարք այլ գործոններով, որոնցով ձևավորվում են ակնկալվող վերջնարդյունքները:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում արաբերենը դասավանդվում է որպես երկրորդ օտար լեզու: Կիսամյակային երեսուներկու լսարանային ժամ ծանրաբեռնվածության պարագայում ուսումնառության վերջնարդյունքները ողջ դասընթացի համար ներառում են Ա2+ լեզվամակարդակին համապատասխան գիտելիքներ, հմտություններ և կարողունակություններ:

Արաբերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդման դեպքում նկատի են առնվում նրա մի շարք առանձնահատկություններ, որոնց ճիշտ ընկալման համար հարկ է ուսանողների շրջանում նախապատրաստական աշխատանք կատարել: Նախ, պետք է ի նկատի ունենալ, որ ի տարբերություն ուսանողների՝ մինչ այդ իմացած հիմնական օտար լեզուների (անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն և այլն), որոնք պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին և տարբեր դեպքերում գրային համակարգի, քերականության, բառապաշարի ընդհանրություններ ունեն, արաբերենը այլ՝ սեմական լեզվաընտանիքի լեզու է: Այն ունի լեզվակառուցվածքի և լեզվատառծողության տարբերություններ, որոնք դրսևորվում են գրային համակարգում, հնչյունաբանական, ձևաբանական, շարահյուսական մակարդակներում՝ այդպիսով երևան գալով լեզվի ուսուցանման բոլոր փուլերում: Նման առանձնահատկությունները պահանջում են ուսուցանման արդյունավետ մեթոդների և եղանակների համալիր կիրառում:

Ա լեզվամակարդակի դասավանդման սկզբնական փուլում ներկայացվում են արաբերենի գրի համակարգի սկզբունքները՝ աջից ձախ շարադրանքը, տառերի (հարֆերի) կապակցման եղանակները՝ ըստ բառի կազմում նրանց զբաղեցրած դիրքերի: Գրի

² Արաբերենը, ի թիվս ճապոներենի, չինարենի, հայերենի և մի շարք այլ լեզուների, ամենաբարդ՝ 4-րդ խմբում է (տե՛ս <https://effectivelanguagelearning.com/language-guide/language-difficulty>):

յուրահատկություններից են նաև բաղաձայնագիր տեսակը (գրային արտահայտում ունեն միայն բաղաձայնները), երկար և կարճ ձայնավորների տարբերությունները (երկար ձայնավորներն ունեն գրային, իսկ կարճերը՝ գրանշանային արտահայտում): Բացի այդ, մի քանի բաղաձայնաշարքեր միմյանցից տարբերվում են մեկ կետի առկայությամբ կամ բացակայությամբ (ج, ح ,خ, و , ز, د ,ذ): Այս հանգամանքը, ընդհանուր առմամբ դյուրին դարձնելով նման բաղաձայնների տարբերակումը, ուսուցման սկզբնական փուլում երբեմն շփոթության է հանգեցնում: Եթե լատինատառ գրի յուրացումը հնարավոր է համեմատաբար կարճ ժամանակաընթացքում, ապա արաբերեն գրային համակարգի ուսուցանումը, ի թիվս լեզվական այլ գիտելիքների, տեղի է ունենում չորս-հինգ թեմայի (լսարանային ութ-ինը ժամ) շրջանակներում: Պահանջվում է լսարանային և արտալսարանային երկարատև գրավոր աշխատանք՝ հարՖերի կապակցումները ճիշտ և հմուտ կատարելու համար, քանի որ արաբերեն հարՖերի մեծ մասը (28 հարՖից 22-ը), գրվում է կապակցված, և նույն հարՖը կարող է գրային երկուսից չորս իրացում ունենալ՝ պայմանավորված բառի դիրքով և հարևան հարՖերի տեսակով: Արտալսարանային աշխատանքի համար հանձնարարվում են տեսագրություններ, որոնց կիրառումը բավականին արդյունավետ է:

Արաբերենի հնչյունաբանության ուսուցանման պարագայում նկատի է առնվում, որ մի քանի հնչյունախմբեր գրեթե միանման են արտասանվում: Օրինակ՝ արաբերենի س (sin), ص (sad) և ث (ta) հնչյուններն արտասանությամբ մոտ են հայերենի ս-ին, ձ (dal), յ (zayn) և ظ (za) բաղաձայնները՝ գ-ին, ը (dal) և ض (daḍ) բաղաձայնները՝ դ-ին: Կան նաև արաբերենի հնչյունական համակարգին բնորոշ այնպիսի բաղաձայններ՝ ع (ayn), ق (qaf), որոնք ծանոթ լեզուներում համարժեքներ չունեն: Տարբերակված արտասանություն ունեն նաև կարճ և երկար ձայնավորները (երկարները գրեթե երկու անգամ երկար են արտասանվում): Հնչյունական համակարգին տիրապետելու՝ արտաբերելու, լսելու և գրելու համար դասավանդման սկզբնական փուլում դրանց հատուկ ուշադրություն է դարձվում. ուսանողները լսում են դասախոսին, աուդիո նյութեր և կրկնում հնչյունների արտաբերումը: Հնչյունաբանության ուսուցանումը կարևոր նշանակություն ունի, քանի որ այն անհրաժեշտ է լսողական և արտասանական հմտությունների ճիշտ ձևավորման և զարգացման համար: Հարկ է նշել, որ փոքր-ինչ բարդություն է առաջանում ع (ayn) և ق (qaf) հարՖերի դեպքում, որոնց ճիշտ արտաբերումը պահանջում է արտասանական բազմակի վարժանքների կատարում:

Արաբերենի ձևաբանության էական հատկանիշներից է խոսքիմասային եռախումբ դասակարգումը՝ անուն, բայ, մասնիկ: Անվանը

հատուկ են սեռի, թվի, հոլովի քերականական կարգերը: Սեռի քերականական կարգը շատ լեզուներում քերականորեն արտահայտված ցուցիչ չունի, այլ կերպ ասած՝ անունը քերականական սեռ չունի, այն միայն իմաստային է: Մինչդեռ արաբերենում քերականական սեռը բնորոշ է գոյականին, ածականին, թվականին, դերանվանը (անձնական, ցուցական): Ընդ որում, սեռի քերականական կարգի արտահայտումը ոչ բոլոր դեպքերում է համապատասխանում նրա իմաստին: Իրանիշ գոյականների պարագայում, օրինակ, համաձայնեցումը կատարվում է քերականական իգական սեռի ցուցիչով: Օրինակ՝ *kutub katira* «շատ գրքեր» և այլն:

Թվի քերականական կարգում, ի թիվս եզակիի և հոգնակիի, քերականական ցուցիչ ունի նաև երկակին՝ երկու անձ, առարկա անվանելու համար: Օրինակ՝ *ṭālibāni* «երկու ուսանող», *kitābtāni* «երկու գիրք» և այլն:

Հոլովի քերականական կարգը ներառում է երեք հոլովներ՝ ուղիղ, խնդրառական և հարակցական: Խնդրառական դիրքով դրվում են հայերենին համապատասխանող ուղիղ խնդիրը և հանգման անուղղակի խնդիրը, որոնք համարժեք են սեռական-տրական հոլովներին: Մյուս հոլովական նշանակություններն արտահայտվում են հարակցական մասնիկների կամ նախդիրների միջոցով: Օրինակ՝ բացառական հոլովի իմաստն արտահայտվում է *min* (-ից), ներգոյական հոլովի իմաստը՝ *fi* (-ում) նախդիրների միջոցով. **min-** *al-bayt* «տնից», **fi-** *al-bayt* «տանը» և այլն:

Արաբերենում խոսքի մասերի համաձայնեցումը տիպաբանական հատկանիշ է: Համաձայնեցվում են անվան քերականական կարգում ընդգրկված բոլոր միավորները՝ գոյականը, ածականը, թվականը, դերանունը: Գոյականը և ածականը, գոյականը և դասական թվականը, կազմելով որոշային կապակցություններ, քերականական սեռով համաձայնեցվում են: Օրինակ՝ *madina jāmīla* «գեղեցիկ քաղաք», *al-ḡurfā al-xāmisa* «հինգերորդ սենյակը»: Քանակական թվականի դեպքում համաձայնեցումն առավել բազմաշերտ է՝ պայմանավորված միավորների, տասնավորների և մյուս խմբերով: Միավորների դեպքում թվականը դրվում է հաշվելի գոյականի հակառակ սեռով: Օրինակ՝ *xamsa kutub* «հինգ գիրք»:

Արաբերենի ձևաբանության այս առանձնահատկությունները հանգամանորեն պարզաբանվում, ամրապնդվում են գրավոր և բանավոր վարժությունների միջոցով: Անուն խոսքի մասի մեջ ներառվող միավորների համաձայնեցումը երբեմն ընկալման դժվարություններ է առաջացնում:

Արաբերենում բային հատուկ են ժամանակի (ներկա, անցյալ, ապառնի), բայասեռի (ներգործական, կրավորական), սեռի, դեմքի, թվի (եզակի, երկակի, հոգնակի), խոնարհման քերականական կարգերը: Ա լեզվամակարդակում ուսուցանվում են բայի հիմնական ժամանակաձևերի կազմություններն ու նշանակությունները, կանոնավոր և անկանոն բայերի խոնարհման առանձնահատկությունները: Դեմքի և թվի քերականական կարգերը բայական համակարգում ևս ուժեղ են արտահայտված, մասնավորապես՝ արական և իգական սեռերի ցուցային տարբերակում ունի ոչ միայն երրորդ, այլ նաև՝ երկրորդ դեմքը *katabta* «գրեցիր» (ար.ս.), *katabti* «գրեցիր» (իգ.ս.): Բայական համակարգի խոնարհման հարացույցում եզակիի և հոգնակիի հետ միաժամանակ երկրորդ և երրորդ դեմքերի համար տարբերակում ունի նաև երկակի թիվը, որը երկրորդ դեմքում սեռով պայմանավորված ցուցիչ չունի, իսկ երրորդում ունի:

Ընդհանուր առմամբ, Ա(Ա1-Ա2) լեզվամակարդակի քերականության բաժինը ներառում է արաբերենի հնչյունաբանությունը, ուղղագրության, ուղղախոսության օրինաչափությունները, ձևաբանական և շարահյուսական հասկացությունների առավել հիմնական կազմը: Սա քերականական այն անհրաժեշտ բազան է, որի հիման վրա և դրա յուրացմանը զուգահեռ զարգացվում են լեզվական մյուս հմտությունները:

Օտար լեզվի ուսուցանման և արդյունավետ յուրացման արդի փուլում պարտադիր պայման է ունկնդրումը՝ ուսանողի լսողական հմտությունների ձևավորման, աստիճանական զարգացման նպատակով: Արաբերեն խոսքի ունկնդրումը սկսվում է պարզագույն լսողական վարժություններից՝ հարձերի (հնչյունների) արտաբերումից, քանի որ, ինչպես վերը նշեցինք, մի շարք հնչյունախմբեր գրեթե նույն արտասանությունն ունեն, ուստի այս վարժությունների կիրառումն անհրաժեշտ է ուսուցման ամենասկզբից: Հաջորդը նոր բառերի, տեքստերի ունկնդրման փուլն է: Լսողական հմտությունների զարգացման մյուս փուլում անցած բազային նյութի շրջանակներում տրվում են անձանոթ, ոչ երկար տեքստեր և երկխոսություններ: Ունկնդրումից հետո պետք է պատասխանել հարցերին, նշել՝ ճի՞շտ է տրված տեղեկությունը, թե՞ ոչ, առավել զարգացած լսողական ընկալման փուլում փորձել վերարտադրել ունկնդրած խոսքը՝ հնարավորինս շատ տեղեկություն փոխանցելով:

Լսողական հմտությունների զարգացումը պարտադիր է ամեն դասաժամի համար: Հիմնական բարդություններն այս առումով պայմանավորված են անձանոթ բառերի հնչյունական կազմի ճիշտ ընկալման և վերարտադրման, ինչպես նաև՝ ունկնդրումը մեկից ավելի անգամներ կատարելու հետ, ինչը ուսուցանման սկզբնական փուլի

համար ընդունելի է, թեև հարկ է նկատի ունենալ, որ աստիճանաբար միևնույն նյութի ունկնդրումների քանակը պետք է նվազեցնել՝ հասցնելով մեկ-երկուսի: Լսողական հմտությունների արդյունավետ զարգացման համար կարևորվում են ոչ միայն լեզվական՝ քերականական, բառապաշարային գիտելիքների առկայությունը, աստիճանաբար արագացող խոսքի տեմպը, հետաքրքիր, մոտիվացնող լեզվական նյութի ընդգրկումը, այլ նաև արտալեզվական մի շարք գործոններ՝ ուսանողի հոգեբանական վիճակը, կենտրոնացվածության աստիճանը, ունկնդրման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները, կողմնակի աղմուկի բացակայության անհրաժեշտությունը և այլն:

Ա լեզվամակարդակի արաբերեն խոսքի ընկալման համար տրվում են երեքից հինգ թույլ տևողությամբ տեքստեր:

Ինչ վերաբերում է բառապաշարին, ապա այն ներառում է Ա լեզվամակարդակի համար անհրաժեշտ, օտար լեզվի ուսուցանման միջազգային չափանիշներին համապատասխան թեմատիկ ուղղվածությունը, որն ընդգրկում է 1800-2000 բառային միավոր:

Քանի որ ուսուցանման վերջնարդյունքների համատեքստում կարևորվում են ոչ միայն գիտելիքները, այլ նաև՝ հմտություններն ու կարողունակությունները, այսինքն՝ ձեռք բերված բազային գիտելիքների կիրառելիությունը, այս առումով համընթաց զարգացվում են գրավոր և բանավոր հաղորդակցական ունակությունները: Որպես վերջնարդյունք՝ ուսանողը պետք է կարողանա վերոնշյալ թեմաների և բառապաշարի շրջանակներում վարել իրադրային զրույցներ և երկխոսություններ, գրել էսսեներ, նամակներ, շարադրություններ:

Եզրակացություն

Այսպիսով, հիմք ընդունելով մեր կողմից արաբերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդման փորձը, կարող ենք նշել, որ այն առավելապես կազմակերպվում է օտար լեզվի արդի ուսուցանման հայեցակարգի համաձայն: Բազմաթիվ առավելություններով հանդերձ, սկզբնական փուլի համար դրա ոչ այնքան արդյունավետ տարրերից է միալեզու ուսուցանումը և թարգմանչական վարժությունների բացակայությունը: Միալեզու ուսուցանման առավելությունը լսողական հմտությունների զարգացումն է բնական պայմաններում, սակայն մեր կարծիքով այն ավելի նպատակահարմար է կիրառել աստիճանաբար: Ինչ վերաբերում է թարգմանական վարժություններին, դրանք կազմվում և տրվում են հընթացս՝ յուրաքանչյուր թեմային համապատասխան:

Հաշվի են առնվում արաբերենի՝ սեմական լեզվաընտանիքին պատկանելու և դրանով պայմանավորված առանձնահատկությունները: Հաճախ ծանոթ լեզուների հետ զուգադրումը տարբերությունները վերհանելու և արձանագրելու միջոց է:

Տեսական գիտելիքների ձեռքբերումից բացի՝ հաղորդակցական-կիրառական կարողունակությունների և հմտությունների ապահովումը ևս օտար լեզվի ուսումնառության վերջնարդյունքների կարևոր և անհրաժեշտ բաղադրիչներից է: Այն կատարվում է ունկնդրման, բանավոր և գրավոր խոսքի զարգացման, իրադրային զրույց-երկխոսությունների միջոցով:

Արաբերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդումը կիսամյակային երեսուներկու ժամ տևողությամբ, որպես ուսումնառության վերջնարդյունք ներառում է Ա2+ լեզվամակարդակի համար առաջադրվող գիտելիքների, կարողունակությունների և հմտությունների համալիրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCE

1. Բաբայան Ա., Իսրայելյան Ա., Օտար լեզվով բանավոր խոսքի ընկալման հմտությունների մեթոդական ուղեցույց, Ե., 2014
Babayan A., Israyelyan A., O'tar lezvov banavor xosqi y'nkalman hmtowt'yowneri met'odakan owghecowyc, E., 2014
2. Տոնիկյան Ս., Յովսեփեան Ս., «Սովորում ենք արաբերեն». (սկսնակ A1 մակարդակ), Ե., 2020
Tonikyan S., Yovse'p'ean S., «Sovorowm enq araberen». (sksnak A1 makardak), E., 2020
3. Էլոյան Ա., Տոնիկյան Ս., Խոսե՞նք արաբերեն (սկսնակ A2 մակարդակ), Ե., 2020:
E'loyan A., Tonikyan S., Xosenq araberen (sksnak A2 makardak), E., 2020
4. American English File, Starter, Third edition, Oxford University Press, 2021
5. American English File, 1, Third edition, Oxford University Press, 2021
6. <https://effectivelanguagelearning.com/language-guide/language-difficulty>
7. سلسلة في تعليم اللغة العربية لغير الناطقين بها، الأساسي، التكلم، 2015،

СОНА МИКАЕЛЯН - ПРЕПОДАВАНИЕ АРАБСКОГО КАК ВТОРОГО ИНОСТРАННОГО ЯЗЫКА В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОЙ КОНЦЕПЦИИ ОБУЧЕНИЯ ЯЗЫКУ (УРОВНИ А1-А2)

Ключевые слова: Современная концепция преподавания языка, “уровневая модель”, “прямой” или естественный метод обучения, арабский язык, второй иностранный язык, ожидаемые результаты обучения.

В статье представлены несколько как традиционных, так и современных методов обучения иностранным языкам, отмечены их особенности и целесообразность применения.

В контексте современной концепции обучения иностранным языкам представлены принципы, особенности и ожидаемые результаты обучения арабскому как второму иностранному языку.

В процессе обучения учитываются особенности, свойственные арабскому языку и проявляющиеся на всех языковых уровнях. Отмечается, что сопоставление является способом выявления соответствующих дифференциальных и интегральных признаков знакомых учащимся языков.

SONA MIKAYELYAN - TEACHING ARABIC AS A SECOND FOREIGN LANGUAGE IN ACCORDANCE WITH MODERN CONCEPT OF LANGUAGE TEACHING (A1-A2 LEVELS)

Keywords: modern concept of language teaching, "level" model, "direct" or natural teaching method, Arabic, second foreign language, learning outcomes.

The article presents several traditional and modern methods of teaching foreign languages, their features and appropriate use.

In the context of the modern concept of language teaching, the principles, features and learning outcomes of teaching Arabic as a second foreign language are presented.

During teaching, due to the fact that Arabic is a language of different linguistic thinking, features characteristic of language levels are taken into account.

Often comparing with familiar languages is a way of highlighting and fixing differences.

Ներկայացվել է՝ 12.09.2023 թ.
Գրախոսվել է՝ 12.10.2023 թ.

**ԹՎԱՅԻՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ**

ԼԻԼՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվել են բանկային մարքեթինգի թվային վերափոխման միտումները, վերլուծվել է թվային մարքեթինգի արդի վիճակը ՀՀ առևտրային բանկերում, մասնավորապես ՀՀ մի շարք առևտրային բանկերի կողմից կիրառվող թվային մարքեթինգի գործիքների և մեթոդների համեմատական վերլուծություն է իրականացվել, բացահայտվել են հայաստանյան առևտրային բանկերում թվային մարքեթինգի առկա հիմնախնդիրները և հետագա զարգացման հնարավորությունները:

Հիմնաբառեր՝ թվային մարքեթինգ, առևտրային բանկ, բանկային մարքեթինգ, սոցիալական մեդիա մարքեթինգ, թվային բանկ:

Ներածություն

Ժամանակակից կյանքը հատկանշվում է տնտեսության, կառավարման համակարգերի և բիզնես գործընթացների մեջ փոփոխությունների ներմուծմամբ աշխարհի բոլոր երկրներում, երբ ջնջվում են հին, սովորական ուրվագծերն ու հասկացությունները, միևնույն ժամանակ առաջանում են նոր հարացույցներ և սկզբունքներ: Կարճ ժամանակահատվածում ստեղծվեցին «ինտերնետ» բիզնեսներ, և կազմակերպությունները սկսեցին իրար հետ մրցել թվային աշխարհում: Այդ կազմակերպությունների շարքին դասվեցին նաև առևտրային բանկերը: ՀՀ առևտրային բանկերը անհրաժեշտաբար սկսեցին փոխել իրենց ռազմավարությունը՝ պրոդուկտամետ քաղաքականությունից անցնելով հաճախորդամետ քաղաքականության՝ գերակա դարձնելով հաճախորդների որակյալ սպասարկումը, հաճախորդների ներգրավումը և նրանց հավատարմության բարձրացումը: Միևնույն ժամանակ տեխնոլոգիական հեղափոխությունը ևս ստիպեց բանկերին վերանայել իրենց քաղաքականությունը ծառայությունների մատուցման և հաճախորդների ներգրավման գործում: Այս օրերին մարդիկ, նախապատվություն տալով ինտերնետային ծառայություններին, ընտրում են այն բանկերը, որոնք առաջարկում են իրենց նոր և թվային լուծումներ: Այսպիսով, հետազոտության թեմայի արդիականությունը

պայմանավորված է հաճախորդ-բանկ հարաբերությունների կառավարման արդյունավետության բարձրացման գործընթացում նոր մարքեթինգային մոտեցումների մշակման անհրաժեշտությամբ, մասնավորապես՝ թվային մարքեթինգի ներդրմամբ և զարգացմամբ, ինչը այս նոր տեխնոլոգիական ժամանակաշրջանում ավելի է կապում հաճախորդին բանկի հետ, քան ավանդական մարքեթինգային հնարքները:

Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել թվային մարքեթինգի զարգացման առանձնահատկությունները ՀՀ առևտրային բանկերում:

Նշված նպատակի իրականացման համար դրվել են հետևյալ խնդիրները.

- մարքեթինգի ժամանակակից հայեցակարգերի վերլուծության հիման վրա բացահայտել թվային մարքեթինգի առանձնահատկությունները, մոտեցումները և գործիքները առևտրային բանկերում,
- ֆոկուս խմբային քննարկման միջոցով վերհանել «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջի հիմնական թերությունները,
- կոնտենտ վերլուծության հիման վրա գնահատել ՀՀ մի շարք առևտրային բանկերի, մասնավորապես՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի զբաղեցրած դիրքը որոնողական համակարգերում և սոցիալական ցանցերում,
- հարցաթերթիկային հարցման միջոցով բացահայտել հաճախորդների ընդհանուր տեղեկացվածությունը «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի և իր մատուցած ծառայությունների վերաբերյալ,
- առաջարկել թվային մարքեթինգի զարգացման ուղիներ ՀՀ առևտրային բանկերում «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի օրինակով:

Հետազոտության ընթացքում կիրառվել են քանակական, մասնավորապես՝ հարցաթերթիկային հարցման և որակական, մասնավորապես՝ գրականության վերլուծության, կոնտենտ վերլուծության, ֆոկուս խմբի, համեմատության մեթոդներ:

Հետազոտությունում ներկայացված առաջարկությունները, հիմնական դրույթներն ու արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ առևտրային բանկերի, այդ թվում՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի կողմից թվային մարքեթինգի ոլորտում առկա հիմնախնդիրները հաղթահարելու և նոր մոտեցումների ներդրման գործընթացում:

Բանկային մարքեթինգի թվային վերափոխումը

Բիզնեսը ունի միայն երկու գործառույթ՝ մարքեթինգը և նորարարությունը (Sudha, 2019, p. 1051): Գոյություն ունի մարքեթինգի շուրջ 2000 սահմանում: Օրինակ, ըստ Ֆիլիպ Կոտլերի «Մարքեթինգը ընկերության համար շահավետ տարբերակով մարդկանց

պահանջմունքների բավարարման և վերարտադրության գործընթացն է» (Զաքարյան, 2013, էջ 15):

Բանկային մարքեթինգը բանկային գործունեության կառավարման համակարգ է մարքեթինգի ընդհանուր գաղափարախոսության շրջանակում: Բանկային մարքեթինգը գործունեություն է, որի միջոցով բացահայտվում են բանկային ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջմունքները և բավարարվում են դրանք՝ շահույթ ստանալու ակնկալիքով: Բանկային մարքեթինգի առարկա են հանդիսանում բանկի ներսում և դրանից դուրս՝ ֆինանսական շուկայի միկրոտնտեսական մակարդակում իրականացվող գործընթացները:

Բանկային մարքեթինգի օբյեկտներն են առևտրային բանկերը և դրա մարքեթինգային բաժինները, մարքեթինգային ֆիրմաները, մարքեթթլոգները, ինչպես նաև հաճախորդները՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք: Ուսումնասիրման օբյեկտներն են բանկային ծառայությունների խմբերը, մրցակիցները, բանկային ծառայությունների սպառողները, հաղորդակցման և իրացման համակարգերը, սպառողական պահանջարկի դինամիկան և միտումները, թվային ուղիները:

Բանկային ոլորտում մարքեթինգի հիմնական գործառույթներն են (Հայրապետյան, 2003, էջ 10).

- շրջակա միջավայրի վերլուծությունն ու շուկաների վերաբերյալ տեղեկատվության հավաքումը,
- ապրանքային տեսականու պլանավորումն ու կառավարումը,
- բանկային ծառայությունների նկատմամբ գների սահմանումն ու կարգավորումը,
- սպառողական պահանջարկի կառավարումը,
- ծառայությունների իրացման պլանավորումը, կազմակերպումը, խթանումը,
- սոցիալական պատասխանատվության ապահովումը:

Բիզնեսի այս կամ այն ոլորտի գոյությունը պայմանավորված է սպառողների առկայությամբ: Աշխարհի խոշորագույն ընկերությունների ուշադրության կենտրոնում սպառողն է, և դրանց գործունեությունն ուղղված է սպառողների փոփոխվող կարիքներին արձագանքելուն և արդյունավետ բարելավելուն: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր ընկերության, այդ թվում նաև բանկի մարքեթինգային գործունեությունը սկսվում է սպառողների ուսումնասիրմամբ և վերջանում է սպառողի պահանջմունքների բավարարմամբ:

Սպառողների պահանջմունքները բավարարելու համար պետք է հասկանալ, թե ինչ է նշանակում «բավարարել սպառողին»: Սպառողի բավարարված լինելը կախված է նրանից, թե որքանով է մատուցվող

ծառայությունների իրական որակը համընկնում սպառողի սպասելիքների հետ կամ գերազանցում դրանք:

Մարքեթինգային համալիրի կարևորագույն տարրերից է մարքեթինգային խթանման համակարգը կամ մարքեթինգային կոմունիկացիաների համակարգը: Սպառողների վրա առավել արդյունավետ ազդելու համար ընդհանուր մարքեթինգային ռազմավարության շրջանակներում մշակվում է կոմունիկացիոն ռազմավարությունը:

Խթանման համակարգի յուրաքանչյուր տարրին բնորոշ են դրան հատուկ մեթոդները և եղանակները, բայց բոլորը հետապնդում են մեկ նպատակ՝ աջակցել բանկի հիմնական ռազմավարության հաջող իրագործմանը:

Բանկի որոշ ղեկավարներ դեռևս մարքեթինգը դիտում են որպես ապրանքանիշի իրազեկման միջոց ավանդական ուղիներով: Թվայնացումը աստիճանաբար փոխում է այս ընկալումը՝ ընդլայնելով շուկայավարման չափերը: Թեև այժմ շատերն օգտագործում են նոր գործիքներ և տեխնիկա՝ հասանելիության բարելավման, հաճախորդների ներգրավվածության և, որ ավելի կարևոր է՝ բիզնեսի նոր մակարդակի հասնելու համար, շուկայավարողներից շատերը դեռ փորձում են հասկանալ, թե ինչ է նշանակում «լինել թվային» (DeLaCastro, Vaidyanathan, Shankar, 2016, p. 2): Հեռուստատեսության շարունակական տարածման պայմաններում առևտրային բանկերը մշակում են իրենց ռազմավարությունը, որն ուղղված է հաճախորդների հավատարմության ամրապնդմանը և ծառայությունների մասին իրազեկմանը: Բանկի մասնաճյուղերում հաճախորդներին սպասարկելու ծախսերը խաթարում են շահութաբերությունը այն ժամանակ, երբ ավելի ու ավելի շատ հաճախորդներ նախընտրում են միանալ առցանց և ներգրավվել ինքնասպասարկման միջոցով: Դա հանգեցրել է ներգրավվածության և բաշխման նոր մոդելների ստեղծմանը, որոնցից ստացված շահույթը բանկը կարողանում է օգտագործել մարքեթինգային նոր միջոցառումներ իրականացնելու համար:

Մրցակցային բիզնես միջավայրում կազմակերպությունները փորձում են հնարավորինս լավ հասնել իրենց հաճախորդներին, և դա պահանջում է, որ այդ ընկերությունները մշակեն այնպիսի ռազմավարություններ, որոնք կստեղծեն հաճախորդների բավարարվածություն, արժեք և հավատարմություն (Madhu Bala, Mr. Deepak Verma, 2018, p. 323): Առևտրային բանկի՝ շրջակա միջավայրի մարտահրավերներին արագ և պատշաճ արձագանքելու ունակությունը մեծապես կախված է տեղեկատվական համակարգերի կառավարումից՝ արտացոլելու բիզնես իրավիճակի հոյսերը, երազանքները և

իրողությունները: Գործարարների պատասխանատվության զգալի մասը ընկնում է իրենց ստեղծագործական ունակությունների վրա, որոնք պայմանավորված են նոր գիտելիքներով և տեղեկություններով: Հետևաբար առևտրային բանկերում կարևոր դեր են խաղում թվային շուկայավարման ռազմավարությունները՝ նոր ապրանքներ և ծառայություններ մշակելու և բիզնես գործընթացները վերափոխելու և վերաձևակերպելու, ընթացիկ փոփոխություններին համապատասխանելու համար (Machado, Carolina, Davim, J. Paulo, 2016, p. 38): Առևտրային բանկերի կողմից օգտագործվող մարքեթինգային թվային պլատֆորմները շարժական են: Դրանցից են օրինակ՝ հավելվածների ռազմավարությունը, սոցիալական լրատվամիջոցները, կայքի ձևավորումը/մշակումը, առցանց գովազդը, վահանակները և էլ. փոստով շուկայավարումը (Nganga, 2015, p. 3):

Թվային մարքեթինգի ռազմավարությունը հնարավորություն է տալիս առևտրային բանկերին կապ հաստատել արտերկրում գտնվող հաճախորդների հետ, անհատականացնել խթանումը, իրականացնել ճկուն գնագոյացում, պահպանել գործարքների ցածր գինը: Միևնույն ժամանակ այն հնարավորություն է տալիս հաճախորդներին օգտվել շուրջօրյա սպասարկման պլատֆորմներից, առցանց տեխնիկական աջակցության առկայությունից, հարցումների արագ արձագանքումից, արտադրանքի և գների մասին տեղեկատվության հասանելիությունից, հետևել գործարքին, նվազեցնել թվային ապրանքներ ու ծառայություններ ստանալու սպասելաժամանակը, սպասարկման ընթացքում իրենց ներկայության անհրաժեշտությունը:

Թվային ապրանքների և ծառայությունների ինտերնետային շուկայավարումը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ամենակարևոր զարգացումներից է: Մարքեթոլոգները այլևս չեն կարող ձևացնել, որ փոփոխվող շուկայավարման միտումները չեն ազդում իրենց գործունեության վրա՝ հետևելով հնագույն մարքեթինգային մեթոդներին, որոնք այլևս վավեր չեն: Թվային մարքեթինգի աճը եզակի մարտահրավեր է նետել ինչպես շուկայավարման, այնպես էլ տեղեկատվական համակարգերի կառավարման համար (Jomer, 2020): Տեղեկատվական տեխնոլոգիաների աճը հսկայական ներուժ ունի, քանի որ այն իջեցնում է արտադրանքի և ծառայությունների մատուցման ծախսերը և ընդլայնում է աշխարհագրական սահմանները՝ գնորդներին և վաճառողներին միավորելու հարցում: Ավելին, համացանցը օգտագործվում է գովազդի համար, օրինակ, տեղեկատվության տարածումը էլեկտրոնային փոստով, պաստառներով և վիրուսային շուկայավարմամբ կամ գործընկերային գովազդի միջոցով:

Բանկերը, օգտագործելով թվային մարքեթինգը, կարող են.

- սոցիալական ներկայություն ապահովել,
- հետևել մրցակիցներին,
- վերլուծել հաճախորդների վարքագիծը,
- ուսումնասիրել շուկան,
- օգտվել բջջային ծրագրերից:

Ներկայացնենք այն թվային գործիքները, որը բանկը օգտագործում է իր թվային մարքեթինգը իրականացնելու համար (Soniya, Santhosh Raja, 2018, p. 169-171).

1. Որոնողական օպտիմալացում (SEO: Search Engine Optimization): Որոնողական առաջխաղացումը դա կայքի հետ կապված համալիր միջոցառումներ են, որոնք ուղղված են Google որոնողական համակարգում որոշակի հարցումների դեպքում կայքի առաջնային հորիզոնականներ զբաղեցնելուն: Որքան բարձր է տվյալ կայքի դիրքը Google-ի որոնման արդյունքում, բնականաբար այնքան բարձր է այցելուի կողմից հենց այդ կայք մուտք գործելու հավանականությունը: Թվային մարքեթինգը մարքեթինգի այն տեսակն է, որը ընկերությունը և ապրանքը դարձնում է հայտնի ամբողջ աշխարհով (Ramya, 2019, p. 3): Հետևաբար կարող ենք ասել, որ անկախ բիզնեսի տեսակից, SEO-ն ամենահուսալի միջոցն է որոնողական համակարգում «երթևեկության» մասին տեղեկատվություն ստանալու համար: SEO-ն ապահովում է կայքի տեսանելիությունը համացանցում: Առցանց բանկային համակարգի առաջացման պատճառով, այն ֆինանսական կառույցների համար շատ ավելի կարևոր է, քան տեղական այլ կազմակերպությունների համար: SEO-ն համարվում է լուրջ մրցակցային գործիք ֆինանսական հաստատությունների համար: SEO-ն բանկին տալիս է ավելի կայուն շարժ, փոխարկման ավելի բարձր տեմպեր և ավելի բարձր ROI (Return on Investment):

Ընկերության վեբ կայք այցելելու համար կան բազմաթիվ մեթոդներ, որոնցից որոշները ավելի լավ են աշխատում, քան մյուսները: Այդ մեթոդների շարքին են դասվում.

- օրգանականը (որոնիչներից),
- հղումները (այլ կայքերից, էլփոստի տեղեկագրերից և այլն),
- սոցիալական ցանցերը (Facebook, Twitter և սոցիալական լրատվամիջոցների այլ հարթակներ),
- վճարովի միջոցները (Google գովազդներ, ցուցադրվող գովազդներ և վճարովի այլ աղբյուրներ),
- ուղղակի մեթոդները (երբ մարդիկ մուտքագրում են կայքի URL-ն),
- SEO-ն, որը ամենակայուն աղբյուրն է: Այն ավելի երկար ժամանակահատվածում կբերի մեծ «երթևեկություն», քան այլ մեթոդները:

Գոյություն ունեն մի քանի քայլեր, որոնց միջոցով SEO-ն դառնում է առավել արդյունավետ: Ներկայացնենք դրանցից հիմնականները.

- Հիմնաբառեր (Keyword research): Հիմնաբառերն այն բառերը և արտահայտություններն են, որոնք այցելուները մուտքագրում են որոնողական համակարգերում, երբ նրանք փնտրում են ծառայություն կամ որևէ հարցի պատասխան:

- Ինտերնետային SEO (On-page SEO): Ինտերնետային SEO կառուցելու համար անհրաժեշտ է անցնել հետևյալ քայլերով (Williams, 2020).

- ✓ Հղումների կառուցում (URL): Պատշաճ կառուցվածքով URL օգնում է որոնիչներին հասկանալ կայքը: Յուրաքանչյուր էջի URL ստեղծելու ժամանակ պետք է նրանում ընդգրկել այդ էջի հիմնաբառերը, կարևոր տեղեկատվությունը՝ առանց URL-ի գերբեռնվածության:

- ✓ Վերնագրային նշման օպտիմալացում (Optimize Title Tags): Վերնագրի նշանը անհատական էջի վերնագիր է, քանի որ այն հայտնվում է որոնման արդյունքների մեջ:

- Մետա նկարագիր (Meta Description): Մետա նկարագիրը այն կարճ պարբերությունն է, որը հայտնվում է որոնիչի արդյունքների էջում՝ վերնագրային նշումի տակ: Սա հնարավորություն է բանալի բառ ներառելու, տալու օգտագործողին գաղափար այն մասին, թե ինչ կարող է գտնել, եթե այցելի ընկերության վեբ կայք:

- Վերնագրային պիտակներ (Heading Tags): Լինում են H1, H2, H3:

- էջի կառուցվածք (Page Body): Ընկերության էջն է ինքնին, որը պետք է լինի հստակ և հասկանալի այցելողի աչքի համար:

- Ներքին և արտաքին հղումներ (Internal and External Linking): Ներքին են համարվում այն հղումները, որոնք վեբ կայքի մի էջից անցում են կատարում մեկ այլ էջին, իսկ արտաքինը այն հղումներն են, որոնք կապված են մեկ այլ ընկերության էջի հետ:

- Նկարներ (Images): Պատկերներ օգտագործելը լրացուցիչ հնարավորություններ է տալիս բանալի բառեր ներառելու համար և դարձնում է ներկայացվող բովանդակությունը ավելի պատկերավոր:

- Սոցիալական ցանցերի ներառում (Social Media Sharing): Սոցիալական ցանցերի հետ համագործակցելը ևս հնարավորություն է ապահովել դեպի ընկերության վեբ էջ այցելություն: Այն նաև այցելուներին ներգրավված դարձնելու համար լավ միջոց է հանդիսանում:

- Տեղական SEO (Local SEO): Ընկերության կայքի մասին առցանց և ոչ առցանց տեղեկությունները որոշում են որոնման համակարգերում բիզնեսի դասակարգումը:

- Հղումներ (Link building): Հղումների կառուցումը դրականորեն է

ազդում կայքի SEO-ի վրա, քանի որ մեկ այլ կայքէջից հղում ստանալը Google-ին և մյուս որոնիչներին ասում է, որ տվյալ կայքում պարունակությունը բարձրորակ, համապատասխան և տեղեկատվական է:

2. Սոցիալական մեդիա մարքեթինգ (SMM: social media marketing): Սոցիալական ցանցերում առաջխաղացման և վաճառքի գործընթացը անվանում են սոցիալական մեդիա մարքեթինգ (ՍՄՄ): ՍՄՄ-ը ներառում է տեխնոլոգիաներ, գործիքներ, մեթոդներ, որոնք նախատեսված են սոցիալական ցանցերում բրենդի առաջխաղացման, վաճառքների ավելացման համար (DeLaCastro, Vaidyanathan, Shankar, 2016, p. 47): ՍՄՄ-ի հիմնական խնդիրներն են բրենդի առաջխաղացումը, կայքի հաճախելության մեծացումը, հաճախորդների հավատարմության նվաճումը և վաճառքը:

Սոցիալական ցանցերում արդյունավետ աշխատանքի հիմնական սկզբունքներն են (Միրաքյան, 2015).

- Երկխոսություն հաճախորդների հետ: Սոցիալական ցանցը պետք է միջոց հանդիսանա հաճախորդներին երկխոսության հրավիրելու, հարցեր քննարկելու, հարցերին պատասխանելու համար: Հայաստանում հաճախ սոցիալական ցանցերն օգտագործվում են «չոր» տեղեկատվության տարածման համար, ինչը ծայրահեղ անարդյունավետ է:

- Ոչ մի սպամ: Սոցիալական ցանցերում չի կարելի գործել սպամի տարածման սկզբունքներով՝ տարածել տեղեկատվություն այն մարդկանց, ում դա պետք չէ, տարածել առանց լսարանի համաձայնության, չհապահովել երկխոսություն և այլն:

- Գտնել ընկերության հաճախորդին: ՍՄՄ-ի խնդիրն է գտնել նրանց, ում հետաքրքրում է ընկերության ապրանքը կամ ծառայությունը ու անմիջապես նրան առաջարկություն անել: Այսինքն՝ ՍՄՄ-ը հնարավորություն է տալիս հնարավորինս մոտ լինել թիրախային լսարանին:

- Մեծ քննարկումների կազմակերպում: Քննարկումներն արդյունավետ են, երբ կազմակերպվում են ինչ-որ ինֆորմացիոն առիթի համատեքստում կամ ոլորտում հայտնի փորձագետի, հեղինակության մասնակցությամբ:

- Վստահության ձևավորում: Հաճախորդի տեսանկյունից ապրանքի դրական կողմերը ներկայացնելու, վստահություն ձևավորելու տարբերակներից է հարց տալ, թե ինչո՞ւ են օգտվում ընկերության ապրանքից կամ նմանատիպ մի բան: Այսպիսի հարցերին գերազանց մեծամասնությամբ պատասխանում են նրանք, ովքեր դրական կարծիք

ունեն ապրանքի մասին, ինչը դիտորդի դերում գտվող երրորդ կողմի մոտ վստահություն է առաջացնում:

- Էներգիա վատնել որակյալ կոնտենտի, ոչ թե անորակ քանակության վրա: Քանի որ ՍՄՄ-ի գլխավոր խնդիրն է անհրաժեշտ թեմայով հետաքրքրված լսարան գտնելը, ապա ավելի կարևոր է էներգիա ծախսել խմբի կամ էջի որակյալ բովանդակության ձևավորման վրա (ինչը մեխանիկորեն իր շուրջը կհավաքի թեմայով հետաքրքրված լսարանին), ոչ թե մեծ թվով «like» հավաքել, որոնց մի մասը չգործող, կեղծ հաշիվներ են (profile), իսկ մի մասին՝ թեման չի հետաքրքրում:

- Հետաքրքիր տեղեկատվությունը պետք է գերակշռի բրենդը ներկայացնող նյութերին: Հիմնական բովանդակությունը լսարանին հետաքրքրող նյութերը պետք է լինեն, և միայն 20-30 տոկոսը՝ գովազդ ու պրոդուկտի ներկայացում:

- Սոցիալական ցանցերը նույնպես ընկերության փաթեթավորուման մասն են: Այս պարագայում շատ կարևոր է, թե ով է վարում էջը, ինչպե՞ս է պատասխանում հաճախորդների հարցերին (հայերեն, թե լատինատառ, արագ, թե դանդաղ, ողջունելով, թե առանց ողջույնի և այլն), ինչպե՞ս է սպասարկում հետաքրքրված լսարանին, ի՞նչ լուսանկարներ ու նյութեր են տարածվում էջով, ի՞նչ դիզայն ունի խումբը և այլն: Սոցիալական ցանցում խումբ հիմնելիս առաջին բանը կոնտենտի ռազմավարության մշակումն է: Կոնտենտ տեղադրելիս անհրաժեշտ է հիշել, որ լուսանկարն ավելի լավ է, քան միայն տեքստը, վիդեոն ավելի լավ է, քան միայն լուսանկարը: Այսինքն, հնարավորության դեպքում առաջնահերթությունը տեսանյութերին պետք է տալ, իսկ եթե տեսանյութեր չկան՝ նյութերին կցել լուսանկարներ: Եթե մեծ հոդված ենք ցանկանում տեղադրել, ապա կարելի է մեկ պարբերությունը տեղադրել՝ շարունակությունը հղումով կարդալու հնարավորությամբ:

3. Էլ. փոստ մարքեթինգ (Email marketing): Երբ ցանկանում ենք ինչ-որ բան հաղորդել մեր ապրանքանիշի մասին կամ վաճառել մեր ապրանքը, ապա էլ. փոստ մարքեթինգը դա կատարելու ամենաարդյունավետ միջոցներից մեկն է: Մենք կունենանք ամենաբարձր ROI, երբ կառուցում և պահպանում ենք ներգրավված բաժանորդների ցուցակ՝ կազմված այն մարդկանցից, ովքեր ցանկանում են ստանալ կամ նպատակահարմար են մեր հաղորդագրությունների համար: Էլ. փոստ մարքեթինգը օգնում է ընկերությանը իրականացնել ինչպես թիրախավորված, այնպես էլ անհատականացված մարքեթինգ: Էլ. փոստի համար թիրախային շուկա պետք է գտնել ընկերության կամ դրա մրցակիցների հաճախորդների բազայից, իսկ փոստային բազա գնելը շատ հաճախ հանգեցնում է փոստային սպամերի, ինչը ցանկալի ակնկալիք չէ էլ. փոստով մարքեթինգ կատարողների համար: Էլ. փոստ

մարքեթինգը նպատակահարմար և արդյունավետ գործիք է B2B (business to business) շուկայի համար: Բանկը էլ. փոստով կարող է առաջարկներ անել իր կորպորատիվ հաճախորդներին և մտնել նրանց հետ երկխոսության մեջ: Էլ. փոստով մարքեթինգ անելը ինտերնետ մարքեթինգի ամենաքիչ ծախսատար և հեշտ մարքեթինգի տեսակն է համարվում:

4. Բովանդակության մարքեթինգ (Content marketing): Բովանդակության մարքեթինգը ռազմավարական մարքեթինգային մոտեցում է, որը կենտրոնացած է արժեքավոր, համապատասխան և հետևողական բովանդակության ստեղծման և տարածման վրա՝ հստակ սահմանված լսարաններ գրավելու և պահպանելու համար, նաև հաճախորդին շահավետ գործողությունների մղման համար (Swieczak, 2012, p. 133): Ի տարբերություն թվային մարքեթինգի այլ ձևերի, բովանդակության մարքեթինգը նոր պահանջարկ ստեղծելու փոխարեն հենվում է արդեն իսկ իրազեկ հաճախորդներին բավարարելու վրա: Ըստ Օ'Բրայենի «Շուկայի գաղափարը այն է, որ ապրանքանիշը պետք է արժեքավոր բան տա, որպեսզի դրա դիմաց արժեքավոր ինչ-որ բան ստանա: Առևտրի փոխարեն պետք է լինի ներկայացում՝ խաղարկային պատմություն» (O'Brien, 2012):

5. PPC մարքեթինգ (PPC: Pay-Per-Click Marketing): PPC-ն ինտերնետային մարքեթինգի այնպիսի մոդել է, որում գովազդատուները վճարում են յուրաքանչյուր անգամ, երբ հաճախորդը կտտացնում է իրենց գովազդներից մեկը (Larry, 2020): Ըստ էության, դա ընկերության կայք այցելություններ գնելու միջոց է: Երբ PPC-ն աշխատում է ճիշտ, վճարը չնչին է, քանի որ այցն արժե ավելին, քան այն, ինչ վճարում եք դրա համար: Google Ads-ը աշխարհում ամենատարածված PPC գովազդային համակարգն է: Գովազդային պլատֆորմը բիզնեսին հնարավորություն է տալիս ստեղծել գովազդներ, որոնք հայտնվում են Google-ի որոնման համակարգում:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ տնտեսության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը ստիպում է բանկերին վերանայել իրենց քաղաքականությունը հաճախորդների ներգրավման, սպասարկման որակի բարձրացման գործում՝ առաջարկելով առկա և պոտենցյալ հաճախորդներին բանկային ծառայությունների և դրանց առաջխաղացման նոր և ժամանակակից լուծումներ: Ներկա տեղեկատվական ժամանակաշրջանում բանկերը փորձում են այդ լուծումները գտնել հեռահար սպասարկման մեջ և իրենց առաջարկած ծառայությունները դարձնել հեռահար օգտագործման, ինչպես նաև կիրառել թվային ուղիներ այդ ծառայությունները առաջխաղացնելու և հանրությանը իրազեկ պահելու համար:

Թվային մարքեթինգի կիրառման համեմատական վերլուծությունը ՀՀ առևտրային բանկերում

Այժմ ՀՀ-ում գործում են 18 առևտրային բանկեր, որոնք միմյանցից տարբերվում են ոչ միայն իրենց մատուցած ծառայություններով, այլ նաև դրանց առաջխաղացման եղանակներով: Բանկերի միջև մրցակցության սրումը բանկերին ստիպեց վերանայել իրենց կողմից տրամադրվող ծառայությունների տեսականին և որակը: Ներկայումս հաճախորդները ավելի շատ հակված են այնպիսի հարաբերությունների ստեղծմանը, որոնք ուղեկցվում են տեխնոլոգիական փոփոխություններով: Բանկային պրակտիկայում մեծ տարածում են գտել համացանցով և հեռախոսով բանկային ծառայությունների մատուցումը, որոնք հանդես են գալիս որպես հաճախորդներին հեռավորության վրա սպասարկման ժամանակակից ծառայություններ:

Հետազոտության շրջանակներում իրականացվել է «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի մարքեթինգային քաղաքականության, մասնավորապես բանկի թվային մարքեթինգի արդի վիճակի և զարգացման հնարավորությունների վերլուծություն: Իրականացվել է նաև ստացված արդյունքների համեմատական վերլուծություն ՀՀ-ում գործող այլ առևտրային բանկերի հետ:

Էվոկաբանկն արագ, պարզ և նորարար ծառայություններ մատուցող բանկ է, որն առանձնանում է տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում մոբայլ ծառայությունների զարգացմանը: Բանկի տեսլականն է. «Լինել ամենանորարար և առաջադեմ բանկային ծառայություններ մատուցող ֆինանսական հաստատությունը Հայաստանում, որի բոլոր ծառայություններից հնարավոր կլինի օգտվել առանց բանկ այցելելու»:

Բանկը հիմնադրվել է 1990 թ. և մինչև 2017 թ. գործել է «Պրոմեթևս» և «Պրոմեթեյ Բանկ» անուններով: 2015 թ.-ին ներդրվել է «Prometey Mobile» բջջային հավելվածը և իրականացվել է հավելվածի՝ Իվետա Մուկույանի մասնակցությամբ գովազդային արշավը, որի շրջանակներում թողարկվել է հատուկ բրենդավորված քարտ: Նույն թվականին գործարկվել է նաև «Prometey Token» անվտանգության բջջային հավելվածն App Store-ում և Play Market-ում: 2016 թ.-ին Բանկը փոխեց իր կազմակերպաիրավական ձևը՝ վերակազմավորվելով ՍՊԸ-ից ՓԲԸ-ի, իսկ 2017 թ.-ին Բանկը վերանվանվեց Էվոկաբանկի՝ փոխելով իր ռազմավարությունը և բիզնես մոդելը՝ անցնելով «mobile-first» ֆորմատի և ներկայացնելով իր «SingleTOUCH» օնլայն վարկատեսակը: 2018 թ.-ին Էվոկաբանկը երկրորդ տարին անընդմեջ Global Finance հեղինակավոր ամսագրի կողմից ճանաչվեց «Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում» (նորություններ բաժին, 2018): Նույն թվականին Բանկը

կազմակերպեց բացօթյա տոնական համերգ: 2019 թ. Բանկը դարձավ Եվրատեսիլ 2019-ի հեռարձակման գլխավոր հովանավոր: 2020թ. Բանկը շարունակեց զարգացնել իր թվային ուղիներով ծառայությունների և մարքեթինգային քայլերի մատուցումը՝ COVID-19-ով պայմանավորված: Global Finance-ը հայտարարել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում 2023 թվականի լավագույն թվային բանկերի մրցանակաբաշխության հաղթողներին, ըստ որի, Էվոկաբանկը ճանաչվել է՝ «Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում 2023», «Լավագույն սպառողական մոբայլ բանկային հավելվածը Հայաստանում 2023», «Լավագույն կորպորատիվ թվային բանկը Հայաստանում 2023», «Լավագույն ՓՄՁ բանկը Հայաստանում 2023» (նորություններ բաժին, 2023): Այս ամենին Բանկը հասել է իր կառավարման ոճի, թիմայնության և թիմում առկա արժեքների շնորհիվ (ազնվություն, նորարարություն, հուսալիություն, թափանցիկություն, հաճախորդների վստահություն, հարմարավետություն, գործարար հեղինակություն, թիմային ոգի):

Այժմ անդրադառնալով «Էվոկաբանկ» մարքեթինգին՝ նախ և առաջ խոսենք Բանկի լոգոյից: Բանկի լոգոն կազմված է «evolution»՝ էվոլյուցիա բառի արմատից և նմանեցված է «evoke»՝ զարթնեցնել բառին: Բառի երկրորդ տառը՝ V-ն, պատկերված է կորացված անկյուններով հավասարակողմ եռանկյան տեսքով և նմանեցված է դեպի աջ և վեր ուղղված սլաքի տեսքով՝ խարդիրդանշելով Բանկի ձգտումը դեպի առաջընթաց: Բանկի կորպորատիվ գույներն են՝ սպիտակը (խորհրդանշում է նորը), մոխրագույնը (խորհրդանշում է նորագույն տեխնոլոգիաների կիրառումը) և մանուշակագույնը (խորհրդանշում է երիտասարդություն, ստեղծարարություն և նորարարություն):

Բանկի մարքեթինգային գործունեության խնդիրները վեր հանելու համար հետազոտության ընթացքում քանակական և որակական մեթոդներով իրականացվել է վերլուծություն, որի արդյունքները ներկայացված են ստորև:

«Էվոկաբանկ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջը ուսումնասիրելու համար իրականացվել է կայքէջի կոնտենտ վերլուծություն և կազմվել հինգ հոգուց բաղկացած ֆոկուս խումբ: «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի կայքէջը համեմատվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կայքէջերի հետ: Որպես ֆոկուս խմբի անդամներ ընտրվել են Էվոկաբանկի մեկ աշխատակից, նշված և ոչ մի բանկերում հաշիվներ չունեցող երկու մասնակից, հայաստանյան բանկային համակարգի հետ երբևէ առնչություն չունեցող օտարերկրացի և թվային մարքեթինգի մեկ մասնագետ (նշենք, որ մասնակիցների անունները հրապարակման ենթակա չեն): Մասնակիցներին ուղարկվել են

քննարկվող հարցերը էլեկտրոնային եղանակով, քննարկումը կազմակերպվել է առցանց:

Քննարկման արդյունքներից կարող ենք անել այն հետևությունը, որ Էվոկաբանկի պաշտոնական կայքէջը հասանելի, պարզ և վստահելի է միայն իր բանկի աշխատակցի և մասնագետի համար, քանի որ ոչ մի հարցի քննարկման շուրջ մասնակիցներից և ոչ մեկը, բացառության Էվոկաբանկի աշխատակցի և մասնագետի, չեն ընտրել տվյալ բանկի կայքէջը: Այս քննարկման արդյունքներից եզրակացնում ենք, որ կայքէջով առաջատարը Ամերիաբանկն է, ընդ որում գրեթե բոլոր հարցերի շրջանակներում օտարերկրացի մասնակիցը ընտրել է Ամերիաբանկը, ինչից կարող ենք հասկանալ, որ էջում առկա թե՛ բովանդակությունը, թե՛ դիզայնը հարմար և պարզ է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայի համար: Բանկի պաշտոնական կայքէջը բանկի հեռահար ներկայացուցչական մարմինն է հանդիսանում հանրության համար, ինչպես նաև թվային մարքեթինգի իրականացման թվային ուղիներից մեկը: Այստեղ ներկայացված նյութը բովանդակային և տեղադրվածության առումով պետք է լինի հեշտ ընկալելի և հասկանալի, հավաստի՝ լի նորություններով և թարմացումներով, ինչպես նաև վստահություն ներշնչող: Էվոկաբանկի կայքէջը գունային է և նորաճ՝ մյուս կայքէջերի համեմատ, ունի ավելի թվային լուծումներ, սակայն ըստ քննարկման արդյունքների տեսնում ենք, որ այն հարմարավետ չէ և կայքում երկար մնալը հոգնեցնում է այցելուին: «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն պետք է զարգացնի իր կայքէջի կոնտենտը՝ դարձնելով այն ավելի հաճախորդամետ և գրավիչ, որն ավելի մեծ հնարավորություններ կստեղծի նոր հաճախորդներ ներգրավելու համար:

Հետազոտության ընթացքում իրականացվել է «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի SEO-ի և PPC-ի վերլուծություն, որի արդյունքները համեմատվել է ՀՀ առևտրային մի քանի այլ բանկերի հետ: SEO և PPC վերլուծությունները իրականացվել է Google, Yandex որոնողական համակարգերում՝ «ինկոգնիտո» ռեժիմը միացված տարբերակով, և Play Market, App Store հարթակներում: Արդյունքների ճշգրտության մեջ համոզվելու համար նույն որոնումը իրականացվել է տարբեր օգտատերերի համակարգիչներով: «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի որոնման արդյունքները համեմատվել են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի և «Արդշինբանկ» ՓԲԸ-ի արդյունքների հետ: Ամփոփելով արդյունքները՝ նշենք, որ քսանմեկ պայմանական որոնումներից վեցում «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն չի հայտնվում որոնողական համակարգերի առաջին էջում, իսկ չորսում՝ բավականին զիջում է իր դիրքերը մյուս բանկերի համեմատ: Ոչ բավարար արդյունքները վերաբերվում են հիմնականում «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի հեռահար ծառայություններին, ինչը ավելի ակնառու է դառնում

Play Market և App Store հարթակներում, որտեղ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի «մոբայլ բանկինգ» ծառայությունը դառնում է տեսանելի, երբ որոնումը իրականացվում է «evoca», «evocabank», «evocatouch» բանալի բառերով: «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն SEO և PPC օգտագործել է իր ստանդարտ ծառայությունները, ինչպիսիք են ավանդը, ավտովարկը, հիփոթեքային վարկը առաջխաղացնելու համար, ինչպես նաև որոնողական համակարգում հանդես գալու ՀՀ թվային բանկ կարգավիճակով:

Հետազոտության շրջանակում «Էվոկաբանկի» SMM վերլուծության համար որպես սոցիալական ցանցեր ընտրվել են Instagram-ը և Facebook-ը:

Ստացված արդյունքների համեմատական վերլուծություն է իրականացվել վերոնշյալ երեք բանկերի հետ:

«Էվոկաբանկ» ՓԲԸ-ն իրականացնում է ակտիվ գործունեություն Instagram սոցիալական ցանցում՝ գրանցելով դրականորեն տարբերվող ցուցանիշներ այլ բանկերի համեմատ՝ ունենալով թե՛ մեծ թվով հետևողներ (followers), թե՛ փոստեր (posts), թե՛ հավանումներ (likes): Միևնույն ժամանակ այս ցուցանիշները պայմանավորված են Բանկի կողմից կիրառվող SMM-ով, որը հիմնականում իրականացվում է վճարովի առաջխաղացմամբ (sponsored), էջի դիզայնը կայուն պահելու նպատակով հավելյալ նկարների ներբեռմամբ, ինչն էլ իր հերթին արհեստականորեն աճեցնում է փոստերի քանակը՝ ապահովելով էջի ակտիվությունը և հաճախակի տեսանելիությունը Instagram օգտատերերի մոտ: Վերլուծելով այդ փոստերը՝ կարող ենք տեսնել, որ շատ հաճախ բովանդակային առումով նույն գրառումներն են հրապարակվում: «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի փոստերի բովանդակությունը պարունակում է ինչպես իր բանկի ծառայությունները, վերաբերում է իր աշխատակիցների աշխատանքային օրվան, իր մշակույթին, իրականացրած հովանավորություններին, ծրագրերին, այնպես էլ անմիջականորեն չի առնչվում բանկի հետ, օրինակ՝ Բանկի լոգոյով կամ կորպորատիվ գույներով որևէ պատկեր կամ «Ի՞նչ դիտել այսօր» խորագրով նկար և այլն: «Էվոկաբանկ»-ն իր էջում ունի նաև «highlighter»-ներ, որոնցում պահպանվում են նախկինում արված 24 ժամյա պատմությունները, որոնք կրկնվում են նաև էջի փոստերում: Բանկը Instagram-ի իր էջում որպես թիրախային խումբ ընտրել է երիտասարդներին՝ 18-30 տարիքային խմբին, և իր մարքեթինգային գործողությունները ուղղում է իրենց: Մյուս երեք բանկերի մոտ ևս առկա է վճարովի առաջխաղացում, բայց ոչ այդքան հաճախակի, իսկ փոստերը հիմնականում վերաբերվում են Բանկի ծառայություններին, նորություններին:

Վերլուծելով նաև վերոնշյալ բանկերի «hashtag»-երը և «check-in»-երը՝ տեսնում ենք, որ այստեղ ևս առաջատար է «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն:

«#evocabank» «hashtag»-ը հիմնականում նշվել է Բանկի աշխատակիցների և հայկական շոուբիզնեսում ճանաչում գտած անձանց կողմից: «Էվոկաբանկ»-ի բոլոր գովազդներում նկարահանվում է Իվետա Մուկուչյանը, ով իր էջերում, համերգների ու հաղորդումների ժամանակ նշում է Բանկի անվանումը, որը կարելի է համարել Բանկի՝ հաջողված PR արշավ: «Evocabank» «check-in»-ը մեծամասամբ նշվել է տվյալ Բանկի կողմից, Բանկի աշխատակիցների կողմից և Իվետա Մուկուչյանի նորությունների էջով:

«Էվոկաբանկ» ՓԲԸ-ի SMM քաղաքականությունն ամբողջական ուսումնասիրելու համար հետազոտվել է նաև Բանկի Facebook սոցիալական ցանցը՝ համեմատելով իր Instagram էջի հետ: Facebook-ի էջի գունային երանգները, ընդհանուր դիզայնը և ներկայացվող փոստերի բովանդակությունը համապատասխանում են Instagram-ի էջի հետ: Սոցիալական երկու ցանցերում էլ առկա են նույն փոստերը և փոստերի ներբեռման նույն հաճախականությունը: Համեմատելով Facebook և Instagram սոցիալական ցանցերի օգտվողների թիվը և տարիքային ու հետաքրքրությունների տարբերությունները՝ տեսնում ենք, որ Facebook-ում «Էվոկաբանկ»-ի հետևողների (followers), հավանումների (likes) և մեկնաբանությունների (comments) թվերը անհամեմատ մեծ են: «Էվոկաբանկ»-ի Facebook էջի միջոցով այցելողը կարող է հեշտությամբ անցում կատարել Բանկի թե՛ պաշտոնական էջին, թե՛ Instagram-ի էջին: Facebook-ի իր էջում Բանկը հակիրճ ներկայացնում է իր պատմությունը՝ նշելով իր առաքելությունը, տեսլականը, տեսահոլովակների միջոցով ներկայացնելով վիճակագրություն: Ինչպես մյուս Բանկերի էջերում, այստեղ նույնպես կարող ենք տեսնել նկարների, տեսահոլովակների, այլ փոստերի առանձնացված թղթապանակներ: «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն իր Facebook էջում ունի «Shop» և «Note» բաժինները, որոնք բացակայում են համեմատվող վերոնշյալ բանկերի էջերում: «Shop» բաժնում տեղադրված են Բանկի քարտատեսակները և յուրաքանչյուրն ընտրելիս (click) անցում ես կատարում կայքէջի տվյալ պրոդուկտի սակագնային բաժին: «Note» բաժինը ավելի ժամանցային, կրթական և ներգրավողական բնույթ է կրում:

Հանրության իրազեկվածությունը, վերաբերմունքն ու կարծիքը «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի և իր առաջարկած ծառայությունների վերաբերյալ պարզելու նպատակով հետազոտության շրջանակում իրականացվել է նաև հարցաթերթիկային հարցում: Հարցումը մասնակցել են 18-65 տարիքային խմբին պատկանող 201 մասնակից: Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք փաստել, որ «Էվոկաբանկ»-ը ոչ միայն ՋԼՄ-ների, ամսագրերի, այլ նաև հանրության աչքերով է հավակնում է լինել թվային բանկ: Բանկը իրականացնում է մարքեթինգ թվային տարբեր

ուղիներով, բայց ռեսպոնդենտների որոշ պատասխաններից կարող ենք եզրակացնել, որ Բանկի կողմից թվային մարքեթինգի գործիքակազմի կիրառումը հաճախորդների մոտ հիմնականում որպես տեղեկատվության աղբյուր է ընկալվում և նրանց քիչ տոկոսն է մասնաճյուղ գնալու փոխարեն նախընտրում հեռահար և թվային ծառայությունները, ինչպես նաև հարցվողներից (Բանկի հաճախորդ չհանդիսացող) քչերի մոտ է առաջանում ցանկություն դառնալ «Էվոկաբանկ»-ի հաճախորդ:

Այսպիսով, ՀՀ առևտրային բանկերը իրականացնում են թվային մարքեթինգի տարբեր հնարքներ: ՀՀ-ում գործող մի շարք առևտրային բանկերի՝ մասնավորապես «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի, «Ինտեկոբանկ» ՓԲԸ-ի, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից կիրառվող թվային մարքեթինգի գործիքների համեմատական վերլուծության արդյունքում փորձեցինք բացահայտել թվային մարքեթինգի զարգացման առանձնահատկությունները և հիմնական միտումները ՀՀ բանկային համակարգում:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացությունների.

- Ժամանակակից տնտեսությունում ծառայությունների առավել դինամիկ զարգացող ոլորտը բանկային ծառայություններն են, ինչը պայմանավորված է ֆինանսական շուկաների և բանկային ոլորտի աննախադեպ աճով:

- ՀՀ առևտրային բանկերը, շարժվելով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց, սկսեցին մատուցել ծառայություններ, որոնք կապված են համացանցով աշխատող ժամանակակից տեխնոլոգիաների հետ: Վերջին մի քանի տարիներին նաև ակնառու դարձան ՀՀ առևտրային բանկերի կողմից իրականացվող թվային մարքեթինգը: Հայաստանյան գրեթե բոլոր բանկերի ավանդական մարքեթինգին փոխարինելու եկան թվային ուղիներով իրականացվող մարքեթինգը՝ ելնելով շուկայի պահանջարկից:

- «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն ակտիվ կերպով իրականացնում է թվային մարքեթինգ՝ առաջնորդելով իր ծառայությունները և՛ իր պաշտոնական կայքէջով, և՛ էլեկտրոնային հասցեի, և՛ սոցիալական ցանցերի միջոցով: Բանկը իրականացնում է թե՛ օրգանական (SEO, content marketing), թե՛ ոչ օրգանական (PPC, sponsored) առաջխաղացման ձևեր: «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի թվային բոլոր ուղիներով իրականացված մարքեթինգային քայլերը վերլուծելով՝ եկել ենք այն եզրահանգման, որ Բանկը հիմնականում նախընտրում է իրականացնել վճարովի /ոչ օրգանական առաջխաղացում, իսկ Բանկի սոցիալական ցանցերում առկա նկարներից պարզ է դառնում, որ Բանկը այստեղ ևս մեծ գումարներ է ծախսում:

Այսինքն, կարող ենք ասել, որ Բանկը հնարավորինս այնպես է անում, որ սոցիալական ցանցերում և իր պաշտոնական էջով անընդհատ լինի հանրության աչքի առջև: Իսկ որքանով են այդ ծախսերը արդարացված: Հետազոտության շրջանակներում իրականացված հարցումների և այլ վերլուծությունների արդյունքում տեսնում ենք, որ Բանկի կողմից իրականացված մարքեթինգը լիարժեք չի ծառայում իր նպատակին, քանի որ կրում է ավելի շատ տեղեկատվական, քան ներգրավողական բնույթ:

- Ֆոկուս խմբի շրջանակներում քննարկումից պարզ դարձավ, որ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի պաշտոնական էջը վստահելի և հետաքրքիր էջ է միայն Էվոկաբանկի աշխատակցի և թվային մարքեթինգի մասնագետի տեսանկյունից: Այստեղից կարող ենք անել հետևություն, որ Բանկի կայքէջը ոչ ճիշտ ձևով է ներկայանում հանրությանը և բովանդակապես հասանելի է հիմնականում իր ներքին անձնակազմի համար, ովքեր արդեն իսկ տեղյակ են Բանկի պրոդուկտներից ու նոր բան բացահայտելու կարիք չունեն և մասնագետի համար, ով կարող է ավելի պրոֆեսիոնալ աչքերով նայել և կողմնորոշվել, իսկ շուկայի մյուս սեգմենտների համար, որոնք հանդիսանում են Բանկի բուն թիրախային խումբը, կայքէջը այդքան էլ պարզ և հարմարավետ չէ:

- Որոնողական համակարգերում «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն ոչ այդքան բարեհաջող է դիրքավորված՝ շատ դեպքերում զիջելով այլ բանկերի զբաղեցրած դիրքերին կամ անգամ չհայտնվելով որոնողական համակարգի առաջին էջում:

- Ըստ հարցման արդյունքների՝ հարցվողների մեկ չորրորդ մասն է օգտվում «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի ծառայություններից, ովքեր և գոհ են Բանկի մատուցած ծառայությունների որակից: Բանկի հաճախորդ չհանդիսացող մասնակիցները Բանկի նորություններին ծանոթանում են հիմնականում թվային ուղիներով և ըստ հարցաթերթիկի պատասխանների տեսնում ենք, որ Բանկը հանրության աչքերով հավակնում է լինելու թվային:

Հետազոտության արդյունքում ներկայացվել են մի շարք առաջարկություններ.

- Յուրաքանչյուր անձնավորություն այսօր օգտվում է «Google» կամ «Yandex» որոնողական համակարգերից և ինֆորմացիա գտնելու, և իր խնդրին արագ լուծում տալու համար՝ որոնումը իրականացնելով մի քանի բանալի բառերով: «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի խնդիրն այդ որոնողական համակարգերում առաջատար դիրք զբաղեցնելն է, որի արդյունքում կհայտնվի որոնողների աչքի առջև ավելի շուտ, քան մյուս բանկերը, որը կհանգեցնի իր կայք այցելողների թվի ավելացմանը (որպես կանոն որոնողները այցելում են որոնողական համակարգում հայտնված առաջին մի քանի էջերը): Որոնողական համակարգերում առաջատար դիրք

զբաղեցնելու համար Էվոկաբանկը պետք է ուժեղացնի իր SEO-ն և PPC-ն, իր Meta tag-ում ներառի ավելի շատ բանալի բառեր (keyword):

- Որոնողական համակարգում որոնում իրականացնելիս որոնողները այցելում են այն էջերը, որոնք հայտնվում են այդ համակարգերի առաջին էջում, և այստեղ շատ կարևոր է այն հանգամանքը, որ այդ էջը կարողանա մի քանի վայրկյանների ընթացքում գրավել և երկար ժամանակ պահել որոնողին իր կայքէջում: «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի խնդիրը կայանում է նրանում, որ իր պաշտոնական էջը հարմար է և գրավիչ հիմնականում իր աշխատակիցների և փորձագետների աչքերով: Որպես խնդրի լուծում առաջարկում ենք իրականացնել որոշ փոփոխություններ, օրինակ՝ գունային գամայի մի փոքր բացացում, որի արդյունքուն հոգնեցուցիչ չի լինի կայքում երկար մնալը, կարևոր բաժինների առանձնացում, բովանդակության պարզեցում և անհմացիաների այնպիսի կազմակերպում, որը այցելողի ուշադրությունը կկենտրոնացնի դեպի կարևոր առաջարկը: Բանկը կարող է նաև իր կայքէջի միջոցով ապահովել ինչպես դեպի սոցիալական ցանցերում, Youtube-ում առկա իր էջերին անցումը, այնպես էլ անցումը դեպի իր թվային պրոդուկտներ, այդ թվում նաև Play Market կամ App Store հարթակներ՝ «տեղում վաճառք» իրականացնելու համար:

- Սոցիալական ցանցերում «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն վարում է ակտիվ գործունեություն՝ հաճախակի հանդես գալով նորություններով կամ երիտասարդությանը հետաքրքրող փոստերով: Բանկի մարքեթինգի թիմը ավելի շատ պետք է կենտրոնանա բանկի թիրախային խմբի վրա և կատարի վաճառք սոցիալական ցանցերի միջոցով: Հանրությունը մեր օրերում ծախսում է իր օրվա ժամանակի մեծ մասը, թերթելով իր սոցիալական ցանցերի նորությունները և իրականացնելով գնումներ այդտեղ առկա որոշ էջերի միջոցով՝ հավելյալ չայցելելով այդ էջերի պաշտոնական կայքէջերը: Էվոկաբանկը ևս պետք է օգտնվի այդ հանգամանքից՝ իր էջերում ավելացնելով վաճառքի գործիքներ, այլ կերպ ասած դարձնելով իր սոցիալական էջերը «օնլայն մասնաճյուղեր»: Որպես այդպիսի գործիք կարող է հանդես գալ Instagram սոցիալական ցանցում շատ հաճախակի օգտագործվող «Story»-ի «swipe up»-ը, որի միջոցով դիտորդը անմիջապես անցում կկատարի Էվոկաբանկ ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջի համապատասխան պրոդուկտի էջը և կկատարի իր գնումը առանց երկար մտածելու կամ համեմատելու այլ նմանատիպ պրոդուկտների հետ: Նույն հնարքը կարող է իրականացվել Facebook սոցիալական ցանցի միջոցով: Էվոկաբանկը Facebook-ի իր էջում արդեն իսկ ունի «Shop» բաժինը, որտեղ ներկայացված են Բանկի քարտատեսակներն իրենց համապատասխան սակագներով և առանձնահատկություններով, որոնց վրա սեղմելիս դիտորդը անցում է

կատարում Բանկի պաշտոնական կայքէջի տվյալ պրոդուկտի սակագնային բաժինը, և որից հետո միայն այցելողը պետք է կայքում փնտրի գնում կատարելու համար համապատասխան հատվածը՝ իր օնլայն գնումը ավարտին հասցնելու համար, ինչը ոչ այդքան հարմար է և հեշտ հաճախորդի տեսանկյունից: Այստեղ նույնպես Բանկը կարող է կա՛մ ապահովել անցումը դեպի իր կայքէջի գնման բաժինը, քանի որ հաճախորդը Facebook-ի միջոցով արդեն իսկ տեղեկացվել է պրոդուկտին, կա՛մ Facebook-ում անմիջապես գնում իրականացնելու հնարավորություն ստեղծի՝ կրկին կատարելով «տեղում վաճառք»: Նույնը կարող է իրականացնել իր պրոդուկտների փոստերը վճարովի եղանակով առաջխաղացման ժամանակ՝ առաջացնելով դիտորդների մոտ հետաքրքրվածություն և այդ հետաքրքրվածության ազդեցության վրա ապահովելով անմիջապես գնման հնարավորություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Հայրապետյան Ն., Բանկային մարքեթինգ, Երևան, 2003
Hayrapetyan N., Bankayin marketing, Yerevan, 2003 (In Armenian)
2. Մարքեթինգի հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ/ Ա.Ե. Զաքարյան, Շ.Ս. Սահակյան, Ա.Վ. Գրիգորյան, Ն.Ժ. Ղուկասյան, Է.Շ. Սահակյան,/ Խմբ.՝ Ա.Ե. Զաքարյան. – Եր.: Տնտեսագետ, 2013
Marketingi himunqner: Usumnakan dzernark/ A.E. Zaqaryan, Sh.S. Sahakyan, A.V. Grigoryan, N.Zh. Ghukasyan, E.Sh. Sahakyan,/ Khmb. A.E. Zaqaryan. – Yer.: Tntesaget, 2013 (In Armenian)
3. Միրաբյան Վ., Արդյունավետ վաճառք սոցիալական ցանցերի միջոցով, 2015, Retrieved from <https://b24.am/economy/55398.html>
Mirabyan V., Ardyunavet vajarq socialakan tsantseri mijotsov, 2015, Retrieved from <https://b24.am/economy/55398.html> (In Armenian)
4. Delacastro S., Vaidyanathan A., Digital Marketing in Banking: Evolution or Revolution, 2016
5. Jomer G., Sales and Marketing, 2020 Retrieved from <https://www.business2community.com/infographics/digital-marketing-trends-in-2020-infographic-02283628>
6. Lorry K., What Is PPC? Learn the Basics of Pay-Per-Click (PPC) Marketing, 2020, Retrieved from <https://www.wordstream.com/ppc>

7. Machado, Carolina, Davim, J. Paulo, Theory and Application of Business and Management Principles, Portugal, 2016
8. Madhu B., Verna D., A Critical Review of Digital Marketing, 2018
9. Nganga C., Effectiveness of Digital Marketing Strategies on Performance of Commercial Banks in Kenya, Nairobi, 2015
10. O'Brien J., Tech-Business, 2012 Retrieved from <https://mashable.com/2012/12/19/red-bull-content-marketing/>
11. Ramya L., Future of Digital Marketing in 2020, Tamilnadu, 2019
12. Soniya K., Santhosh Raja R., Digital Marketing in Banking: Evolution or Revolution, 2018
13. Sudha B., Digital Marketing for Digital Banks, 2019
14. Swieczak W., 133 Content Marketing As An Important Element of Marketing Strategy of Scientific Institutions, 2012
15. Willians Z. (2020), Retrieved from <https://achievemarketing.com/blog/seo-for-banks-credit-unions-a-complete-guide/>
16. <https://online.ameribank.am/InternetBank/MainForm.wgx>
17. <https://www.ardshinbank.am/news/main>
18. <https://www.evocabank.am/about/general-information.html>
19. <https://www.inecobank.am/hy/about-inecobank>

ЛИЛИЯ АВETИCЯН - ОСОБЕННОСТИ ЦИФРОВОГО МАРКЕТИНГА В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ключевые слова: цифровой маркетинг, коммерческий банк, банковский маркетинг, маркетинг в социальных сетях, цифровой банк.

В статье представлены тенденции цифровой трансформации банковского маркетинга, проанализировано актуальное состояние цифрового маркетинга в коммерческих банках РА. Отдельно представлен сравнительный анализ используемых некоторыми коммерческими банками РА инструментов и методов цифрового маркетинга, выявлены существующие проблемы и возможности дальнейшего развития цифрового маркетинга в коммерческих банках Армении.

**LILYA AVETISYAN - FEATURES OF DIGITAL MARKETING IN
COMMERCIAL BANKS OF THE REPUBLIC OF ARMENIA**

Keywords: *digital marketing, commercial bank, bank marketing, social media marketing, digital bank.*

The article presents trends in the digital transformation of banking marketing, analyzes the current state of digital marketing in commercial banks of the Republic of Armenia, in particular, a comparative analysis of the digital marketing tools and methods used by some Armenian commercial banks was carried out, and identified existing problems and opportunities for the further development of digital marketing in commercial banks of Armenia.

Ներկայացվել է՝ 04.10.2023 թ.

Գրախոսվել է՝ 20.11.2023 թ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

ԱՎԱՆԵՍՈՎ ԷՐՆԵՍՏ - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ֆիզիկական կուլտուրայի և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի վարիչ

АВАНЕСОВ ЭРНЕСТ - кандидат педагогических наук, доцент, заведующий кафедрой физической культуры и гражданской обороны Государственного университета имени В. Брюсова

AVANESOV ERNEST - Ph.D, Associate Professor, Head of the Chair of Physical Education and Civil Defense, Brusov State University

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԼՅԱ - տնտեսագիտության թեկնածու, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մարքեթինգի ամբիոնի և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի կառավարման ամբիոնի դոցենտ

АВETИСЯН ЛИЛИЯ - кандидат экономических наук, доцент кафедры маркетинга Армянского государственного экономического университета и кафедры управления Государственного университета имени В. Брюсова

AVETISYAN LILYA - Candidate of Sciences (Economics), Associate Professor, Chair of Marketing, Armenian State University of Economics and Chair of Management, Brusov State University

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԶՈՐԻ - մանկավարժական գիտությունների թեկնածու, ասիստենտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

БАРСЕГЯН ЗОРИ - кандидат педагогических наук, ассистент, Национальный политехнический университет Армении

BARSEGHYAN ZORI - Candidate of Sciences (Pedagogy), Assistant, National Polytechnic University of Armenia

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ - ասպիրանտ, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի

ГАБРИЕЛЯН АННА - аспирант кафедры педагогики и методики преподавания языков, Государственный университет имени В. Брюсова

GABRIELYAN ANNA - Ph.D. student, Chair of Pedagogy and Language Teaching Methodology, Brusov State University

ԹՈՓՈՒԶՅԱՆ ԱԻԴԱ - մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ
ТОПУЗЯН АИДА - доктор педагогических наук, профессор, заведующий кафедрой педагогики Армянского государственного педагогического университета им. Х Абовяна
ТОРУЗЯН АИДА - Doctor of Sciences (Pedagogy), Professor, Head of Chair of Pedagogy, Kh. Abovyan Armenian State Pedagogical University

ՎԱՐԱՊԵՏՅԱՆ ԻԳՈՐ - մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
КАРАПЕТАН ИГОРЬ - доктор педагогических наук, профессор, кафедра педагогики и методики преподавания языков, Государственный университет имени В. Брюсова
KARAPETYAN IGOR - Doctor of Sciences (Pedagogy), Professor, Chair of Pedagogy and Language Teaching Methodology, Brusov State University

ՀԱՎՈՐՅԱՆ ԳՐԵՏԱ - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոն
АКОПЯН ГРЕТА - кандидат педагогических наук, доцент, кафедра педагогики Армянского государственного педагогического университета им. Х Абовяна
НАКОВЯН GREТА - Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor, Chair of Pedagogy, Kh. Abovyan Armenian State Pedagogical University

ՀԱՎՈՐՅԱՆ ԼԻԼԻԹ - բանասիրական գիտությունների թեկնածու, չինարենի դասախոս, Արևելյան լեզուների ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
АКОПЯН ЛИЛИТ - кандидат филологических наук, преподаватель китайского языка, кафедра восточных языков, Государственный университет им. В. Брюсова,
АКОРЯН LILIT - Ph.D. in Philology, Chinese language lecturer, Chair of Eastern languages, Brusov State University

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱՔՍ - Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա բաժին, «Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն»-ի հայցորդ, Սպարտակ

Մկրտչյանի անվան «Բյուրակն» կրթահամալիր՝ մաթեմատիկայի ուսուցչուհի

АРУТЮНЯН АРАКС - соискатель кафедры математики и методики ее преподавания АГПУ имени Х. Абовяна,

учитель математики образовательного комплекса “Бюракн” имени Спартак Мкртчяна

HARUTYUNYAN ARAKS - Ph.D. student, Chair of Mathematics and its Teaching Methods, Armenian state pedagogical university after K. Abovyan, maths teacher, «Byurakn» scientific-educational foundation after Spartak Mkrtchyan

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ - Հանրային հաղորդակցության և լրագրության գիտաուսումնական կենտրոնի ղեկավար Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ОГАННИСЯН ТАТЬЯНА - Руководитель научно-учебного центра общественных коммуникаций и журналистики, Государственный университет им. В. Брюсова

HOVHANNISYAN TATYANA - Head of Scientific-Educational Center for Public Communication and Journalism, Brusov State University

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱԳՆԵՍԱ - մանկավարժության գիտությունների թեկնածու, ավագ դասախոս, անգլերենի ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ШАХНАЗАРЯН АГНЕСА - кандидат педагогических наук, старший преподаватель, кафедра английского языка, Государственный университет имени В. Брюсова

SHAHNAZARYAN AGNESA - Candidate of Sciences (Pedagogy), senior lecturer, Chair of English, Brusov State University

ՍԻՄՈՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ - դասախոս, Սերվիսի և զբոսաշրջության ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

СИМОНЯН НАРИНЕ - преподаватель кафедры сервиса и туризма Государственного университета им. В. Брюсова

SIMONYAN NARINE - Lecturer, Chair of Service and Tourism, Brusov State University

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԵՐԻ - դասախոս, Սերվիսի և զբոսաշրջության ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
ВАРДАНЯН МЕРИ - преподаватель кафедры сервиса и туризма Государственного университета им. В. Брюсова
YARDANYAN MARY - Lecturer Chair of Service and Tourism, Brusov State University

ՄԻՆԱՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ - դասախոս, հանրային հաղորդակցության և լրագրության գիտաուսումնական կենտրոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
МИНАСЯН РУЗАННА - преподаватель, научно-учебный центр общественных коммуникаций и журналистики, Государственный университет им. В. Брюсова
MINASYAN RUZANNA - Lecturer, Scientific-Educational Center for Public Communication and Journalism, Brusov State University

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍՈՆԱ - բանասիրական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատող
МИКАЕЛЯН СОНА - кандидат филологических наук, старший преподаватель, Государственный университет имени В. Брюсова, научный сотрудник отдела общего и сравнительного языкознания, Института языка им. Г. Ачаряна НАН РА
MIKAYELYAN SONA - Candidate of Sciences (Philology), Senior lecturer, Brusov State University, Senior Researcher of the Department of General and Comparative Linguistics of the Language Institute after H. Acharyan, NAS, RA

ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՄԱՐԻՆԵ - ասպիրանտ, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
ПИЛИПОСЯН МАРИНЕ - аспирант, кафедра педагогики и методики преподавания языков, Государственный университет имени В. Брюсова
PILIPOSYAN MARINE - Ph.D student, Chair of Pedagogy and Language Teaching Methodology, Brusov State University

Համակարգչային ձևավորումը՝

Հասմիկ Փիլավջյանի

Տպաքանակը՝ 100

«Լինգվա» հրատարակչություն
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ 0002, Երևան, Թումանյան փող. 42
Հեռ.՝ (+374) 10 52 20 20
Էլ. հասցե՝ bsu.sciencedep@gmail.com
<http://www.brusov.am>

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի 2(65) համարը երաշխավորվել է տպագրության ԲՊՀ-ի գիտական խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N° 4 նիստի որոշմամբ:

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականում տպագրության համար հողվածներին առաջադրվող պահանջները ներկայացված են ԲՊՀ-ի պաշտոնական կայքում.
https://brusov.am/hy/journal_list/banber_v_bryusovi_anvan_petakan_hamalsarani